

## ԽՕՍՔ ՇՆՈՐՀԱԿԱՌԻԹԵԱՆ



Այս գիրքին հրապարակութիւնը հովանաւորեց Իրանի Թեհրան քաղաքին մէջ 1966ի Յուլիսի վեցին ծնած Ալբրիկ Պետրիկը, որ 1992ի Նոկտեմբերին Ռեփեկա Քէշիշգարէի հետ անուանալէ անմիջապէս ետք, մեկնած է Ամերիկա ու հաստատուած՝ Լոս Անճելըս:

Զոյգը 2000 եւ 2002 թուականներուն կը բախարաւորուի մանչ եւ աղջիկ զաւակներով:

Որպէս մեքենագէտը հռչակի փիրացած Ալբրիկը կ'ունենայ քանի մը վկայականներ:

Երիտասարդ մեքենագէտը հայ մշակոյթը փարօրէն սիրող մը ըլլալով, քաջալերած է Նայաստանէն եւ Սփիւռքէն քանի մը պարամագիստրական գործերու հրապարակութեան:

Ան ներկայիս փոխ նախագահն է Սըն Վէլի քաղաքի VANGO TRANSPORTATION Ընկերութեան:

Թող շէն մնայ հայու իր օճախը:

Շնորհակալութիւն մեքենագիտութեամբ հայ մշակոյթին ծառայող մեր հայրենակիցին:

Մ. Ն.

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Մեկնություններ անելու «մեղք»-ը շափերն են գործում, սակայն քչերին է փրուած ճշմարիտ բացայայտումներ կափարելու եւ իմաստուն վերարփադրելու ունակութիւնը: Եւ այդ քչերից է սիրիահայ մտաւորական Մովսէս Նաճարեանը՝ զգայական, ոգեկան եւ բանական աստուածափոր օժտուածութեամբ:

Օժտուած լինելով գուգորդումների, համադրումների, վերլուծափրամաբանական հզօր կարողութիւններով, նա կարողացել է թափանցել մափենագրութեան, հնչիւնագիտութեան, փոմարագիտութեան, անուանագիտութեան, այբուբենագիտութեան, բառագիտութեան եւ կաբբալիսթական (*թուամիսթիքական-կապագրային*) երեւոյթների փակ թաքնուած փիեզերական օրինաչափութիւնների մեջ, կափարելու ընդհանրացումներ եւ արմափական բացայայտումներ:

Իր հերթական աշխափութիւնով (*առաջինը՝ գրաբար բրնագրից Ս. Մեսրոպ Մաշտոցի «Յանախապատում» աշխափութեան թարգմանութիւնը աշխարհաբարի*) նա մուփք է գործում նոր ասափարեզ եւ ամենակարեւորը՝ ընթերցողներին մափուցում խորհրդաժելու առափ նիւթ:

Մովսէս Նաճարեանը մի վառ եւ հզօր անհափականութիւն է, որի գործունեութեան ոլորփը չափազանց բազմափլանային է եւ նշանակալից:

Նրա սերնդակիցներից շափերը արդէն վաղուց սափաժել են իրենց, յոզնել եթե ոչ կեանքից, սափա պայքարից, մաքառումից: Իսկ նա գիփի, թե ինչի համար է լույս աշխարհ եկել:

Նա միշտ շարժման մեջ է, որոնումների մեջ:

Յանկանք նրան նորանոր յաջողութիւններ իր հայրենանուէր գործունեութեան մեջ:

Ն. Գալանփերեանի անուան  
բեմարուեսփի մանկափարժական  
համալսարանի ռեքթօր՝  
**ԱՐՄԷՆ ՆԱՊԱՆՏԵԱՆ**

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՆՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՆՉՆՈՂԷՆ

«Լեզուաբանության՝ Թե Իմաստասիրություն»

Այս ուսումնասիրությունը Մովսես որդի Անդրանիկի Նաճարեանին երկրորդ գիրքն է: Առաջինը՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի, հայոց մեծագոյն քաղաքական ու մշակութային գործիչի «Յաճախապարտ» աշխատասիրութեան գրաբարէ արեւելահայ աշխարհաբարի վերածումն էր:

Մեծ եղած է Ս. Մեսրոպի գործին ազդեցությունը Մովսեսին վրայ: Նոն, Ս. Նաճարեանը վերահասու դառնալով մեր արմատներուն, Մաշտոցի հանճարին, ինք եւս դարձած է այդ մեծութեան աշակերտը եւ իրովի ու գիտական մօտեցումով փորձած է բացայայտել, մեկնաբանել Մաշտոցով իրագործուածը, հին դարերէն մեզի հասած մեր անցեալին մութ մնացած կէտերը:

Այս գործը փարիներ իլած է Մովսես Նաճարեանէն:

Տարիները զինք փարած են մեր բազմահազարամեայ պատմութեան, մեր մեծություններուն, Ս. Սահակին ու Ս. Մեսրոպին, Ոսկեդարու մեր պատմիչներուն եւ համաշխարհային գանձարուներու, որոնց գործերուն ընդմէջէն կրցած է լուսագոյնս պարկերել ու մեզի ներկայացնել մեր հարուստ անցեալը կառչելով հայ եւ օտար լեզուներու բառերու արմատներուն եւ վերհանելով մեր հարուստ լեզուին ինքնուրոյն բառերուն արժէքները:

Լեզուական հարցերու, բառագիտութեան արժեւորումներու իր խորունկ ներթափանցումները զարմանք կը պարճառեն մեզի, հպարտութիւն կը պարճառեն ու անգամ մը եւս կ'ըսենք մտովի, թէ հայը իր անցեալի ու ներկայի մշակութային հարստութեամբ կրնայ բարձրագլուխ ներկայանալ աշխարհին եւ թօթափել ամէն ստրկամտութիւն:

Այս գիրքը գրուած է սիրով, նուիրումով ու գանձախոյզին անկոտորում վարպետութեամբը:

Նպարտառիթ այս գիրքին համար քանի մը խօսք գրելը գուցէ մեր գործը չէր, բայց ուշադիր ընթերցումը հապորին, այնքան

ցնցեց մեզ ու թեւեր փուսաւ, որ չկրցանք մեր հիացումը ջայպնել կապարուած գործին համար:

Նեղինակը կը գրէ.- «...Երբ ոեւէ մէկը դիմում է ճաբոներէն սովորելու, ճաբոնացիք ասում են “Գնացէք նախ հայերէն սովորէք, յետոյ նոր՝ ճաբոներէն”։ Ինչո՞ւ: ... Ապա որպէղից մեզ ճարտարապետական անգերագանցելի հմտութիւններն ու կոթողները, ստեղծագործական միտքն ու արարումը: ... Վստահ ենք, որ ոչ մի վանդալիզմ կամ “իզմ”, ոչ մի կեղծիք ու սուտ, ոչ մի աղաւաղում եւ աղանդ չի կարող ճշմարտութիւնը ծածկել ու թաղել, բանգի դա լոյս է, Աստուածապարգեւ լոյս»:

Իր ժողովուրդին անհունօրէն նուիրուած մտաւորականի մը հետ է մեր գործը, մտաւորական մը, որ իր ներաշխարհէն բխող ամէն մտածում ու խոհ կը վերածէ իմաստալից խօսքի, խօսք որ որպէս նորագոյն բանալի կը բանայ հայոց կուղպ գանձաբան դռները:

Բացուած են հայոց լեզուի ու հանճարի գանձաբանին դռները, հրամանեցէք, ու դուք եւս կը հարստանաք:

Որպէս այս մտաւորականը փայլագրութեան յանձնող, ընթերցող, ներողութիւն, Մովսէս սիրելի, որ այս փողերը գրեցի քու այս եռիցըս շնորհատրելի գիրքին համար:

Նալեպ, 10 Նոյեմբեր 2006

**ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ**

Իմաստասիրութիւն՝  
«արհեստ արհեստից եւ նակացութիւն նակացութեանց» է:  
«Վասնզի իմաստասիրութիւն զընութիւն էիցն զիտէ»:

Դաւիթ Անյաղթ՝  
«Սահմանք Իմաստասիրութեան»

## ՅՕԴ-ՈՒԿԾ «1»

Գիր, Գրանշան եւ Նշանագիր բառերի իմաստները ոսկեդարեան մատենագրութիւնում, եւ դրանց սխալ թարգմանութեան ակերիչ հետեւանքները պատմագրութեան մէջ:

*(Կարդացուած Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Պատմութեան Ինստիտուտում 2003 թուականին կայացած գիտաժողովում)*

Մեր թարգմանութեամբ, Կորիւնի «Վարք Մաշտոցի» երկի նախաբանում կարդում ենք.-

«Մտածում էի առանձին մատենանշան յիշատակարան ծաղկեցնել այն մասին՝ թէ ե՞րբ եւ ո՞ւմ ժամանակում Ասքանագեան Ազգին եւ Հայաստան աշխարհին մատակարարուեց զօրութիւնը Աստուածապարգեւ գրի եւ ինչպիսի՞ այրի միջոցաւ այսպէս նորոգատուր երեւաց Աստուածեղէն շնորհը»:

Ուշադրութեան արժանի առաջին խօսքը «մատենանշան յիշատակարան»-ն է, ինչից պարզուում է, թէ մատենաներում գրուածը կոչուել է «նշան» եւ ոչ թէ «գիր»:

Ուշադրութիւն գրաւող երկրորդ բառը «նորոգատուր»-ն է, որը Մանուկ Աբեղեանն թարգմանել է «նոր տրուած», մինչդեռ պէտք է լինի «նորոգուած ու տրուած», կամ էլ ըստ բառի ստուգաբանութեան՝ «նոր ոգիով, նոր շնչով, այլապէս՝ նոր հնչիւնով տրուած», ինչից էլ իմանում ենք, թէ տառերը Մաշտոցի ժամանակ «հենց նոր», առաջին անգամ չէին տրուում մեզ, այլ նորոգուած՝ նոր իմաստաւորումով եւ հնչիւններով:

Այս երկու դիտողութիւնից անցնենք «գիր» բառի բովանդակութեանը:

«Գիր»-ը նախկինում չի նշանակել «տառ»: Սրա ապացոյցներից մէկը սանսկրիտերէն «Gir» բառի «խօսակցութիւն» ի-

մաստն է, ինչը յիշատակում է Աճառեանն իր «Հայոց լեզուի արմատական բառարան»-ում: ՆՀԲ-ը աւանդել է աղաւաղուած «Կիր» ձեւով եւ «ձայն, հնչիւն» իմաստներով: Մեծ ուսուցիչ եւ գիտնական Աղաեանն իր հերթին, «Գրաբարի Քերականութիւն» գործում իր անկեղծ զարմանքն է յայտնել այն մասին, թէ Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ» կոչուող քերականական երկի հայերէնի թարգմանողը տարբերել է գիրն ու տառը:

Համեմատութեան համար յիշենք ռուսերէն «գրոմքը» (*բարձրաձայն*) բառը, որի «գր» արմատը հենց նոյն «գիր»-ն է, եւ բառը անմիջականօրէն առնչուում է ձայնին եւ հնչիւնին եւ ոչ թէ տառին կամ գրութեան: Մեր օգտագործած «գրութիւն» բառը բաղկացած է «գր»-ից եւ «ութիւն»-ից, ուր «գր»-ը կամ «գիր»-ը հնչիւնն է ու խօսքը, իսկ «ութիւն»-ը այդ հնչիւնը կամ խօսքը մարմնաւորողն է ու պարունակիչը, այսինքն տառը, թուղթը կամ նիւթը: Անգլ. «gramophone»-ում «gramo»-ն հնչիւնը կրողն է, իսկ «phone»-ը հնչեցնողն է:

Բառի տառացի մեկնութիւնը հանգեցնում է մեզ նրան, որ «Գիր»-ը նախկինում իսկապէս նշանակել է «շունչ», «հնչիւն», եւ ապա «խօսք»: Սրա ամենացցուն ապացոյցներից մէկն է «Աստուածաշունչ» բառի «Սուրբ Գիրք» տարբերակը, որտեղ «Աստուած» բառը փոխարինուած է Աստուծոյ յատկանիշներից «սուրբ»-ով, իսկ «գիր»-ը՝ «շունչ»-ով:

Այս փաստերը մեզ մղեցին նորովի ուսումնասիրելու տրւեալ բառարմատի հետ կապուած հնագոյն բառակազմութիւններն ու արտայայտութիւնները:

Պէտք է նշել, որ նոյնիսկ Մաշտոցի ժամանակներում մեր լեզուի բառապաշարը իմաստաբանական աղաւաղման ընթացքի մէջ է եղել, ուստի «գիր» ասելով հասկացել են եւ հնչիւն, եւ խօսք, ապա նաեւ տառ: Հետեւաբար մեր հնագոյն մատենագրութեան մէջ բառը պէտք է վերծանել ըստ ածանցման, ըստ բարդութեան եւ ըստ հիմնական մտքին:

Բերենք օրինակներ:

Գրիգոր Լուսաւորչի ժամանակակից Ձենոբ Ասորին (*Գըլակ-ը*) պատմում է, թէ Տարօնի Եօթնակնեան մեհեանը գրաւելուց յետոյ, Գրիգոր լուսաւորիչն այնտեղ է թաղել առաք-



եալների մասունքները եւ տապանաքարերի վրայ գրել տուել յիշատակարան: Ապա ասում է.

«Ձայս գրեցին ասորի եւ հելլենացի գրով եւ յոյն եւ իսմայելացի նշանաւ»:

Տուեալ խօսքը անհասկանալի է մնացել մասնագէտների համար, քանզի «գիր» բառի նախնական իմաստը չեն ընկալել:

Թարգմանենք.- «Այս գրեցին հելլենացի ու ասորի խօսքով (լեզուով) եւ յունական ու իսմայելական տառերով»:

Փաստօրէն տապանաքարերի գրութեան լեզուն եղել է. 1. Յոյների հելլենական բարբառով եւ ոչ թէ մի այլ բարբառով, բայց գրուել է յունական տառերով: 2. Երկրորդը եղել է ասորերէն լեզուով բայց իսմայելացիների տառերով:

Խորեմացու մօտ («Պատմութիւն Հայոց», *Գիրք Երրորդ, ԽԹ գլուխ*) կարդում ենք.-

«Առ նա (սք. Սահակ կաթողիկոսի մօտ – Մ.Ն.) եկեալ Մեսրոպ յաղագս խնդրոյ նշանագրաց Հայոց՝ եգիտ զնա առաւել եւս փափագող այնմ»:

Թարգմանենք. «Հայոց նշանների հնչիւնները փընտրելու համար նրա մօտ գալով՝ Մեսրոպն նրան գտաւ առաւել եւս փափագողը դրա»:

Պարզուում է, սք. Մ. Մաշտոցն նախօրոք մտադրուել է գտնելու Հայաստանում առկայ հայկական գրութիւնների (նշանների) բանալիները (հնչիւնները):

Երրորդ օրինակը Կորիւնի երկի «Ձ» գլխից է, որտեղ նա խօսում է Սուրբ Սահակի մասին.-

«Ապա ելանէր նոցա պարգեւական(ն) յամենաբարին Աստուծոյ, ժողովել աշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, եւ ի գիւտ նշանագրաց Հայաստան՝ ազգին հասանել»:

Մանուկ Աբեղեանի թարգմանութիւնը.-

«Ապա ամենաբարի աստծուց պարգեւվեց նրանց՝ երանելի միաբանյալների աշխարհահոգ խորհուրդը ժողովել եւ հայ ազգի համար նշանագրեր գտնել»:

Աբեղեանն աւելորդ է համարել եզակի օգտագործուած «ե-լանէր» բայը, որովհետեւ չի կարողացել գտնել ենթական: Նաեւ

«Հայաստան» անունը փոխարինել է «Հայ»-ով, ինչը անտեղի է, ուստի եւ աղաւաղուել է գրուածի իմաստը: Մեր թարգմանութիւնը.-

«Ապա ամենաբարի Աստուծոց նրանց պարգեւուածը (*տուրք Սահակ Կաթողիկոսը*) ելաւ ժողովելու երանելի միաբանների աշխարհահոգ խորհուրդը, գտնելու համար ու ազգին հասցնելու Հայաստանի նշանների (*տառերի-գրութիւնների*) հնչիւնները»:

«Նշանագրաց» բառում «նշան»-ը հենց տառն է, իսկ «գիր»-ը հնչիւնն է, ուստի գիտը վերաբերում է նշան-տառերի հնչիւններին եւ ոչ թէ անմիջականօրէն տառերին:

Մաշտոցի ժամանակներում Հայաստանում այդ գրանշանները կամ տառերը եղել են, բայց նշանա-գրերը կամ նշանների հնչիւնները մոռացուած են եղել:

Կորիւնն շարունակում է.-

«Բազում հարցուփորձի եւ քննութեան զանծինս պարապեցուցանել եւ բազում աշխատութեանց համբերեալ, ազդ առնէին ապա եւ զկանխագոյն խնդրելին իւրեանց, թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վռամշապուհ»:

Մանուկ Աբեղեանն թարգմանել է.-

«Շատ հարցուփորձերով ու որոնումով պարապեցին եւ շատ նեղութիւններ կրեցին. հետո եւ իրենց առաջուց ուզած բանի մասին իմաց տվին Հայոց թագավորին, որի անունը Վռամշապուհ էր կոչվում»:

Ջարմանք է պատճառում նախադասութեան բովանդակութիւնը: Արդեօք ինչի՞ շուրջ հարցուփորձ ու քննութիւններ են արել ու ի՞նչ են որոնել հաւաքուածները:

Եթէ խորհրդի անդամները պիտի ստեղծէին գոյութիւն չունեցող այբուբենը, ապա միասնաբար պիտի խորհէին, խոկային ու տքնելով հնարէին ուզուածը: Մինչդեռ հարցուփորձն ու քննութիւնները այն մասին էին թէ արդե՞օք մէկն ու մէկը որեւէ բան գիտէր գոյութիւն ունեցող այդ նշանների շուրջ. կամ կա՞ր դրանք կարդալ իմացող որեւէ մէկը: Նոյն նպատակով էլ վերջում դիմում են թագաւորին, որովհետեւ հնարաւոր էր, որ նա ժառանգաբար մի բան իմացած լինէր:

Կրկին դիմենք Կորինին.-

«Յայնժամ պատմեր նոցա արքայն վասն առն ուրումն ասորոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն գրեալ նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի»:

Բոլորիդ էլ պարզ է, թէ ոչ ոք յանկարծ այբուբենն չի կարող ստեղծել, այն էլ ոչ հարազատ լեզուի համար:

Խօսքը վերաբերում է վաղնջական ժամանկներից գոյութիւն ունեցող հայոց այբուբենի տառերի հնչիւններին (*նշանագիրս*), որոնք «յանկարծ գրեալ» էին, այսինքն «յանկարծ հնչեալ» էին Դանիէլ Ասորու կողմից: Նա՛ ինչպէս Շամպոլիոնը, յանկարծ կարողացել էր կարդալ՝ գրուածները, գտել էր դրանց հնչիւնները եւ ոչ թէ յանկարծ այբուբեն էր ստեղծել: Ուստի պարզըւում է, որ «Դանիէլեան գրեր» (*այբուբեն իմաստով*) երբեւիցէ չեն եղել, ու դրա շուրջ աշխատութիւններն ու վիճաբանութիւնները անհեթեթ են:

Սակայն փաստը մնում է այն, որ Դանիէլ Ասորին չի կարողացել լիարժէք բացայայտել Չայոց հնամեայ այբուբենի հնչիւնային համակարգը, ինչի պատճառով Մաշտոցն էլ իր հերթին չի կարողացել ըստ էութեան օգտագործել Դանիէլի գտածոն: Նա ստիպուել է անձամբ ուղեւորուել Եդեսիայ, ուսումնասիրել այնտեղ պահպանուող հայկական դարաւոր մեհենական ու արքայական մատեանները եւ գտել է Չայոց գրանշանների ամբողջական բանալիները:

Մերոպ Մաշտոցն լոկ կատարելապէս տիրապետելուց յետոյ Չայոց հնագոյն տառերի իմաստաբանական բովանդակութեանն ու կառուցուածքային խորհուրդներին՝ կարողացել է նոյն հիմքերով այբուբեն ստեղծել Վրաց ու Աղուանների համար:

Այդ հիմքերը մենք եւս ինչ որ չափով բացայայտել ենք Մաշտոցի Յաճախապատում ճառք երկի տուեալներից բխեցնելով, եւ կը ներկայացնենք ստորեւ:

Իսկ Եդեսիայում պահուող հայկական մեհենագրութիւնների մասին տեղեկացնում է Խորենացին:

Չայոց Արշակունեաց առաջին մայրաքաղաք Մծբինը ենթարկուել է ուժեղ երկրաշարժի: Չայոց Արգար Արշակունի թա-

գաւորը՝ պարսպապատելով ու ամրացնելով Եդեսիայ քաղաքը, Մծբինից տեղափոխուել է այնտեղ, իր հետ տանելով նաեւ թագաւորական դիւանը: Յետագայում երբ Եդեսիան անցել է Հռովմէացիներին՝ նրանք այդտեղ են փոխադրել նաեւ Պոնտոսի Սինոպ քաղաքում գտնուող Հայոց քրմական դիւանը: Խորենացին ասում է. «Ոչ ոք չկասկածի ասուածներին, որովհետեւ մենք ինքներս ականատես եղանք դրանց»:

Վերջապէս՝

«Գրերի գիւտ» ասելով պէտք չէ հասկանալ «գրերի ստեղծում», որովհետեւ «գիւտ»-ը դեռեւս չյայտնաբերուած բայց գոյութիւն ունեցող մի բանի յայտնագործումն է եւ ոչ թէ ստեղծագործութիւն:

Երկրորդ, Կորինն իր ուսուցչին կոչել է թարգմանիչ եւ ոչ թէ Հայոց գրերի ստեղծող, հետեւաբար ունենք «թարգմանչաց տօն» եւ ոչ թէ գրերի ստեղծման տօն:

Մատենադարանի համար 2618 ձեռագրում (էջ 255 ա էջ) կարդում ենք. «Ձայնաւորաց եւ եղանակաց թագ Դ գիր են, որ զայլ գիրսն ինքեան քարշեն եւ կապեն զեղանակս ծայնից»:

Այստեղ «գիր» կամ «գիրս» բառերը եթէ տառ հասկանանք՝ անհետք նախադասութիւն կ'ունենանք, որովհետեւ «ծայնն» ու «եղանակը» ականջին ու երաժշտութեանն են վերաբերում եւ ոչ թէ այբուբենի տառին: Թարգմանենք.

«Ձայնաւորների եւ եղանակների թագը չորս հնչիւններն են, որոնք այլ հնչիւններն իրենց ետեւից են տանում եւ ծայների եղանակները կապում իրար»:

Ագաթանգեղոսն իր «Պատմութիւն Հայոց»-ում (էջ 67, պարբ. 113) նկարագրում է Տրդատ Մեծի սբ. Գրիգոր Լուսաւորչին հասցրած տանջանքները, երբ թագաւորն ասում է. «Ձարմացեալ զարմացեալ եմ, եւ կարի քաջ. զիա՞րդ կեաս դու կենդանի եւ ոչ ինչ գրեցեր դու զցաւդ, եւ խօսիս եւս»:

Թարգմանենք. «Ձարմանալով զարմացած եմ եւ քաջ մտահոգ, թէ ինչպէ՞ս ես դու կենդանի մնում, եւ ոչ մի կերպ չես արտայայտում ցաւերդ. (գորում, մղկտում, աղաղակում) այլ եւ դեռեւս խօսում ես»:

«Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի» բառարանում գրտ-

նում ենք մատենագրական օրինակներ, «գիր», «գիրն» եւ «գիրս» բառերի օգտագործմամբ եւ զանազանուող իմաստներով, այսպէս.

1.«Եւ գիրն գիր Աստուծոյ դրոշմեալ ի տախտակսն»:

Նշենք առկայ «գիր» եւ «գիրն» բառերի տարբերութիւնը:

Մեր սահմանումով «ն»-ն կոչել ենք «լուսապսակաւոր սերմ», ելնելով սոյն տառի բաղադրիչ մասնիկների բովանդակութիւնից, ինչը «գիրն»-ի պարագայում նշանակում է «մարմնաւորուած սերմ», որտեղ «սերմ»-ը հենց գիր-հնչիւնի մի միաւորն է, իսկ լուսապսակը՝ հնչիւնը մարմնաւորողն է, տառն է: Ուստի «գիրն»-ը պէտք է ըմբռնել «տառ»:

Մեր թարգմանութիւնը.-

«Եւ գրուածը (գիրն) Աստուծոյ խօսքն է (գիր), դրոշմուած տախտակների վրայ»:

2.«Ոչ կարէին զգիրն ընթեռնուլ»: Թարգմ. «Չէին կարող գրուածը ընթերցել»:

3.«Խնդրէին ի մատեանսն ի գիրս հարցուփորձից»:

«Գիրս» ձեւում «ս»-ն «գիր-խօսքի» «սերմ»-ն է, բովանդակալի մի հատուածն է, եւ ոչ թէ տառ-գրութիւնը: Այստեղ «ս»-ն նաեւ յոգնակերտ մասնիկ է:

Մեր թարգմ. «Մատեաններում փնտրում էին հարցուփորձերին վերաբերող խօսքերը»:

4.«Կերպածեւեալ զգիրսն առ ձեռն պատրաստ մեսրոպայ»:

Խօսքը կերպարանք ու ձեւ ստացած (մարմնաւորուած) հնչիւնների սերմերի՝ այլապէս այբուբենի մասին է:

Մեր թարգմ. «Մեսրոպն իր ձեռքն առաւ հնչիւնները մարմնաւորող ձեւաւորուած պատրաստի տառերը»:

5.«Ողջիւնագիր»:

Նշանակում է «ողջիւնի խօսք»: Նամակ նշանակելու համար պիտի գրուէր «ողջիւնագիրն»:

6.«Բարեւագիր»:

Նշանակում է «բարեւի խօսք»: «Գրութիւն» նշանակելու համար պիտի գրուէր «բարեւագիրն»:

7.«Եկն նմա գիր յեղիայէ մարգարէէ»: Մեր թարգմ. «Նրան

խօսք (լուր) եկաւ եղիայ մարգարեից»:

Բանաւոր է ուղարկուել խօսքը, եւ ոչ թէ գրաւոր:

8.«Գիր սիրոյ, կամ հրամանի, կամ թախծանաց»:

Մեր թարգմ. «Խօսք սիրոյ, հրամանի, կամ թախծների»:

«Թախծի գրութիւն» չի լինում, «թախծի խօսք» է լինում:

Բայց լինում է «թախծալի գրութիւն»:

9.«Ետուն նմա գիր վկայութեան, զի անծանօթ էր այրն»:

Մեր թարգմ. «Վկայութեան խօսք տուին նրան, քանզի անծանօթ էր մարդը»:

Այսինքն խօսելով ու վկայաբանելով՝ իր ինքնութիւնը հաստատելու առիթ են տուել մարդուն:

Նաեւ պարզ է, որ վկայութիւնը բերանացի է լինում եւ ոչ գրաւոր:

Գրաւոր վաւերաթղթին ասել են «վկայագիրն»:

10.«Գրեա՛ զայդ առ ի յիշատակ ի գիրս»:

Մեր թարգմ. «Գրիր այդ՝ որպէս յիշատակելի իմաստուն խօսք»: (*«Իմաստուն»-ը «ի գիրս»-ի «ի» նախդիրն է*):

11.«Այս է գիր արարածոց»: Մեր թարգմ. «Այս է արարածների խօսքը, լեզուն»:

Եթէ նախադասութիւնը «անասուն մարդկանց» է վերաբերում կամ «կենդանիներին»՝ ապա գրողը նկատի ունի դրանց արտադրած բացականչութիւնները:

12.«Գրողը տանի» նշանակում է «շնչողը տանի», այլապէս՝ (*Աղամի՛ն*) «շունչ փչողը», Աստուած:

13.Երկաթագիր-ը ոչ թէ երկաթով քերուածն է, այլ «արեան գիր» է: Այբուբենը արեան շունչն է, արեան խօսքն է, քանզի «երկաթ»-ը «եր»-ի «կաթ» է, «արեան կաթիլ» է, ինչպէս «երակ»-ը՝ «արեան ակ»-ն է, «երես»-ը «արեան ես»-ն է, արեան դրսեւորումը: Անգլ. «Iron=երկաթ» բառի հիմքը եղել է «եր-ան»-ը, եւ նշանակել է «արին անող», երբ երկաթ-մետաղը արեան հիմնական բաղադրիչն է:

«Երկաթ»-ը մատենագրութեան մէջ ունի նաեւ «շղթայ» իմաստը (*բայց ոչ մետաղը, ինչպէս «պղնձեայ երկաթօք» արտայայտութեան մէջ*), որի պարագայում «երկաթագիր»-ը համազօր է լինում նաեւ «շղթայագիր» բառին, «շղթայական

խօսք»-ին, «առանց ընդհատումների խօսք»-ին: Հետեւաբար երկաթագիր(ն) մատեանները նրանք են, որոնք խօսքի մասերի բաժանում չունեն, ինչպէս անընդհատական արիւնը երակներում:

## ՅՕԴՈՒՄԾ «2»

Ձիու Քայլ՝ Իմաստասիրութեամբ

Ձօնում են Տիկին Արուսեակ Սահակեանին

*(Հապաւումով կարդացուած Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Պատմութեան Ինստիտուտի 2004 թուականին կազմակերպած ասուլիսների <սէմինարների > շարքում)*

### ՆԱԽԱԲԱՆ

Միամտութիւնը չունենք արհամարհանք ցուցաբերելու, թերագնահատելու կամ ստուեր գցելու մեր մատենագիրների, մեզ նախորդող հայագէտների, պատմաբանների, լեզուաբանների ու տօմարագէտների աշխատանքների վրայ: Խոնարհում ենք նրանց գործի եւ յիշատակի առաջ, քանզի նրանք իրենց հնարաւորութեան սահմաններում ուղի են հարթել մեզ համար, ու մեր մտքերն են բորբոքել ճշմարտութեան հասնելու ճանապարհին: Սակայն այդ բնագաւառներում կան չլուծուած խնդիրներ, որոնք լուսաբանելու եւ պարզելու համար անհրաժեշտ է նորովի մօտեցում ցուցաբերել, ինչն էլ փորձել ենք անել ստորեւ: Սակայն զգուշացնում ենք ընթերցողին՝ մեծամտելուց:

Մեր օրերից շուրջ 20 տարի առաջ Թիֆլիսում մի վրացի պատմաբանի հետ հանդիպման ժամանակ շատ էի վրդովուել, երբ յայտարարեց, թէ հայերս երբէք ազգային պետականութիւն չենք ունեցել, քանզի Հայկն ու հայերը՝ նախքան Բաբելոնից կը հեռանային, ենթակայ էին Բելին, ապա Ուրարտացիներն են տիրել Հայաստանին, ապա իշխել են Պարսիկ Պարթեւները, Հրեայ Բագրատունիները, ինչից յետոյ մեր սահմաններից ներս ընդհանրապէս չենք ունեցել ազգային պետականութիւն:

Այս վիրավորանքն ու ստորացումը տարիներով կրեցի իմ սրտում, մինչեւ լեզուաբանական պրպտումներով կը գտնէի պատասխանները:

Ուսումնասիրելով մեր հնագոյն մատենագիրների գործերը գրաբարով, նկատեցի որ մի շարք տուեալներ չեն համապատասխանում աշխարհաբար թարգմանութիւններին, քանզի որոշ բառեր ընկալուել են արդի ըմբռնումներով, եւ տեղի է ունեցել պատմական եւ իմաստային աղաւաղում:

Երկրորդ, Խորենացու գործում ի հարկէ կայ խառնաշփոթ, որը գալիս է ոչ թէ Պատմաօր կամայականութիւնից կամ անփութութիւնից, այլ իրեն աղբիւր ծառայած 17 մատենագիրների իսկ տուեալներից: Ուստի Խորենացուն ուղուած հերիւրանքներն ու պարսաւանքները պէտք է հասցեագրել նրանցից մի քանիսին: Ի հարկէ պատահել են նաեւ ականայ աղաւաղումներ երկն ընդօրինակող գրիչների կողմից:

Երրորդ, Խորենացին Մար Աբաս Կատինայի խօսքը մէջ բերելով յիշատակում է, որ «Յպարտ եւ անծնատր Նինոս... հրամայէ զբազումս մատեանս եւ զգրոյցս առաջնոցն այրել»:

*(Նինոսն հրամայել է իր ժամանակից առաջ ստեղծուած բազմաթիւ մատեաններն ու գրաւոր վկայութիւնները այրել):*

Արդիւնքում տարածաշրջանի (եւ մասնաւորապէս Չայոց) հնագոյն պատմութեան մատեանները մեծ տոկոսով ոչնչացուել են: Եւ Նինոսը միակը չի եղել:

Չամոզուած ենք, որ մեր նախահայրերի նկատմամբ Պատմաօր նախատինքները՝ թէ գիտութեամբ չեն զբաղուել, պատմութիւնը չեն սիրել ու չեն արձանագրել, չափազանցութիւն են:

Չորրորդ, պատմութեան դասագրքերից գիտենք, որ անցեալի տիրակալներից ոմանք նախորդ իշխանաւորների կամ թշնամիների ժայռերի վրայ կատարած արձանագրութիւններից ջնջել են տուել յուշակոթողը կառուցող թագաւորի անունը եւ գրել իրենցը:

Նոյնպիսի իրողութեան ենք հանդիպում նաեւ հնագոյն մատենագրութեան պարագայում: Ըստ երեւոյթին, Խորենացու ձեռքի տակ եղած 17 հեղինակների մատեաններից ոմանց մէջ անցուդարձերը ետ ու առաջ են մղուել, գործող անձերի անունների աղաւաղման կամ նպատակային փոփոխման



արդիւնքուն: Քննական համեմատութիւններ անելով ու վերադասաւորելով Պարթեւական ժամանակաշրջանի գործող անձերի անունները՝ կարելի է ճշդել պատմական դէմքերն ու դէպքերը: Օրինակ Տիգրանի «գ» տառը ջնջելով ստացել են Տիրան, կամ ընդհակառակը: Պարսից Պարթեւ Արշականն ու Արշանակը շրփոթուել են իրար հետ, մի քանի արքաների անունները փոխարինել են Արտաշէսով, նաեւ Արտաշէս Ա. Աշխարհակալին նոյնացրել են Սաթենիկի Արտաշէսի (Բ) հետ:

Ա.Գիրք Արարչութեան,  
ըստ արաբական առասպելների.-

### 1.Տաւրոս

Աւանդուած Նախագիտելիք.- Ինչպէս որ Մարդն է արարել Աստուծոյ պատկերով՝ այդպէս էլ երկիրն է արարուել երկնքի պատկերով: Երկնքի համաստեղութիւնները երկրի վրայ ներկայացուած են լեռնաշղթաներով ու գետերով, աստղերը՝ լեռնագագաթներով: Պատկերացոյք Մասիսների գագաթներին ձեան ուրուագծերը:

Ցուլը «տաւր»-ն է (*Տաւրոսը*), եւ «տաւր» / «տօր»-ից է առաջացել լատինական *Toro*-ցուլը:

Արաբական առասպելաբանութեան մէջ գտնոււմ ենք (*արաբ. լեզուով* - «*Մաւսուատ Ասաթիր Ալ-Արաբ*», *հեղինակ՝ Մուհամմետ Աջինա*, «*Դար էլ Ֆարաբի*» *հրատ.*, *Բեյրութ*, *Լիբանան*, 1994թ., էջ 122).-

«Արարչութիւնից յետոյ, Աստուած երկիր ուղարկեց հրեշտակին: Երկիր իջեւանելով՝ նա հաստատուն տեղ չգտաւ ոտները հենելու եւ դիմեց Աստծուն: Արարիչն արարեց երկրային ցուլը՝ երկնային ցուլի պատկերով, եւ հրեշտակը հաստատուեց դրա մէջքին»:

Մեկնաբանութիւն.-

Յիշենք Աստուածաշնչի առաջին պարբերութիւնը.

«Ակիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց: Երկիրը անծել ու պարապ էր եւ անդունդին վրայ խաւար կար եւ Աստուծոյ Դոգին ջուրերուն վրայ կը շարժէր»:

Կարելի է հետեւցնել, որ արարչութեան սկզբուն երկիրը

ջրերով էր ծածկուած: Իսկ արաբական առասպելի տուեալով ջրերից յայտնուած առաջին ցամաքը եղել է Յուլ-Տաւրոսը (*սրանից էլ Յուլ կենդանակերպի «երկիր, հող» հասկացողութիւնը*), որի վրայ է հաստատուել հրեշտակը: Նա երկնքից ուղարկուել է երկրին տիրութիւն անելու եւ մշակելու այն: Սոյն «հրեշտակ»-ը անմարմին հոգեւոր ոյժ չի եղել ինչպէս քրիստոնէական պատկերացումներում, այլ մտով-ոսկորով էութիւն, բայց հզօր ու պայծառ հրեղէն լուսապսակով:

## 2. Տօրք Անգեղ

Այդ հրեշտակը խորենացու յիշատակած Տաւրոսի Անգեղն է, Տաւրք-Տօրք Անգեղը: Նրա ժառանգներն են եղել Հայոց Անգեղ տան նախարարները (*Համեմատել անգլ. angel=հրեշտակ*):

Նրանց խորհրդանիշն է եղել անգղ թռչունը, քանզի եղել են կորաքիթ, եւ ֆիզիկապէս սաւառնելու ունակութեամբ:

Այդպիսի կարողութեամբ օժտուած անհատներ միշտ էլ եղել են տարբեր դարաշրջաններում, ինչպէս յոյների «աստուածները»: Երեւոյթը երբէք էլ վերացականութիւն չէ, հէքիաթային չէ:

Բերենք Փաւստոս Բիւզանդի «Հայոց Պատմութիւն»-ից մի օրինակ (*Երեւան 1987, էջ 58 եւ 60*).

«...Մեծն քորեպիսկոպոսն Դանիէլ, այր սքանչելի...: Սա եւ կօշկօք քայլելոյն գնայր ի վերայ գետաց, եւ ոչ թանային: Եւ զի կամէր ի հեռաստան ուրեք երթալ իբրեւ զփայլակն սլացեալ լինէր անաշխատ. իբրեւ թռուցեալ յոր կամէրն երթալ ի տեղին, յանկարծօրէն անդ գտանէր»:

Թարգմանենք. «Մեծն արքեպիսկոպոս Դանիէլն սքանչելի մի այր էր (*Տարօն գաւառի առաջնորդը, Տիրան արքայի ժամանակակիցը – Ն.Մ.*)...: Նա քայլում էր գետերի վրայից կօշիկներով, որոնք նոյնիսկ չէին թռչում: Եւ երբ կամենում էր մի շատ հեռաւոր տեղ գնալ փայլակի արագութեամբ էր սլանում, առանց հոգնութեան. կարծէք թռնելով գնում էր իր ցանկացած վայրը, ու յանկարծօրէն յայտնուում այնտեղ»:

Հրեշտակի տօհմը գոյութիւն է ունեցել նախքան Ադամն ու նրա սերունդները: Առասպելներից ոմանք յայտնում են, թէ նրանք (*«աստուածներ» կոչուածներն*) են արարել Ադամին ու Եւային: Ադամորդիները նրանց կոչել են «Աստուծոյ որդիներ»,

քանզի մարդկանց սովորեցրել են լեզու եւ զանազան գիտութիւններ: Կոչուել են նաեւ «հսկաներ»՝ մարդկանց համեմատ լինելով բաւականին բարձրահասակ ու հուժկու (3-4 եւ ւաւելի մետր հասակով): «Աստուածաշունչ մատեան»-ը նրանց անունով կոչուել է «Եւանգել» (արաբ. «Ինջիլ»), ինչը ցոյց է տալիս դրա բուն ակունքը՝ Անգել տունը:

Յետագայ դարերում Տաւրոսեան հրեշտակների զարմերը կայք են հաստատել ցամաքած այլ հողատարածքներում եւս, որոնցից է Ղրիմը. այդ մասին կարդում ենք.-

«Tauris – Name sometimes used for Crimeas in ancient times, from Tauari, earliest known inhabitants of its S. coast» (*Oxford Illustrated Dictionary, 1963*):

Թարգմանենք. «Տաւրիս - Անուն վաղ անցեալում երբեմն օգտագործուած Ղրիմի փոխարէն, առաջացել է Տաւարի-ից. այդպէս էին կոչուում Ղրիմի հարաւային ափերի առաջին բնակիչները»:

Այս տրամաբանութեամբ՝ Իրանի Tavriz-ը նոյնպէս կարելի է համարել Տաւրոսեան հրեշտակների հիմնադրած քաղաքներից մին:

### 3. Հրեշտակի ծագումը (վարկած)

Եթէ ընդունենք սումերագէտների ընթերցումները, ապա սոյն հրեշտակը երկիր է ուղարկուել Մարս-Հրատից, սակայն նրա բուն տունն է եղել «Հովագ-Անգղ» համաստեղութիւնը (մենք պիտի ասէինք «Վագր-Անգղ», այլապէս՝ «Tiger-Անգղ», որից էլ «Տիգրիս»-ը):

Այս առումով Արմէն Դաւթեանն իր «Աստղապաշտութեան Դրսելորումներ Հայաստան Դիցարանում» յօդուածում գրում է.

«...Հայաստան դիցարանում առաջինը նշված է Ս.GUR աստվածը... Հավանական էմ համարում, որ Ս.GUR-ը նույն այն աստվածն է, որով Միջագետքյան ավանդույթում ներկայացվում է «Հովագ-Անգղ» (UD.KA.DUH.A) համաստեղությունը...: Կռվել մարտնչել իմաստներով Ս.GUR-ը նույնանում է Մարս մոլորակը մարմնավորող Ներգալ աստծո հետ...: Ներգալն ունի 2 աստղային կող: 7 մոլորակներից նա Մարսն է, իսկ աստղերի մեջ:

Անգղ աստեղատունը: Աստվածաշնչի թարգմանության մեջ հայերը Ներգալին զուգադրել են ոչ թե Մարս մոլորակի հայկական զուգահեռին, այլ Անգեղ աստծո հետ, որ նույն Անգղ («հովազ-անգղ») համաստեղությունն է...»:

#### 4.Տաւրոյ Բերան (*Տուրու Բերան*)

Արաբական նոյն աղբիւրում կարդում ենք.-

«Ցուլի մռութը գտնուում էր ծովում»:

Մեկնաբանութիւն.-

1.Այդ ծովը եղել է Վանայ ծովակը՝ Ցուլի բացուած մռութի մէջ: «Մռութը» ուրուագծուում է ծովակի հիւսիսում՝ Նեխ Մասիք (*Սիփան*), արեւմուտքում՝ Սարակն (*Նենրութ – մի գուցէ «ներքին-ստորին մռութ» իմաստով*) եւ Մարութայ սար, հարաւում Առնոս ու Արտոս գագաթների ու նրանց հարակից լեռնազանգուածների համայնապատկերով: Համեմատել մեր թուրքերի կութեան 2-րդ դարում Պտղոմէոսի կազմած քարտեզի - *Toshpitu regio – Տոսպի՝ Վանայ լճի արեւելեան մասում պատկերուած «Կետ»-ի բացուած երախի հետ («Հայաստանի Պատմության Ատլաս», Ա մաս, էջ 91):*

2.Տարօնը գտնուում է Տաւրոսի վրայ, ուստի Տարօնի հետ առնչուող «Տուրու բերան»-ը պէտք է ունենար «Տաւրու կամ Տաւրոյ բերան» ուղղագրութիւնը, եւ նոյնանար արաբական առասպելի «ցուլի մռութ»-ի հետ:

#### 5.Յարութ եւ Մարութ Հրեշտակներ

Արաբական աղբիւրը շարունակում է (*էջ 208, 210-212, 215-217, նաեւ Ղուրանում՝ «Սուրաթ ալ-Բազարայ»*):-

«Յարութ եւ Մարութ հրեշտակները հիւսիսից եկան ու մեզ գիտութիւններ ու օրէնք սովորեցրին (*նոյնիսկ թռնելու գաղտնիքը տուին*)»:

Վերլուծում .-

«Տաւրք-Տօրք Անգեղ»-ը՝ որպէս «Անգեղ տան Ցուլ», բրոնզաքօսիկ թարգմանութիւն է մեր կողմից, խորեմացու նկարագրած «անձը» գտնելու համար: Եթէ ընդունենք՝ որ «Տօրք»-ի վերջում դրուած «ք»-ն յոգնակերտ մասնիկ է, ապա ստացւում է, որ «Տօրք Անգեղ» անձը կոչուել է ոչ թէ Տօրք, այլ Անգեղ (*հրեշ-*

տակ)՝ Տարրուհից-Ցուլերից (այլապես անհեթեթ է «Անգեղ կամ հրեշտակ ցուլեր»-ը):

ա. Ահա այդ հրեշտակներից է Մարութը, որն անկասկած առնչւում է Տարրուհի Մարութայ սարի հետ, իսկ Յարութն էլ նախապատմական ժամանակներից մեզ հասած հայկական արական անուն է:

բ. Այս հրեշտակները անմիջականօրէն կապւում են ցուլերի վրայ կանգնած հնագոյն Ասորա-Բաբելական արքաների քանդակներին ու պատկերներին, որոնք յուշում են, թէ այդ տիրակալները Տարրոսեան ծագում ունէին, Անգեղ-հրեշտակների տան շառաւիղներից էին:

6.Տաւար, Տուար եւ Տուարածատափ  
Վերլուծում.-

«Աւ» արական բնոյթի երկբարբառի իգական զոյգն է «ու»-ն: «Տաւր»-ցուլի իգական զոյգը պիտի ունենար «Տուր» ուղղագրութիւնը, անգլ. «tower =աշտարակ» բառի հնչողութեամբ. դրանից էլ պիտի ծագած լինէր Տրէ ամսանունը (*Տուր-ի հոլովումով «ու»-ի անկում է տեղի ունեցել*):

Նոյն հիմքերով էլ «տաւար»՝ արու կենդանու էգ զուգահեռը կը լինի «տուար»-ը, «տըվար» հնչողութեամբ: Բարեբախտաբար մատենագիր պատմութեամբ մեզ է հասել այդպիսի մի օրինակ:

«Տուար» արմատով «Տուարածատափ» դաշտավայրը Արածանիի շրջանում՝ եղել է մայրացու ցեղային կովեր բուծանելու եւ արածելու արօտավայր:

«Տըւ(ու)ար»-ը պահպանուել է նաեւ ժողովրդական մի չգիտակցուած արտայայտութեան մէջ:

«Տաւարի մէկը» արհամարհական խօսքով հասկանալի է, որ որակուող անձը արական բնոյթի է: Իսկ «տըվարի մէկը» որակումը պիտի ուղղել իգական բնոյթի անձին:

7.Դրախտավայրն ու «Կետ»-ը

Նոյն աղբիւրում կարդում ենք (էջ 123).

«Արարիչն Աստուած Ցուլն արարելուց յետոյ արարեց «եօթնաշերտ զմրուխտեայ քարը (ըստ մեզ՝ կանաչա-

պատ լեռնադաշտ-դրախտավայրը), որին իր ոտներն հենեց Ցուլը: Այդ «քար»-ը նույնպես չունէր հենարան: Դրա համար էլ Աստուածն ստեղծեց Կետը»:

Մեկնաբանութիւն. -

Ըստ մեր դիտարկումների՝ «Կետ» համաստեղութիւնը երկրի վրայ արտայայտուած է Հայաստանի ներկայ հանրապետութեան, Արցախի եւ Ջաւախքի միացեալ տարածքներով (նայէք *ռեյնֆ-ուրուագիծը*), որի շրջանակում էլ պէտք է որոնել «Ձուկ» կենդանակերպը (*թերեւս յայտնաբերուած «վիշապաքար» կոչուող քարէ ձկների բուն տարածքում*):

Մեր կարծիքով Սասնայ Ծռերում Փոքր Միերի «քարանձաւը» փոխաբերական առումով, նշուած «Կետ»-ի ժայռածածկ լեռնային տարածքն է, որին ապաւինած հայութիւնը (*Միերը*) վերջապէս (*եւ շուտով*) պիտի վերագարթնի իր դարաւոր թըմբիրից ու վերականգնի իր հոգեւոր ու նիւթեղէն եսն ու ամբողջականութիւնը:

Արաբական աղբիւրը շարունակում է.

«Եւ Կետը ծովում էր»:

Մեկնաբանութիւն. -

Իսկապէս որ, «Կետ»-ը գլխի կողմից Սեւ ծովում է, իսկ պոչի կողմից Կասպից ծովն է նրան եզերել այդ ժամանակներում: (*Սակարող է հիմք ծառայել երկրաբանների համար, «Ցուլի» եւ «Կետի» արարչութեան միջեւ եղած ժամանակը ճշդելու համար*):

8.Կովկաս եւ Կարիճ Կենդանակերպ

Արաբական աղբիւրը շարունակում է.

«Վերջում Աստուածն «արարեց Քաֆ լեռը, որից վերել (*ասում է առասպելը*) միայն սառցալեռներ են ու սառնամանիք»:

Մեկնաբանութիւն 1.-

Արաբ հետազօտողի կարծիքով «Քաֆ» անունով լեռ չի յիշուում ու չկայ ո՛չ պատմականօրէն, ոչ էլ աշխարհագրականօրէն, ուստի դա առասպել է:

Մինչդեռ մեր յարգելի բարեկամը գլխի չի ընկել, որ հենց արաբերէնում Կաւկաս-Կովկասը կոչուում է «Քաֆքաս», որի հիւսիսում երկար դարեր իսկապէս եղել են սառցադաշտեր, ապա ճահիճներ:

«Տաւր»-ոսեան հրեշտակը միայնակ չի գործել, այլ իր իգական զոյգով, որը պիտի կոչուած լինէր «Տուր»-ոսեան հրեշտակ: Հայկական տօմարում դա առկայ է «Տրէ» անսանուան մէջ, որն այսօր համապատասխանում է «Կարիճ» կենդանակերպին եւ սկսւում է Հոկտեմբերի 22-ից ու աւարտւում Նոյեմբերի 20-ին: Տարուայ այս ժամանակահատուածում կատարուել է «Տրի ցանքս»-ը, որով հայ գիւղացին հասկանում է հենց «աշնանացան»-ը: Իսկ քանի որ «Ցուլ» եւ «Կարիճ» կենդանակերպերի օրերը անմիջականօրէն ցանքսի հետ են առնչուում՝ ապա կարելի է ենթադրել, որ հայկական «Տիր» աստուածութիւնը՝ որպէս գիտութիւն եւ մշակոյթ սփռող հրեշտակ-աստուած, եղել է նաեւ ցանքսի հրեշտակը (*Տրէ-ն նոյնանում է Սուներական GIR TAB-ի, ըստ մեզ՝ GIR TOB կամ TOW -ի հետ*):

Մեկնաբանութիւն 2.-

Ցուլի զոյգն է կովը: Ցուլ-Տօրքեան-Տաւրոսեան լեռնաշղթայի իգական զոյգն է կովկասեան- կովի լեռնաշղթան:

Տաւրոսեան ու Կովկասեան լեռնաշղթաները աշխարհագրականօրէն ուրուագծում են երկնային Ցուլ եւ Կով (*ներկայիս Կարիճ*) կենդանակերպերը, որոնք զօդեակում կազմել են հանդիպակաժ բեւեռներ: Ի հաստատումն այս տեսութեան աւելացնենք, որ Ցուլին նախորդում է խոյ կենդանակերպը, որի երկրային պատկերն է Տաւրոսեան լեռնաշղթայից արեւելք ընկնող խոյ քաղաքի ու դրան հարակից «Խոյ»-ի խոփի տարածքը, լեռնային զանգուածի ռելիեֆ-ուրուագծերով (*նայել նոյն Ատլասում, էջ 7*): խոյ կենդանակերպի հանդիպակաց զոյգը Կշեռքն է, որը երկրի վրայ պատկերուել է Անահտական Աթոռ կոչուած լեռնագանգուածով, երկրային Առիւծից վերեւ (*նայել 9-րդ ենթամասում*):

Այսպիսով պարզուում է, թէ վաղնջական ժամանակներից մինչեւ Սուներների քաղաքակրթութեան աւարտը «Տրէ»-ում առկայ «Տուր»-ՏօԲ-«Կով» կենդանակերպը պահպանուել է, բայց ջրհեղեցից բաւական յետոյ փոխարինուել է «Կարիճ»-ով:

Ենթադրում ենք, թէ «Կովկաս»-ի նախնական ուղղագրութիւնը պէտք է լինէր Կովք-աս (*Տօրք-ի «ք»-ի պէս*), որպէս Ասիան (*հիւսիսից*) եզրափակող կովի լեռնաշղթայ (*երկրագնդի ստեղծապատման շրջանում*): Համապատասխանաբար «Տօրք»-

«Տաւրք»-ը բարդուելով պիտի ունենար «Տաւրք-աս» ուղղագրութիւնը, փոխանակ «Տաւր-ոս»-ի եւ նշանակէր «Ասեան (*հարաւից*) եզրափակող ցուլի լեռնաշղթայ»: «Ք»-ն այս երկու պարագաներում էլ յոգնակերտ մասնիկ չէ, այլ նշանակում է վերջոյթ, ծայրամաս, եզր:

#### 9. Կենտաւրոս

Յունական առասպելներում հանդիպում ենք «Կենտաւրոս»-ներին, որոնք իբր թէ լինէին «կես-մարդ, կես-ձի» երեւակայական էակներ:

Իրականում «Կենտաւրոս»-ը նշանակում է «Տաւրոսում կենող-ապրող» (*«ձի»-ն ակնարկում է Պեգասին: Տես «Գ» գլխում*): Նրանցից է եղել Քիրոնը: Ըստ Իլիականի թարգմանչի ծանօթագրութեան՝ «Քիրոնը կենտավրոս է, համարվում է դիցաբանական շատ հերոսների, այդ թվում նաեւ Աքիլլեսի, ուսուցիչը, սովորեցնելով նրանց բժշկություն, երաժշտություն, մարմնամարզություն, որսորդական արվեստ եւ այլն» (*Յոմերոս, «Իլիական», թարգմ. Մ. Խերանյան, ԵՂԷ, Եր. 1987, էջ 466, 468*):

Քիրոն կենտաւրոսի սոյն յատկանիշերը գալիս են կրկին անգամ հաստատելու, որ մշակոյթ, արուեստներ, արհեստներ եւ օրէնք ուսուցանող քաղաքակրթութեան առաջին ուսուցիչների (*հրեշտակների*) առաջին բնակավայրն ու ծննդավայրը եղել է Տաւրոսը, թէ՛ ըստ արաբական սկզբնաղբիւրների եւ թէ՛ յունականի:

Սրանից բացի, «Քիրոն» անունը՝ մեծ հաւանականութեամբ, հայերէնի «Գիրն» բառի յունականացած տարբերակն է, որի մէջ ամփոփուած են եւ Բանը-լեզուն, եւ գրելու արուեստը, եւ բանելու ունակութիւնները եւայլն, երբ Խորենացին էլ աւանդել է, որ Տօրք Անգեղն իր եղունգներով ժայռերի վրայ գրութիւններ է փորագրել:

#### 10. Լուվիացիներ եւ Առիւծ կենդանակերպ

«Յայաստանի հարակից երկրների պատմություն» 7-րդ դասարանի դասագրքում կարդում ենք.

«Առկա գրավոր աղբյուրները վկայում են Փոքր Ասիայի բնակչության էթնիկական կազմի բազմատարրության մասին:



Մասնավորապես մ.թ.ա. 3-րդ հազ. 2-րդ հազ. սկզբին թերակղզու հարավ-արեւելքում եւ արեւելքում բնակվում էին հնդեվրոպական խեթա-լուվիական ժողովուրդները եւ ոչ հնդեվրոպալեզու խուրրիները, կենտրոնական մասում՝ խաթերը, հյուսիսում՝ կասկերը»:

«Լուվիա» հնդեվրոպական անուան արմատը «լեւ»-«ղեւ» է, որին հանդիպում ենք հայկական «Ղեւոնդ», «Լեւոն», վրաց. «Լեւան», անգլ. ու ֆր. «lion», ռուս. «Լեւ» եւ «Լյովա», եբրայական «Ղեւի» անուններում, ինչպէս եւ «level», «Levitation»-«լեւիտացիա» ու բազմաթիւ այլ բառերում:

«Եւ» երկբարբառը հնչել է եւ «եվ», եւ «yeux», ինչի հետեւանքով էլ առաջացել են «լեւ» արմատի տարբեր հնչիւնային երանգները (նայել Յօղուած «9»-ում):

«Լեւոն-Lion»-ի իմաստաբանութիւնը կտրել անցել է աղաւաղման երկար ճանապարհ, մինչեւ ձեռք կը բերէր ներկայիս «առիւծ» նշանակութիւնը:

Սինչդեռ Աստուածաշնչեան «Ղեւ», «Ղեւի» եւ «Ղեւտացի» անունը եւ տօհմանունը կրողները եղել են օրէնքի պաշտպան ու պահապան ուսուցիչներ:

Թէ ի՞նչ առնչութիւն ունի «լեւ»-ը «օրէնք»-ի եւ «առիւծ»-ի հետ՝ փորձենք բացայայտել:

«Չայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան»-ում կարդում ենք.

1.«Անի Աղյուն - Ամրոց Մեծ Չայքի Բարձր Չայք աշխ-ի Աղյուն (Առյուծ) գավ-ում»:

2.«Առյուծ - Գավառ Մեծ Չայքի Բարձր Չայք աշխ-ում: Գտնըվում էր Դերսիմում, նրա արլ. մասում եւ իր տարածքով համապատասխանում է նոր ժամանակների Տուժիկի շրջանին»:

3.«Առյուծ - Լեռ Մեծ Չայքում: Գտնվում է Բարձր Չայքում, Եկեղյաց գավ-ի հր սահմանագլխին, Դերսիմում, Բյուրակն-Մնծուրյան լիմկ-ում: Ոմանք նույնացնում են հետագայի Տուժիկ կոչված լ-ն հետ»:

4.«Առյուծ - Ֆիզիկաաշխարհագրական շրջան Չայկական լեռնաշխարհում, Դերսիմում»:

Այս վերջինը ճիշդ են կռահել բառարանը կազմողները: Քանզի «Առեւծ >Առիւծ >Առյուծ» կենդանակերպի պատկերը

դաջուած է հենց Դերսիմն ընդգրկող լեռների ֆիզիկաաշխարհագրական ուրուագծերում (*ռելյեֆ*): Դա բնութեան կերտած արական բնոյթի առիծն է, որի հայեացքն ուղղուած է հանդիպակաց զոյգին՝ եգիպտական ձեռակերտ էգ առիծ-«սֆինքս»-ին:

Բնակերտ Առիծի բնակիչներն են եղել Աստուածային օրէնքները կրող մարդիկ: Նրանց շառաւիղներն են միջագետքեան (*Նաեւ Ուրարտական*) այն արքաները՝ որոնք առիծի վրայ կանգնած են պատկերուել: Նրանց յետնորդներն են արքայական այն հնագոյն հարստութիւնները՝ որոնց դրօշակների զինանշանը եղել է առիծը, յատկապէս թելաւորը:

Տեղանքի բնիկների գլխաւոր սրբատեղին գտնուում է ներկայ անուանումով «Տուժիկ պապայ» լեռան վրայ, Առիծի գլխի տարածքում: Մեր կարծիքով դա եղել է հենց պատմական «Անի Աղիւն»-ը:

Ի՞նչ հիմքեր ունենք ասելու՝ թէ նրանք «Աստուածային օրէնքները» կրողներն են եղել ի սկզբանէ:

Ներկայիս հայ մարդուն ոչինչ չի յուշում «Աղիւն»-ը, թէև նոյնարմատ անձնանուններ ունենք մինչեւ այսօր (*Աղուն, Աղունիկ, Աղան, Աղաւնի*): Հետեւաբար ստիպուած ենք անդրադառնալ բառակազմական որոշ խնդիրների:

Եթէ իզական բնոյթի «Աղուն» անուան արական զոյգը «Աղան»-«Աղօն»-ն է, ապա գտնում ենք, որ երկուսը միասնաբար արտայայտուել են «Աղեն» (*ապա Աղիւն*) ձեւով:

Մի գուցէ հնագոյն հայերէնում եզակիից ու յոգնակիից բացի «զոյգ» ցոյց տուող երկակի բառածեւի պարագան դրսեւորուել է «եւ»-ով, ինչի մնացորդն է «եւ» միաւորող շաղկապը ներկայիս:

Արդի եւրոպական լեզուներում «եւ»-ն իր երկրորդ՝ «yeux» հնչիւնով ու նախնական «զոյգ» իմաստով պահպանուել է «Union=կցում, միացում» բառում, Սո=մէկ+ion (եւն)=զոյգն» արմատներից:

Անգլ. «Even» (*հայերէնում պիտի լինէր «եւն»*) բառի իմաստներից մէկը «զոյգ»-ն է, «կենտ»-ի հակամիջը:

Վերջապէս «եւայ» բառը կառուցուած է «եւ=զոյգ» ու «այ=տղամարդ» մասնիկներից, ու նշանակում է «տղամարդու

զոյգը» («Այ» >անգլ. I=ես, առաջին դեմք, տղամարդ. «Եւ» > անգլ. you= դու, երկրորդ դեմք, տղամարդու կողակից զոյգը, ապա եւ մարդու կողքին գտնուողը, եւայլն: Դրա համար էլ հայերէնի «Եւրոպայ»-ն արեւմտեան երկրներում հնչում է «Յուրոպ»):

Այսքանը «աւ», «ու», «եւ» երկբարբառ արմատների փոխադարձ յարաբերութեան մասին:

Վերադառնանք մեր թեմային:

«Աղեւն»-ը «աղեւ-ան»-ի ամփոփն է, «Աղուն»-ը՝ «Աղու-ան»-ի, «Աղաւն»-ը (Աղօն)՝ «Աղաւ-ան»-ի:

«Աղաւ» բառը բաղկացած է «աղ» եւ «աւ» արմատներից, որտեղ «աղ»-ն իր բազմազան իմաստների կողքին, տառագիտէն նշանակում է նաեւ 1.«Աստուծոյ երկրային (մարմնականացած) լոյսը», 2.«արեւի երկրային լոյսը»: Հոգեւոր գրականութիւնից մեզ հասած գրաբարեան «Աղ երկնաւոր» արտայայտութիւնը բովանդակում է Բարձրեալի կողմից տրուող նիւթեղէն օրինական սնունդը, եւ նիւթականացուած Աստուածային լոյսը՝ գրականութիւնը: Իսկ «աւ»-ը թէւ ձեռք է բերել հոլովական մասնիկի իմաստ, սակայն նախնականօրէն նշանակել է «Աստուածային հոգեւոր լոյս»:

Այսպիսով «Աղաւ»-ը կառուցուած է իրար լրացնող ու բացայայտող երկու հեգ-արմատներից, որոնցից երկրորդը ճշդում է առաջինում բերուած սնունդ-լոյսի որակը: Ուստի «աղաւ»-ը «ի վերուստ սահմանուած նիւթեղէն ու հոգեւոր սնունդ» է:

Սակայն բառի հեգերի (երկտառ արմատների) դրափոխութեամբ ստացուող «Աւաղ»-ը ցոյց է տալիս, որ «Աստուածային հոգեւոր լոյսը» վերածուել է «Աստուածային նիւթեղէն լոյսի», այսինքն որակական անկման պարագայ է դիտուում:

«Աղաւաղել» բայի երկրորդ «աղել» հատուածում բացակայում է առաջինում առկայ «հոգեւոր լոյսը», ինչի պատճառով էլ բառը ձեռք է բերում բացասական բովանդակութիւն, այսինքն «ի վերուստ սահմանուած նիւթեղէն ու հոգեւոր լոյսը (օրինակարգը) վերածել երկրային լոյսի, նիւթականի եւ գռեհիկի»:

Առաւել ըմբռնելի դարձնելու համար «Աղաւ»-ի էութիւնը դիմենք համեմատական լեզուաբանութեան:

«Աղաւ»-ը տառադարձենք անգլերէնի:

Սկզբնատառ «Ա»-ն հակում ունի աներեւութանալու, որովհետեւ ներկայացնում է Աստծուն: Մնաց «ղաւ»-ը, որտեղ «ղ = անգլ. L», «ա = a», «ւ = w», միասնաբար՝ «law», որը նշանակում է «օրէնք»:

Հայ. «Աղաւնի»-ն «Աղաւ անի» է, այսինքն «Աստուածային զոյգ օրէնքներով սնուողն ու գործողն» է, երբ միայն այդ օրէնքները կարող են համերաշխութիւն ու ներդաշնակութիւն բերել մարդկանց եւ աշխարհին, ուստի եւ ասում ենք «խաղաղութեան աղաւնի»:

«Աղանդ»-ը «Աղ»-ի «վերջ»-ն է (*անգ. end=վերջ*), «Աստուածային սննդից զուրկ»-ն է, ուստի «աղանդաւոր» են կոչուել Աստուածատուր օրինական սննդակարգը չպահպանողները: Վերջապէս «Աղանդ»-ի մէջ հոգեւորը բացակայում է:

(Հայ. «անդ=բնակութեան եւ մշակութեան վայրերից դուրս գտնուող խոպան դաշտ. «հանդ=վայրի կենդանիների զբաղեցրած խոպան դաշտ), (նայել նաեւ վերջին յօդուածում «Աղանդ» բառին):

Վերելում նշեցինք, որ «Աղել»-ում միաւորուած են եւ երկնային եւ երկրային որակները (*ինչպէս «Արել»-ում*): Ուստի «Աղել»-«Աղիւ»-ը ընդգրկում է եւ հոգեւոր եւ նիւթեղէն Աստուածատուր սնունդների բաղադրիչները: Հետեւաբար «Աղիւն»-«Աղիւ-ան»-ը («Աղիւ անողը») Աստուածային հոգեւոր ու կենցաղային օրէնքներով ապրող զոյգն է, իսկ պատմական «Անի Աղիւն»-ը մարմնաւորել է այդ օրէնքները կրողների եւ կիրառողների կենտրոնը:

Հաւելեալ ասենք, որ մինչեւ իսկ մեր օրերում այդ շրջանը մնում է բոյսերի ու բանջարեղէնների «վայրի» (*պիտի ասէինք անարատ, անխառն*) տեսակների մի գուցէ միակ շտեմարանը աշխարհում, որտեղից տարածուել ու ապա առաջացել են մշակովի տեսականիները:

Ժամանակների հոլովոյթում այլ անտաշ ժողովուրդները Առիւծի տարածքից իջած Աստուածային օրէնքները կրող ու տարածող «Աղիւն»-ուսուցիչներին զանազանել են նրանց «թելաւոր Առիւծ» խորհրդանիշով, այն նոյնացնելով նրանց բնութագրի հետ, որից էլ առաջացել են «Ղել», «Ղելի», «Լել», «Լյո-

վա», ապա «Ղեւան»-«Լեւան», ու «Ղեւոն»-«Lion»-«Լեւոն» առիւծներն ու «Լուվիա»-ն: Դեռեւս քաղաքակրթուող այդ ժողովուրդները մինչդեռ իրենց բառապաշարն են «հարստացրել» հայերէնը կարիք չի զգացել «առիւծ» անուան փոխարէն «նորը» որդեգրելու:

Վերոբերեալ աստղագիտական-տօմարագիտական, աշխարհագրական ու տեղագրական ժառանգութեան պահպանումը հայկական իրականութեան մէջ, նաեւ լեզուաբանական փաստարկները անկասկած ապացուցում են «Լուվիացիների» հայկական ծագումնաբանութիւնը (*յիշենք Առիւծ Միերիմ*): Դեռ աւելին: Մեր կարծիքով «Լուվիացիները» Տաւրոսեան Անգեղ-հրեշտակների ժառանգներից են, քանզի նրանց նման եղել են ե՛ւ օրէնքի ուսուցիչներ, ե՛ւ կարողացել են ֆիզիկապէս սաւառնել, որի հետեւանքով էլ իրենց անունից առաջացել է միջագային «Levitation» բառը:

Մի գուցէ քրիստոնէութեան մուտքով՝ այդ օրէնսպահների ինքնանուանումը ռուսերէնում վեր է ածուել «լեւի=ձախ»-ի, անգլերէնում left=ձախի, ու ձեռք բերել նաեւ կողմնակի բացասական իմաստ, որպէս «օրինազանց», «ձախակողմեանմատերիալիստ» եւայլն:

Աշխարհն իսկապէս որ շուռ է եկել:

Մենք փորձեցինք ցոյց տալ պատմական «հնդեվրոպական խեթա-լուվիական» ժողովուրդների իսկութիւնն ու նրանց բուն բնակութեան վայրը:

Նոյն հիմունքերով կարող ենք մի քայլով հասնել «Աղւանք» ու իմանալ այդ տարածքի առաջին բնակիչների ինքնութիւնը, յատկապէս որ «մ.թ.ա. 3-րդ հազ. 2-րդ հազ. սկզբին թերակղզու հարավ-արեւելքում եւ արեւելքում» գրանցուել են Լուվիացիներ:

Հետեւութիւն.-

1. Եգիպտական հնագոյն պատկերագրերում յայտնուող «առիւծ» նշանը Շամպոլիոնն իրաւացիօրէն տառադարձել է լատինատառ «Լ»-ի, ինչը համապատասխանում է Հայոց «Ղ» տառին եւ ըստ այնմ պէտք է համեմատել եգիպտական հնագրութիւնները հայերէնի հետ:

2. Հին միջագետքեան քանդակներում թեւաւոր առիւծի

վրայ կանգնած արքաները «Աստուածային օրէնքով» գահակալ դարձած իշխանաւորներ են եղել, ինչպէս եւ այդ օրէնքների պաշտպաններն են համարուել: Անկասկած նրանց ծագումը եղել է հենց հայկական Եկեղեաց գաւառից, Օրինաց Երկրից:

Կարծիք.-

Նոյն ծագումը կարող են ունենալ «Լիւան»-Լիբանան, «Լիւիա»-Լիբիա» երկրների անունները, Ֆրանսական «Լիյոն» քաղաքի անունը, եւ այլն:

Սխալած չենք լինի ասելով, որ նախքան ջրհեղեղը հենց Աղիւնցիներն են կառուցել էգ Առիւծ-Սֆինքսը Եգիպտոսում (*մի գուցէ Առիւծ Միերը*), իրենց «Առիւծ» նախահայրենիքի պատւին, նաեւ տօմարագիտական նկատառումներով: Սխալած չենք լինի նաեւ եթէ համարենք, թէ Ափրիկէի հիւսիսային առափնեայ երկրները բնակեցրել են Աղիւնցիները, ինչի պատճառով էլ հնագոյն ժամանակներից այդ տարածքները կոչուել են «Լիբիա»:

Հաւելուած.-

Հայասական, Ուրարտական եւ այլ սեպագիր արձանագրութիւններում յաճախ տիրակալների անուան նախորդող LUGAL բառը (*ինչպէս Lugal Girra, Lugalanna*) մասնագետները թարգմանել են «արքայ»:

Արմէն Դաւթեանն իր «Աստղապաշտութեան Դրսեւորումներ Հայասական Դիցարանում» յօդուածում գրում է.

«Ներգալի պատկերը կնիքի վրա ցույց է տալիս նրա զենքը, որ խաչաձեւ թուր է կամ գուրգ, խաչի հորիզոնական թւերին առյուծի գլուխներ են... Այս զույգ առյուծներին մենք տեսնում ենք Երիզայում պեղված պատկերում, որտեղ մայր դիցուհին կրծքով կերակրում է երկվորյակ առյուծների»:

Ինչպէս երեւում է, «LUGAL»-ը անմիջականօրէն կապ ունի առիւծի հետ: Մեր կարծիքով դա պէտք է ընթերցել «լիւ-կալ» կամ «լեւ-կալ», որի «լիւ» կամ «լեւ» բաղադրիչը նոյն ինքն «ղեւ»-«աղեւ»-ն է (*Աստուածային գոյգ օրէնքները*), իսկ «կալ»-ը՝ այդ օրէնքները կալողն է, ու դրանց պաշտպան-պահապան արքան եւ մայր դիցուհի Աննա-Անահիտը (*Lugalanna > Lev-cal-Anna*) Երիզայում:

## Բ.Ծննդոց Գիրք

### 1. Աղամի Թոռը Ենովս

Քաղելով Աբիդենոս պատմաբանից՝ Խորենացին գրում է.-  
«Ենովս՝ որ առաջին յուսացաւ կոչել զԱստուած»:

Ապա հարց է տալիս, թէ ի՞նչ է նշանակում «որ առաջին յուսացաւ կոչել զԱստուած»-ը, եւ փորձում է գտնել պատասխանը:

Մեր կարծիքով, դա նշանակում է թէ Ենովսն «առաջինն էր, որ դիմեց Աստծուն յարութեան խնդրականով»: Դա վերաբերում է սպանուած առաջին մարդու՝ Աբելի հոգու վերամարմնաւորմանը: Այսինքն Աբելի փոխարէն է ծնուել Սէթի (*Աղամի 3-րդ որդու*) որդին՝ Ենովսը եւ ոչ թէ Սէթը: Հետեւում է, որ Աբելի սպանութիւնը տեղի է ունեցել Ենովսի ծննդից անմիջապէս առաջ, ուստի եւ Աբելն ապրել է շուրջ 435 տարի (*սբ. Գրոց եւ Խորենացու տուեալների հաշուարմամբ*), որի ընթացքում անժառանգ չի մնացել, ինչպէս տպաւորում է Աստուածաշնչեան ընթերցումը, այլ ստեղծել է եւ իր ընտանիքը, եւ ունեցել որդիներ ու թոռներ:

Մեզ համար սոյն փաստարկն ունի պատմական ու աշխարհագրական մեծ նշանակութիւն: Դրանով իմանում ենք Հայաստանի գաւառներից մէկի՝ «Աբեղեանք»-ի եւ դրա բնակիչների իսկութիւնը: Նրանք Աբելի զարմ Աբեղեաններն են:

### 2. Եւիլայ երկիրը, Փիսոն եւ Եդեմ

(*Երկիր Դրախտավայր*)

«Եւ Տէր Աստուած արեւելեան կողմը՝ Եդեմի մէջ պարտէզ տնկեց ու իր շինած մարդը հոն դրաւ: ...Եւ պարտէզը ջրելու համար Եդեմէն գետ մը կ'ելլէր ու անկէ չորս ճիւղի կը բաժնուէր: Մէկուն անունը Փիսոն է. ասիկա Եւիլայի բոլոր երկիրը կը պտղտի, ուր ոսկի կայ: Եւ այն երկրին ոսկին ազնիւ է. սուտակ ու եղնզնաքար կայ հոն: Ու երկրորդ գետին անունը Քեհոն է.. ասիկա Քուշի բոլոր երկիրը կը պտտի: Ու երրորդ գետին անունը Տիգրիս է. ասիկա Ասորեստանի արեւելեան կողմը կ'երթայ: Եւ չորրորդ գետը Եփրատ է» (*Աստուածաշունչ, Գիրք Ծննդոց 2*):

Եբրայական կամ ասորական հնչողութեամբ Աստուածաշնչեան «Եւիլայ» երկրի անունը հայերէնի տառադարձելով

կը ստանանք «Եբիդայ»: Մեզ թւում է, թէ բառի առաջին տառը սխալ է ընկալուած եբրայերէնի կամ ասորերէնի «Ալեֆ» ձայնաւորի բազմերանգ հնչիւնների պատճառով: Հետեւաբար դրա հիմքը կը լինի «Աբիդայ» կամ նոյնիսկ «Աբեդայ», որովհետեւ այդ լեզուներում «ի» ձայնաւորը նոյնպէս բազմերանգ է ու կարող է հնչել նաեւ «ե»: Հետեւաբար «Եւիլայի երկիրը» Հայոց «Աբեդեանք»-ում է տեղակայուում, որտեղ իսկապէս եղել է ոսկով ու թանկարժէք քարերով հարուստ Օլթին - Կարսի մարզում, երբ «Օլթի» տեղանունն իսկ բխում է «աբեդ»-ից («Օլ-թի>Ալ-թի>Արլ-թի>Արդ-թի» անցումներով):

Ուրարտական արձանագրութիւններում Աբեդեանքը կոչւել է «Աբիլիանե, Աբիլիանի կամ Աբիլիանիմի» եւ «Ն. Ադոնցը այն տեղադրել է Ախուրեանի հովտում» («Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան»):

Այդ տարածքի սարահարթը կոչուել է «Անփայտ Բասեն», իսկ դրա հարաւային սահմանները հատել է Արաքսի արեւմըտեան վտակ Երասխը, որը հնագոյն ժամանակներում կոչուել է «Բասեն»:

Սրանով ուրուագծուում է «Փիսոն»-«Եւիլայ» եւ «Բասեն»-«Աբեդեանք» զոյգերի նոյնութիւնը:

Քսենոֆոնն իր «Նահանջ Բիւրոց»-ում նկարագրելով յունական զօրքի նահանջն ու անցումը Կորդուքից Հայաստան ու ապա Սեւ Ծովի ափերը, առաջինը յիշատակում է տեղի «Tiribazus» կառավարչին, որը ոչ այլ ոք է, եթէ ոչ «Տեր Բզնունեաց»-ը: Նրանք Վանայ ծովի հարաւ-արեւմտեան կողմերից են մտել Հայաստան (նայել «Հայաստանի պատմութեան ատլաս, Ա մաս, էջ 18): Ապա հեռանալով Տիգրիսի աւազանից յոյները կտրել անցել են Արածանիի ակունքները, որտեղից 7 օր քայլելով հասել են Phasis գետին: Դա ըստ անգլերէնի թարգմանչի, «Արաքսի մի վտակն էր կամ էլ նոյն ինքն Արաքսը» («The Persian Expedition», translated by Rex Warner, Penguin Books, Great Britain, 1977, էջ 202):

Այսպիսով մօտեցանք այն մտքին, որ Բասենը յունարէնում ապա անգլերէնում դարձել է Փասիս կամ Ֆասիս, իսկ սուրբ Գրքում առաւել եւս աղաւաղ, դարձել է Փիսոն:

Իրականում Բասեն-ը անգլերէնի «basin=աւազան»-ն է,



ռուս. «բասէին»-ը, իսկ ֆրանսերէնում դարձել է «փիսիմ», ինչը շատ չի տարբերուում «Փիսոն»-ից:

*(Տառադարձութեան հնագոյն օրէնքով այլ լեզուներում կամ մեր իսկ բարբառներում մեծաւ մասամբ սկզբնատառ «Ա»-ի անկումը փաստացի է: Ուստի «Աւազան»-ի «Ա»-ն ընկել է, իսկ «Լ»-ն դարձել «բ» եւ ստացուել է «բազան», որից էլ Բասան-Բասեն-ը, basin-ը, փիսիմ-ն ու Փիսոն-ը: Սրանով հաստատուում է նաեւ Բզնունիների ծագումը Բասենից):*

Թէ ի՞նչ «աւազանի» է ակնարկուում տեղանքը: Բասեն նահանգի տարածքից են բխում երեք գետեր, Երասխ-Փիսոնը, Եփրատը եւ ճորոխը, ինչի համար էլ դա գետերի Բասեն-աւազան է կոչուել:

Կարծում ենք, շատ մօտեցանք Աստուածաշնչեան Եղեմ-պարտեզին: Մնաց գտնել Գեհոնը:

Ըստ Աստուածաշնչի՝ Գեհոնը Քուշի երկրում է եղել: Քուշը Քամի որդին է, իսկ Քամը՝ Խորենացու սկզբնաղբիւրներում, Տիտանն է:

Փորձենք գտնել Տիտանեանների տիրոյթը Արամի ժամանակներում:

Խորենացին Չայկեան Արամի մասին պատմելով, ասում է թէ նա Չայաստանի արեւելեան սահմանների մօտ պատերազմել է ու յաղթել Մեդացւոց Մադէսին, որը մինչ այդ երկու տարի սմբակակոխ է արել Չայոց սահմանները: Ապա արշաւել է հարաւ, Ասորեստանի կողմերը, որտեղ իշխել է հսկաների (*սկա-յիցժ*) տօհմից Բարշամը: Այս արշաւանքի պատճառը այն է եղել, որ Բարշամը ծանր հարկեր գանձելով անապատի է վերածել իրեն ենթակայ տարածքն ու շրջակայքը: Արամը նրան հալածել է Կորդուքից մինչեւ Ասորիքի դաշտերը, որտեղ սպանուել է Արամի առաջապահ զօրքի կողմից:

Վերջում Արամն արշաւել է արեւմուտք:

Խորենացին շարունակում է. «Այլ որ ինչ յարեւմուտս կոյս՝ ընդ Տիտանեանսն է սորա գործ քաջութեան ...»: Այսինքն Արամը արեւմուտքում գործ պիտի ունենար Տիտանեանների հետ:

Ընդարձակելով տուեալները, Խորենացին ասում է թէ Արամը՝ Չայքի արեւմտեան սահմաններից դուրս գալով, «հասանէ ի կողմանս Կապադովկացւոց, ի տեղի մի, որ այժմ ասի Կե-

սարիա ...պատահե նմա Պայապիս Քաաղեայն Տիտանեան պատերազմաւ, որ բռնացեալ ունէր զմիջոց երկուց ծովուց մեծամեծաց, զՊոնտուն եւ զՈվկիանու...»:

Այստեղ «զՈվկիանու» ասելով նկատի ունի Միջերկրական ծովը:

Ուրուագծուում է Տիտան-Քամի Ջրուան-Սեմից բռնազաւթած երկրի տարածքը, այն է՝ Սեւ ծովից Միջերկրական ծով ընկած միջոցը, որի արեւելեան սահմանը եզերել է Կապադովկիան, իսկ արեւմուտքում՝ պատմաօր ասելով, հասել է «մարդկանց բնակութեան ծայրամաս» Օլիմպոսին:

Ի մի բերելով Խորենացու տուեալներն ու Աստուածաշնչեանը պարզուում է, որ Տիտանեանների տիրապետութեան տակ է եղել Կիլիկիան մինչեւ Արամի ժամանակները: Եւ քանի որ Գեհոն գետը «Քուշի բոլոր երկիրը կը պտտի» (*Քուշը Քամ-Տիտանի որդին է*), ապա Գեհոնը կը նոյնանայ Կիլիկիայի Ջեյհան գետի հետ: Աւելացնենք, որ «գ»-ն եւ «ջ»-ն բարբառներում իրար փոխարինող բաղաձայներ են եւ Գեհոնը կարող էր հնչել Ջեհոն (Ջյէհոն), աղաւաղումով՝ Ջէյհոն:

Ըստ մեզ, բառի հեռաւորագոյն ձեւը եղած պիտի լինի «Գեհաւն» ուղղագրութեամբ եւ «Գեհոն» հնչիւնով, ապա «աւ»-ից «ւ»-ի սղմամբ վերածուել է «Գեհան-Ջէյհան»-ի:

Այս լոյսի տակ, Եդեմ-դրախտի տարածքը կ'ընդգրկի Եփրատ, Տիգրիս, Երասխ եւ Ջեյհան գետերի աւազանները, միգուցէ Բասեն կենտրոնով:

Եւիլայ անուան շուրջ հաւելեալ տուեալներ կան նաեւ «Բառարան Սուրբ Գրոց»-ում (1881թ., *Կոստանդնուպօխ, հրատարակութիւն Յակոբ Պօյաճեանի*) այսպէս.

«Սուրբ Գիրքը կը յիշէ Եւիլա ոմն սերեալ ի Քամայ, Ծննդ. ժ. 7, եւ ուրիշ մը՝ ի Սեմայ, Ծննդ. ժ. 29: Ուստի ըստ այսմ պարտինք ընդունել երկու Եւիլա:

1. Առաջնոյ Եւիլայի բնակութեան տեղը կից է Եդեմոյ դրախտին տեղոյն: Ըստ ոմանց այս Եւիլայի տեղն էր հաւանականապէս Սեաւ ծովուն հարաւային արեւելեան ծայրը. ըստ այլոց ի գլուխ Պարսկային ծոցին:

2. Միւս Եւիլայն կը թուի թէ էր յԱրաբիա, Թագաւորաց Ա. Գրոց ժե. 7 համարին խօսքէն, “Եւ Սաւուղ Եւիլայէն մինչեւ Եգիպ-

տոսին դիմացի Սուրը՝ Ամաղէկը զարկաւ», կ'երեւի թէ այս եւիլա էր գաւառ Արաբիոյ հիւսիսային արեւմտեան մասին մէջ, քանզի Սաւուդի պատերազմին պարագաները չեն թողուր մեզ ենթադրել թէ եւիլա աւելի հեռուն կը տարածուէր Արաբիոյ ցամաքակղզւոյն վրայ»:

Ճշդենք որ եւիլեան-Աբեղեանները Նոյի սերունդը չեն, ուստի չեն սերել ո՛չ Ջրուան-սէմից եւ ո՛չ էլ Տիտան-քամից, ինչպէս ենթադրուել է, այլ մարդկանց նախահայր Ադամի Աբել որդուց: Վերոյիշեալ իրողութիւնը նկատի ունենալու դէպքում, ստացում է, որ Աբեղեաններից ոմանք իրենց հայրենի հայկական լեռնաշխարհից իջնելով կայք են հաստատել արաբական թերակղզու հիւսիս-արեւմտեան սահմաններում:

Կարծիք յայտնենք, որ նրանք Ֆիլիստինցի-Պաղեստինցիները կարող են լինել, քանզի ըստ բարբառայնացման օրէնքի, «աբեղ»-ի «ա»-ի անկումով մնում է «բեղ»-ը («Բել»-ը), որը աղաւաղուելով դարձել է Փիլ>ֆիլ, ինչպէս տեսանք «Բասեն»-«Փիսոն»-ի պարագայում:

Այս տեսանկիւնից դիտելով, կարելի է մտածել նաեւ, որ մերձաւոր արեւելեան ամբողջ տարածքում դարաւոր ու անանց «Բել»-«Բա՛ւլ»-ի պաշտամունքը եղել է Աբելի սերունդների յիշողութիւնն ու յարգանքը իրենց նախահօր հանդէպ:

Հայկական առասպելում Խորենացին յստակօրէն նշում է, որ Հայկի մրցակից Բելը Տիտանեան էր (*եւ ոչ թէ Աբելի սերունդից*), այսինքն Նոյի Քամ որդու ժառանգներից էր, ուստի նրան պէտք չէ շփոթել Աբեղեանների Աբելի եւ Պաղեստինցիների մեր ենթադրած «Բել-Բա՛ւլ» նախահօր հետ:

«Աբել»-Բել»-ից է առաջացել ռուս. «բելի=սպիտակ», ֆր. «բելլ=գեղեցիկ», «բելլա= գեղեցկուհի», «Բելիսածին Աքիլլես»-ը՝ այսինքն «Աբելից ծնուած Աքիլլես»-ը {*ըստ Հոմերոսի՝ նա Բելի (Աբելի – Մ.Ն.) որդին է, Էակոսի (Ադամի – Մ.Ն.) թոռը*} եւայլն:

Աւանդապատումներում (*հրեշտակ-աստուածների կողմից*) արարուած առաջին մարդը եղել է խափշիկ-նեգր (*ըստ Ջրադաշտի՝ Արիմընը*), որից յետոյ միայն արարուել է սպիտականորթ Էակոսը (*ըստ Ջրադաշտի՝ Որմըզդը: Նայել «3» Յօդուածում*):

### 3. Երիզու

Արտակ Մովսիսյանի «Հայաստանը քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում» երկի «Շումերական Արքայացանկ»ում (էջ 56) կարդում ենք.

«Երբ թագավորությունն իջեցվեց երկնքից, (նախ) Երիզուում էր թագավորությունը: Երիզուում Ալուլիմը (դարձավ) թագավոր եւ իշխեց 28800 տարի»:

Ա. Մովսիսեանի կազմած առաջին քարտեզում «Երիզու» քաղաքը տեղադրուել է Սումերում, Ուրից հարավ:

Հնարարու է, որ այդ տեղանքում մարդկային պատմութեան միջանկեալ մի հատուածում գոյութիւն է ունեցել Երիզու անունով քաղաք, սակայն դա չէր կարող լինել առաջին թագաւորութեան նստավայր Երիզուն:

Քանզի «երկնքից իջեցուած առաջին թագաւորութիւնը» առնչուում է արաբական առասպելում հանդիպող երկնքից իջաց հրեշտակին (*Անգեղիմ*), որն իր ոտները հենել է (*հաստատուել է*) Ցուլ-Տաւրոսի մէջքին: Հետեւաբար բուն Երիզուն պէտք է փնտրել Հայկական Տաւրոս լեռնաշղթայի կենտրոնական մասում:

Հիմք ընդունելով եւ զուգադրելով այդ երկու սկզբնաղբիրները՝ «Երիզու» տեղանուան արմատում որոնեցինք Տաւրոսը: «Տաւրոս»-ի կառուցուածքում «տաւ-ար-ոս»-ից բացի հնարարու է տեսնել նաեւ «տաւ-էր-ոս»-ը: Նկատի ունենալով «ոս»-ի վերջածանց լինելը՝ կարելի է այն զեղջել: Իսկ «տաւ»-ի ու «էր»-ի տեղերը դրափոխելով կ'ունենանք «էր-տաւ», որից էլ «էրի-տաւ»-«էրիտո»-ն, աղաւաղ՝ «Երիզու»:

Յուսով ենք, որ ընթերցողը «էրիտո»-ն կը համենատի Հայոց պատմութիւնից յայտնի «Երատո» թագուհու անուան հետ:

Յիշատակուած առաջին «թագաւորի» «Ալուլիմ» անուան հիմքը «Ալլ»-ն է (*նայել վերջին յօդուածում*):

### 4. Նոյ նահապետ

ա. Նրա ծնունդը

Նոյ նահապետի ծննդեան մասին տեղեկանում ենք Աբիդենոս պատմաբանից, Խորենացու միջնորդութեամբ, այսպէս.

«Ղամեք կեցեալ ամս հարիւր ութսուն եւ ութ՝ ծնանի որդի եւ անուանէ զնա Նոյ»:

Խորենացին իրաւացիօրէն հարց է տալիս, թէ ինչո՞ւ Աբիւղենոսը Նոյից առաջ ծնուածներին «որդի» չի անուանել, այլ ասել է «սա ծնաւ նրան», ինչպէս օրինակ՝ «Աղամ կեցեալ ամս երկերիւր եւ երեսուն՝ ծնանի զԱբ»:

Խորենացին թէւ ճշգրիտ պատասխանը չի գտել, սակայն այս հարցադրումն իսկ հաստատում է նրա խոշորագոյն ու լրջագոյն գիտնական լինելը: Քանզի նա դրանով մեզ մղեց որոնելու «որդի» բառի բուն էութիւնը: Երկար ժամանակ համոզիչ չէր թուում բառի մեր իսկ կատարած տառացի վերլուծութեան արդիւնքը: Վերջապէս գլխի ընկանք, որ գաղտնիքը ուղղագրութեան եւ հնչիւնի տարբերութեան մէջ է: Պարզուեց, որ այդ հակադրութիւնը բարբառայնացման երեւոյթ չէ, այլ խորքային բառակազմական օրինաչափութիւն: «Որդի»-ն կառուցուել է «որթ» եւ «դի» երկու արմատների միակցումից, որտեղ «թ» եւ «դ» տառերից մէկը պէտք է ընկնէր, որպէսզի բառն ունենար գեղագիտական տեսք եւ հնչողութիւն: Այդ դէպքում սակայն բարդ բառը կը կորցնէր իր իմաստային բովանդակութիւնը: Որպէսզի չորակազրկուէր բառը՝ այն կառուցողները դիմել են խորամանկութեան. ուղղագրութեան մէջ թողել են «դ»-ն, բայց բառը հընչեցրել են «թ»-ով:

Մեր մեկնութեամբ՝ «որդի»-ն (*որթ-դի*) «մահացածին փոխարինելու ծնուած արժանաւոր որթն է»:

Սոյն խորհուրդը փոխադրելով պատմական դաշտ՝ կարելի է եզրակացնել, որ առաջին մարդը, Աղամ-Էակոսը, հենց Նոյի ծննդից առաջ է կնքել իր մահկանացուն ու մի գուցէ վերածնուել որպէս Նոյ (*նկատի ունենալ, որ Աբելն սպանուել է եւ ոչ թէ իր բնութեամբ մահացել*):

բ.Նահապետի անուան հարցը

Ըստ Խորենացու՝ Նոյ-նաւակառոյցի անուններից է «Քսիսութրա»-ն:

Աքատական աղբիւրներում նրա անունն է «Ութնափիշտիմ»:

Արտակ Մովսիսյանի «Չայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում» երկում բերուած «Շումերական Արքայացանկ»-ում (*էջ 104*,) կարդում ենք.-

«Երբ ջրհեղեղը տարածվեց (երկրի) վրա եւ թագավորու-

թյունը իջեցվեց երկնքից (երկրորդ անգամ), (նախ) Քիչուն էր թագավորությունը: Քիչուն Գա[...]ուրը դարձավ թագավոր (եւ) իշխեց 1200 տարի»:

Մեր կարծիքով «Քսիսութայ» անուան սկզբի «Քս»-ը անփոփոխ է «Քիչ»-ը, ուստի կ'ունենանք «Քիչիս-Ութայ», որտեղ «իս»-ը կարող էր լինել «ից»՝ տեղ ցոյց տուող վերջոյթ, իսկ նահապետի անունը «Ութ»՝ «ր-այ»-«Ար-այ» ածական-անունով (նայել «Ճ»-րդ գլխի վերջում):

Սրանով հասկանալի է դառնում «Քսիսութայ» եւ «Ութ-նափիշտիմ» անուններում «Ութ»-ի ընդհանրութիւնը: Պարզում է նաւակառոյց նահապետի եւ անունը, եւ ջրհեղեղից յետոյ նրա բնակութեան առաջին վայրի անուանումը:

Առաջարկում ենք 1.«Ութնափիշտիմ»-ը վերընթերցել «Ութ-նափիշտիմ», որտեղ «նաւ»-ը տապանն է, «շտ»-ը «sit»-ն է (նստատեղի), «իմ»-ը բայական վերջոյթ, ինչպէս «նստիմ»-ում: Ունեցանք՝ «Ութն, որ նաւ է նստել» ու փրկուել ջրհեղեղից:

Խորենացին ասում է, թէ Նոյը սուգ էր անում երկրի սատակման առիթով: Այս «սուգ»-ը նոյնպէս առկայ է «Ութնափիշտիմ»-ի մէջ, եթէ այն ստուգաբանենք 2.«Ութ-նաւ-վիշտիմ» ձեւով, երբ «վիշտիմ»-ը կարող էր տալ գրաբարեան «վշտիմ»-ը, այլապէս՝ «վիշտ անեմ»-ը, այսինքն «Ութն, որ նաւում նստած վիշտ էր անում»:

Նոյ նահապետի «Ութ» անունը որպէս բաղադրիչ մաս կրկնուել է նրա Քամ-Տիտան որդու թոռան «Նեբրովթ» անուան մէջ: Դրա «ովթ» մասնիկը նոյնինքն «ութ»-ն է, որը հնչել է «owth» եւ ոչ թէ «outh»: «Նեբրովթ»-ը կարելի է հասկանալ «Նուէր-ութ», այսինքն «նուէր՝ Ութ նախահորը»: Նեմրութ եւ Մարութ սարերը մի գուցէ առնչում են նաեւ Նոյին, սակայն դրանք դեռեւս չենք ստուգաբանել:

Ա. Մովսիսեանի նոյն երկում կարդում ենք. «Շումերական Գիլգամեշն ու Ամմահութեան երկիրը՝ վիպերգում Գիլգամեշը որոշում է ուղեւորվել ամմահութեան երկիր, որին հասնելու համար Ութու (Արեւ) աստվածը նրան տալիս է “դեպի Արատտա ճանապարհը ցոյց տվող” յոթ ուղեցույցներ»:

Սոյն «Ութու»-ն ակնարկում է հենց Նոյին, մարդկային նոր քաղաքակրթութիւնն սկզբնաւորող աստուածացած անձին:

## 5. Զրհեղեղ

Ըստ երկրաբան գիտնականների՝ եղել են մի քանի մեծ ու փոքր համաշխարհային ջրհեղեղներ: Թե դրանցից ո՞րն է սուրբ Գրքում յիշատակուածը՝ կը պարզուի սուրբ Մեսրոպ Մաշտոցի տուեալով:

Նա իր «Յաճախապատում ճառք» երկում ասում է («Յաճախապատում», էջ 158, թարգմ. հեղինակի, տպուած Դալէպ, 2005թ.).

«Նոյին հրամայուեց ուտել շնչաւոր կենդանիների մսից. նաեւ ընպել գինի՝ մխիթարելու համար իր տրտմութիւնը, որովհետեւ սուգ էր պահում աշխարհի համատարած սատակման առիթով»:

Առաջին հայեացքից թւում է թէ այստեղ նորութիւն չկայ: Սակայն՝ պարզելով «աշխարհ» բառի եւ «սատակել» բայի իմաստները (նայել յօդուած «5»-ը), կ'ուրուագծուի մի նոր իրականութիւն:

Նոյ նահապետը սուգ է պահել ոչ թէ միայն շնչաւորների ոչնչացման առիթով, այլեւ «աշխարհի» (*ցամաքի*) «սատակման» (*բաժան-բաժան լինելում*) համար: Դետեւում է, որ դրանից առաջ ցամաքը եղել է միակտուր:

Այդպիսի իրադարձութեան մասին մեզ հասած հնագոյն գրաւոր տեղեկութիւնը գալիս է հին Եգիպտոսից, Դերոդոտոսի միջոցով, որի համաձայն գոյութիւն է ունեցել մի գերզարգացած քաղաքակրթութիւն Ատլանդիտա կոչուած ցամաքակղզու վրայ, որը շրջապատուած է եղել ովկիանոսով, եւ ինչ-ինչ պատճառներով իբր թէ սուզուել է ջրի յատակը:

Մեր կարծիքով, «Ատլանդ» բառը նշանակում է «ատուած ցամաք» (*անգլ. land=ցամաք, նայել «Յօդուած 12»-ում «Աղանդ» բառի տակ*): Դա առաջին հերթին ովկիանոսով շրջապատուած (*ատուած*) ցամաք է նշանակում, նախապատմական միակ մայր ցամաքը: Երկրորդ հերթին՝ «ատուած ցամաք», ինչը կարելի է հասկանալ «բաժան-բաժան եղած» ցամաք:

«Բարելոնեան քարտեզ»-ում մայր ցամաքը ներկայացւած է հենց միակտուր եւ ովկիանոսով շրջապատուած (*նայել «Դայաստանի Պատմութեան Ատլաս», Ա. մաս, էջ 90, «Բարելոնեան քարտեզ», «Աշխարհն ըստ Դերոդոտոսի» եւ էջ 92,*

«Անանուն հայ հեղինակի» քարտեզները):

Այս բոլորը համատեղելով Մաշտոցի խօսքի հետ, կը ստացուի, որ Ատլանդիտան ոչ թե ընկղմել է ովկիանոսի յատակը, այլ բաժան-բաժան է եղել հենց Նոյ-Ութի ժամանակ:

Համոզուած ենք, որ ներկայիս ցամաքամասերը տեսականօրէն միացնելու դէպքում կարող ենք քիչ թէ շատ իրական պատկերացում կազմել Ատլանդիտայի տեսքի մասին:

#### 6. Նոյեան տապանի հանգրուանը

Բացի այն որ ցամաքը բաժան-բաժան է եղել, նաեւ ի՞նչ տարողութիւն է ունեցել սոյն ջրհեղեղ-ցունամին: Արդեօ՞ք ամբողջովին է ծածկել ցամաքը: Եթէ այո՝ ապա ընդունելի պիտի լինէր ասել, թէ բոլոր շնչաւորներն ու մարդկային ցեղերը իսկապէս ոչնչացել են բացի Նոյից ու նրա հովանաւորեալներէրից:

Այս հարցերի պատասխանը գտնելու համար պարտաւոր ենք ճշդել Նոյեան տապանի վերջին հանգրուանի տեղը:

Աստուածաշնչում ակնհայտ է, որ Նոյեան Տապանը նըստել է Արարատեան երկրում եւ ոչ թէ Արարատ լեռան վրայ:

Եւսեբիոս Կեսարացու «Ժամանակականք» երկի մի հատուածում (*Լեւոն Խաչիկյան*, «Եղիշեի "Արարածոց Սեկնութիւնը", էջ 123») գտնում ենք.

«Եւ ի նաւէն՝ որ չոգաւ դադարեաց ի Հայս եւ ցայժմ սակաւ ինչ մասն ի Կորդուացւոց լերինն ի Հայոց աշխարհին մնալ նշխար ասեն»:

Թարգմանենք. «Եւ նաւից՝ որն հասաւ եւ կանգնեց Հայաստանում, մինչեւ օրս մի փոքրիկ մաս, ասում են, որպէս նշխար մնում է Հայոց աշխարհի Կորդուացիների լեռան վրայ»:

Ի հարկէ հարաւային Արարադ լեռը Կորդուաց լեռնաշղթայի մաս չի կազմում, այլ գտնուում է դրա հարաւում, Նպատական եւ Մասիոն լեռնաշղթաների միջեւ:

Սակայն Եւսեբիոսը չի ասել թէ Կորդուած «լեռնաշղթայում» է նստել Նոյեան տապանը, այլ «ի Կորդուացւոց լերինն», ինչը նշանակում է «Կորդուքցիներին պատկանող լեռան» վրայ, որով պատկերը իրական է դառնում: Այսինքն միջագետքեան Արարադը Կորդուաց աշխարհի մաս է կազմել:



Մովսես Խորենացին՝ յոյն իմաստասեր Ուլիմպիոդորոսից մեջբերելով, անուղղակիօրէն նոյն ճշմարտութիւնն է ականդում.-

«Իսկ որ կատարելագոյնն էր ի նոսա, Ուլիմպիոդորոս անուն, այսպէս ասաց. «Մատեան լեալ զՔսիսութեայ եւ զորդոց նորա...: Յետ նաւելոյն Քսիսութեայ ի Յայս եւ դիպելոյ ցամաքի, զնայ, ասէ, մի յորդոց նորա կոչեցեալն Սեմ ընդ արեւմուտս հիւսիսոյ դիտել զերկիրն, եւ դիպեալ դաշտի միում փոքու առ երկայնանստիւ միով լերամբ ... անուանէ յանուն իւր զլեառնն Սիմ, եւ դառնայ անդրէն յարեւելս հարաւոյ, ուստի եկն»»:

Նօյեան տապանի հանգրուանելուց յետոյ Ջրուան-սէնը բարձրացել է հիւսիս-արեւմուտք, ու տեսնելով մի լեռ՝ այն կոչել է իբր իր անունով – պատմա-աշխարհագրականօրէն յայտնի Սիմսարը: Ապա նա վերադարձել է այնտեղ՝ որտեղից եկել էր - Սիմսարից հարաւ-արեւելք, ինչը չէր կարող մերօրեայ Մասիս / Արարատ սարի մօտակայքը լինել, քանզի վերջինս գտնուում է Սիմսարից հիւսիս-արեւելքում: Հետեւաբար տապանի հանգրուանը պիտի լինի հայկական միջագետքի Արարադ լեռը: Հետեւութիւն.-

Եթէ ջրհեղեղեան ջուրը Յայոց միջագետքի Արարադ լեռան մօտաւոր բարձրութեանն է հասել (*բարձր. 3220մ.*), ապա հայկական լեռնաշխարհի հետեւեալ գագաթները դուրս պիտի մնային ջրից.-

Մեծ Մասիսը (5165մ.), Փոքր Մասիսը (3925մ.), Դերջանի մօտ Անահտական լեռներում Անահիտ գագաթը (3557մ.), Սուկաւետ լեռներում Սուկաւետ գագաթը (3455մ.), Եղբարք լեռներում Թոնդրակը (3542մ.), Բիւրակնեան լեռներում Սերմանց գագաթը (3650մ.), Մերջան լեռներում Մերջան գագաթը (3449մ.), Ծաղկանց լեռներում Ծաղկանց գագաթը (3449մ.), Աղի գագաթը (3351մ.), Բզնունեաց լեռներում Սիփան գագաթը (4434մ.), Ծիրանեաց լեռներում Ոսկեանք գագաթը (3914մ.), Պարխարեան լեռներում Կաճկաքար գագաթը (3931մ.), Ռշտունեաց լեռներում Առնոսը (3550մ.) եւ Արտոսը (3475մ.), Կանգուարի լեռներում Ականիք գագաթը (3350մ.), Սուրենայ լեռներում Կարահիսար գագաթը (3676մ.), Սամսարի լեռներում Մ. Աբուլը (3301մ.) եւ Սամսարը (3285մ.), Գեղամայ լեռներում Աժդահակը (3597մ.), Վարդենիսի լեռներում Վարդենիսը (3522մ.), Արեւել-

եան Սեւանի լեռներուն Յինալ գագաթը (3667մ.), Մռաւի լեռներուն Գիւմիշը (3724մ.) եւ Մռաւը (3343մ.), Հայկական լեռներուն Կամք գագաթը (3358մ.), Ջանգեզուրի լեռներուն Կապուտջուղը (3904մ.), Արամազդ գագաթը (3392մ.) եւ Բաղուց գագաթը (3256մ.):

Սոյն լեռնագագաթներից ոմանք բաւականաչափ բարձր լինելով ջրից՝ նրանց կազմած կղզիներուն կարող էին փրկուած լինել թէկուզ եւ քիչ քանակութեամբ մարդիկ ու կենդանիներ:

Ընդհանրացնելով միտքը, սոյնպիսի հաշուարկ կարելի է անել նաեւ երկրագնդի այլ լեռնային գօտիներուն, ու ճշդել թէ ո՞ր տեղերուն կարող էին փրկուած լինել մարդիկ:

Սեր լեռնաշխարհուն այդ փրկուածներից ոմանց սերունդներին հանդիպում ենք Խորենացու մօտ, Արշակունեաց առաջին արքայի կազմած հայոց նախարարական գահերի անուանացանկում: Նրանք են Աբեղեանները, Գաբեղեանները, եւ Անգեղ տան նախարարները: Քանզի Աբեղեաններն ու Գաբեղեանները Ադամի Աբել եւ Կայեն որդիների տօհմերն են (*Արաքները Կայենին անուանում են Գաբիլ = Գաբեղ*): Իսկ Անգեղ տան մասին արդէն իսկ խօսեցինք:

#### 7. Ջրիեղեղից յետոյ Նօյի առաջին

նստավայրն ու տիրոյթը

Տրամաբանութիւնն յուշում է, որ տապանից դուրս գալու օրերին Նօյ նահապետն իր բնակավայրը պիտի հաստատած լինէր հենց տապանի հանգրուանի շրջակայքում, քանզի ջրերը դեռեւս ամբողջովին չէին նահանջել իրենց այսօրուայ սահմաններից ներս:

Կրկին անդրադառնանք «Շումերական Արքայացանկ»-ին (*Արտակ Մովսիսյան, «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում», էջ 104*):-

«Երբ ջրիեղեղը տարածվեց (երկրի) վրա եւ թագավորութիւնը իջեցվեց երկնքից (երկրորդ անգամ), (նախ) Քիշում էր թագավորութիւնը: Քիշում Գա[...]ուրը դարձավ թագավոր (եւ) իշխեց 1200 տարի»:

Սոյն սումերական արձանագրութիւնում յիշատակուած նախաջրիեղեղեան արքաներից եւ ոչ մէկի նստավայրը չի կոչ-

ւել Քիշ: Ուստի բացառում է Քիշ անունով քաղաքի գոյութիւնը ջրհեղեղից առաջ:

Յետեւութիւն 1.

Քիշը եղել է Նոյի առաջին բնակավայրի անուանումը:

Հայաստանի պատմութեան ատլասում Քիշ քաղաքը տեղադրուած է Բաբելոնին կից: Եթէ այդպիսին իսկապէս յայտնագործուել է, ապա կարելի է ենթադրել, որ այդ վայրում էլ նոյնանուն մի քաղաք է կառուցուել յետագայ ժամանակներում:

Վերադառնանք Խորենացուն.- «Յետ նաւելոյն Քսիսութըրեայ ի Հայս եւ դիպելոյ ցամաքի, գնայ, ասէ, մի յորդոց նորա կոչեցեալն Սեն ընդ արեւմուտս հիւսիսոյ դիտել զերկիրն ...»:

Ջրհեղեղից յետոյ հայկական միջագետքի Արարադ լեռան շրջակայքում երեւացող ցամաքները եղել են դրա հիւսիսային կողմերում եւ ոչ թէ հարաւում: Այդ պատճառով իսկ Սէն-Ջրուանի առաջին հետազօտական ուղեւորութիւնը եղել է այդ Արարադից դէպի հիւսիս արեւմուտք, բայց ոչ հարաւ: Հետեւաբար «երկրորդ անգամ երկնքից իջած թագաւորութեան» (Նոյի) նստատեղի Քիշը չէր կարող լինել Բաբելոնին կից, որտեղ ցամաքը դեռեւս չէր երեւացել:

Յետեւութիւն 2.

Ջրհեղեղից յետոյ առաջին թագաւորանիստ Քիշ քաղաքը պէտք է փնտրել Նպատական լեռների ու դրանց հարակից Արարադ լեռան անմիջապէս արեւմուտքում, Տիգրիսի հունի մօտակայքում, Նոյեան տապանի հանգրուանից ոչ հեռու, ներկայիս Ջազիրէ Իբն-Օմարի շրջակայքում (*Պարզում է, թէ ինչո՞ւ այդ վայրը «ջազիրէ» (արաբերէն՝ «կղզի») է կոչուում մինչեւ այսօր*):

Հայկական իրականութեան մէջ պահպանուել են տեղանուններ, կազմուած «Քիշ» արմատով: Դրանցից է «Քիշտան» քաղաքը Կունմախայի սահմաններում, Հռոմկլայի մօտակայքում: Դա գտնուել է Նոյեան Քիշի հետ նոյն հորիզոնականի վրայ: Դա կը նշանակի, որ Քիշ քաղաքի բնակիչներից ոմանք ժամանակի հետ գաղթել են ու բնակուել նոր տարածքներում:

Քիշ-ի բարբառայնացումով՝ ունեցել ենք 1.«Քես-ուն» քաղաքն ու շրջանը Հռոմկլայից հիւսիս. 2.բացառաբար մինչեւ օրերս հայաբնակ «Քես-ար»-ը՝ Միջերկրականի հիւսիս-արեւելքում, պատմական Կիլիկիայում. 3.Ալանաց դրունքի հարաւ-

արելելքում «Քիստք»-ը, ինչը կարծում ենք, որ «Քիստ(ան)ք»-ի ամփոփումն է (նայել «Հայաստանի պատմության ատլաս», Ա. մաս, էջ 43, ըստ «Աշխարհացոյց»-ի):

Թուրքերենում մեր քահանաներին տրուած «քեշիշ» անւանումը, քրիստոնէայ արաբների «քասսիս=քահանան», ու հայոց մօտ «Քեշիշեան» ազգանունը մի գուցէ առաջացած լինեն պատմական նոյն արմատից... («Քեշիշ»-ը համեմատել՝ «Քսիսութրայ»-ի «քսիս»-ի հետ, իսկ «Քիշ»-ը հնդկական «Քշ-ատրա»-ի հետ, ինչը կարելի է հասկանալ «Քիշից-տրուած»):

«Քսիսութրա»-ն այս տեսանկիւնով ստուգաբանելու դէպքում ստացում է, որ նշանակել է «Արի քեշիշ՝ Ութ», այսինքն «Ար(այ) Աստուծոյ քահանայ Ութ», նաեւ «քաջ քահանայ Ութ»:

Այս բոլոր փաստարկներով հանդերձ, մեր համոզմամբ «Քիշ» անուան հնագոյն ուղղագրութիւնը պէտք է լինէր «Գէս» (ինչպէս «Գանգէս» գետանուն մէջ), որից էլ խորենացու յիշատակած «Գիսանէ» հոգեւորականները Տարօնում, նաեւ հայկական տօմարում աւանդուած 8-րդ «Գիզակ» ժամանունը (էլի Նօյ-Ութի հետ է կապուած), որը մենք առաջարկում ենք ուղղել «Գիսակ»:

Քանզի հայերենում «քսու», «քսութիւն» բացասական իմաստով բառերի արմատը կարող է «քիս» լինել, եւ Նօյ նահապետն իր նստավայրին այդպիսի իմաստաւորումով անուն չէր տայ հաստատապէս: Մինչդէռ «Գէս»-ը դրական բովանդակութիւն ունի, ու տառացիօրէն կը նշանակի «գոյի գլխի էութեան սերմ», որի մէջ է եւ իմաստութիւնը եւ արարչականութիւնը, նաեւ գլխի եւ մօրութի մազը (համազօր հողի բուսականութեանը): Երբ գիտենք թէ հնագոյն ժամանակներից հոգեւորական այրերը եղել են երկարավարս ու մօրութով: «Գէս»-ը՝ որպէս տեղանուն, ենթադրում ենք, որ տրուել է անտառապատ լեռնային վայրերին (համեմատել ստորեւ բերուած «Գիշի» տեղանուն պարագայի հետ):

Հայկական լեռնաշխարհում բազմաթիւ վայրերի անուններ են բաղադրուած «Գէս», «Գիշ», «Գիս» եւ «Քիշ» արմատներից: Տեղանունների բառարանում գրանցուածներից բերենք ուշադրութեան արժանի մի քանիսը:

«Գեսանցը խելեր - Գյուղ Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ի Մուշի գավ-ում» - Հաշտեանքում:

«Գեսմանլի - Գյուղ Կարսի մարզի Օլթիի օկրուգում»:

«Գիշենուտ – 1.Գետակ ճորոխի ավազանում: 2.Գյուղ Արմ Ղայաստանում, Էրզրումի նահ-ում, Սպերի շրջ-ում: 3.Լեռ Ղայկական լեռնաշխարհում, Պոնտական լ-ներում»:

«Գիշի, Գեշի, Գիշ - Գյուղ Լեռնային Ղարաբաղի ԻՄ Մարտունու շրջ-ում: Ժողովուրդը Գ անունը կապում է գինեշատ եւ գինեվետ բառերի հետ»:

«Գիս - Ավան Մեծ Ղայքի Ուտիք աշխ-ում: Ուսումնասիրողները տարբեր ժամանակներում գ նույնացրել են Նուխի մոտ գտնվող Քիշ (հնում՝ Գիշ) գյուղի հետ»:

«Գիսանե - 1.Ավան եւ դաստակերտ Մեծ Ղայքի Տուրուբերան աշխ-ի Տարոն գավ-ում: 2.Մեհյան (բագին, կուռք) Մեծ Ղայքի Տուրուբերան աշխ-ի Տարոն գավ-ում, Քարքե լ-ն լանջին»:

«Գիսխի, Կիսխա, Քիշխա, Քիշխա դուռ, Քսխա - 1.գետակ ճորոխի ավազանում, նրա թորթում վտակի աջակողմյան օժանդակը: 2.Գյուղ Արմ Ղայաստանում, Էրզրումի նահ-ի Էրզրում գավ-ում: Տեղացիները գ-ն անվանում էին Քիշոստան»:

Սուրբ Սարգիսը (*սար-Գիս*) սարերում ապրող եւ «մտաւոր սերմ արարող» մենակեաց Գիշ-Գիս է եղել, բարձրագոյն հոգեւորական-ուսուցիչ, ինչպիսիք են Տիբետեան ու Յնդկական յօգերը:

8.Թման, Թորդան, Թորդում

«Ղայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան»-ում կարդում ենք.-

«Թման - Բեթմանին, Բետմանեն, Բետմանին, Գարեեի Թմանին, Գյուղ Ութից, Թմանին, Թմանոն, Թեմանիս, Թեմանոն, Թըմնիս, Թմանին, Թմանոն, Թմնին, Ղաշթանե, Ղեշտանե, Սիմանիե, Սիմանում - Գյուղ Մեծ Ղայքի Կորճեք աշխ-ում, Մասիուս (Ջուղի) լ-ան շրջ-ում. նրա հր ստորոտում: Ղետագայում տարբեր անուններով մտնում էր Արմ Ղայաստանի Վանի նահ-ի Ղեքյարի գավ-ի Բեթմանե կամ Ղեշտանե շրջ-ի մեջ: Ըստ ավանդության Նոյը հր տապանով սկզբում կանգ է առել Մասիուսի գագաթին եւ, երբ նրա աղխից 8 հոգի իջնում են տապանից եւ բնակություն հաստատում լ-ան ստորոտում, այդ բնակավայրը կոչվում է Գյուղ ութից»:

Այ քեզ հրաշք աւանդութիւն: Անչափ շատ բան է ասուել այս մէկ պարբերութեան մէջ:

Նախ, որ ջրհեղեղի աւարտին Նօյն ունեցել է կայքի ընտրութեան հնարաւորութիւն, քանզի տապանի շրջակայքում երեւելի է եղել բաւականին ընդարձակ կղզի: Նրա հետեւորդներից 8 հոգի իջել են տապանից ու հաստատուել այդ լեռ-կղզու (*Հայոց Միջագետքի Արարադ լեռան*) հարաւային ստորոտում, ու բնակատեղին կոչել են Թման:

Սակայն աւանդութեան մէջ կայ քննարկելի անճշտութիւն: Եթէ տապանից իջած 8 հոգիները այդ Արարադի ստորոտին են հաստատուել՝ ապա ջրերը չեն ծածկել դրա գագաթը, եւ տապանն էլ չի նստել գագաթին: Հետեւաբար ջրի մակարդակը հասած կը լինի ծովի մակերեսից առաւելագոյնը 1000-1500 մետր բարձրութեան (*Թման գիւղի տեղադրութեան բարձրութեամբ*): Այս դէպքում Հայկական լեռնաշխարհի մեծագոյն մասը ջրհեղեղեան ջրի ծածկոյթից դուրս մնացած կը լինի, իր բնակիչներով հանդերձ:

Նօյը շարունակել է ծփալ ջրերի վրայ ու աւելի հարմար տեղ է որոնել, ոչ շատ հեռանալով Թմանից: Նա նախընտրել է Արարադի Տիգրիսին հարող փեշերը, (*այդ օրերում Տիգրիսի գետաբերանը*) այսինքն նաւարկել է Թմանից մի քիչ հիւսիս արեւմուտք ու կայանելով հիմնել Քիշը:

Պարզենք թէ ի՞նչ է նշանակում Թման-ը:

Բառարանում յիշատակուած տարբերակներից ամենադիպուկը «Գիւղ Ութից»-ն է, երբ արդէն գիտենք թէ Նօյի անունը հենց «Ութ» է, ուրեմն գիւղը կրել է Նօյի անունը, որպէս «Նօյականների գիւղ»:

Պարզ է, որ «Թման»-ը առաջացել է «Ութման»-ից, «Ութի մարդիկ» իմաստով:

Յետագայ դարերում տրուած «Հաշթանե»-ն բաղադրուած է «հաշթ-անե» կամ «հաշթ-տանե» մասնիկներից, քանի որ անլան ուղղագրութիւնը աւանդուել է նաեւ «հաշտանե» ձեւով: Առաջինում «հաշթ»-ը (*առաւել ծղորիտ՝ «Յաշտ»*) քրտերէնում նշանակում է «ութ», իսկ «անե»-ն հայերէնի «անի» յոգնակերտ մասնիկը կարող է լինել, ուստի կ'ունենանք «Հաշթանե = Ութեանք = Նօյեանք»: Երկրորդ ձեւում ունենք «Հաշթ-տանե», այսինքն «Ութի տնից է»:

Համոզուած ենք, որ հայկական «Յաշտեանք»-«Հաշտեանք» գաւառի անունը բովանդակում է այդ իմաստը: Քանզի «հաշտ» լինելը ենթադրում է ամբողջական ու կատարեալ լինել, երբ «Ութ»-ն ինքնին կատարելութեան թիւն է ու հաւերժութեան նշանը:

Թմանի միւս անուանումների մէջ թաքնուած են ժամանակագրական շերտեր: Թման-ը «Գյուղ Ութից»-ից յետոյ հաստատապէս հնագոյնն է: Յաջորդը Սիմանիե-ն կամ Սիմանում-ն է, որտեղ առկայ է «Սէմ»-ը՝ Ջրուանի մակդիրը, եւ «մանում»-ը (*մրա*) «մարդիկ»-ը: Հետեւաբար յստակօրէն երեւում է, որ գիւղը կրել է նաեւ նրա առաջնորդի՝ Նօյ-Ութի Ջրուան որդու «առաջնեկ» կամ «անդրանիկ» մակդիրը, ինչպէս եւ կոչուել է «Ման»-մարդկանց «սէմը», բնակութեան նախամուտքը: Ժամանակագրական երրորդ շերտը յայտնւում է «Բեթմանե» կամ «Բեթմանին» անուան մէջ, որտեղ խօսքը արդէն իսկ ընդհանրական բնոյթ է կրում, որպէս «Մանի տուն», «մարդու տուն» (*արար., ասոր. երբ. «բեթ=տուն»*):

Այս վերջին անուանումը առկայ է հայոց տօմարում, «Մանի» 16-րդ (*երկրորդ ութ*) օրանուան մէջ:

Աստուածաշնչում կարդում ենք (*Երեմիա, գլ. ԾԱ.*)-

«...նորա դէմ պատրաստեցէք ազգերին, հրահրեցէք նորա դէմ Արարատի, Միմնիի եւ Ասքանասի թագաւորութիւնները...»:

Արարատեան եւ Ասքանագեան թագաւորութիւնները յստակօրէն հայկական են, իսկ Միմնի-ն գտնուել է դրանց միջեւ կամ հարեւանութեամբ, ուստի նոյնպէս հայկական պիտի լինի: Կարծում ենք սոյն «Միմնի»-ի թագաւորութիւնը եղել է հենց «Ութ-Ման»-«Թման»-ում եւ նրա շրջակայքում մինչեւ Ուրմիայ լիճ, երբ այն արդէն իսկ կոչուել է «Բեթմանին», յատկապէս որ ասուրական աղբիւրներում (*Խորսարադի արծանագրութիւն*) այն կոչուել է «Մանեցիների երկիր» (*Բեթ=երկիր, տուն*):

«Թման»-ի «Ութման» լինելը մեզ յուշեց նոյնպիսի զուգահեռ անցկացնել Թորդան եւ Թորդում անունների նկատմամբ, եւ պարզուեց թէ «Թորդան»-ը «Ութ-որդան» է, այսինքն «Ութի որդիները»:

Ահա թէ ինչու սբ. Գրիգոր լուսաւորչի եւ նրա ժառանգների ածիւնները ամփոփուել են այդտեղ:

«Թորդում»-ը «Ութ-որդում» է, «Ութի որդիների տօհմը կամ տունը» (ռուս. «դոմ»)-տունը առաջացել է հայ. «տօհմ»-ից):

Արդեօք կարելի՞ է պատահականութիւն համարել Թորթում գետանունն ու նրա օժանդակի մէջ Ութ-ի եւ Գիշ-ի ներկայութիւնը (Թորթում– Ութորթումի վտակի աջակողմեան օժանդակ գիսխի-Քիշխա):

Յետեւութիւններ անելը թողնում ենք մասնագէտներին:

### 9. Նօյ նահապետ, Երկիր Նաիրի եւ Նպատական լեռներ

Ս.Գ.Յմայակյանի «Վանի Թագավորության Պետական Կրօնը» երկի ծանօթագրութիւնների բաժնում (Հայաստանի ԳԱ հրտ. 1990, էջ 87-88) ընթերցում ենք.

«Նաիրի անունը բազմիցս հիշատակվում է ասուրական աղբյուրներում, սկսած Թուկուլթի-Նինուրթա II-ի (մ.թ.ա. 1274-1245թթ.) ժամանակներից: Ասորեստանցիք ասելով “Նաիրի”, տարբեր ժամանակներում եւ տարբեր հանգամանքներում նկատի են առել տարբեր տարածք: Մ.թ. ա. 2-րդ հազ. վերջերին եւ 1-ին հազ. սկզբներին Նաիրի անվան տակ ասորեստանցիք միավորում էին իրենց երկրից հյուսիս ընկած տարբեր “թագավորությունները”, իրենց բազմաթիվ քաղաքներով հանդերձ (նրկատի էր առնվում Կաշիարի – Տուր-Աբդինի – լեռներից հարավ-արևմուտք, մինչեւ Ուրմիա (Կապուտան) լճի հարավային շրջանները՝ հարավ արևելքում եւ մինչեւ Արեւմըտյան Եփրատի վերին հոսանքները (երբեմն նաեւ Սել Օովը)՝ հյուսիսում, ընկած տարածքը): Մ.թ.ա. IX դարում Ասորեստանից հյուսիս կազմավորվում են առանձին մեծ տերութիւններ, եւ հին Նաիրի հասկացության կողքին ի հայտ են գալիս Նաիրի անվան եւ այլ նշանակություններ. Նաիրի է անվանվում Խուբուշկիա երկիրը (տեղադրվում է Վանա լճից հարավ, Արեւելյան Տիգրիս (Բյուհտան) գետի ավազանում), որին զուգահեռ հիշատակվում է նաեւ ասուրական Նաիրի փոխարքայության մասին, Ամեդու (այժմ Դիարբեքիր) կենտրոնով: Ուրարտուի արքաները Նաիրի անունը հիշատակում են միայն արքայդերէն լեզվով գրված իրենց արձանագրություններում, այս անվան տակ նկատի ունենալով Ուրարտուն: Ասորեստանցիք,



սակայն, Ուրարտուն համարում էին միայն մի մասը Նաիրիի (եթե նկատի չէր առնվում, իհարկե, Խուրուշկիան կամ Նաիրի փոխարքայությունը (Գ. Ա. Меликишвили, *Наири – Урарту*, էջ 13-20):

Սոյն տուեալները գալիս են հաւաստելու, որ «Երկիր Նաիրին» ընդհանրական մի անուանում է, տրուած հայկական լեռնաշխարհին եւ անմիջական հարակից շրջաններին:

Թէ ինչո՞ւ է այդպէս եւ ինչի՞ց է առաջացել այն:

2005 թուականում Յ. Գ. Ակադ. պատմութեան ինստիտուտի կազմակերպած գիտաժողովում մեր ելոյթով ներկայացրինք հայոց երկբարբառ ձայնաւորների հնչիւնային համակարգը (*տես «Յօդուած 9*, որտեղ տեսանք թէ իւրաքանչիւր երկբարբառ ունեցել է երկու հնչիւն, ինչպէս «աւ»-ը «ավ» եւ «օ», «իւ»-ը «իվ» եւ ֆր. «ս» տառի հնչիւնով, «այ»-ը նաեւ «օյ», ինչպէս «Արայ»-ն հնչում է նաեւ «Արօյ». միջնադարեան արձանագրութիւններում «Պայծառ»-ը արտայայտուել է «Պօծառ» (*փոխանակ «Պօյծառ»-ի*), «պայման»-ը՝ «պօման» (*փոխանակ «պօյման»-ի*), ինչպէս եւ «պայքար» բառի «պայ» արմատից առաջացել են ռուս. «բայ-եց=մարտիկ»-ը եւ «բօյ=կռիւ»-ը, եւ այլն:

Մենք գտնում ենք, որ վերելում յիշատակուած Ասուրական, Ասորական եւ Ուրարտական սեպագիր արձանագրութիւններում տեղ գտած «Նաիրի» անունը պէտք է տառադարձել «Նայրի», որտեղ «այ» (*աի*) երկբարբառը կարելի է հնչեցնել նաեւ «օյ» (*թաւ նշանի բացակայութեան պարագայ*):

Այսպիսով «Նաիրի-Նայրի»-ն «Նօյրի» հնչեցնելով հասնում ենք Նօյ նահապետին եւ նրա ու նրա սերունդների յետջրհեղեղեան բնակտարածքին:

Սոյն հիմնաւորումներով էլ Խորենացու նշած «նաւակառոյց» նահապետի ածական անունը պէտք չէ գրել «Նոյ», այլ «Նօյ»: Ինչո՞ւ:

Խօսենք օրինակով: «Չաւ» բառից առաջացել է «հօր» հընչող «հաւր»-ը, որից էլ «հայր»-ը: Սոյն սկզբունքով էլ «նաւ»-ը պիտի վերածուէր «նաւր»-«նօր»-ի (*ապա եւ «նայր»-ի*), բայց ոչ «նոր»-ի, քանզի վերջինիս արմատը «նու» է: «Նօր»-ը արական բնոյթի նորն է, իսկ «նոր»-ը՝ իգական, երբ գիտենք թէ «նուբար»-ը իգական անուն է եւ նշանակում է իգական բնոյթի

նոր պտուղ: Հետեւաբար «Նորայր»-ը՝ որպէս «նոր տղամարդ», պէտք է լինէր «Նորայր» ուղղագրութեամբ, բայց որպէս նորատի կնոջ (*նու-ի*) այր՝ «Նուրայր» (*ինչպէս ունենք «Նուրհան»-ը՝ «կնոջ առաջին ծննդաբերածը»*):

Ջրհեղեղեան նաւակառոյց նահապետի մակդիրը՝ որպէս արական բնոյթի, պիտի առաջանար հենց «նաւ»-ից, ու դառնար «Նայ»՝ «Նոյ» հնչիւնով, որից էլ Նայրի-ն (*Նաւր+այրի*) «Նորայրի» երկիրը, ունեցուածքը, կալուածը, երբ «ի»-ն նշանակում է «պոտենցեալ»:

Ինչո՞ւ «Նայր»-ը կարելի է կարդալ «Նոր Այր»: Բերենք հնագոյն մի օրինակ:

Արմէն Դաւթեանի «Աստապաշտութեան Դրսելորումներ Հայասական Դիցարանում» յօդուածում կարդում ենք.

«Ներգալն անդրաշխարհի է գնում Էրրա անվամբ՝ իսկ այնտեղից գալիս է Ներգալ անվամբ, կարծես լինելով իր իսկ փոխարինողը»:

Այո, Էրրա-ն նորոգուել-վերածնուելով անուանուել է «Նոր Էրրա գալ» >Ներգալ: Սա մենք պիտի տառադարձէինք «Ն-էրկալ» («Նոր Էրրան կալողը», որը նոյն ինքն Ութն է, Նոյը):

Նոյն հիմունքներով էլ Հայկական լեռնաշխարհում Հայոց միջագետքի Արարադ լեռան հիւսիսից արելելք երկարող «Նըպատական» լեռնաշղթայի անուանումը կարելի է հասկանալ 1.Նոյա-պատկան, 2. Նոյի տարածքը պատող ու պաշտպանող լեռնաշղթայ, 3.«նոր ապատ-բնակավայրի ակը», լեռնաշղթան:

10. Նոյ նահապետ եւ Նպատ լեռ

Արտակ Մովսիսյանի «Սրբազան Լեռնաշխարհը» գործում (*էջ 28*), կարդում ենք.-

«"Գիլգամեշ" էպոսի աքադական տարբերակում ջրհեղեղից փրկված հերոսին աստվածները բնակեցնում են "գետերի բերանի մօտ" շնորհելով անմահություն»:

Անմահութիւն ստացած եւ աստուածացած հերոս Ութու-ն նոյն ինքն Նոյը, աստուածների (*Անգեղ-հրեշտակների*) խորհրդով (*Քիշից*) փոխադրուել է ապրելու «գետերի բերանի մօտ»:

Նաեւ՝

«Խեթական տարբերակում հերոսն (*Գիլգամեշը*) ընկերոջ հետ մեկնում է անմահության որոնման Եփրատի հոսանքն ի վեր: Իսկ Էպոսի բաբելոնյան տարբերակում Գիլգամեշը հաղթահարում է Մաշու լեռներն ու տասներկու ասպարեզ ձգվող թանձր խավարը, հասնում դրախտ հիշեցնող քարերի այգին, ապա անցնում մահվան ջրերը, հանդիպում ջրհեղեցից փրկված ու անմահություն ստացած հերոսին, նրա շնորհիվ ծեռք է բերում «անմահութեան ծաղիկը»»:

Մեջբերումներից տեղեկանում ենք, որ Նոյ նահապետն Մաշու-Մասիոն լեռների միջավայրից հիւսիս բարձրանալով իր վերջնական բնակութիւնն է հաստատել կամ Տիգրիսի, կամ էլ Եփրատի ակունքների մոտակայքում:

«Մաշու լեռները» անմիջականօրէն առնչում են Տիգրիսին: Հետեւաբար Գիլգամեշը բարձրացել է Տիգրիսն ի վեր եւ ոչ թէ Եփրատով: Ուստի Խեթական տարբերակը աղաւաղուած պիտի համարել:

Բարձրանալով հիւսիս՝ նա հասել է «մահուան ջրեր»-ին, որոնք Եփրատի ճիւղ Արածանիի ակունքներն են, որտեղ պետք է մկրտուէր (*մէջով անցնէր*), ֆիզիկապէս մաքրուելով (*մահանալով*) նորոգուելու համար, այլապէս Գիլգամեշին չէր թոյլատրուի Նոյի հետ տեսակցել: Էպոսից կարելի է եզրակացնել, որ Նոյը ապրելիս է եղել դեռեւս Գիլգամեշի օրերում, Արածանիի ակունքի մօտ:

Պատմական Հայաստանի Նպատ լեռան անունը յուշում է, որ դա եղել է Նոյի նոր ապաստը, բնակատեղին, ապա եւ դրա վրայ է պատուել-պատանքուել ու թաղուել նահապետը, ինչի պատճառով էլ սոյն լեռը սրբատեղի է հռչակուել հնագոյն ժամանակներից: Դրան հարակից կառուցուել է Բագաւանը, քրմերի աւանը:

«Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան»-ում կարդում ենք.- «Բագավան - Հեթանոսության շրջանում եղել է կրոնական կենտրոն: Ըստ աւանդության այստեղ է թաղված Մաժակ քրմապետը: Բագավանում այն ժամանակ տեղի էին ունենում նավասարդի տոնախմբությունները, հրավիրվում էին կրոնական ժողովներ»:

Նաւասարդ բառում եւ «նաւ»-ը կայ եւ «նոր արդար սերմ»-

ի գաղափարը, որոնք առաջին հերթին առնչուում են Նոյ նահապետին, ապա եւ հացահատիկին:

Յօդուածի շարունակութեան մէջ կարդում ենք. «Ավանդութիւնն ասում է, որ Գրիգոր Լուսավորիչը Բագավանի մօտ, Արածանի գետում մկրտեց հայոց Տրդատ 3-րդ թագավորին, նրա մերձավորներին ու զինվորներին»:

Ջրով մկրտութիւնը խորհրդանշում է ջրով մաքրուելու ծէսը, որը զուգահեռ է աշխարհի եւ մարդկութեան «ջրհեղեղով» մաքրուելուն, ինչը կատարուեց Նոյի օրերում եւ նրա հետ: Ուստի պատահական չէր, որ սբ. Գրիգոր Լուսավորիչն հենց Նոյ նահապետի ապրած ու թերեւս թաղուած տեղի մօտերքում է կատարել ընդհանրական մկրտութեան ծէսը, հաւաստելով Նոյի շիրմին ու հոգուն, որ նրա ժառանգները վերստին են մաքրուել ու վերադարձել (*նախնիների անդրիների պաշտամունքից կռապաշտութիւնից*) բուն հաւատքին:

#### 11. Սէն

Գրաբարեան Հայերէնում ունեցել ենք «սէան» կամ «շէան» բառը, որից ընկել է «ա»-ն ու բառը դարձել «սէն» կամ «շէն», ինչը տան նախամուտքն է: Այլ լեզուներում բառից ընկել է «է»-ն ու ստացել «սամ» կամ «շամ» ձեւն ու հնչիւնը, ինչպէս ֆրանսերէն «Samedi =Շաբաթ» բառում, երբ Շաբաթ օրը եօթնօրեակի «շէն»-ը կամ նախամուտքն էր, առաջին օրը:

Սէնը-Շամը՝ որպէս մարդու անուն, նշանակում է «առաջնեկ»: «Ար-շամ»-ը «Ար»-ի առաջնեկն է: «Գերսամ»-ը «Գեր»-ի առաջնեկը, «Բարշամ»-ը՝ «Բար»-ի:

Սամոսատը կամ Շամշատը, Շամշատինը, Արշամաշատը Նոյի Ջրուան-առաջնեկ որդու տօհմի կամ ժառանգների բնակավայրերն են եղել:

Պէտք չէ շփոթել ժամանակակից ըմբռնումով «Սէնիտ»-սէնականներին սոյն առաջնեկի հետ (*Stu՝ յօդուած «3»-ում*):

Շատ տարօրինակ պիտի լինէր, որ Նոյի երեց որդու՝ Ջրուանի «սէն» մակդիրը բացակայէր Հայկական լեռնաշխարհի պատմական տեղանունների եւ մարդկանց անունների ցանկում կամ պարզ բառերում, նաեւ նրա լեզուն տարբերուէր իր եղբայրներ Քամ-Տիտանի ու Յաբեթի լեզուներից:

Այս խորանկարի (*Ֆոնի*) վրայ, տարօրինակ չէ, որ մերձաւոր արեւելեան երկրներից Սիրիան, Լիբանանը, Յորդանանը եւ Պաղեստինը միասնաբար կոչոււմ են Շամի երկրներ, Քանզի այդ երկրները Հայոց լեռնաշխարհի նախամուտքն են, յատկապէս Սիրիոյ մայրաքաղաք Դամասկոսը, որի հնագոյն անունն է «Շամ» / «Շէմ» եւ նախամուտքն է անապատից դէպի քաղաքակրթութիւն-Արիական երկրներ:

Հիմքեր ունենք ասելու, որ այդ երկրների անցեալի ու ներկայի բնակիչները երբէք «սէմիտական» չեն եղել: Յատկապէս, որ «անտիսեմիտ» ասելով միջազգայնօրէն հասկացոււմ է միայն «հակահրեայ» եւ ոչ երբէք «հակա-արաբ» կամ «հակա-ասորի»:

## 12. Օլիմպոս եւ Ջրուան

Ըստ Խորենացու՝ Նոյի երեց որդու, Ջրուանի որդիների բնակութեան ծայրամասը արեւմուտքում նախկինում կոչուել է Դիւցընկեց, որն էլ յետագայում անուանափոխուել է Օլիմպոսի:

Ջրուանի նորածին արու զաւակները (*յետագայում Յոյների աստուածները*) նրա քոյր Աստղիկի կարգադրութեամբ այնտեղ են փախցուել արեւելքից:

Կրկին դիմենք Խորենացուն («Պատմութիւն Հայոց», Գ.Խ. Ս. 7. *ԳԱ հրատ.*, եր. 1991, էջ 26).

«Քանզի ոմանք յարեւելից՝ Ջրուան գլխն կոչեն, եւ Ջարուանդ զգաւառն անուանեալ ասեն մինչեւ ցայժմ»:

Թարգմանենք. «Քանզի արեւելքում ոմանք Սէնը Ջրուան են կոչում, եւ Ջարուանդ են անուանում նրա անուանակիր գաւառը մինչեւ այսօր»:

«Ջարուանդ»-ով հաստատոււմ է, որ «Ջրուան» անուան «Ջր» արմատը առաջացել է «Ջար»-ից:

«Ջար» արմատին հանդիպում ենք հայկական մի շարք անուններում եւ տեղանուններում, ինչպէս Ջարմայր, Ջարուհի, Ջարեհ, Ջարիշատ, Ջարեհաւան, նաեւ հասարակ բառերում, ինչպէս զարմ, զարմանալ, զարգանալ, զարթօնք, զրահ, նոյնիսկ ժողովրդական «Թամզարայ» պարերգում, եւայլն:

Սրանցից ամենէն յատկանշականը Ջարիշատ քաղաքի անունն է, որը կարծում ենք Ջար-Ջրուանի տօհմի բուն բնակավայրն է եղել, քանզի «շատ» արմատը նաեւ «բնակավայր» է

նշանակում, ինչպես Արտաշատը Արտաշեսի տօհմի բնակավայրը, Երուանդաշատը՝ Երուանդի տօհմի բնակավայրը: (Անգլ. *set-tel*=մի տեղ հաստատուել, երբ «շտ»-ը անգլ. «set»-ն է, իսկ «tel»-ը «տեղ»-ը: «Սատ»-«սիտ»-ն ու «շատ»-«շիտ»-ը պայմանականօրեն «հոմանիշ» զոյգեր են: Մեր ժողովուրդի մօտ բարբառային երանգով կայ արտայայտութիւն՝ «ստրուի՛ր» = «տեղդ նստի՛ր», «մի տեղ հարմարուի՛ր»):

### 13. Նօյի անագ որդու՝ Զրուանի սերունդը

Հայաստանում, նախքան Հայկ

Խորենացի.- Հայկ «Երթեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն (յիշենք Ցրոն-ը) դադարեալ բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ՝ շինէ անդ տուն բնակութեան կալուածոց եւ տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արամանեկայ»:

Քաղելով Ուիմպիոդորոսից՝ Խորենացին ասում է, թէ Զրուանի կրտսերագոյն որդին է եղել Տարբանը, որի զբաղեցրած գաւառը իր անունով կոչուել է Տարան-Տարօն, իսկ նստավայրը նա կոչել է Ցրոն, որպէս հայրական տօհմից առաջին բաժանուածների - ցրուածների կենտրոնը: Տարբանը կարծ ժամանակով իջեւանել է Բակտրիացւոց սահմաններում (Աֆղանիստան) եւ այնտեղ թողել իր որդիներից մէկին:

Հետեւութիւն.- Տարօնցիք կան Մշեցիք Նօյի երեց որդու Զրուանի տօհմից են (Հաշտեանք):

Ահա եւ Հայկից առաջ Հայաստանում բնակուող իր ազգակից փոքրաթիւ մարդկանցից մի խմբի ծննդաբանութիւնը:

Խորհրդային Հայաստանի Ակադեմիայի հրատարակած «Հայ Ազգագրություն եւ Բանահյուսութիւն» շարքի 5-րորդ հատորում, էջ 249, հեղինակ Գեորգ Հալաջեանն ասում է.

«Մինչեւ XVII դարը չի հանդիպում Դերսիմ անունը: Թուրքական տիրապետությունից հետո է, որ Մանանաղիք, Քարիա եւ նույնիսկ Զրուան տեղանունների փոխարեն հանդես է գալիս Դերսիմը»:

Այս տուեալներում ինձ թւում է թէ կայ թիրիմացութիւն, քանզի Դերսիմը համապատասխանում է հնագոյն «Եկեղեաց» գաւառին եւ ոչ թէ «Մանանաղիք»-ին, որը նրա արեւելեան սահ-

մանակից գաւառն է: Ըստ այնմ Դերսիմ-Եկեղեաց լեռնաշխարհը հնագոյն ժամանակներում կոչուել է Ջրուան, ապա նաեւ Եկեղեաց, քանզի հնագոյն ժամանակներից այդ տարածքը եղել է պաշտամունքային կարեւորագոյն մի կենտրոն, իր բազմաթիւ տաճարներով ու վանքերով, որոնք քրիստոնէութեան որդեգրումով փոխարինուել են քրիստոնէական վանքերով ու եկեղեցիներով:

Այսպիսով «Ջրուան»-ի յետքերը յայտնաբերուեցին պատմական Չայաստանի տարածքում:

Պարզուում է թէ ինչո՞ւ հնագոյն «Ջրուան»-«Եկեղեաց» գաւառը ներկայիս Թուրքիայում անուանուում է «Դերսիմ»: Դրանով տեղաբնիկները հնագոյն անունը փոխարինել են Ջրուանից տրուած «սէմ» (*«առաջնեկ»*) ածականով, քանզի «Դեր»-ը «վանք» է նշանակում, իսկ «սէմ»-ը կամ աղաւաղուած «սիմ»-ը համազօր է «Ջրուան»-ին, այսինքն ունենք «Ջրուան-սէմի վանք», նաեւ «առաջին վանք»: Թէ ինչ հիմք ունենք նոյնացնելու «սէմ»-ն ու «սիմ»-ը՝ դիմենք մատենագրութեան:

Խորենացին բերում է յոյն Ողիմպիոդորոսի խօսքը. «Յետ նաւելոյն Քսիսութեայ (*Նօյ-ն է*) ի Չայս եւ դիպելոյ ցամաքի, զնայ, ասէ, մի յորդոց նորա կոչեցեալն Սէմ (*Ջրուանն է*) ընդ արեւմուտս հիւսիսոյ դիտել զերկիրն, եւ դիպեալ դաշտի միում փոքու առ երկայնամաստիւ միով լերամբ, զետոյ ընդ մէջ նորա անցանելով... դադարէ առ զետովն երկլուսնեայ աւուրս, եւ անուանէ յանուն իւր զլեառնն Սիմ»:

Ջրուանի կողմից անուանակոչուած լեռը պատմական «Սիմսար»-ն է, «առաջին սար» իմաստով: Բնական է, որ «սէմ» արմատի բարդուելով «է» ձայնաւորը պիտի փոխուէր «ի»-ի (*Սէմ+սար>Սիմսար*) եւ յետագայում «սար»-ի անկումով անունը պիտի յայտնուէր «Սիմ» ձեւով փոխանակ «Սէմ»-ի:

#### 14. Նօյի կրտսեր որդու՝ Յաբեթի սերունդները

Չայաստանում, նախքան Չայկ

Խորենացին բերում է Մար Աբաս Կատինայից հետեւեալը. «Արդ ի նոյն մատենէ սկսեալ ասացից. Յապետոսթ, Մերոօ, Սիրաթ, Թակլադ. որ է Յաբեթ, Գոմեր, Թիրաս, Թորգոմ. յետ որոյ Չայկ, Արամանեակ, եւ զայլսն ի կարգի...»:

Ըստ Աստուածաշնչի («ծննդոց, Գլ. Ժ. 3. Եզեկիել, գլ. ԻԷ. 74., Ա. Մնացորդաց, գլ. Ա. 6.) «Գոմերի որդիքը Ասքանաս, Րիփաթ եւ Թորգոմա»:

Յաբեթի որդի Գոմերի զարմերի բնակեցրած տարածքներից մէկը՝ ըստ մեզ, նրա անունով կոչուել է Կումմախա, որից էլ մ.թ.ա II-րդ դարում գոյացել է Կոմագենէի թագաւորութիւնը, պատմական Հայաստանի հարաւ-արեւմուտքում, Կիլիկեան Անտիոք (Մարաշ) մայրաքաղաքով: Դրա կազմի մէջ է եղել Քիշտան քաղաքը, Կումմախա-Սամոսատը (Շամշատ) քաղաքը: Դրան կից հիւսիս-արեւմուտքում է գտնուել «Կոմանա Ոսկէ» քաղաքը, որի շրջակայ տարածքը ընդունուած է կոչել «Կամմանու», ինչը մեր կարծիքով բարբառային տարբերակ է, եւ պիտի լինի «Գոմմանու»: Նոյնպէս եւ Կումմախան ու Կոմագենէն առաջարկում ենք տառադարձել «Գոմախա» եւ «Գոմագենէ», երբ վերջինս ակնարկում է Գոմեր-ի գեն-սերունդին, իսկ «Գոմախա»-ի «ախ»-ը ցոյց է տալիս Գոմեր-ի բնակութեան կենտրոնատեղին (*ուշադրութիւն դարձրէք «Գոմեր-Յոմեր-ոս» զուգադրումին*):

Վերջապէս պատմական Հայաստանի տարածքում սոյն-պիսի անուանումները երկնքից չեն իջել, եւ իրական հիմքեր են ունեցել:

«Հայաստանի եւ Հարակից Շրջանների Տեղանունների Բառարան»-ում գտնում ենք «Գոմ» արմատով բազմաթիւ գիւղանուններ, տեղանուններ, գետանուններ, քաղաքներ, բերդեր ու վանքեր, ինչպէս «Գոմ», «Գոմա գիւղ», «Գոմա ս. Գեորգ», «Գոմալի», «Գոմաձոր», «Գոմայր», «Գոման», «Գոմանայ», «Գոմանս», «Գոմանից», «Գոմասար», «Գոմարան», «Գոմարանց», «Գոմարդիաս», «Գոմարդիո», «Գոմարեթ», «Գոմարո», «Գոմարտեր», «Գոմայ ս. Աստվածածին», «Գոմայ Վանք», «Գոմաց վանք», «Գոմեր», «Գոմերանց», «Գոմերը», «Գոմերի ձոր», «Գոմերու ջուր», «Գոմերք», «Գոմեցոց ձոր», «Գոմեք», «Գոմըլոր», «Գոմըկ», «Գոմըկան», «Գոմըրգեր», «Գոմըք», «Գոմիր», «Գոմկանք», «Գոմոձոր», «Գոմո վանք», «Գոմո ս. Աստվածածին», «Գոմո ս. Գեվորգ», «Գոմպատ», «Գոմռեն», «Գոմռեշ», «Գոմս», «Գոմսար», «Գոմսուռ», «Գոմսուր», «Գոմրաշ», «Գոմրիե», «Գոմրտեր», «Գոմուր», «Գոմուրդաղ», «Գոմուց



վանք», «Գոմփոր», «Գոմք», «Գոմօղլու»:

Այս շարքում ոչ բոլոր «գոմ»-երը «կենդանիների փարախներ» են, այլ մեծաւ մասամբ «Գոմեր» նախահօր անունը կրող տեղանքներ են: Մի գուցէ Գումայրին եղել է Գոմեր-ի առաջին նստավայրը (*համեմատել «Գոմայր»-ի հետ*):

Գոմերի թոռն էլ կոչուել է իր պապի անունով՝ Թորգոմ (*թերեւս «Թոռ-գոմ»*): Իսկ Հայկը Թորգոմի որդին է, ուստի նա երբէք էլ «եկուոր» չի եղել, այլ վերադարձել է իր հայրենական տունը:

Հետեւութիւն.- Գոմերի սերունդներն էլ են եղել Հայկից առաջ Հայկական լեռնաշխարհում տեղ զբաղեցրած փոքրաթիւ մարդկանց շարքում:

Աստուածաշնչեան անիծեալ Սողոմ եւ Գոմոր քաղաքներից երկրորդի հիմնադիրները եւ բնակիչները Յաբեթի որդի Գոմերի ժառանգներից են եղել, որոնք՝ հեռանալով իրենց պապենական օջախից ու ապա աւանդութիւններից, պոռնկացել են ու դաժան ճակատագրի արժանացել: Նրանց ճակատագրակից Սողոմայեցիները եղել են Ծաւդեացիների սերնդներից, այսինքն Հայկ նահապետի Կադմոս թոռան ցեղից (*նայել զլուխ «19»-ում*):

(*Մենք բարոյական իրաւունք չունենք պատմական եղելութիւնները սքողելու: Այլապէս դարման չենք գտնի մեր ազգի երկհազարամեայ հոգեւոր ու բարոյական անընդհատական սայթաքումներին, նիւթական, մարդկային ու տարածքային կորուստների՞*):

#### 15. Բարբառներ եւ Լեզուներ

Խորենացին մէջբերում է անուն Բերոսեանն Սիբիլլայից. «Յառաջ քան զբուրգն, ասէ, եւ զբազմաբարբառն լինել ծայնի ազգի մարդկան, եւ զկնի նաւարկութեանն Քսիսութրեայ ի Հայս Ջրուանն եւ Տիտանն եւ Յապետոսթ լինէին իշխանք երկրի» (Պատմութիւն Հայոց, Գլ. Զ., էջ 23.):

Թարգմանենք. «Բուրգից եւ մարդկանց ազգի բազմաթիւ բարբառների կազմաւորուելուց առաջ, ասում է, եւ Քսիսութրայի դէպի Հայք նաւարկելուց յետոյ՝ երկրի իշխանները դարձան Ջրուանն, Տիտանն ու Յապետոսթն»:

Քսիսութրան Նոյն է: Ջրուանը նրա առաջնեկ որդին է, սուրբ Գրային Սէմը, Տիտանը երկրորդ որդին է, սուրբ Գրային Քամը, իսկ երրորդը՝ Յապետոսթն, Յաբեթը:

Հետեւում է, որ մարդկութեան նախնական մայր լեզուն այդ ջրհեղեղից ու առաջին բուրգ-աշտարակի կառուցման ծախսորդ փորձից յետոյ է տրոհուել բարբառների:

Խորենացու տուեալներով՝ աշտարակաշինութեան փորձից յետոյ, այդ գործին ներգրաւուած 72 առաջնորդները տարբեր ուղղութիւններով հեռացել են Բաբելոնից, եւ բացի մէկից՝ մնացեալ խմբերից կամ տօհմերից իւրաքանչիւրն օգտագործել է մայր լեզուից տարանջատուած ինքնուրոյն մի բարբառ:

Խորենացին (*նոյն, էջ 97*) ասում է. «Քանզի ի բաժանել լեզւացն ընդ ամենայն երկիր, ոչ խառն ի խուռն եւ ոչ անառաջնորդ այս լինէր»:

Մեր կարծիքով, այդ բարբառ-լեզուների միջեւ գործել են տառադարձութեան յստակ օրէնքներ, որոնցով միեւնոյն բառը մի այլ բարբառում կարող էր հնչել այլ կերպ, բայց ոչ կամայական:

Օրինակներին կը ծանօթանանք յաջորդ յօդուածներում:

16. Գողթանցիները արաբական առասպելներում

Արաբական վերոյիշեալ աղբիւրից տեղեկանում ենք, որ «Եա\*րաբ»-ը կանգնել է հայելու առաջ ու արտասանել մի նոր լեզուով (*հասկանալ «բարբառով»*): Ապա ոգեւորուած ասել է. «սա կը լինի բանաստեղծների ու երգիչների լեզուն»:

Յետագայում այդ լեզուն նրա անունով կոչուել է «արաբերէն»։ «Եա\*րաբ»-ը լինելով արաբերէնով խօսացող առաջին անձը, համարում է արաբների նախահայրը։ Նրա ծագումնաբանութիւնն սկսում է «Յուտ» պապից ու «Քահթան» հօրից:

Մեր ուսումնասիրութեամբ գտել ենք, որ «Եա\*րաբ»-ի պապի «Յուտ» անունը աղաւաղումն է «Ութ»-ի (*Եօյի*): Հետեւաբար «Քահթան»-ը Եօյի որդիներից մէկի անունը պիտի լինէր:

«Քահթան»-ը թագնուած է հայոց «Գողթան» գաւառան-ւան մէջ:

Տեղանունների բառարանում «Գողթն»-ը աւանդուել է նաեւ «Գաղթան» ձեւով, ինչը մեզ մի քայլով մօտեցնում է «Քահթան»-ին:

Գողթնցիները աչքի են ընկել յատկապէս իրենց ասացողներով ու երգիչներով, իսկ «Քահթան»-ի որդի «Եա\*րաբ»-ը այդ

բարբառն ստեղծել է հենց երգիչ-բանաստեղծների համար: Այս զուգահեռը նույնպես մի քայլով մօտեցնում է «Քահթան»-ը «Գողթան»-ին:

Այսպիսով արաբերենը կարող է լինել Գողթանցիների ստեղծած (*մի գուցե Չոկերի*) բարբառը:

Մենք առայժմ ձեռնպահ ենք մնում «Գողթան» անունը մեկնելուց, մինչդեռ արաբները «Քահթան»-ը բացատրում են նրա «քահթ» արմատով, որպես «ոչ բարեբեր հող», ինչպիսին է Գողթնը:

Արաբական առասպելը շարունակում է. «Եմենի առաջին բնակիչն էր Քահթանի որդի Եա\*րաբը»:

Մեր կարծիքով «Գողթան»-«Գաղթան»-«Քահթան»-ի բարբառային մի այլ դրսևորում է «Քաղդան»-«Քլդան»-ը, որը Քաղդեացիներին տրուած արաբական անուանումն է: Արաբական առասպելներում Պարսից ծոցի Ուր քաղաքի բնակիչները (*Սումերները*) եղել են Քլդանները, ինչը կը համապատասխանի «Գողթանցիներ»-ին:

Այս համեմատականները օդում կրակոցներ չեն, ունեն լեզուաբանական, մարդաբանական, պատմաբանական եւ մշակութային հիմքեր:

Անապատային (*բուժ*) արաբները բաղկացել են տասը տօհմերից, իւրաքանչիւրն իր տօհմանունով: Սակայն բոլորը միասին անուանուել են «Ալ-Արման»... (*նայել «Սուֆտահ ալ-լուդա ալ-Սարիյա ալքատիմա», հեղ. Անթուն Չկրի», հրատ. «Դար էլշրուք», Գահիրէ, էջ 1-ից 87-ի միջեւ*):

Արաբների այօրուայ անուանումը գալիս է հայկական-արամեական «հարաւ-արաբ» բառից, եւ նշանակում է «հարաւ», իսկ արաբներն իրենք զիրենք կոչում են «Արաբի», այլապէս 1.«հարաւցի»: Դա բնակութեան դիրքի անուն է եւ ոչ թէ ազգի, համեմատուած նրանց հիւսիսցի հայ նախաբնիկների հայրենիքի տեղադրութեանը: Արաբները եղել են Զայոց հարաւային զինուորական կողմնապահները (*բղեշխները*), ինչպէս ռուսական ցարական կողմնապահ զօրակայանների «Կազակ»-ները (*մենք պիտի ասէինք «զազ-ակ»*):

«Յարաւ» բառի «հար» արմատից է «հարուած»-ը, «հարւածել»-ը, իսկ «Արման»-ը «arm-man»-ն է, զրահաւորը, զինուո-

րականը եւ հարուածողը (*Արաբերէնում «հարբ=պատերազմ», «հարբէ=նիզակ», «հարաբա=պատերազմեց», «հարաւ>հարաբ>հարբ» անցումներով: Իսկ 2.«յ\*արաբ»-«յարաւ»-ի նախնական իմաստը կը լինի «լուսապսակ արաւ=գրահաւորուեց», ուստի «յ\*արաբի=գրահաւորուած): Փաստօրէն Արմանն ու Յ\*արաբը հոմանիշներ են:*

### 17. Հայկ եւ Բել

Խորենացին մէջբերելով Մար Աբաս Կատինայի մատեանի խօսքը, ասում է.

«Այս՝ ասէ, Հայկ ... ի մէջ սկայիցն քաջ եւ երեւելի լեալ, եւ ընդդիմակաց ամենեցուն, որք ամբառնային զձեռն՝ միապետել ի վերայ ամենայն սկայիցն եւ դիւցազանց: Սա խորխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բելայ, ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի, ի մէջ բազմակոյտ սկայիցն, անհուն խօլաց եւ ուժաւորաց»:

Թարգմանենք.- «Այս Հայկն՝ ասում է, հսկաների մէջ քաջ եւ երեւելի եղաւ, եւ ընդդիմադրեց այն բոլորին, որոնք ձեռք բարձրացրին միապետելու համար բոլոր հսկաների եւ դիւցազունների վրայ: Սա նաեւ խորխտանալով իր ձեռքը բարձրացրեց ընդդէմ Բելի, որն ուզում էր բռնութեամբ տարածել մարդկանց ազգը (*այսօրուան մարդկային տեսակը*) ամբողջ երկրի լայնութեամբ (*տարածքով*), անհուն խօլ, ուժեղ եւ բազմակոյտ հսկաների մէջ»:

Ըստ այսմ պարզոււմ են երկու իրողութիւններ: Առաջինն այն է, որ Հայկի ժամանակներում մի շարք հսկաներ փորձել են միապետ դառնալ (*դիկտատուրայ հաստատել*) բոլոր հսկաների եւ դիւցազունների վրայ: Հայկը կարողացել է չէզոքացնել նրանց փորձերը, իր կողմ շահելով այլ ազատատենչ դիւցազունների: Երկրորդ, հսկաներից Բելը՝ խորամանկելով է ուզեցել հասնել միապետութեան: Դրա համար ծրագրել է «մարդկանց ազգ»-ին աշխարհով մէկ ցիր ու ցան անելով վերաբնակեցնել այն տեղերում ուր կուտակուած էին խօլ եւ ուժեղ հսկաները:

Այլ խօսքով Բելի նպատակն է եղել արմատախիլ անել «մարդկանց ազգերին» եւ ստրկութեան տանելով ծառայեցնել հսկաներին, ինչպէս միջնադարում Եւրոպացիները վարուեցին

Ազգային ինքնիշխանությունը, լիարժեքությամբ, ուսումնական, մշակութային ոլորտներից շատերին ձեռնտու է եղել այդ ծրագիրը, որովհետև շահ էին ապահովելու: Ուստի Հայկ դիւցազունն ու իր համախոհները հակադրուելով Բելի ծրագրին՝ չեն ցանկացել ընդհարուել մեծամասնութեան հետ ու նախընտրել են հեռանալ ու հաստատուել իրենց նախահայրենիքում:

Սակայն՝ շնորհիւ Հայկ նահապետի, Հայկական բարձրավանդակում ապրող փոքրաքանակ բնիկ «մարդկանց որդիները» (*որոնք հսկաներ չէին եւ մեզանից շատերի նախահայրերն էին – քեռի Թորոս*) տեղահան չեն եղել ու դիւցազունների հետ ապրելով համերաշխ, նրանցից սովորել են աստուածային լեզուն՝ հայերէնը, աստուածային օրէնքները, գիտութիւններ, արարչութիւն եւ այլն: Նրանք եղել են Հայկազնեան դիւցազունների պաշտպանութեան տակ, ինչպէս «Սասնայ Ծռեր» վիպերգութեան մէջ: Ապա այդ հսկայ դիւցազունների սերունդները սկսել են ֆիզիկապէս փոքրանալ, ինչպէս Հայոց Տրդատ Մեծ արքայի խոսրով Կոտակ որդին, ու չափերով հաւասարուել են «մարդկանց որդիների» տեսակին:

Հետեւում է, որ հայ ժողովուրդը երբէք եկուոր չի եղել, այլ ի սկզբանէ եղել է Հայկական բարձրավանդակի բնակիչն ու տէրը, նաեւ եղել է ու կայ Հայկ նահապետի ազատասիրութեան ու առաքինասիրութեան ջահակիրը մինչեւ օրս:

#### 18. Հայք եւ Օրիոն

«Aryeun» հնչող «արեւն»-ը (*«արեւ»-ը չէ*) դարերի ընթացքում ձեւափոխուելով մեզ է հասել «արիւն» ապա «արյուն» ուղղագրութեամբ: «Արեւն»-Aryeun-ը արեւմուտքում (*Յունաստանում*) հնչել է «Օրիոն», ինչպէս հայ. մի քանի բարբառներում:

Արեւն-Օրիոնը առաջին հերթին էութեան սիրտն է, ապա արեան շրջանառութեան ծիրը եւ ոչ թէ ուղղակիօրէն արիւնը (*«արիւն» հասկացողութիւնը մեր լեզւում՝ ինչպէս տեսանք «1» յօդուածում «երկաթ» եւ «երակ» բառերում, «եր» արմատով է ներկայացել*): Արեւն-Օրիոնը Մեծամօրի վաղեմի աստղադիտարանին քանդակուած էութիւնը պատկերող թիթեռնիկով էլ է արտայայտուած եւ երկնականարում պատկերում է Հայք-Հայաստանի սահմանը, քանզի «Հայք»-տեղանքը երկրագնդի սրբ-

տի տարածքն է, իսկ անսովորականացած ընդհանուր սրտի տարածքն է (*Արեգակնային դրուքիւնը*): «Յայք»-հայերը տիեզերքի սրտի (*արեւի*) սիրոյ որդիներն են: Մինչդեռ Յայկ նահապետը երկնականարուն պատկերուած է Աղեղնաւոր կենդանակերպով, որի հնարաւոր երկրային զուգահեռն է Յարք նահանգը:

19. Յայկի թոռ Կադմոսի բնակավայրը եւ Յարք խորենացի.- Յայկ «Երթեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնագանդ իւր արարեալ Յայկ շինէ անդ տուն բնակութեան կալուածոց եւ տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արամանեկայ»:

Բաբելոնից ու Բելի բռնատիրութիւնից հեռանալով՝ Յայկն ուղուել է դէպի իր նախահայրերի երկիրը: Բաբելոնից անենակարճ ճամփան է եղել Տիգրիսի հունով դէպի հիւսիս գիծը:

Տիգրիսի հոսանքով իր զարմերի ու հետեւորդների հետ Թմանից ու Քիշից առաւել եւս վեր բարձրանալով՝ նա կայք է հաստատել մի նեղ հովտաբերանում, որի աջ կողմում սկիզբ էին առնում Կորդուած լեռները, իսկ ձախում՝ Մասիոն լեռները: Այնտեղ կառուցել է իր առաջին տունը (*town-տօհմատունը*) ու կոչել Փինիկ, ի նշան բռնակալութիւնից ու բռնակալից իր եւ իր ժառանգների ֆիզիկական ու հոգեւոր անկախութեան, երբ «փինիկ» թռչունը յարութեան խորհրդանիշն է:

Փինիկն ունեցել է պաշտպանական ու մարտավարական լաւ դիրք: Դա միջագետքից ուղղահայեաց գծով Վանայ լճի ավազան տանող միակ դուռն է եղել: Այնտեղից տեսանելի է եղել ողջ հարաւը, որտեղից սպառնալիք է ակնկալուել:

Ապա Յայկն իր Կադմոս թոռանն է հանձնել Փինիկը եւ պատուիրել աչալուրջ հսկել հարաւի անցուդարձերին: Այնուհետեւ նա բարձրացել է հիւսիս:

Կադմոսն իր զբաղեցրած գաւառը կոչել է Ծաւղէք, կենտրոն ունենալով Փինիկը (*Փինակայ*): (նայել «Յայաստանի Պատմութեան Ատլաս», Ա. մաս, «Փինիկ» անուան տակ): Այդ քաղաքը գոյութիւն է ունեցել մինչեւ մեր ժամանակների 1200-ական թուականները, Տիգրիսի ափին:

Շարունակենք լսել Խորենացուն:

«Եւ ինքն խաղայ, ասէ, այլով աղխիւն ընդ արեւնուտս հիւսիսոյ, գայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, եւ անուանէ զանուն լեռնադաշտին Յարք, այս ինքն հարք են աստէն բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ»:

Հայկ նահապետը «Յարք» է անուանել լեռնադաշտը, որովհետեւ իրենից առաջ իր պապերն են այդտեղ բնակուել (*իր Թորգոմ հոր հայրերը*), այդ թում Նոյը, որի թաղուած տեղը՝ Նպատ լեռը, ինչպէս ցոյց տուինք, եղել է նոյն տարածքի հիւսիս-արեւելքում:

20. Զօրք, Փիւնիկէ Կադմոս

եւ Օրիոն համաստեղութիւն

Հայերէնի մեր այսօրուայ իմացութիւնը ահռելիօրէն անբաւարար է, յայտնաբերելու համար «Ծաւղէք» անուան ծագումն ու բովանդակութիւնը: Ուստի ստիպուած ենք դիմելու մեր հեռու-մօտիկ բարեկամ-հարեւանների օգնութեանը:

Տառադարձելով «Ծաւղ»-ը արաբերէնի՝ ստանում ենք «Ս\*այդ», ինչը նշանակում է «որս»: Իսկ «Ս\*այյադ» նշանակում է «որսորդ»: Յիշենք «Սայաթ-Նովային»:

Այսպիսով «Ծաւղէք»-ը ձեռք է բերում «որսորդներ» իմաստը, եւ Կադմոսն իր գաւառը այդպէս է կոչել ի պատիւ իր պապին, Աղեղնաւոր-որսորդ Հայկին ու նրա սերունդներին:

Ներկայիս մեր բառապաշարում «զաւթել» բայի հիմքը կարծում ենք թէ հենց «ծաւղ» արմատն է, իմաստային խաթարումով: «Ծաւղէք»-ը կարելի է ընթերցել «Ծօղէք», որից էլ «Ծօղք»-ը ու ներկայիս «Զօղք»-ը:

Կադմոսի յետնորդներից մի մասը հաստատուել է Հայկական լեռնաշխարհի արեւելքում (*Կասպից ծովի ջրերի տեղատրութիւնից ցամաքած տարածքներ*), ու ստեղծել (*արեւելեան*) Ծաւղէք գաւառը (*Սողուկենն*), որն աղաւաղուելով՝ այսօր կոչւում է Զօղք-Սոտք (*ոսկու հանքավայրը*), (*նայել «Հայաստանի Պատմութեան Ատլաս»-ի 34-39-49-63 էջերում*):

Կադմոսի ժառանգած բուն բնակավայրում եւ կադմեացւոց յետագայ բնակավայրերում Ծաւղէք-Սիդոն եւ Փիւնիկ-Փիւնիկ անունների համատեղ գոյութիւնը պատահականութիւն չեն:

Բելեան ընդհանրական բռնապետութեան ջախջախումից յետոյ, եւ Միջերկրական ծովի ջրերի տեղատուութեամբ ցամաքի ընդարձակուելով՝ Կադմոսի սերնդից ոմանք իջել ու հաստատուել են Լիբանանի տարածքում, հիմնել Սիդոն (*Ս\*այդա*) քաղաքը, որը անուանակոչել են ի պատիւ իրենց նախնիների զբաղեցրած գաւառանուան, երկիրը անուանել են իրենց նախկին մայրաքաղաքի անունով՝ Փիւնիկէ, ու վերջապէս աստուածացրել են իրենց նախահայր Կադմոսին (*Փիւնիկեցիների զըլխաւոր աստուածը*):

Յետեւութիւն.-

Այսպիսով իմացանք 1.Ծաւղէքի եւ Փիւնիկի ծագումնաբանութիւնները, 2.Փիւնիկեցիների ինքնութիւնը, 3.Սիդոն (*Սայդա*) քաղաքի անուան սկզբնաղբիւրը, ինչպէս եւ 4.Փիւնիկեցիների զլխաւոր աստուած Կադմոսի էութիւնը:

Արտակ Մովսիսյանի «Յայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում» գործում, էջ 54, կարդում ենք. «Յայաստծո կապը Յայկական լեռնաշխարհի հետ առավել ընդգրծվում է նրա որդի Դումուզիի՝ Արատտա երկրի հովանավոր աստվածը լինելով: Ուշագրավ է, որ միջագետքյան Դումուզի-Թամուզը համապատասխանում է Օրիոնին»:

Մեր կարծիքով խօսքը ո՛չ թէ Յայկի (Յայայի) որդու մասին է, այլ նրա թոռան՝ Կադմոսի, որի անունից է առաջացել միջագետքեան «Դումուզի»-ն, առաւել ճիշդը «Դամուզի»-ն (*«Կադ(ա)մ-ո(ւ)սի»*):

Մենք գտնում ենք, որ դրա բաղադրիչ մասերը եղել են «Կադամ-ուսի», որտեղ «Կա»-ն հայերէնի «կայ» բայն է, «ադամ»-ը երկրածին մարդկանց տրուած բնորոշիչն է, «ուսի»-ն ուսուցանողն է: Յետեւաբար Կադմոսը եղել է ադամորդիների ուսուցիչը: Անունից «կայ»-ի կամ «ներկայի» զեղջումը ցոյց է տալիս ժամանակային միջոցը, երբ նրա աստուածացման օրերում Կադմոսը արդէն իսկ ֆիզիկապէս չկար, ինչի պատճառով էլ մնացել է «Դմոս»-ը, նոյնն է թէ Դամուսի»-ն, աղաւաղ՝ «Դամուզի»-«Թամուզ»-ը:

Եթէ Կադմոսի պապ Յայկը «Աղեղնաւորն» էր, ապա ինքը Տաւրոս-Ցուլի ու Յարքի հարաւային դարպասը հսկող ու Յայքը պաշտպանող «Օրիոն»-«Յայք»-ն էր, եւ բնակնաբար



իր պապից յետոյ կարող էր կոչուել «Արատտա երկրի հովանավոր աստվածը»:

Այսպիսով երկնային Օրիոնի պատկերն ու դիրքը կը համապատասխանի Կադմոսի ժառանգած տարածքին, Ծաւղէքին:

21. Հայկի Սերունդները Կիլիկիայում,  
Փիւնիկէում, Յունաստանում  
եւ հին Եգիպտոսում

Դեռեւս Հոմերոսի Իլիականում հանդիպում ենք Կիլիկիայում հաստատուած Հայկ նահապետի Կադմոս թռռան ժառանգներին, իրենց կառուցած թագաւորութիւնում, թերէ մայրաքաղաքով:

1.«...Տիդեսին դու ընկերացար, երբ որ դեսպան գնաց թերե՛ Աքայեցոց կողմից ղրկված...: Տանում էր նա կադմեացոց խաղաղության քաղցր խոսքեր...» («Իլիական», Հոմերոս, թրգմ. Մ. Խերանյանի, Եր. 1987, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, էջ 196,)

2.«...Երբ մի անգամ նա միայնակ պատգամավոր եկավ թերե՛ կադմեացոց մէջ բազմամարդ...» (Նոյն՝ էջ 123):

3.«Չքնաղագեղ Անդրոմաքեն - դուստրը մեծանձն էտիոնի... Այն էտիոնն, որ ապրում էր Իպոպլակյան թերեթի մէջ, Անտառախիտ ստորոտում թագավորը կիլիկեցոց»:

Սրանցից հետեւում է, որ Կիլիկիայի մայրաքաղաք Կադմոսեան թերեթի թագաւորի աղջիկը՝ Անդրոմաքեն հարս էր գնացել Տրովադայ եւ կինն էր Հեկտորի: Այս պատճառներով էլ հայոց Ջարմայր նահապետը գնացել է նրանց սատարելու:

Oxford Illustrated Dictionary (1963) բառարանում կարդում ենք.

Thebes 1.Ancient Greek city in Boetia (now Thivai); its early history was subject of many legends including those of Cadmus, Oedipus, and Antigone.

2.Greek name of ancient capital (from time of 12<sup>th</sup> dynasty) of Upper Egypt, on site of modern Luxor.

Հնարաւոր է, որ Եգիպտական թերեթ-ի հիմնադիրները նոյնպէս լինէին Կադմոսի ժառանգներից: Քանզի «Թերեթ» անուան ներկայիս յունական Thivai հնչիւնն իսկ մատնում է դրա կապը

հայերեն «ԹԻ» եւ «ԹԵ» բառերի հետ, երբ գիտենք թէ «Լ»-ը բարբառայնանալով կարող է փոխարինուել «բ»-ով: «ԹԵ»-ը որպէս խորհրդանիշ, նշանակում է «հոգեւոր», ինչպէս «թեւաւոր խօսք»-ում, իսկ «ԹԻ»-ը՝ ինչպէս «ուփին» ածանցում, նշանակում է «մարմնաւորում»: Չետեւաբար «թի»-ն ու «թե»-ը միասնաբար կը խորհրդանշեն «հոգեւորի մարմնաւորումը», անտեսանելի տեսանելի դարձնելու գործընթացը: Թեթէ անուան-ւած քաղաքների հիմնադիրները եղել են «թեւաւոր»-հոգեւոր մարդիկ, ինչպիսիք եղել են Անգեղ-հրեշտակները:

Ինչպէս տեսանք վերելում, նոյն Կադմոսի ժառանգներն են հիմնել Փիւնիկէն:

Յունաստանում Թեթէ-Թիւայ քաղաքի հիմնադրման մասին կարդում ենք.

«ԿԱԴՄՈՍ - Փիւնիկէան Ագենոր արքայի որդին Ջեւսի առեւանգած Եվրոպայի եղբայրը, որը գնաց քրոջը որոնելու, բայց չգտավ նրան, եւ Դելփյան պատգամախոսի հրահանգով քաղաք հիմնեց այն տեղում (*Յունաստանում - Մ.Ն.*), ուր նրան բերել էր տաճարի մոտ հանդիպած կովը: Այդ քաղաքը Բեովթական Թեթեն է» (*Չոմերոս, Իլիական, ԵՅՅ, Եր. 1987, էջ 488*):

Սոյն Կադմոսը Կադմոսեան զարմի հերթական Կադմոսներից մէկն է, իսկ Թեթէն՝ երրորդ նոյնանուն քաղաքը Արգասաւոր Մահիկի տարածքում:

ԿԱՐԴՈՍ - Ըստ պատմահօր՝ Արայ Գեղեցիկի որդին է եղել Կարդոսը, որն Շամիրամի կողմից վերանուանուել է Արայեան Արայ, իր հօր յիշատակին:

Փիւնիկէում (*իր ազգակիցների մօտ*) բնակութիւն են հաստատել նաեւ Կարդոսն ու նրա տօհմայիներից ոմանք, երբ Շամիրամը նրան է վստահել իր բոլոր տիրոջների կառավարումը: Դարեր ետք Կարդոսի զարմերը հիմնել են Փիւնիկէան անկախ եւ ինքնուրոյն պետութիւնը, ինչպէս եւ Ափրիկէի Կարդա-գենը, այս անգամ Կարդոսի յիշատակին:

Կարդոսն իր եղբայրակից Փիւնիկէցիներին է փոխանցել առաջին այբուբենն ու գրել-կարդալու արուեստը: Նրա անունից է առաջացել «card»-ը (*գրելու ծառայող «տախտակ»-ը*), «card»-թղթախաղը, «card» բանալը (*Աստուածային իմաս-*

տութիւնները բանալ-կարդալու հմտութիւնը), նրա պատուին են կոչուել «Ricardos, Richard, Rechar»-«Արի Կարդոս»-ները (նայել «Զաւախք» գաւառանուան):

Հիւսիսային Հայաստանում Արայ գեղեցիկի գեղեցիկ Կարդոս որդու սերունդներից են առաջացել գեղեցիկ «Կարդուլի»-վրացիները: (Նկատի ունենալ, որ գրում ենք «կարդալ» բայց հնչում «կարթալ», դրա պատճառով էլ վրացիների ինքնանուանումը «Կարթուլի» կամ «Քարթուլի» է հնչում, «Կարդագեն»-ը «Կարթագեն» կամ «Քարթագեն»):

## 22. Զարմայր Նահապետ Հայոց

Դիմենք Խորենացուն.

«Սա օգնական Պրիամու ի Տելտամայ առաքեալ ընդ Եթովպացի գօրուն՝ մեռանի ի քաջացն Հելլենացոց»:

Թարգմանենք. «Սա (Զարմայրը) Եթովպական գօրքի հետ Տելտամոսի կողմից առաքուեց Պրիամոսին օգնելու, եւ Հելլենացի քաջերի կողմից սպանուեց» (մի այլ տեղում՝ «Աքիլէսի կողմից վիրաւորուեց ու մահացաւ»):

Խորենացին «Տելտամոս» (հոլովուած՝ Տելտամայ) անունը յիշատակում է Քաղդէացոց արքաների անուանացանկում:

«Եւ» երկբարբառը կարող էր նաեւ հնչել «yeux» (ֆրանս. «աչքեր»), (նայել յօդուած «9»): Այս սկզբունքով «Տելտամոս»-ը կը հնչի նաեւ «Tyeutamos»: Իսկ քանի որ Եգիպտական պատկերագրերում ձայնաւորների պակասորդ կայ, ապա հապաւելով «Tyeutamos»-ի «a»-ն՝ կ'ունենանք «Tyeutmos»: Եթէ «y»-ն («ել»-ի «յ»-ն) էլ սխալմամբ «h» ընթերցենք՝ կը ստացուի «T-heutmos», որը նոյնանում է պատմութեան մեջ քաջածանօթ «Թիուքմոս»-ի հետ: Ըստ պատմաբանների՝ եղել են 3 Թիուքմոսներ, որոնցից երրորդն ու վերջինը միայն իր տիրոյթը հասցրել է մինչեւ Եփրատ ու Տիգրիս գետերը, Հայաստանի սահմանները: Հնարաւոր է, որ Հայոց առաջնորդի հետ փոխադարձ օգնութեան պայմանագիր է կնքել:

Նա ապրել ու գործել է մօտ 1500 թ.մ.թ.ա., մեզանից 3500 տարիներ առաջ:

Խորենացու բերած Քաղդէացոց անուանացանկում Տելտամոսին յաջորդել է Տելտոսը, որից ետեւ թագաւորել է

Թիմեուսը (կարելի է կարդալ «Thinyeus»), որը ըստ երեւոյթին աղաւաղուելով մեզ է հասել «Թոնոս» ուղղագրութեամբ եւ հըն-  
շիւնով, որը ոչ այլ ոք է քան յայտնի էխնա-թոն (ոս)-ը (Յոմերոսի  
Ոդիսեւեան վիպերգում հանդիպում ենք Եգիպտացի «Թոն»-ին,  
որն հիւրընկալել է Սենեւաոսին ու Յեղիներին ու շքեղ նուէրներ  
պարգեւել նրանց):

Յետեւութիւն.-

1. Բաւական երկար ժամանակ Եգիպտոսը կառավարել են  
Քաղդէացիները:

2. Պարզուում է Եգիպտոսի Քաղդէացի Թիւթոնոս փարաւօնի  
անուան իսկական հնչողութիւնը:

3. Պարզուում է Իլիական պատերազմի առաւել ճշգրտուած  
ժամանակագրութիւնը:

4. Հաստատուում է Խորենացու տուեալների հաւաստիու-  
թիւնը:

Մտածելու տեղիք է տալիս այն, թէ ինչո՞ւ Թիւթոնոսը Եթով-  
պական զօրքով է ճակատամարտի ուղարկել Հայոց Ջարմայր  
նահապետին (նկատի ունենալ, որ Խորենացին շատ լաւ է գա-  
նազանում Լիբիացիներին – այլապէս Ափրիկեցիներին - Եթով-  
պացիներին): Մի գուցէ սպիտակամորթ Եթովպացիների դարա-  
ւոր ազգակցական կամ արիւնակցական կապերի պատճառով  
հայերիս հետ, ինչի հետեւանքով էլ Եթովպական եկեղեցին դա-  
րեր շարունակ հաշուետու է եղել Հայոց եկեղեցուն ...:

23. Մովսէսն ու Մայիսը, Արամայիսն ու Րամսէսը

Հայ. «Մովսէս», անգլ. «Moses», ֆր. «Մօյիզ», ռուս. «Մօյի-  
սէյ», արաբ. «Մուսայ», եբր. «Մօշէ»:

Ըստ Աստուածաշնչի՝ «Մովսէս» անունը նշանակում է «ջրից  
հանուած», ինչը հիմնուած է սբ. Գրքի աւանդութեան հետ, իբր  
նորածին մանկանն գտել են Նեղոսի վրայ, զամբիւղի մէջ, դրա  
համար էլ անուանել են «Մովսէս»: Մինչդեռ այդ անունը նշա-  
նակում է «ջրածին», ինչպիսք էին Սանասարն ու Բաղդասարը:

Թէ «Մովսէս»-ի մէջ ջուրը որտե՞ղ է թաքնուած:

Վերոյիշեալ տարբերակներից ամենէն հարազատ ձեւը  
պահպանել է ռուսերէնը, որտեղ գրուում է «Մօյիսէյ» բայց հնչում  
է «Մայիսէյ»:

Բառի «մայ» արմատը ռուսերենում ուղղակիորեն «ջուր»-ը չի, սակայն «մոյ»-ը նշանակում է «լուացիր», որից էլ «մոյկա»-լուացարանը եւայլն:

Բայց թէ ինչո՞ւ ռուսերենում բառը գրում է «ոյ»-ով բայց հնչում է «այ»: Այս հարցի պատասխանը կարող էք գտնել «Գ»-րդ յօդուածում, «այ» երկբարբառի բացատրութեան մէջ:

Պէտք է ասել նաեւ, որ «մոյ»-ը իր բուն «մայ» արմատով պահպանել են ասորիները «մայա» ձեւով եւ «ջուր» իմաստով, իսկ արաբներն իրենց խօսակցական լեզւում ջրին ասում են «մայ», բայց գրական լեզւով ասում են «մյէ»: Առայժմ ձեռնպահ ենք մնում «մայ»-ը կամ «մայա»-ն Ամերիկեան «Մայա»-ների անուան հետ կապելուց:

«Մայ» բառարմատը՝ առանձինն վերցրած, հայերենում չի հանդիպում, սակայն պահպանուել է Արամայիս անուան մէջ, «Մայիս» ամսանուան եւ անձնանուան մէջ, ինչպէս եւ «մայր» բառում, որը գրաբարեան հայերենում (*խորենացի*, «Պատմութիւն Հայոց») «ի մօրին» հոլովական ձեւով հասկացում է «գետ»: Ռուսերենում «մօրե»-ն ձեռք է բերել «ծով» իմաստը, ֆրրանսերենը պահպանել է հայերէնի բարբառային «մեր»-ը, թէ «մայր» եւ թէ՛ «ծով» իմաստներով:

Գրական արաբերէնի «մյէ»-«ջուր»-ը թագնուած է հայոց «մեհեան» բառում, «ջրի ակունք» իմաստով, եւ հին հայոց «Մեհեկան» ամսանուան մէջ, որը համապատասխանում է հենց «ջրիոս» ամսուան (*նայել 4-րդ Յօդուածում*):

Հետեւութիւն.- «Մովսէս» անունը իրականում աղաւաղւած ձեւն է հայկական Մայիս անձնանուան, եւ առնչում է մեր նահապետներից Արամայիսին: «Արամայիս»-ը նշանակում է «արեւածին ջրի սերմ», նոյնանալով Սասնայ Ծուռ ջրածինների հետ:

Տեսակէտ.- Նոյն հիմքից պէտք է լինի եգիպտական «Րամսէս»-ը, որը եթէ տառադարձելու լինենք հայերէնի՝ ապա կ'ունենանք «Արա-մսէս» > Արա-մօսէս» կամ «Արա-մայսէս»>Արամայիսը:

4. Հնագոյն պատմութեամբ մեզ հասած  
անուններից եւ տեղանուններից ոմանց մասին

#### 1. Ասիայ եւ Փոքր Ասիայ

Թէ ի՞նչ ենք հասկանում Ասիայ ասելով:

Ռուս. «Աս» = «լաւագոյն»-ը, Ֆրանսերէնում «Աս»-ը եւ անգլերէնում «Ace»-ը թղթախաղի բարձրագոյն արժէքը ներկայացրնող «մէկ»-ն է, որը Աստուծոյ թիւն է ու նրա յատկանիշը: Մատներով հաշուելիս՝ դա աջ ձեռքի բութ մատն է, որը երբ բարձրացնում ենք, նշանակում է «գերազանց», «Աստուածային», եւ այլն:

Տառացիօրէն «Աս»-ը նշանակում է «Աստուծոյ սերմ», «Աստուածային սերմ», «Արեւի սերմ»:

Աստուծոյ եւ Արեւ-լոյսի որդիների -Ասերի, Արիացիների- բնակութեան տարածքը կոչուել է Ասիայ, որն սկզբում ընդգրկել է Հայկական լեռնաշխարհը, ապա Փոքր Ասիան՝ մինչեւ Յունաստանի Օլիմպոսը: Յետոյ տարածուելով ընդգրկել է նաեւ ամբողջ մերձաւոր արեւելեան երկրամասերը, ներառեալ Եգիպտոսը, այսինքն միջերկրական ծովի արեւելեան շրջակայքը մահիկածեւ, ինչը պատմութեան մէջ կոչուում է «Արգասաբեր Մահիկ», անգլ. Fertile Crescent: *(Ասերի սոյն ընդարձակումները ոչ թէ այլ ազգերին տիրելու ռազմավարութեան եւ ծաւալապաշտութեան ձգտումից են առաջացել, այլ ջրհեղեղեան ջրերի նահանջից ընդարձակուող ցամաքը բնակեցնելու եւ մշակելու նպատակն են հետապնդել):*

Խորենացին Հայոց Արշակունեաց առաջին արքայ Վաղարշակի տիրոջի մասին գրում է. Պարսից Արշակ Մեծը «քաղաք թագաւորութեան տայ նմա զՄծբին, եւ սահմանս հատանէ նմա զմասն ինչ յարեւմտեայ Ասորոց եւ զՊաղեստին եւ զԱսիայ եւ զամենայն Միջերկրայս եւ զԹետալիայ, ի ծովէն Պոնտոսի մինչեւ ի տեղին՝ ուր Կաւկաս յարեւմտեանն յանգի ի ծով, եւ զԱտրպատական»:

Այստեղ «զԱսիայ» ասելով նա նկատի ունի ներկայ հասկացութեամբ Փոքր Ասիան, քանզի արեւելեան Ասիան *(ներկայ ըմբռնմամբ)* Արշակի տիրոջն էր: Սրանով հաստատուում է մեր տեսութիւնը:

Ասերը կամ արիները՝ ընդարձակելով իրենց բնակութեան սահմանները դեպի ծայր արեւելք, այդ տարածքը եւս կոչել են Ասիայ: Սակայն պէտք էր տարբերել մէկը միւսից, ուստի բուն եւ մայր Ասիան սկսել են անուանել «Փոքր Ասիայ»:

## 2. Արտաշէս Ա. Աշխարհակալ

Խորենացին ասում է, թէ Հայոց Արշակունի թագաւորները գբաղեցրել են Պարթեւաց երկրորդ գահը, իսկ առաջինը եղել է Իրանի գահը: Հեռաւոր անցեալում սա է եղել արեւելեան կառավարման կարգը: Արտաշէս Ա.-ը՝ Հայոց թագաւոր դառնալով («Աշխարհակալ» լինելուց առաջ), Պարսից Արշական Արքայից Արքայի իսկ համաձայնութեամբ, նրանից վերցրել է Պարթեւաց առաջին գահը եւ դարձել Արքայից Արքայ: Խորենացին շարունակում է. «Արտաշէս յափշտակեաց իշխանութիւնը»: Պատմաբանները՝ զանց առնելով Խորենացու խօսքի առաջին մասը, հենւում են վերջին տուեալի վրայ ու Արտաշէսին ներկայացնում որպէս «յափշտակիչ, զաւթող»: Ներկայում նոյնիսկ մտածողներ կան, որ նա մի թիրիմացութիւն է եղել, մի պատեհապաշտ: Մինչդէռ իշխանութիւնը «յափ-շտ-ակեց»-ը նշանակում է իշխանութիւնը «շուտ ափի ակի մէջ առաւ», այսինքն շուտով «տիրապետեց իրադրութեանը», ինչը ամբողջովին փոխում է մեր պատկերացումները: Այնուհետեւ նա իրաւունք է ձեռք բերել ներքին ու արտաքին քաղաքականութիւնը վարելու: Նա Պարսից Արշականին նշանակել է Նինուէի թագաւոր, որպէս երկրորդ գահ տիրակալ. իր անչափահաս Տիգրան որդուն (*յետագայում Տիգրան II Մեծ*) նշանակել է Հայաստանի թագաւոր, բնականաբար որպէս երրորդ գահակալ: Թիկունքը ամրապնդելուց յետո՛ք գրաւել է Եգիպտոսն ու Յունաստանը ու կոչուել նաեւ Թէբէի Յունաստանի տիրակալ: Նրա տիրոյթը հասել է մինչեւ Հնդկաստան: Այս առիթով Խորենացին ասում է. «Նա վերականգնեց մեր նախկին սահմանները...»: Սա եղել է մեծ Ասիայի բոլոր տարածքը:

Նոյնպիսի արտայայտութիւն ունի Խորենացին Տիգրան Երուանդեանի մասին, ուր ասում է, «Որ եւ Կիւրոսի աջակցեալ զՄարացն ի բաց բառնալով զիշխանութիւնն, եւ զՅոյնս ոչ սկսաւ ժամանակս ընդ իւրեաւ նուաճեալ հնազանդէր: Եւ զսս

մանս մերոյ բնակութեանս ընդարձակեալ՝ ի հինսն մեր հասուցանէր յեզերս ծայրից բնակութեան»:

Թարգմանենք.- Տիգրան I Երուանդեանը «Կիրոսին աջակցելով վերացրեց Մարերի իշխանութիւնը, ապա եւ նուաճելով Յոյներին՝ ոչ քիչ ժամանակ իրեն հնազանդեցրեց, մեր բնակութեան տարածքները ընդարձակելով ու հասցնելով մեր բնակութեան հնագոյն սահմաններին»:

Յունաստանում Արտաշէս Աշխարհակալի դաւադրական սպանութիւնից յետոյ (*ըստ երեւոյթին Ղռովմէացիների կողմից կազմակերպուած*) Տիգրան II Մեծն իր հոր ժառանգութեան մնացորդացը կարողանալով փրկել ու պահպանել՝ կոչուել է մեծ: Այսօրուայ պատմագիտութիւնը իսկական մեծին դարձրել է առասպելական անձնաւորութիւն ու գլորել մի անորոշ ժամանակաշրջանի մէջ իբր «Արտաշիսեան հարստութեան հիմնադիր», եւ որպէս իրական պատմական անձ յիշում է նուազ մեծ Տիգրան Մեծին:

Հայոց Արտաշէս I Աշխարհակալին պետք չէ շփոթել Արտաշատը կառուցող Հաննիբալի ժամանակակից Արտաշէսի հետ: Այդ մասին ներքեւում:

### 3. Պարթեւներ

Խորենացին սուրբ Գրիգոր Լուսաւորչի մասին ասում է.

«Սա, որպէս ամենեցուն յայտնի է, աշխարհաւ Պարթեւ, գաւառաւ Պահլաւ, յազգէ թագաւորեցելոյ զատուցեալ Արշակունի, ի ցեղէ Սուրենական, ի հօրէ Անակ կոչեցելոյ, յարեւելից կողմանց ԱՇԽԱՐՀԻՍ ՄԵՐՈՅ»:

Պարզ է ասուած, որ Պարթեւաց աշխարհը Պահլաւ գաւառով մեր աշխարհի արեւելեան կողմերում են, եւ ոչ թէ մեր աշխարհի արեւելքում են. հետեւաբար մեր երկրի մէջ են եւ ոչ թէ մեզ հարեւան: («մեր աշխարհի արեւելքում»-ը գրաբարում կը լինէր «յարեւելս աշխարհիս մերոյ»):

Նա Հայոց Արշակունի առաջին արքայ Վաղարշակին ներկայացնելիս պատմում է «Աստ բնակեալ Սիսակ՝ լնու շինութեամբ զսահմանս բնակութեան իւրոյ, եւ զաշխարհն կոչէ իւրով անուամբն Սիւնիք: Այլ Պարսք յստակագոյնս եւս Սիսական կոչեն: Ի սորա ծննդոց աստ՝ ուրեմն Վաղարշակ, որ առաջին ի



Պարթեւաց արքայ Յայոց, գտեալ արս անուանիս՝ տեսարս աշխարհին կարգէ, որ է Սիսականդ ազգ, եւ զայս առնէ Վաղարշակ ի պատմութենէն ստուգեալ»:

Այս պարբերութիւնը ճիշդ չի հասկացուած ու թարգմանուած: Իբր թէ «Պարսիկները (*Յայերից*) առաւել յստակ կերպով Սիւնիքը կոչում են Սիսական: Սինչդեռ Խորենացին ասում է. «Յստակագոյն-սպիտակագոյն Պարսիկները եւս Սիսական են կոչուում»: Ապա նաեւ՝ «Ի սորա ծննդոց աստ՝ ուրեմն Վաղարշակ», նշանակում է Պարսկաստանում ծնուած Վաղարշակը նոյնպէս Սիսակի ցեղից էր: Նա երրորդ անգամ էլ շեշտում է այս ճշմարտութիւնը, ասելով՝ «ուրեմն Վաղարշակ ի Պարթեւաց..., որ է Սիսականդ ազգ» («*Պարթեւներից Վաղարշակը, ...որ Սիսակեան ազգից է*»):

Այս իրողութիւնը սխալ ըմբռնելով, կամ էլ չուզենալով հնչեցնել, այլազգի կամ հայ պատմաբան-ները օտարացնում են Պարթեւներին մեզանից, եւ ներկայացնում որպէս զաւթից-ների:

Պարսիկ հեղինակ Աբդ էլ Ազիմ Ռիդային «Ասլ ուա նէսք» երկում (*էջ 31*) ասում է.-

«Ֆիրդուսու Շահնամէն իր գրոյցներում Պահլաւի անուան տակ հասկանում է բոլոր Իրանցիներին, այսինքն Սիստանեաններին, Պարսեաններին ու Մաղեաններին միատեղ, որպէս Արիական Իրանեան ցեղեր: Նախքան Մաղեանների ու Պարսերի մասին խօսելը՝ Շահնամէն բերում է բազմաթիւ գրոյցներ Պահլաւական ցեղի լեզուի, կրօնի, հանդերձի, երգերի, զէնքերի եւ Պահլաւական գրութեան մասին»:

Սրանք արդէն Խորենացուց չեն, առաւել եւս իմ թարգմանութիւնը չեն:

Այս լոյսի տակ, փաստօրէն Պահլաւի-Պարթեւները Աքեմենեաններից յետոյ Պարսկաստանի հնագոյն պատմութեան եւ մշակոյթի կրողներն են: Ինչպէս տեսանք, Խորենացին ասում է, թէ «Պահլաւ գաւառը գտնուել է Պարթեւաց աշխարհում. իսկ Պարթեւները Սիսակի ցեղից են» ու բնականաբար պիտի կոչուէին «Սիստանեաններ» (*Սիսակի տուն*): Նրանց այբուբենն էլ Մաշտոցից առաջ օգտագործուած հայկական գրատեսակներ են, իսկ գրուածներն էլ՝ մեր հնագոյն գրականութիւնը, պատմութիւնը եւ ազգագրութիւնն են:

Պատմաբան Լեւոն Շահինեանն իր «Մովսես Խորենացի, Պատմություն եւ Ժամանակագրություն» երկում, էջ 102, յիշատակում է XVII դարի հայ Անանուն ժամանակագրին, որից մեջբերել է հետեւեալը. «Նախ եւ առաջին Արշակ, վեհ թագաւորն Յայոց, յետ Կ (60) ամաց մահուանն Աղէքսանդրի, յազգէ Պարթեւաց, յորմէ կոչեցան Արշակունիք»:

Խօսքը Պարթեւական հարստութեան հիմնադիր Արշակ Քաջի մասին է:

Լեւոն Շահինեանն մեկնաբանում է թէ «Յեղինակը այստեղ շփոթել է: Արշակին Պարթեւաց կամ Պարսից ասելու փոխարեն, ինչպես տեսնում ենք, 'վեհ' կոչումով համարել է 'թագաւորն Յայոց'»:

Մինչդեռ 17-րդ դարի պատմիչը շատ աւելի լաւ է իմացել իրականութիւնը, որ Պարթեւները Յայկեան ծագում են ունեցել, եւ իրաւացիօրէն Պարթեւական բնակավայրում թագաւորած Արշակ Քաջին կոչել է Յայոց (*հայերի*) թագաւոր (*ոչ միայն Յայաստանի*):

Նոյնպիսի իրադրութեան ենք հանդիպում Ստրաբոնի մօտ, որն յիշատակում է, թէ Կարդագենի վերջին արքայ ու զօրավար Յանիրալը՝ տեսնելով իր բանակի ջախջախումը, նստում է մի համեստ արագաստանաւ ու յայտնուում Յայոց Արտաշէս արքայի մօտ: Նրա թոյլութեամբ կառուցում է Արտաշատ քաղաքը եւ այլն:

Իրականում Յանիրալի ժամանակներում լոկ Յայաստանի սահմաններում այդպիսի արքայ չի եղել: Խօսքը վերաբերում է Պարթեւական հարստութեան երկրորդ արքային, Արշակ Քաջի որդի Արտաշէսին, որին Ստրաբոնը նոյնպէս անուանել է «Յայոց արքայ»: Այն փաստը որ այս Արտաշէսի թոյլութեամբ է Յանիրալը Յայաստանում կառուցել Արտաշատ քաղաքը, խօսում է այն մասին, որ Պահլուն նստած Արտաշէս Պարթեւի տիրոյթի մէջ է եղել նաեւ Մայր Յայ-աստանը (*քարձրագոյն կամ հոգեւոր ասերի տունը*): Այս երկու փաստարկներից յետեւում է, որ Պարթեւաց Արտաշէսը ոչ միայն Պարսկաստանի, այլեւ Յայաստանի տիրակալն է եղել ու հայ է եղել ամէն առումով: Ահա եւ այս Արտաշէսն է, որ իր անունը կրող արձանագրութիւններով սահմանաքարեր է հաստատել նահանգների միջեւ, կարգ ու կանոնի է բե-

րել երկիրը ծայրէ-ծայր, բարգաւաճ ու խաղաղ կեանքով ապահովել, ինչպէս նկարագրում է Խորենացին:

Պատահականութիւն չէ, որ ներկայ Հայաստանում Սիսական ցեղն է իշխանութեան ղեկին, ի դեմս նախագահ Ռ. Քոչարեանին:

Ի գիտութիւն անելացնենք, որ Իրաքում շիիթների այսօրւայ ղեկավար շեյխի ազգանունն ու տօհմանունը նոյնպէս ոչ պատահաբար «Սիստանի» է:

«Սիստան» «տան-տունը» պահպանուել է «Տիտան»-ում եւս, որտեղ «Տի»-ն նշանակում է «մեծ», ուստի «Տիտան»-ը՝ «մեծ տուն»-ն է, հսկաների տուն-ցեղն է:

Թէ ի՞նչ է նշանակում «Պարթեւ»:

Բառը կառուցուած է երկու արմատներից՝ «պար» եւ «թեւ»: «Պար»-ը պարոյրն է ու պարուրուածն է, երկարածը: Իսկ «Պարթեւ»-ը հոմանիշ է երկայնաբազուկին, ռուս. «դալգարուքի»-ին:

«Պար»-ը տառացիօրէն նշանակում է նաեւ «պաշտպանութիւն արարող», ուստի «Պարթեւ»-ն ունի «պաշտպանող թեւ» բովանդակութիւնը, որտեղ «թեւ»-ը «դաս»-ն է, «դասակարգը»:

Հետեւում է, որ Հայերն ու Իրանցիները ունեցել են դասակարգեր, որոնց մէջ Պարթեւները ներկայանում են որպէս զինւորականների դաս:

#### 4. Պարսիկներ

Մինչեւ Պարսիկների պատմական թատերաբեմում յայտնուելը՝ դեռեւս Աքեմենեանների ժամա-նակաշրջանում, հանդիպում ենք պատմական «Պերսեպօլիս» քաղաքին:

Ի գիտութիւն ասենք, որ «Պարս»-ն ու «Պերս»-ը բարբառային տարբերակներ են:

Ինչո՞ւ է այդ քաղաքը անուանուել «Պերս» անունով:

«Պերս»-ը հայերէնի է տառադարձում «Պերճ» ձեւով, որը ոչ թէ «գեղեցիկ, շքեղ» է նշանակում, այլ «ընտիր, ընտրեալ», որից էլ հետեւում է թէ «Պերսեպօլիս» նշանակում է «Ընտիր քաղաք», «ընտրեալների քաղաք» կամ «Պերճի քաղաք»: «Պերճ-ընտրեալ»-ին հանդիպում ենք ռուսերէնում «Ֆերզ-թագուի» բառում, քանզի թագուիին թագաւորի ընտրեալն է: Հանդիպում ենք անգլ. «first=առաջին» բառում, քանզի առաջինը

(կամ «1»-ը) աստուածայինն է, ընտիրն է: Վրաստանաբնակ յոյներն իրենց կոչում են «Բերգեն»: Կարծում ենք, անուան հիմքում է նոյն «պերճ-ֆերգ-ընտրեալ»-ը: Բառն իր իմաստային բուն բովանդակութեամբ պահպանուել է արաբերէնում՝ «ֆերգ=ընտրել»:

Մեր տեսակէտը հաստատուում է Խորենացու Սանասարի սերունդներին վերաբերուող հետեւեալ խօսքով («Պատմութիւն Հայոց», նոյն, էջ 70).

«Իսկ պերճքն եւ գլխաւորքն ի նոցանէ՝ յետոյ ... զբղշխութիւն կողմանցն արժանաւորեցան առնուլ»:

Այսինքն «յետոյ նրանցից ընտրեալներն (պերճքն) ու զըլխաւորները ... արժանացան լինել այդ կողմերի բղշխներ»:

Պարզ է, որ գեղեցկութեան կամ միայն շքեղութեան համար բղշխ չեն նշանակում:

Ովքե՞ր էին այդ ընտրեալները:

Ինչպէս Յնդիկներն են ունեցել երեք դասակարգեր, վերին հոգեւոր դասակարգը, զինուորական դասակարգն ու ռամիկների դասը, այդպէս էլ եղել է Հայոց ու Պարսից իրականութեան մէջ: Վերելում իմացանք թէ Պարթեւները ներկայացրել են զինուորականների դասը, իսկ Պերս-Պարսերը եղել են հենց «ընտրեալ-հոգեւոր»-ների դասը: Այդ պատճառով էլ երբ Պարսիկ Արտաշիր Սասանեանը յեղաշրջում կատարեց ու եկաւ իշխանութեան՝ Հայոց Խոսրով արքային չսատարեցին Իրանի Պահլաւ գաւառում բնակուող իր դասակից Պարթեւները: Նրանք նախ իրաւունք չունէին իրենցից բարձր դասի վրայ ձեռք բարձրացնելու, ինչպէս եւ նախընտրեցին առաւել հզօր հոգեւոր դասի իշխանութիւնը քան սնանկացած զինուորականների:

Նոյնպիսի իրավիճակ տեղի ունեցաւ մեր օրերի Իրանում, երբ Ռգա Պահլաւի Շահը գահընկեց եղաւ հեռաւոր Ֆրանսիայից հրահանգող հոգեւորական Այատուլլահ Խոմէյնիի կարգադրութեամբ:

Մեզ համար առայժմ մութ է մնում թէ Հայկ նահապետի ժառանգորդներից Ջարմայրի որդի Պերճը ի՞նչ կապ կարող էր ունենալ Պերսեպօլսի հետ: Նա գործի է անցել իր հօր սպանութիւնից յետոյ, մեզանից 3500 տարիներ առաջ: Իսկ Պերսեպօլիսը ե՞րբ է կառուցուել ...:

«Պարս»-ը որպես մեղուի խումբ, մեղուների այն ընտրեալ հաւաքականութիւնն է, որն արժանի է համարուում մայր ընտանիքից առանձնանալով կազմելու մի նոր ընտանիք (*պարուրում* Է): Դրա կառուցուածքը լիրաժէքօրէն համապատասխանում է նախնական կատարեալ ու կազմակերպուած ընտանիքի կազմին, իր ընտրուած թագուհիով, ընտիր զինուորներով ու աշխատաւորներով: Ըստ մեղուապահ մասնագէտի, պարսի անջատուը բուն ընտանիքից պատճառ է դառնում մայր ընտանիքի ժամանակաւոր թուլացմանը:

Կարելի է ենթադրել, որ մեղուների օրինակով, Պարսիկները եղել են այն ընտրեալները, որոնք Աստուածորդիներին մայր օջախից մի օր բաժանուել են ու հեռացել Հայաստան դրախտավայրից, ստեղծելով մի նոր օջախ հարաւ-արեւելքում: Ահա եւ Մայր Հայաստանի թուլացման պատճառներից մէկը, յատկապէս, երբ նկատի ունենանք որ այդ ընտրեալները Սասանեանների ժամանակ նոյնիսկ փորձել են բռնութեամբ իրենց ենթարկել հայրական տունը:

#### 5. Պեգասն ու Արիներով

բնակեցուած սկզբնական տարածքները

Մեծ Ասիայի տարածքը հնագոյն ժամանակներում պատկերուել է որպէս հրեղէն ծի՛ Պեգաս (*նայել «Հայաստանի Պատմության Ատլաս», Ա մաս, էջ 1 եւ 93, Երեւան 2004թ.*):

Մեծ Ասիան պատկերող Պեգասի (*մենք պիտի ասէինք «Big Ace=Մեծ Ասիայ»*) ուղեղի հատուածը Հայաստանն է, մոռթը հասել է Յունաստանի սահմանին, Բոսֆորի նեղուց, իսկ շունչը – լեզուն, ոգին ու գիտելիքները - թափանցել են Յունաստան: Պեգասի իրանը ներկայիս Իրան-Պարսկաստանն է: Առջեւի ոտները Իրաքից հասնում են մինչեւ արեւելեան Եգիպտոս (*«Աքե-մենեան»-ում եւ «Աքեան»-ում «աք»-ը «ոտք» է նշանակում, որպէս «բարձրասրուն» մեն-մարդիկ: Կենդանիների պարագայում, ինչպէս «աքացի» բառում, «աք»-ը «առաջամասի ոտք»-ն է, ինչպէս Պեգասի դէպքում, երբ «իր-աք»-ը կենդանու իրանի - առջեւի ոտների տարածքն է*):

Պեգասի իրանի ու թելերի կցման յօդակապը եղել է Պարթեւների բնակութեան բուն միջավայրը: Ըստ վերոյիշեալ քար-

տեսի՝ դա գտնուել է Կասպից ծովի հարաւային ափերը գրկող շրջանում: Պեզասի ծախ թելը ուրուագծել է նրանց տիրոյթի արեւելեան սահմանները, Կասպից ծովի արեւելեան եզրերից դէպի արեւելք եւ հիւսիս արեւելք, որի ծայրամասը կոչուել է «Տարտարիա», որից էլ հնարաւոր է «Տարտարոս»-ը:

Աջ թելը Կասպից ծովի հիւսիսում թեքուել է դէպի արեւմուտք եւ զբաղեցրել Սել ծովի արեւելեան սահմանները, մինչեւ Ղրիմ:

Մեր կարծիքով «Թաթար» ազգի անունը առաջացել է «Tartaria»-ից: Դրա նախնական ձեւը պիտի լինէր «Dartaria», «dart» արմատով, որը անգլերէնում (*եւ ոչ միայն*) նշանակում է դաշոյն, փոքր ու թեթեւ նիզակ, որոնցով զինուած են եղել տեղի բնակիչները: «Dart» արմատին հանդիպում ենք ֆրանսական սուլերաւոր մարտիկ Dartanian-ի անուան հիմքում, նաեւ հայերէնի «հանդարտ» բառում, որը նշանակում է «դարտը հանած», այսինքն «զէնքը մի կողմ դրած»: Ժողովրդական արտայայտութեան մէջ օգտագործուող «դարդ անել»-ը իրականում եղել է «Դարտ անել», այսինքն «ինքն իրեն դաշինահարել կամ խոցոտել, գլխին տալ ու կուրծքը ծեծել» (*սխալները գիտակցելու առիթով*):

Հնարաւոր է նաեւ, որ «Դարդանել» նեղուցի անուանումը առաջացել է «Դարտ»-ից ու առնչւում է «դարտ անել»-ուն, ինչը մտածել է տալիս, որ այդ նեղուցը արհեստականօրէն եւ մարդու միջամտութեամբ է առաջացել: Չի բացառում, որ այդ նեղուցը փորել-բացել են Հոմերոսի Տրոյականները, որոնց քաղաքն էլ կառուցուել է հենց նեղուցի հարաւային վերջաւորութեան, որտեղից տնօրինել են առետրական նաւերի երկկողմանի ելքն ու մուտքը: Իսկ Յելլադացւոց պատերազմի բուն դրդապատճառը եղել է այդ ջրանցքին տիրելու ցանկութիւնը, ինչի համար լոկ առիթ է ծառայել գեղեցկուհի Յելենի արեւանգումը:

Մեր կարծիքով, երկրային Պեզասի ուրուագիծն ու դիրքը պէտք է համապատասխանեն երկնային Պեզասի աստղագիտական դիրքին:

Այս լոյսի տակ, յստականում է «Սակ»-երի կամ սխալագրութեամբ «Սագ»-երի ինքնութիւնը: Նրանք նոյն ինքն «Սխասակ»-ի սերունդներից են: Նրանցից են առաջացել Հռովմէա-

ցիների կողմից «բարբարոս» կոչուած «Սակ-սօն»-ները, այսինքն «Սակ»-ի որդիները (*անգլ. son=որդի, առաջացած է հայ. ծու բառից – որպէս «այսինչի ծուն», ինչպէս չինարեւում «ծու=որդի»*):

6.Տէր եւ Իշխան - Գահնամակ եւ Զօրանամակ  
Խորենացին յիշատակում է երկու կարգի հայ իշխանաւորների ցանկ: Մէկը անուանել է «Գահնամակ», իսկ միւսը՝ «Զօրանամակ»: «Գահնամակ»-ի իշխանաւորներին կոչել է «Տէր», իսկ «Զօրանամակ»-ի իշխանաւորներին՝ «Իշխան»:

«Գահնամակ» բառը բաղադրուած է «գահ», «նամ» եւ «ակ» արմատներից, որտեղ «նամ»-ը նոյնն է անգլ. «name=անուն» բառի հետ: Այսինքն ունենք գահաւորների անունների ակը (*ցանկը*), ինչպէս եւ «Զօրանամակ»-ը՝ զօրաւարների անունների ցանկը:

Թէ ի՞նչ է այս երկուսի տարբերութիւնը:

«Գահնամակ»-ի «Տէր» կոչուող ներկայացուցիչները եղել են ազգի հոգեւոր-խորհրդատու առաջնորդները, ինչպէս Հռոմի «ծերակուտական»-«սենատոր»-ները, այսօրուայ «խորհրդարանա-կան»-ները (*Քահանաներին ու կաթողիկոսին տրուող «Տերտեր» մակդիրն ունի նոյն խորհուրդը*):

Իսկ «զօրանամակ»-ի «Իշխան» կոչուող ներկայացուցիչները եղել են «գործող խան»-երը, այսինքն «գործադիր» իշխանաւորները, քանզի «էշ»-ը նշանակում է «գործող» (*«էշ>իշ» ձայնաւորի փոփոխում, արմատի բարդացման պատճառով*): «Խան»-ը նշանակում է «կենտրոնական բջիջ»:

Կառավարման այս ծելը Հայոց մօտ հանդիպում է ոչ միայն վերին մակարդակներում, այլեւ վերելից մինչեւ ամենաստորին բջիջներում, ընտանիքներում: Տօհմի մեծ հայրը, կամ ընտանիքի հայրը եղել է գործադիր իշխանաւորը, իսկ ընտանիքի քաւորը (*յետագայում քահանան*) եղել է հոգեւոր առաջնորդը:

Մենք այսօր էլ աւանդութեան ուժով մեծ յարգանք ենք տածում «քաւոր»-ի հանդէպ, հակառակ որ բուն բովանդակութիւնից զրկուել է:

Նոյն երեւոյթին հանդիպում ենք մինչեւ իսկ 19-րդ դարի վերջում, երբ Քրտերն ու Եգիտի-Ալեւիները «Քիրվայ» են անուա-

նել Հայերին, որպես իրենց հոգեւոր եղբայրները, հոգեւոր խորհրդականները (*Նրանց համար Հայի ասածը եղել է անբեկանելի օրհնք*): Նրանց մօտ այսօր էլ գործում է այդ համակարգը, քանզի ունեն «Փիր»-հոգեւոր առաջնորդը, եւ «Շեյխ»-գործադիր առաջնորդը: Ինչպէս Հնդկաստանում է եղել, այդպէս էլ Եգիպտիների մօտ մինչեւ օրս արգելուած է Փիրերի դասի եւ Շեյխերի դասի անդամների միջեւ ամուսնութիւնը: Հաւելեալ ասենք, որ «շեյխ» բառը առաջացել է «իշխան»-ի բաղադրիչ արմատների գլխաւոր «շխ» բաղաձայներից եւ ընդունել նոր ձեւ:

Մատենագրական աղբիւրներում պետութիւններից ոմանք կոչուել են «տերութիւն», իսկ ուրիշներ՝ «թագաւորութիւն» կամ «կայսրութիւն»: Ինչո՞վ են դրանք զանազանում իրարից: «Կայսրութիւն»-ը (*ինչպէս յարգելի ֆիզիկոս Հերունին է ասում*) «կէս-ար»-ի իշխանութիւնն է եւ տիրոյթը (*կիսով չափ Աստուծոյ որդի եւ կիսով չափ երկրածին մարդու որդի*): Ներկայ ժամանակներում մարդկային այդ երկու տեսակները միաձուլուել են, ուստի «կայսրութիւն»-ը կորցրել է իր բուն բովանդակութիւնը, եւ բնականաբար ընկալուում է «ամբողջատիրութիւն» կամ «իմպերիա»:

«Թագաւորութիւն»-ը ըստ մեզ, զինուորական սկիզբ ունի, այսինքն միեւնոյն ազգի զինուորական դասի պետական կազմաւորումն է:

«Տերութիւն» է կոչուել օրինակի համար արաբական Խալիֆայութիւնը, Օսմանեան կայսրութիւնը, որովհետեւ այդ պետութիւնների համակարգում գերագոյն դէմքը ոչ թէ զինուորական է եղել, այլ բարձրագոյն հոգեւոր առաջնորդը: Թէեւ իրականում խալիֆը համատեղել է եւ հոգեւոր եւ զինուորական հրամանատարութիւնը: Այսօր եւս կան պետութիւններ, որոնց կարելի է «տերութիւն» համարել, քանզի նրանց գերագոյն դէմքը հոգեւոր առաջնորդն է (*Վատիկանը, Իրանը*): «Տերութիւն» կարելի է կոչել նաեւ մի գաղափարախօսութեամբ առաջնորդող պետութիւնն ու հասարակութիւնը, ինչպիսին էր Խորհրդային Միութիւնը, ինչպիսին են Չինաստանը, Կուբան, Հիւսիսային Բորիան:



### 7. Հայ եւ Արմէն

Պարթեւների ու Պարսիկների դասակարգումը նոր լոյս է սփռում «Հայ» եւ «Արմէն» անունների բովանդակութեանը:

«Հայ»-ը (անգլ. *High=բարձր*) հոգեւոր դասն է («Հայ»-ը տառացիորէն նշանակում է «հոգեւոր աստուածային մարդ»), իսկ «Արմէն»-ը (*Arm-man*)՝ զինուորական: Սակայն սրանք ոչ թէ ազգային դասակարգային որակումներ են, այլ համամարդկային: Այլ խօսքով, մարդկանցից ով որ կ'ապրի Աստուածային պատգամներով ու հոգեւոր գործունէութիւն կ'ունենայ, արարչութեամբ կը զբաղուի՝ կարող է կոչուել «Հայ»: Ով որ կը պաշտպանի ու կը պահպանի Աստուծոյ կողմից արարուածներն ու Աստուածային օրէնքները՝ կը կոչուի «Արմէն»:

Արդէտք մեզանից քանի՞սն իրաւունք ունի Հայ կամ Արմէն կոչուելու այսօր...:

### 8. Բագրատունիներ

Թէեւ Խորենացին Բագրատունիներին Հրեայ է ներկայացրել, սակայն անուան արմատը հայերէն է խօսում: Հրեաները սովորութիւն ունեն իրենց ապրած երկրի բարձր դասի մարդկանց ազգանունները փողով առնելու եւ իւրացնելու: Շատ հնարաւոր է, որ Խորենացու ժամանակներում Հայաստանում այդ կերպ կամ մի այլ ձեւով (*կին տալով*) արդէն իսկ գոյացել են Հրեայ Բագրատունիներ: Սակայն «Բագ» արմատով Բագինը, Բագարանը, Բագաւանը, Բագրեւանդը, Բագարատը, մի գուցէ եւ «Բագունց»-«Բակունց»-ը առնչութիւն չունեն հրեաների հետ:

Խորենացին (էջ 68) ասում է. «Քանզի ասելն ոմանց անհաւաստի մարդոց ... ի Հայկայ զթագադիր ազգոյ Բագրատունեաց լինել»:

Թարգմ. «Անհաւաստի մարդկանցից ոմանք ասում են, թէ Բագրատունիները թագադիր են նշանակուել Հայկի իսկ կողմից»:

Սա թէեւ ժխտական փաստարկ է, բայց ինքնին խօսում է, որ մեր տեսակէտը վաղնջական հիմք ունի: Ըստ մեզ՝ Բագրատունիներին Հրեայ ներկայացնելով, Խորենացին տուրք է տուել իր ժամանակի թելադրանքին:

Ես շատ են գարմացել ու գարմանում այն իրողութեան, որ

մեր լեզուաբանները, պատմաբան-ները, հնագետներն ու գրականութեան մշակները էական տարբերութիւն չեն գտել Տաճարի, Մեհեանի եւ Բագինի միջեւ: Երեքն էլ ներկայացուել են որպէս զոհ մատուցելու շինութիւններ, եւ այդ տեղերում գործող նուիրեալներն էլ բնականաբար պիտի ընկալուէին որպէս արեան մէջ թաթախուած մսագործ-«*ղասսարներ*» եւ գուշակներ, ինչպէս Յրեաների հոգեւոր սպասաւորները:

Եթէ այսպէս շարունակուի՝ հերթը կը հասնի Հայ եկեղեցուն եւ հոգեւոր հայրերին:

Իմ ստուգաբանութեամբ տաճարը այն վայրն է, ուր կրակը անմար են պահել: Մեհեանը՝ հոսող ջրի ակունքին կառուցուած նախաքրիստոնէական հիւրընկալ վանքն է, որը նուիրուել է (*ջրածիճ*) նախնիների հոգուն: Սասնայ Ծռեր դիւցազնաւէպում Սանասարն ու Պաղտասարը իրենց կացարանը հիմնել են հենց անմահական ջրով գետակի ակունքին, այսինքն այդտեղ մեհեան են կառուցել:

«Մեհեան» բառը (*մի+էհ-եան > մյ+էհ-եան > մեհ-եան*) բաղկացած է Ասորերէնում եւ Արաբերէնում պահպանուած «մյէհ=ջուր» եւ «եան>ա\*յն»-ակունք արմատներից:

Իսկ Բագի՞նը:

Տառացի վերլուծմամբ՝ Բագինը ուղղակիօրէն «ակադեմիա»-ն է, իսկ Բագինի քուրմերը՝ բարձ-րագոյն գիտարար գիտնականներ, ակադեմիկոսներ: Այլապէս զոհ մատուցելու արարողութեան կամ գուշակութեան համար քուրմերը ընդարձակ տարածքներ, գիւղեր ու մեծ նուէրներ չէին ստանայ:

Բագարանը՝ նախքան քաղաքի անուն դառնալը, եղել է ակադեմիկոսներ պատրաստելու ուսումնարան: Բագաւանը՝ ակադեմիկոսների աւան:

Բագրատունիները եղել են Հայոց քուրմ-ակադեմիկոսների տօհմական տունը, այլապէս Հայ ազգի բարձրագոյն հոգեւոր դասի ներկայացուցիչները, ինչի պատճառով էլ իրենց էր յանձնուած նախ Հայոց տօհմապետերին պաշտօնապէս հաստատելու-օծելու իրաւունքը, ապա եւ Հայոց արքաների թագադրման պատիւը:

«Բագ»-երը կամ գիտութեան արքաները՝ իրենց արարչութիւններով, նոր կազմաւորուող ազգերի մօտ պիտի համարուէին

աստուածներ, ու նրանց կոչումը կամ մակդիրը պիտի դառնա «Բոգ=Աստուած» (Սլաւոնական լեզուներում):

Բագին բառը կամ «բագ» արմատը իր իսկական բովանդակութեամբ եւ ուղղագրութեամբ չի հանդիպում անգլերէնում եւ ինչպէս տեսանք՝ ռուսերէնում (Բոգ), որովհետեւ նրանք բարբառային բնոյթի լեզուներ են: Oxford Illustrated Dictionary անգլերէն բառարանում հանդիպում ենք Beguin ուղղագրութեամբ բայց «Բագին» հնչիւնով մի բառի: Բացատրում է, թէ «Բագինները» մայրապետական կրօնական համայնք էին, հիմնադրուած Զոլլանդիայում, 12-րոդ դարում: Նրանք փոքր խմբերով գոյատեւում են նոյնիսկ մեր օրերում: Իսկ Beghard բառով տակ շարունակում է, թէ սրանք էլ «Beguin»-ների օրինակուտղամարդկանց հոգեւոր համայնք են եղել, ստեղծուած 13-րոդ դարում եւ տարածուած ցածր երկրներում: 14-րդ դարից սկսեալ՝ Զոլմի Պապերը սերնդէ սերունդ հալածել եւ ինկվիզիցիայի են ենթարկել սրանց, մինչեւ որ մնացորդները 17-երորդ դարում միացել են Franciscan-ներին Tertiarii-ի կարգավիճակով: Իսկ «Տեր-Տիար»-ը միայն ու միայն հայերէն է:

### 9. Արշակ

Սուրբ Մեսրոպ Մաշտոցն ասում է, թէ Արարիչն ամէն ինչ յօրինել է զոյգերով, ինչպէս արու եւ էգ, բարձր ու ցածր, վերին ու ստորին, արտաքին ու ներքին, արական ու իգական, դրական ու բացասական, եւայլն: Տառերը նոյնպէս ունեցել են զոյգերի այդպիսի մի քանի համադրումներ, որոնցից մէկն է ձայնաւոր-բաղաձայն զոյգերի կարգը: Զամաձայն այդ կարգի, իւրաքանչիւր բառ կամ բառարմատ կառուցուած է եղել ձայնաւոր-բաղաձայն կամ բաղաձայն-ձայնաւոր զոյգերով: Սակայն բառակազմութեան ընթացքում որոշ ձայնաւորներ ընկել են, ինչի արդիւնքում կան բարդ բառեր, որոնց մէջ երկու կամ երեք բաղաձայններ յայտնուում են իրար կողքի: Վերականգնելով պատշաճ ձայնաւորը իր տեղում կարելի է գտնել բառի կազմութիւնը: Այդպիսի մի օրինակ է «Արշակ» անունը:

Արշակ =

«Ր» եւ «շ» բաղաձայնների արանքում պէտք է լինէր մի ձայնաւոր, ինչը ըստ մեզ եղել է «ու»-ն, ուստի ունենք.-

### Ար-ուշ-ակ

Բառի «ար» արմատը տառացիօրէն նշանակում է «Աստուծոյ մասնիկ» կամ «վերին մասնիկ», «արեւի ընկած» կամ «ցերեկ», «լոյս»: Ուստի ունենք «վերին մասնիկ՝ ուշի ակ»: Եութեան կամ էակի երեք գլխաւոր կենտրոններից (*զլուխ, սիրտ, սեռական օրգան*) «վերին մասնիկ»-ը գլուխն է, ուստի ունենք «գլխի մասնիկ, ուշի ակ», որտեղ «ուշի ակը» ուղեղի զգայական (*ներւային*) համակարգի կենտրոնն է, ուղեղիկը:

### Արշակը՝

1. Որպէս պետութեան մարմինը ղեկավարող անձ, նշանակում է «պետութեան ներւային համակարգը կարգաւորող կենտրոն», ինչը համապատասխանում է պաշտօնին:

2. Նշանակում է նաեւ «Արարչի մասնիկին (*արարուածների*) ուշադիր-հոգատար ակ-անձ», ինչը նոյնպէս մտնում է արքայի պարտականութեան մէջ:

3. Նշանակում է նաեւ «Վերին-Աստուածային մասնիկին (*հոգուն եւ հոգեւոր գիտութեան*) ուշադիր անձ»:

4. «Արշակ»-ը անձ մարմնաւորելուց բացի լուսատու ակ է, որը էակների «վերին մասը կամ գլուխը ուշքի բերող» լուսատուն է եւ համապատասխանում է առաւօտեան արեւածագը ակետող լուսաստղին:

«Արշակ»-ն ունի իր զոյգը, որն է «Արուս-ակ»-ը կամ «Արուսեակ»-ը:

Դեռեւս Քարահունջի հայ աստղագետները իմացել են թէ Արուսեակ մոլորակը ամէն օր երկու անգամ պարզ երեւում է երկնքում: Մէկը առաւօտեան արշա-լոյսին (*Արուշակի լոյսին*), արեւի ծագելուց առաջ, իսկ երկրորդը՝ երեկոյեան, արեւի մայր մտնելուց եւ աստղերի երեւալուց առաջ: Առաւօտեան երեւացողը կոչել են «Արշակ», իսկ երեկոյեանը՝ «Արուսեակ»: Նրանք իմացել են թէ ինչ տեսակի լոյս է տրւում մեզ նրա կողմից տուեալ երկու պահերին: Առաւօտուն ուշքի բերող լոյս, երեկոյեան՝ ուսը կամ միտքը լուսաւորող, թարմացնող լոյս: Քանզի Ուշքն ու Միտքը նոյնական են Ուշք ու Ուսքի հետ: Ուսանելը բեռնակրութիւն չի, այլ Միտք անել է, եւ գրաբարում մեր իմացած ուսը կոչուել է «Ուս ընդ անութ», տարբերուելով ուս-մտքից:

## 10. Ուրարտու

Թէ ինչո՞ւ են մեր պատմաբանները խրտչում «Ուրարտու»-ից եւ «Ուրարտացի»-ներից՝ կարելի է զարմանալ միայն:

«Ուրարտու»-ն բաղկացած է «Ուր», «Ար» եւ «տու» արմատներից:

«Ուր»-ը այսօր էլ օգտագործւում է հայերէնում «տեղ» իմաստով: Պատմական «Ուրհայ» քաղաքը նշանակում է «Հայի տեղ», «Հայոց բնակավայր»: «Ուր»-ը համապատասխանում է անգլ. «where»-ին:

«Ուր»-ը նաեւ «հոսող ջուր»-ն է, որի մօտերքում են հիմնւել մեծ բնակավայրերը ընդհանրապէս:

«Ար»-ը տառացիօրէն վերծանւում է մի քանի իմաստներով, որոնք իրար լրացնող ու ամբողջացնող բովանդակութիւն ունեն: Առաջինը՝ «Արեւի ըրպէն ու մասնիկն» է, եւ այդ ըրպէն ամբողջ ցերեկն է, լոյսի ըրպէն է, արարչութեան պահն է ու արարուած մասնիկը:

«Տու»-ն «տալ» բայի արմատն է, ինչպէս «լուսատու»-լոյս տուող, «ստնտու»-կաթ տուող:

Հետեւաբար ի մի բերելով «Ուր»-ի «Ար»-ի եւ «տու»-ի բովանդակութիւնները, ստանում ենք «լոյս տուող տեղ-բնակավայր», «Արարողների բնակավայր»: Այդ լոյսը Արարչական է, Աստուածային է, ուստի «Ուրարտու»-ն «Աստուածային իմացական լոյսը սփռող-տարածող կենտրոն» է եղել:

Նոյնիսկ Շումերական հերոս Գիլգամէշ-ն է բարձրացել Հայաստան՝ այդ լոյսն ստանալու համար:

Ուրարտական պետութեան կարեւորագոյն գործունէութիւններից մէկն է եղել ջրանցքներ բանալն ու ամբարտակներ կառուցելը: Այս առումով էլ «ուր-ար-տու»-ն բովանդակում է «ջրանցքներ արարող» եւ «ար (լոյս-բերք) - տուող» իմաստը:

Մենք, Հայերս «Ուրարտու»-ից խուսափելու կամ ամաչելու ոչ մի պատճառ չունենք. թող ուրիշները ամաչեն ու մտածեն թէ ի՞նչ անեն:

## 11. Ռուսայ

Ուրարտուի թագաւորներ են եղել մի քանի «Ռուսայ»-ներ: Ովքե՞ր էին նրանք եւ ի՞նչ է նշանակում այդ անունը:

Հայոց նախարարական տներից մեկն է եղել «Ռշտունեաց» տօհմը: Անուան արմատներն են «Ռշ», եւ «տուն», այսինքն «Ռշ»-երի «տուն»-նախարարութիւն:

«Ռշ»-ի «ռ» եւ «շ» բաղաձայնների միջեւ նախկինում եղած ծայնաւորը կարելի է համարել «ու»-ն: Վերականգնելով այն իր տեղում՝ ստանում ենք «Ռուշ»: «Շ»-ն եւ «ս»-ն լծորդներ են ու տարբեր բարբառներում կան լեզուներում կարող են իրար փոխարինել: Ուստի «Ռուշ»-ը (անգլ. «Ռաշըն») կարող է յայտնուել «Ռուս» հնչիւնով եւս: Հետեւաբար «Ռուսայի տունը» հենց «Ռշտունիք»-ն է: Ռշտունիների բնակավայրը եղել է Վանայ լճի հարաւային ափերին: Իսկ չէ՞ որ Ուրարտացիները հենց Վանայ լճի աւազանի ծնունդ են, Վան մայրաքաղաքով: (*Տեսնում էք «Ռուս» եւ «Վան» բառերի կապը*):

Ռուսաց ազգային աւանդավէպերում (*Բելիմայ*) նրանց ծագումը տեղադրում է հարավային ծովի ափերին: Դա հենց Վանայ ծովակն է: Իսկ ո՞վ է Ռուսաց աւանդավէպերում Ռուսական ոգին մարմնաւորող հերոս «ԻՎան»-ը, եթէ ոչ «Վանից եկողը» եւ «դէպի Վան» ձգտողը: «ԻՎան» անունը հենց հայրենադարձութեան կոչ է:

Իսկ «Ռուսի»-ն ռուսերէնում նշանակում է «լուսեղէն», «պայծառ», «արեւագոյն» (*ֆր. rouge=կարմիր, rose=վարդ*), պարսկերէն «ռոշանի=լոյս»: Սուրբ Մ. Մաշտոցն իր «Յաճախապատում ճառք» երկում օգտագործել է «ռոշնութիւն» բառը՝ «լուսաւորութիւն» իմաստով:

Ըստ երեւոյթին, Ուրարտական պետականութեան անկման հետեւանքով Ռշտունիներից ոմանք գաղթել են հեռաւոր հիւսիս ու կազմել Ռուս ազգը, կրելով իրենց տօհմային անունը, իսկ մի մասն էլ գաղթել է արեւելք, որտեղ պահպանել է «Ուրարտու»-ից «Ուրտու»-ն, այսօրուայ Պակիստանցիների ինքնանանումը:

Խորենացին (*նոյն, էջ 117*) ասում է. «Իսկ զՌշտունիս եւ զԳողթնեցիս գտի պատմեալ ի Սիսականէն արդարեւ հատուած. ոչ գիտեմ, թէ յանուն արա՞նցն զգաւառսն անուանեալ, եւ թէ յանուն գաւառացն զնախարարութիւնս կոչեցեալ»:

Այսպիսով բացայայտում է Ռշտունիների պատկանելիութիւնը՝ Հայկեան Սիսակեան տօհմին:

## 12. Արգիշտի

Ո՞վ էր Արգիշտի արքան եւ ի՞նչ է նշանակում:

Նրանից մեզ են մնացել «Արճէշ»-ն ու «Արճիշակ»-ը Վանայ լճի աւազանում:

«Հայաստանի եւ Հարակից Շրջանների Տեղանունների Բառարան»-ում «Արճէշ» բառի տակ կարդում ենք, թէ «Արճէշ» անունը բարբառային ձեւով հնչում է նաեւ «Արգիշա»:

Բառարանը կազմողները հերքում են դրա կապը Արգիշտիի հետ: Ափսոս:

«Արգէշ»-«Արգիշ»-ն իր իմաստով հանդերձ մեզ համար պահպանել են Հնդիկները...

Ըստ տառադարձութեան օրէնքների՝ հայերէնի «Ա»-ով սկսուող բառերից մեծ մասը այլ լեզուներում կորցնում է սկզբնական «Ա»-ն: Կարող ենք շատ օրինակներ բերել:

Հայոց «Արայ»=հին եգիպտական «Րա-յ» աստուածը, անգլ. Ray=ճառագայթ (*ընդհանրապէս*), իսկ հայերէնում «Արայ»-ն ի մասնաւորի արեւի՝ ճառագայթն է, ինչը պատկերուած է եգիպտական Րա աստուածութեան որպէս խորհրդանիշ:

Հայաստանում այսօր էլ «Արայ» անունը կրողին կանչում են «Արօ-յ», որը նշանակում է Արեւի որդի (*եւ ոչ թէ ճառագայթ*): Սա էլ այլ լեզուներում յայտնւում է «Roy, royal, roi» ձեւերով, «արքայ, արքայական իմաստներով: (*Ունենք Արօյեան ազգանունը, որը «Արեւորդիների տօհմ» է նշանակում*):

Անգլ. Richard, լատ. Ricardos, ֆր. Ռեշար-ը նոյնական են «Արի-Կարդոս»-ի հետ, որտեղ Կարդոս-ը Արայ Գեղեցիկի որդին է (*Շամիրամի կողից «Արայեան-Արայ» վերանուանուած*), Կարդ(թ)ուլի-Վրացիների, Կարդ(թ)ագեն-ցիների նախահայրը (*Կարդագեն=Կարդոսի զեն»=կարդացողների զեն*):

Հայկական «Արամ»=հնդ. «Րամ-այ»:

Հայ. «Արեւ»=անգլ. «Rev», «Rev-(v)olution, Rev-(v)erance, Rev-(v)olver, Rev-(v)eal» եւ այլ բառերում, որոնց մէջ արեւի կամեցողութեան, արեւի ներքին բորբոքումների, արեւի պտոյտի, արեւի ընտրեալ որդու գաղափարներն են դրուած եւ չափանիշը միշտ արեւն է:

Այդպէս էլ «Արճէշ»-ը հնդկերէնում դարձել է «Րաճէշ» ու նշանակում է «Տիրակալ»: Մինչդեռ հնդկերէնում կայ բառի ար-

մատը «Րաճա», որը թարգմանում են «թագաւոր», բայց դա հայերէնի «Ա-րաճա» > «Արաքա» > «Արքայ»-ն է: Իսկ «Րաճէշ»-ի «էշ»-ը նոյնն է հայերէն «էշ»-ի հետ, «գործ» եւ «գործող» իմաստներով, ինչպէս տեսանք «իշ-խան» բառի մեկնութեան մէջ: «էշ»-ի ածանցեալ «իշ» ձեւից են առաջացել թուրքերէնում «իշ=գործ», «իշլէմէք=գործել, աշխատել» բառերը:

Չետեւութիւն 1.- Չնդ. «Րաճէշ»-ը սկզբնապէս նշանակել է «գործող արքայ»: Դա նոյնանում է հայերէնի բարբառային «Արճէշ»-ի կամ «Արգէշ»-ի հետ, իսկ «Արգիշտի»-ում «տի»-ն ինչպէս «տեար», «տիկին» բառերում նշանակում է «մեծ» (*«տիեզերք»-ը մեծ եզերք է եւ ոչ թէ անեզր*), ուստի «Արգիշտի»-ն նշանակում է «գործող մեծ արքայ», կամ «մեծագործ արքայ»:

Ինչպէս գիտենք, մարդկանց անունները ընդհանրապէս ածականներ կամ որակաւորումներ են: Ուստի պէտք չէ զարմանալ, թէ ինչ որ թագաւոր կամ արքայ իր որդուն տուել է այդպիսի անուն:

Չետեւութիւն 2.- «Արգիշտի» անունը կրող Ուրարտական սեպագիր արձանագրութիւնում բառը կարելի է վերընթերցել «Արքիշտի»:

### 13. Էրեբունի

Պատմաբանները միաբերան պնդում են, որ Երեւան քաղաքի անունը երբէք չի յիշատակուել փաստագրական պատմութեան մէջ (*կարծէք թէ յանկարծ երկնքից է ընկել*):

Մենք կողմ չենք այդ կարծիքին:

Խորենացի, էջ 158.- «Բայց վիճակեցաւ Չայոց եւ Բարթուղիմէոս առաքեալ, որ եւ կատարեցաւ առ մեզ յԱրեբանոս քաղաքի»:

Թարգմ. «Չայոց վիճակուեց նաեւ Բարթուղիմէոս առաքեալը, որը մահացաւ մեզ մօտ, Արեբանոս քաղաքում»:

«Արեբանոս»-ը ըստ Խորենացու գտնուել է Չայաստանում ու քաղաք է եղել:

«Չայաստանի եւ Չարակից Շրջանների Տեղանունների Բառարան»-ում կարդում ենք.-

«Արեբանոս՝ Քաղաք Մեծ Չայքի Վասպուրական աշխի Աղբակ գավ-ում: Գործածել է Մ. Խորենացին» (*Խորենացին չի նշել տեղադրութիւնը – Մ.Ն.*):



«Արեբոնոս հանդիպում է Խորենացու պատմության ձեռագրական տարբերակում», նաև «Արեվբանոս՝ Գավառ Մեծ Յայքի Վասպուրական աշխուհում, Մեծ Ջաբ գետի ավազանում, կենտրոնը նույնանուն ք-ը, որպես գավ հիշատակվում է Յայսմավուրքում»:

Նաև՝ «Ֆ. Կոնիբերը, Յ. Գելցերը, Յ. Մարկվարտը նույնացնում են ս. Բարդուղիմեոսի մոտակայքի Արաբիոն բերդի (կամ ամրոց) հետ ու տեղադրում նրա մոտի այժմյան Դելեր գ-ի տեղում»:

Եիշդ է, որ Վասպուրականում Բարթուղիմեոս առաքելի անուամբ եկեղեցի է եղել ու ըստ Խորենացու՝ նա այդ շրջանում քարոզչական բեղուն գործունեություն է ծաւալել: Սակայն այդ ամէնը դեռևս չի հաստատում որ նա այդտեղ մարտիրոսացել է կամ ընդհանրապես սպանուել է:

Քանզի՝

1. Խորենացու օգտագործած «Կատարեցաւ»-ը չի նշանակում «սպանուեց», այլ «կեանքի աւարտին (*կատարելութեան*) հասաւ», «մահացաւ»:

Դետեւաբար, Բարթուղիմեոս առաքելը երբէք էլ չի սպանուել ոչ Յայաստանի հարաւ-արեւելեան Վասպուրականում, ոչ էլ այլ մի վայրում: Նա շարունակել է իր գործունեութիւնը երկրի խորքերում, եւ միայն սովորական մահով աւարտել է իր կեանքը: Դնարաւոր է, որ նրա դին Արեբանոսից բերել են ու հողին յանձնել իր հիմնադրած եկեղեցում, Վասպուրականում, ինչի պատճառով էլ այդ եկեղեցին կնքուել է նրա անունով:

2. Ոչ մի շօշափելի հնագիտական, պատմական ու մատենագրական փաստ չի հաստատում, որ «Արեբանոս» քաղաքը գտնուել է Վասպուրական նահանգում: Արեւելագէտների ու պատմաբանների ենթադրութիւնն է դա: «Արեբանոս»-ը գիւղ չի եղել ոչ էլ ամրոց, որ երբէք չի շատակուէր ու մօտաւոր տեղն իսկ անյայտ մնար պատմութեան բնագաւառում:

Ըստ մեզ, «Արեբանոս»-ը ուղղակիօրէն առնչուում է «Էրեբունի»-ին ու «Երեւան»-ին:

Եթէ երեկ ու այսօր մեր մայրաքաղաքի անունը «Երեւան» է հնչում եւ ոչ «Երեւուն»՝ հիմնուելով «Էրեբունի»-ի «ու»-ի վրայ, եւ վերջին հարիւրամեակներում երբէք այդպէս չի հնչել, ապա

Ուրարտական սեպագրի ընթերցումն էլ առնուազն պրտը լրսր «Էրեբանի»:

Մենք հակուած ենք կարծելու, որ «Երեւան»-ը առաջացել է «Արեբան-ոս»-ից, որը տառա-դարձում է «Արեւ-ան-ոց», եւ անմիջականօրէն կապում է արեւի եւ ոչ թէ երէի, կամ երեւալ բայի հետ, ու նշանակում է արեւ անող տեղ, ինչը աշխարհագրականօրէն ճիշդ է: Այլապէս «Արեւի Վան», «արեւի քաղաք», նաեւ «արեւելեան քաղաք», ինչը պատմականօրէն համապատասխանում է ճշմարտութեան, քանզի այն հիմնադրող Ուրարտացիների Վան մայրաքաղաքի նկատմամբ գտնուում է արեւելքում:

«Արեբոնոս» աղաւաղուած ձեւում արմատականօրէն չի փոխուում բառի իմաստաբանութիւնը, այլ «Արեւ անող»-ը դառնում է «Արեւի բոյն» «Արեւելեան բոյն»: Այս բովանդակութիւնից առաջնորդուելով կարելի է ենթադրել, որ Երեւանը հնարաւոր է եղած լինի Ուրարտական պետութեան արեւելեան կենտրոնատեղին, որպէս երկրորդ մայրաքաղաք: Ուստի չենք ժխտում, որ երկու ձեւերն էլ հաւանաբար օգտագործուած լինեն պատմութեան տարբեր ժամանակներում, քաղաքին տրուած կարելութեան համապատասխան:

«Բան» արմատին հանդիպում ենք «Վան» քաղաքի բառահիմքում, նաեւ Վրաստանի «Վազիսուբանի» տեղանունան մէջ, որպէս «Վազերի-որթատունկների բան-վան»: Իսկ «Արեբոնոս»-ի «Բոն»-ը «բոյն» բովանդակութեամբ հանդիպում է Գերմանիայում որպէս քաղաք «Բոն» եւ այլուր (*Բոնես-Այրես*):

Ինչ վերաբերում է Արեբանոս քաղաքը Վասպուրականի «Արաբիոն» անրոցի հետ շփոթելուն՝ կ'ասենք հետեւեալը: Նախ որ «Արաբիոն»-ը եղել է անրոց եւ ոչ թէ քաղաք: Երկրորդ, «Արաբիոն» անունը՝ ըստ մեզ, նշանակում է «հարաւի անրոց», եւ անկասկած իր կառուցման ժամանակ համապատասխանել է այն կառուցող պետականութեան աշխարհագրական դիրքին:

#### 14. Խալտի կամ Յալտի

Որտե՞ղ է «թաքնուած» Ուրարտական գերագոյն աստուած «Խալտի-Յալտի»-ն:

Ի՞նչն է պատճառը, որ այս անունը երկինջին է Ուրարտագէտների մօտ:

1. Հայոց լեզուում կայ «Յ» տառը, որը կարող է բառասկզբում հնչել «Հ», բառամիջում՝ «Յ»: Հալանաբար ուրարտագետները այս երկհնչիւն տառը ընկալել են «Հ» եւ շփոթել «Խ»-ի հետ:

2. Լեզուաբանների կողմից ընդունուած է, որ հայ. «ղ»-ն կարող է այլ լեզուներում կամ Հայոց իսկ բարբառներում արտայայտուել «լ»-ով, ինչպէս «ալ» եւ «աղ» բառերում, «աղօտ» եւ անգլ. «aloud» համարժէք բառերում:

Ըստ այնմ տառադարձելով բառը՝ կ'ունենանք «Յաղ-տի», «մեծ յաղ»: Իսկ «յաղ»-ը «յաղթ», «յաղորդութիւն» բառերի արմատն է (*Հայոց Քրիստոնէայ հայրերը օգտագործել են «հաղորդութիւն», ինչը «հոգեւոր աղ-սննդի եւ օրէնքի որդի դառնալու» արարողութիւնն է*):

«Յաղորդութիւն» բառը կազմուած է «յաղ», «որդ», եւ «ութիւն» բաղադրիչներից, որտեղ «որդ»-ը որդին է, «ութիւն»-ը՝ գործողութիւնն է կամ արարողութիւնը: Ուստի ունենք «յաղի որդի կոչուելու արարողութիւն»:

Թէ «յաղ»-ն ո՞վ է, որին որդի կարող ենք լինել յաղորդուելով:

Բառարմատի թագնուած իմաստը բացայայտուում է երբ դիմում ենք մեր հարաւային հարեւան արաբների լեզուին: Համապատասխան «Յ\*ալ»-«Յ\*ալի»-ն նշանակում է «բարձր»: Ուստի «յաղորդութիւն» նշանակում է «Բարձրեալի որդի կոչուելու արարողութիւն»: Իսկ Բարձրեալը բազմաթիւ լեզուներում Աստծուն տրուած մակդիրներից մէկն է:

«Յաղթ» նշանակում է «յաղի թիւ»-ը, որը «1»-ն է, Հայոց այբուբենի «Ա»-ն է, Աստուածն է: «Յաղթել»՝ նշանակում է յաղի թիւը ունենալ (*«թիւ» նշանակում է նաեւ «մարմին»*): Իսկ այդ թիւը արտայայտուում է աջ ձեռքի բթամատով, որը երբ բարձրացնում ենք՝ նշանակում է «գերազանց», «Աստուածային»:

«Յալտի»-ի «տի»-ն նշանակում է «մեծ»:

Հետեւաբար «Յալտի»-ն «Բարձրեալ Մեծ»-ն է կամ «Մեծ Բարձրեալ»-ը՝ միակ Աստուածը:

Մասնագետները գրում են «Հալղի-Խալղի», «տ»-ի փոխարէն «ղ»-ով: Ըստ մեզ սա եւս թիրիմացութիւն պիտի լինի, քանզի «ղի»-ն «ղի-ակ»-ի (*մեռած ակ»-ի*) արմատն է (*«ղի(յ)-ակ»-ի «ղիյ»-ը = անգլ. «die=մեռնել»*), մինչդեռ Բարձրեալը անմահ է: «Դի»-ն պէտք չէ շփոթել «Դեւ» > «Դիւ»-ի հետ:

Անցկացնենք մի զուգահեռ:

Գրական լեզուն «Ալեւոր»-ը, կամ բարբառային «Հալիւոր»-ը բխում է նոյն «յաղ» արմատից:

Ո՞ւմ են անուանում «Հալիւոր»: Մարուսյա Հովհաննիսյանն Ոսկեհասկցիներին նուիրած իր գրքում ասում է. «Մշեցի կինն իր ամուսնուն (*կոչում է - Մ.Ն.*) հալիվօր»:

Օջախի հայրը, կնոջ ամուսինը՝ տան թագաւորն է: Նա բարձրեալ է իր օջախի անդամների համար, եւ Մեծ Բարձրեալ-Յալտիի (*Աստժու*) փոխանորդն է ընտանիքում: «Հալիւորը» (*աւելի ծիշդ «Յալիւորը»*) պարզապէս «ծերունի» չէ:

Ուրարտական-Հայկական «Յալտի»-Բարձրեալի պաշտամունքը երբէք չի հանգել, բայց վերածուել է թաքնակրօնութեան: Նրա հետեւորդներին հանդիպում ենք պատմական Հայաստանի տարածքում՝ «Ա\*լեւի» քրտեր անուան տակ, որոնք չեն տարբերում Հայաստանում ապրող «Եզիդի»-ներից: Ինչպէս եւ Սիրիայում կան արաբ Ա\*լեւիներ, որոնք ներկայիս այդ երկրի կառավարիչներն են:

Մասնագէտները գիտեն, որ Յ\*ալեւի-Ալեւիները Ալիի հետեւորդները չեն, Շիաներ չեն: Սակայն Ալին՝ Մուհամմետ մարգարէի աջ բազուկն ու մահմետականութեան հիմնադիրներից լինելով հանդերձ, իր ուսմունքներում շատ բան է պահպանել հնագոյն Յալտիական հաւատալիքներից, առասպելներից, քանզի նա եղել է աւանդապահ հոգեւոր առաջնորդ: Մինչդեռ Սիւննի Մահմետականները առաջնորդում են միայն Ղուրանի աւանդածներով: Այս լոյսի տակ բնական է, որ Ալիի հետեւորդ Շիայ Պարսիկները եւ Սիրիայի Յալեւի կառավարիչները բարեկամական հարաբերութիւններ ունեն:

15.Տեշուբ կամ Տեյշեբա - Ուրարտական S'UBA

Մենք համաձայն ենք Արմէն Դաթեանի հետ («*Հայոց Աստղային Դիցաբանութիւն*»), որ «Խուռիների գլխաւոր աստուած Տեշուբ»-ը «տեսանող» աստուածն է:

Ամբողջացնելու համար նրա ստուգաբանութիւնը, ասենք որ «Տեշուբ-Տեյշեբա»-ն կառուցուած է իրար լրացնող երկու բաղադրիչ արմատներից՝ «տեշ» եւ «շուբ», բայց բառի ուղղագրութիւնը ըստ մեզ կարող է լինել «Տեշուփ», «Տեշեփ» կամ «Տեշափ»:

Ինչո՞ւ:

«Տեշ»-ը ինչպես Դաթեանն է նկատել, հայ. «տես»-ն է, ինչը անժխտելի է:

«Շուֆ»-ը եւ «շեֆ»-«շաֆ»-ը հանդիպում է արաբերէնում «տես», «տեսաւ» իմաստով, իսկ անգլերէնում «shape»=ձեւ» բառում:

Քանի որ հայերէնում «ֆ» չի եղել նախկինում, ուստի այն պէտք է տառադարձել «պ» կամ «փ»: Իսկ «շ»-ն ունի տառադարձութեան երկու հնարաւորութիւն՝ «ս» կամ «չ»:

Ներկայացնենք «Տեշ-շուփ»-ի «շուփ» հատուածի հայերէն հնարաւոր տառադարձութիւնները:

Շուֆ > սուպ > սուփ > չուպ > չուփ:

Շաֆ > սապ > սափ > չապ > չափ:

Շեֆ > սեպ > սեփ > չեպ > չեփ:

Այս արմատներից «չափ»-ը լաւագոյն բացայայտիչն է «Տեշուփ»-ի բովանդակութեան: Քանզի «տեսնել»-ը անմիջապէս առնչուում է «չափել»-ու հետ: Այսինքն մի բան տեսնելը բովանդակում է այդ տեսանելին իր չափերով, ծաւալային խորութիւններով ընկալելու գործողութիւնը:

Տուեալ «շաֆ»-ը կամ «չափ»-ը անգլերէնում ներկայանում է «shape=ձեւ» բառով, ինչը հայերէնում պահպանուել է «սափ» արմատի մէջ, որից էլ «սափրիչ»-ը, որը ոչ թէ պարզապէս «վարսավիր» է, այլ «ձեւաւորող»-ն է ընդհանրապէս, «shaping»-ի մասնագէտը, այլապէս «image» ստեղծողը:

Հետեւաբար «տեսնել»-ը ոչ միայն տեսանելին կամ իրը ծաւալային չափերով ընկալելն է, այլեւ դրա ձեւը, ուրուագիծը ընկալելու գործողութիւնն է:

«Շուփ»-ը «շփել» բայի արմատն է: Եթէ այն տեղադրենք «Տեշուփ»-ի մէջ, ապա կ'ունենանք «տեսանող ու շփող» կամ շօշափող:

Դաթեանը իրաւացիօրէն «Տեշուփ»-ին զուգահեռ դրել է յունական «Թեսես»-ը: Քանզի յուն. «Թես»-ը հայ. «տես»-ն է, իսկ «Եւս»-ը ֆր. «yeux»-ն է, անգլ. «eyes»-ը (աչքեր), այսինքն «Թեսես»-ը «տեսանող աչք»-ն է, որը այսօր էլ պատկերում է հայոց եկեղեցիներից ոմանց խորանների գլխավերելում, իսկ զոյգ աչքերով պատկերը հանդիպում է Տիբեթեան տաճարների վրայ:

Ի տարբերութիւն Դաւթեանի՝ մենք Խուռիական «Տեշուփ»-ին զուգահեռ ենք դրել Ուրարտական «Շուբա»-ն, որը ըստ մեզ պէտք է ընթերցուի «Շուպա», ու համեմատուի «սպայ»-ի հետ:

Բառարմատի միւս ձեւերը հայերէնում պահպանուած են բարդ բառերում, երբեմն առանց ձայնաւորի, ինչպէս «սպ-այ», «սպ-անանել», «սեպուհ», «սեփ-ական», «ա(ս)-սուպ», նաեւ «շեփ-որ», «շփ-ել», որոնք անմիջականօրէն առնչուում են «տեսնելու», «չափելու», «զննահատելու» հետ (*Իսկ չափելը նաեւ սահմանել է, իսկ մէկի կեանքը չափել-սահմանելը՝ նաեւ սպաննել է*):

Ֆրանսերէնում «Շեֆ»-ը, անգլերէնում «chief»-ը՝ «գլխաւոր» իմաստով, համապատասխանում են հայ. «սեպ» արմատին ու առնչուում են «սեպ-ուհ»-ին ու «սպ-ային»: Ըստ երեւոյթին, երկրի պետական համակարգում սեպուհը վարել է եկամուտները տեսնել-չափել-ստուգելով հարկեր հաւաքելու պաշտօնը: Սեպուհները թագաւորական տօհմի շառաւիղ ազնուականներ են եղել, որոնց էլ վստահուել է այդպիսի պաշտօն: «Սեպիական»-ը «սեպուհներին վերաբերուող»-ն է, նրանց սեփականութիւնն է, որը յատկացրել է թագաւորը: Իսկ «սեփական»-ը «զննահատանքով» (*չափելով*) առնուած ունեցուածքն է, այսինքն գընւածն է: Իսկ սպաներն եղել են ու կան ռազմական իրավիճակը զննահատող (*չափող-ձեւող*) ու որոշում կայացնող զինուորականները: «Սպայ» բառը՝ անգլերէնում կորցնելով իր բովանդակութեան մի մասը, դարձել է «spy=լրտես», թուրքերէնում «սպայ»-ն դարձել է «soupay»:

Ըստ մեզ, քրիստոնէական համակարգում Տեշուփին փոխարինել է «Տնտես»-ը:

«Տնտեսի օրուայ շարականը նկարագրում է, թէ ինչպէս իմանալի վերին աշխարհը ստեղծուեց եւ այնտեղ հրեղէնների պետը տնտես նշանակուեց, յետոյ տիրապէս ստեղծուեց զգալի երկրորդ աշխարհը եւ դրախտը, ուր տնտես դրուեց առաջին մարդը: Շինուեց նաեւ բարձրագոյն եկեղեցին եւ այնտեղ տընտես կարգուեց ճշմարիտ խօսքի քարոզը»: (*«Չայ եկեղեցու Տօները», Արտակ Արքայս. Մանուկեան, Թեհրան, տպ. «Նայիրի», 1994, 5-րդ տպ.*)

Քրիստոնէական տուեալ շարականով յստականում է Տե-

շուրփ անձնաւորութիւնը, որպէս «հրեղէնների պետ», ինչը արեգակնային համակարգում հենց արեւն է, համակարգի կենտրոնն ու սիրտը:

«Տնտես» բառը կարելի է ստուգաբանել երկու ձեւով. 1.տան-տես, 2.«տին-տես»: Առաջին պարագան հասկանալի է, որպէս «տունը կարգաւորող», իսկ երկրորդում ունենք «տին (մեծը) տեսանողը», Աստծուն տեսանողը, այլապէս «Մեծն տեսանող»-ը, ինչը առաւել հարազատ է Տեշուրփին:

«Տնտես»-ը արտայայտուած է նաեւ այլ ձեւերով, «Մահ-տեսի»՝ որպէս «Աստուծոյ հուրը տեսնող» մարդ կամ «Աստուծոյ հուրը տեսած - մաքրուած - մարդ»: «Մագ-տես», որպէս «Մեծը տեսանող», «Աստծուն տեսանող» մարդ:

Այլ լեզուներից արաբերէնում «Տնտես»-ին զուգահեռ է «քաղտիս=սուրբ»-ը, այլապէս՝ «Քաղը տեսանող»-ը, ինչից էլ իմանում ենք, թէ «քաղ»-ը անգլերէնի նոյն ինքն «God»-ն է (*Աստուած*) եւ «քաղտիս»-ը «Աստծուն տեսանող»-ն է: Նոյն արմատից «Քաղի= դատաւոր»-ը (*թուրքերէնում՝ «ղատի»*) «Աստուծոյ մեծութիւն»-ն է երկրի վրայ (*նաեւ Աստուծոյ դատողը*): «Աքքատ»-«Ակգատ»-ները եղել են «Մէկ God»-ը դաւանողները:

16.ա. Սուներ, բ. sukka, գ. էնսուխքեշդանանա, դ. էրեշ, Նիսաբա դիցուհի, ե. Պարխարեան լեռներ Արտակ Մովսիսյանի նոյն երկուն (էջ 16) կարդում ենք. «Արատտա երկրի տեղադրության հարցում կարելոր ծառայություն է մատուցում “էնմերքարը եւ էնսուխքեշդանանա” վիպերգը, որի համաձայն բարձր լեռնային Արատտա երկրից Շուներ ռազմական արշավանք է իրականացվել Եփրատ գետով: Ծանապարհի կեսին հիշատակվում է Եփրատի ափին գտնվող էրեշ քաղաքը, որը Նիսաբա դիցուհու պաշտամունքի կենտրոնն էր»:

Մեր մեկնութիւնները.-

ա. Սուներ

Սուներ անուանումը՝ ըստ մեզ, բաղադրուած է «ծու-ներ» արմատներից, որտեղ «ծու»-ն կարող էր կարդացուել «ծո-W» որն եղել է նախամայրը «ծով» բառի:

Սոյն «ծու»-«ծով»-ից է առաջացել թուրքալեզու ժողովուրդները:

վորդների «սու» = ջուր բառը (նաեւ արեւմտեան «սաունա»-ի «սաու» արմատը): «Մեր»-ը «մայր» բառի բարբառայնացումն է, ինչպէս ֆրանսերէնում, ուր մայրն ու ծովը նոյն «mer» բառով են արտայայտուում: Ուստի «սումեր»-ը կարող է ունենալ «Մայր ծով» իմաստը: Հետեւաբար այդ բառը ազգի կամ ժողովրդի անուն չի եղել, այլ մայր ծովի (ովկիանոսի) փիհն հաստատուած բնակիչներին տրուած ածականն է:

Առաջարկութիւն.- Այս հիմքերը նկատի ունենալով՝ առաջարկում ենք այսուհետ օգտագործել «Սումեր» տարբերակը միայն եւ մոռանալ «Շումեր»-ը:

Ինչպէս որ «Ծ>Ս» տառադարձութեան հանդիպեցինք «Սումեր», «Սուր»-«Ծուռ», «Սայդ»-«Ծաւդ» արմատներում, այդպէս էլ յաջորդի:

բ. Sukkal

Ըստ Սումերագետների՝ sukkal-ը սումերերէն նշանակում է «կառավարիչ» (Ա. Մովսիսեանի նոյն երկում, էջ 93):

Մեր ստուգաբանութեամբ sukkal բառը բաղադրուած է «ծուխ+կալ» արմատներից:

Հայերէնում ունենք «ծխական քահանայ» հնագոյն հասկացողութիւնը, ինչը մեր կարծիքով նոյնն է թէ ասենք «համայնքի քահանայ, հովիւ»: Նոյնպէս եւ sukkal-ը ծուխը կալողն է, ծուխ-համայնքի առաջնորդը, մի գուցէ հոգեւոր հովիւը եւ ոչ թէ «կառավարիչ»-ը: Չի բացառուում, որ sukkal-ից է առաջացել կենտրոնական Ասիայի ժողովուրդների մօտ «աք-սաքքալ»- «ծերակուտական» արտայայտութիւնը, «ակ-ծուխ-կալ» հիմքից:

գ. «Էնսուքեշդանաննա»

Սոյն «խօսքի» առաջին բանալին տուել է սբ. Մ. Մաշտոցն:

Նա հաւիտենականների շարքում ներկայացրել է երեք միաւորներ, որոնք են Էր-ը, Էն-ը եւ Կայ-ն:

Եթէ դրանք դասակարգենք ըստ երկրային մակարդակների՝ ապա «Էր»-ը կը լինի այրը - ընտանիքի հայրը, «Էն»-ը Է-րի կինը - ընտանիքի մայրը, իսկ «Կայ»-ն՝ զաւակները:

«Էնսուքեշդանաննա» անունը, ըստ մեզ, կարելի է վերընթերցել երկու ձեւով, որոնց մէջ սկզբի «Էն»-ը «Կին»-ն է, իսկ վերջի «Աննա»-ն՝ մայրը, իսկ երկուսը միասին՝ «Մայր կինը»:



Տարբերակ առաջին.-

«Էն-ծուխ-քիշ-տան-աննա»

Խօսքը վերաբերում է «Քիշ» քաղաքի «տան» «ծուխ»-ին եւ դրա «Մայր կնոջը», այսինքն Նօյ նահապետի տան համայնքին եւ դրա տոհմապետ մօրը:

Տարբերակ երկրորդ.-

«Էն-ծուխ-եշտ-ան-աննա»

Այս տարբերակում «եշտ»-ը նշանակում է «է», «կայ»: «Ան»-ը «անողն» է, կայացնողն ու հիմնողը, իսկ «Աննա»-ն՝ «մայրը» (*նորից կայացնողը, ծնողը*): Հետեւաբար «Էնծուխեշտանաննա»-ն կը բովանդակի «համայնք կայացնող մայր կինը»-ը նախադասութիւնը:

Նախաքրիստոնէական հայկական աւանդութիւնում այդպիսի «նախամայր» է եղել «Մայր Անահիտ»-ը, բոլոր «տոհմապետ մեծ մայր»-երի նախօրինակը:

Վարկած.-

Մայր Անահիտի գլխաւոր սրբատեղին գտնուել է «Անահտական Աթոռ» կոչուող լեռների հարաւային միջակայք Դերսիւմում: Քրիստոնէութեան ընդունումից յետոյ այնտեղ մնացած ու մինչեւ մեր օրերը գոյատեւած ոչ քրիստոնեայ տեղաբնիկները նրա սրբատեղիները կոչում են Աննա անունով: Սոյն համեմատութիւնը մեզ իրաւունք է տալիս էնսուքեշդանաննան նոյնացնելու Մայր Անահիտի, Նօյի կնոջ, յետջրհեղեղեան շրջանի նախամօր հետ, քանզի նախաջրհեղեղեան նախամայրը կոչուել է Ծովինար:

դ. Էրեշ քաղաքն ու Նիսաբա դիցուիին

Կրկնենք մեջբերումը Արտակ Մովսիսեանից:

«...Բարձր լեռնային Արատտա երկրից Շումեր ռազմական արշավանք է իրականացվել Եփրատ գետով: Ճանապարհի կեսին հիշատակվում է Եփրատի ափին գտնվող Էրեշ քաղաքը, որը Նիսաբա դիցուիու պաշտամունքի կենտրոնն էր»:

Վստահ ենք, որ Եփրատի ափին գտնուող «Էրեշ» քաղաքը պիտի համապատասխանի հայոց «Երիզայ» կամ «Երեզ» քաղաքին, որը նուիրուել է Մայր Անահիտին, քանզի նրա գահը գտնուում է հենց Երիզայի հիւսիսում, եւ արտայայտուած է Անահտական Աթոռ լեռնազանգուածի X-աձեւ (*աթոռաձեւ*) ֆիզիկական

ուրուագծերով (նայել «Հայաստանի պատմության առկաս», Ա. մաս, էջ 6):

Նիսաբա դիցուհին.-

Հայ իրականության մեջ «Նիսաբա»-ն թաքնուած է «Մըծ-բին» քաղաքի հնագոյն «Նիսիբին» անուան մէջ: Ինչպէս վերո-յիշեալ վիպերգից է երեւում, դա Մայր Անահիտին տրուած մակ-դիրներից մէկն է եղել:

«Մծբին» քաղաքանունը նշանակում է «մեծ բոյն», «մեծ շինութիւն» (այլապէս մայրաքաղաք), այսինքն դա Նիսիբին քա-ղաքի ածականական անուանումն է:

«Նիսաբա» անուան բաղադրիչներում առկայ է «աբ»-«հայր»-ը, երբ «աբայ»-ն նշանակում է «հօր», «նախահօր», իսկ «նիս»-«նիշ»-ը հնարաւոր է, որ բովանդակի «նշանած» (կիմ) ի-մաստը: Ուստի երկուսը միասին կարող են արտայայտել «նա-խահօր նշանածը», «նախահօր կինը» իմաստը:

«Էրեշ»-ը բաղադրուած է «Էրի-էշ» մասնիկներից, երբ «Էր»-ը համազօր է Եակոս-Ադամին. իսկ «էշ»-ը նրա «նստատեղին» է, օջախը, որտեղ պիտի լինէր եւ նրա կինը:

Ակնյայտ է, որ «Էրեշ»-ն ու «Նիսաբա»-ն իրար բացայայ-տող հոմանիշ անուններ են:

Հետեւութիւն.-

1. Էրեշ քաղաքը չի եղել Արատտա երկրի եւ Սուների կէս ճանապարհին, այլ հենց Արատտա-Հայաստանում, եւ ըստ երե-ւոյթին աւանդութիւն է եղել, որ հայկական զօրքերն արշա-ւանքից առաջ գնացել են Երիզայ Մայր Անահիտի օրհնութիւնն ստանալու համար:

2. Արշակունեաց առաջին մայրաքաղաք Մծբին-Նիսիբինը եղել է Մայր Անահիտի պաշտամունքի կենտրոններից մէկը:

Ե. Պարխարեան լեռներ

Բաղկացած է «պար» եւ «խար» արմատներից, երբ «խար»-ը աթոռն է, գահը (անգլ. chair=աթոռ: «Ոչխար»-ը «ոչ նստելի» կենդանին է, «խարբերդ»-ը «աթոռանիստ բերդ» է եղել):

Պարխարեան լեռները պարուրում-ընդարձակում ու պաշտպանում են գահաթոռը, Անահտական Աթոռը:

Արմէն Դավթեանն իր «Աստղապաշտութեան Դրսեվորում-ներ Հայասական Դիցարանում» յօդուածում գրում է.- «Շում.

GIR.TAB- «կարիճ» համաստեղության դիմաց ուղղակի գրված է. «Իշխարա դիցուհի, երկրի (հողի) տիրուհի»: Սա մի դիցուհի է, որի պաշտամունքը տարածված է ամբողջ Առաջավոր Ասիայում: Միջագետքում նա կոչվում է Իշխարա, Ուգարիտում՝ Ուժխարա, Խուռիների մոտ՝ Իշխարա, Էլամում Աշխարա եւ այլն»:

Ինչպես նկատելի է «Պարխար»-ում եւ «Իշխարա»-ում առկայ է «խար»-«աթռ»-Գահր: Եւ «Իշխարա»-ն կարող է նշանակել 1.«իշխող գահ», 2.«գահի իշխան-իշխանուհի»: Նա նույնանուն է յետջրհեղեղեան մարդկութեան նախամայր Անահիտի անձի եւ նրա զբաղեցրած գահաթռի հետ:

### 17. Ջաւախք

Այս վերլուծումը նուիրում ենք Ջաւախահայութեան, որպէսզի ձեռքագատուեն «Ջաւախք» անուան անհիմն եւ ճապաղ մեկնութիւններից:

Բառը կառուցուած է «ջաւ» եւ «ախք» արմատներից:

«Ախ»-ը հանդիպում է նաեւ Ջաւախքից բխող «Ախուրեան» գետի անուան հիմքում: Հանդիպում է «Ախթայ» (*ներկայիս «Հրազդան»*), «Ախթալայ», «Ախալքալաք» եւ «Ախալցխայ» քաղաքների անուններում, քանզի բոլորն էլ գտնուել են Ջաւախքի ամբողջական տարածքում, որը շատ աւելի ընդարձակ է եղել քան ներկայիս ընկալուածը: Իսկ «Աչքասար» լեռը, որը Ջաւախքի լեռնաշղթայի մի գագաթն է՝ ըստ մեզ, որպէս անուն բխած պիտի լինի «ախք»-ից ինչը առկայ է լեռան տրուած «Ախչալա-Ակչալա-Աղչալա» աղաւաղուած ձեւերում ու ենթադրում ենք որ հնագոյն ձեւը եղել է «Ախքասար»:

Ըստ մեր լեզուաբանական հետազօտութեան արդիւնքների, «ջ» տառի զոյգերից է «զ»-ն: «Ջատ» եւ «զատ» արմատները պայմանականօրէն հոմանիշ են, ինչպէս «զատել» եւ «ջատել»-«անջատել» բառերում: «Ջատել»-ը ենթադրում է մարմինների, նիւթեղէն իրերի անջատումը իրարից, իսկ «ջատել-անջատել»-ը՝ էներգետիկ միաւորների տարանջատումը: «Ջատու»-ն հենց միտքը, իմացականութիւնն ու հոգեկանը անջատող-խաթարող կախարդն է: Մի օրինակ է նաեւ «Ջոկ»-ն ու «Ջոկ»-ը, եւ Գողթնեցի «Ջոկերը» (*մեզանից*) «ջոկուածներ»-ն են հոգեւոր ոլորտում: Այս հիմքով էլ «Ջաւ»-ին զուգահեռ կարե-

լի է դնել «Զաւ»-ը, ինչպէս Ուրարտական ժամանակներում «Զաւախք»-ը հնչել է «Զաբախա», որտեղ «ւ»-ն էլ փոխարինել է «բ»-ին որպէս բարբառային փոխարժէք:

Ձոյգեր են նաեւ «Ախ»-ն ու «ակ»-ը: «Ակ»-ը ընդունուած է որ նաեւ «օղակ» է, բայց «ախ»-ը լոկ օղակը չէ: «խ»-ն էութեան երէք հիմնական բաղադրիչներից որեւէ մէկի (*գլուխ, սիրտ, սեռական օրգան*) կենտրոնն է, ինչպէս խաչն ու խաչով պայմանաւորուած Քրիստոսը՝ սրտի եւ սիրոյ իմաստութեան կրողը, խելը ուղեղի հիմքը (*ճէյրոնը*), խոյ-ը առնին: Հետեւաբար «Ախ»-ը՝ որպէս պատկերագիր, ներկայանում է կենտրոնում կէտ ունեցող օղակով, ինչպէս տիեզերքի սիրտ-արեւի խորհրդանիշը: Եգիպտական հնագոյն պատկերագրերում, ուր «խ» հնչիւնը արտայայտուել է նոյնպիսի գծագրով:

Այս բոլոր տուեալները ի մի բերելով՝ կարելի է ասել թէ «Զաւախ»-ի զուգահեռն է «Զաւակ»-ը, մի տարբերութեամբ, որ զաւակը պայման չէ որ սրտի կանչով ծնուածն է, իսկ ջաւախ-ը հենց սիրոյ եւ իմացականութեան արգասիքն է:

«Զաւ» արմատի «աւ» երկբարբառը կարելի է հնչել «օ»:  
«Զաւախք» բառում «ջ»-ն եւ (աւ)-«օ»-ն դրափոխելով կը ստանանք «Օջախք»: Օջախը աւանդաբար տեղադրուել է տան կենտրոնում, եւ օջախ-ընտանիքը առանց զաւակների իմաստաւորում չունի:

Թէ ո՞ւմ զաւակներն են Զաւախեցիք:

Տարրոսեան ու Կովկասեան լեռնաշղթաները ներկայանում են որպէս արու եւ էգ զոյգեր (*ցուլ եւ կով*): Նրանց զաւակը Փոքր Կովկասն է (*Փոքր Միերը՝ ժայռերի մէջ*), (*Այսօրուայ Հայաստանի Հանրապետութեան, Արցախի եւ Զաւախքի տարածքները միասին*), որի գլուխն ու սիրտը աշխարհագրականօրէն հենց Զաւախքում են, եւ Զաւախեցիք Փոքր Կովկասի մտքի, սրտի եւ սիրոյ զաւակներն են, Ախուրեանը Փոքր Կովկասի գլխի եւ սրտի ակունքներից բխող գետն է, Ախալքալաքը նրա գլխի եւ սրտի միջոցում կառուցուած քաղաք է եւայլն: Սա այլ հարթութեան քննարկում է:

Ի հարկէ այս վերլուծումները երբէք չեն հակադրում այն բանին, որ մեր նախապապ ու վրացիների նախահայր Կարդոսի թոռը, Մցխեթոսի որդին կոչուած լինէր «Զաւախոս», ինչպէս աւանդում է վրացական առասպելը:

18. Ցորենի Երգը - Դանիել Վարուժանն պիտի ասեր «Չացին Երգը»:

Թէ ի՞նչ առնչութիւն ունի փաստագրական պատմութիւնը «ցորեն» բառի հետ...:

Մեզ ծանօթ գրաբարեան ուղղագրութեամբ «ցորեան»-ը ժամանակի ընթացքում յայտնուում է «ցորեն» ձեւով, իսկ անգլերէնում «ց»-ի բացակայութեան պայմաններում եւ «ե»-ի անկումով առաւել եւս աղաւաղուելով ստացել է c o r n ձեւը:

Աճառեանն «Ցորեան» բառի տարատեսակն է համարել «ցուր-եան»-ը, որը՝ ըստ մեզ, բառի հնագոյն արմատական ձեւն է:

Միջագետքում նոյնպէս «ց»-ի բացակայութեան պայմաններում «ցուրեան»-ը տառադարձուել է «շուրեան», ինչից էլ առաջացել է «Աշ-շուրեան»-ը, որը ոչ թէ ինչ որ մի հնադարեան կորած ազգ է, այլ պատմութեան մէջ ցորենով սնուող եւ առաջինը ցորենի մշակմամբ զբաղող ժողովուրդն է: Քանզի սկզբի «Աշ»-ը ընդհանուր առմամբ սնունդ եւ ուտել է նշանակում (*հայ. «ճաշ=եփուած եւ մշակուած ուտելիք», «լաւ-աշ»՝ լաւ ուտելիք, «Աշուն=ուտելիք ունեցող» եղանակ, ռուս. «յէշ=կեր», թուրք. «աշ=ապուր»*): Այսօր էլ Չայաստանում յայտնի է «Աշուրայ ցորեն»-ը:

Չոմերոսի Ողիսեւսն իր թափառումների ընթացքում ապաստան է որոնել «Ցորեն ուտող ազգեր»-ի մօտ: Կարծում ենք, թէ նրանք հենց Աշշուրեանները պիտի լինեն, յետնաբար Ասորիները, Սուրիա-սիրիացիները, որոնք այսօր էլ ցորենի լաւ մշակներ են ու հացակերներ՝ հայերիս նման:

Պէտք է այս տեսանկիւնից քննարկել «Աշուր»-ի (*ցորեն մշակող ու հաց ստեղծող աստուծոյ*) պաշտամունքը:

«Ցորեան»-ի «ցուր» արմատը ունեցել է «ցանուած ուրտեղ» նախնական բովանդակութիւնը:

Յետագայում «Ցուր»-ից առաջացած «Ցուրտ» բառը նշանակում է «ցուր կամ ցորեն տուող», եւ զարմանալի չէ որ ցորենը լաւ է աճում յատկապէս անենացուրտ երկրներում, ինչպէս Ռուսաստանում, Կանադայում, Չայաստանում:

«Ցորենի Երգ»-ի շարունակութիւնը կը լինի ներքեւում:

19. Սասնայ Ծռե՞ր՝ թէ Ծրեր

Թէ ինչո՞ւ «Սասնայ Ծրեր»:

«Ծր» արմատից ունենք «ծր-ար» բառը: Ծրարը հիմնականում պաշտպանում է ծրարուածը: «Ծիր»-ը նոյնպէս որեւէ էութեան շրջանագիծն է, որը միեւնոյն ժամանակ այդ էութեան պաշտպանական գիծն է: Իսկ «Սասնայ Ծրեր»-ը միանշանակ Սասունի պաշտպաններն էին եւ ոչ թէ «ծուռ»-«գիծերը»:

20. Սասնայ Ծռեր եւ Արծրունիք

Խորենացին «Արծրունի» տօհմանունը բացատրել է որպէս «արծիւ ունի»: Յնարաւոր է, որ «արծիւ»-ը նրանց խորհրդանիշն է եղել, որովհետեւ թռչունը պատկերել է հոգին ու հոգեւորը: Սակայն «Արծրունի» տօհմանուան արմատը Սասնայ Ծրերի «Ծր»-ն է եւ ոչ թէ «ծիւ»-ը: «Արծրունի» նշանակում է.-

1. «Ար-ի «Ծր»-ը «ունի», այսինքն «Ար-ի պաշտպանութիւնն ունի»,

2. «Լուսաւոր ծիր-լուսապսակ ունի»,

3. Իսկ քանի որ «Ար»-ը Արարիչն է՝ ուստի «Արծրունի»-ները «Արարչի պաշտպանութիւնն ունեն»,

4. «Արարչական ծիր-լուսապսակ-աւորայ ունեն»,

5. «Արարչի ծիր-լուսապսակ-թագն ունեն»: Ահա այստեղից էլ պատմութեան ընթացքում Արծրունիների մշտական ձգտումը թագաւորական գահին: Կարելի է ենթադրել, որ պատմական շատ հին անցեալում նրանք իսկապէս նստած են եղել այդպիսի գահի:

Խօսելով Սանասարի եւ նրա Ադրամելէք (*Բաղդասար*) եղբոր մասին, Խորենացին ասում է, թէ առաջինը հաստատուել է Սիմ (*Սիմսար*) լեռան շրջակայքում - ինչը Սասունն է: Իսկ եղբայրը, Ադրամելէքը հաստատուել է Սիմ լեռան հարաւ-արեւելեան կողմերում, ու շարունակում է.

«Ի սմանէ՛ ասէ պատմագիրն, լինել զԱրծրունիս եւ զԳնունիս»:

Թարգմ. «Պատմագիրն ասում է, թէ սրանից են առաջացել Արծրունիներն ու Գնունիները»:

Ահա ինացանք «Սասնայ Ծրերի» եւ «Արծրունիների» արիւնակցական կապի մասին, ինչով հիմնաւորում է նրանց

անուններում «Ծր» արմատի նոյնութիւնը:

Այս բոլորով հանդերձ, այսօր է որ «ծուռ»-ը «գիժ» ենք հասկանում: Ըստ մեզ, «ծուռ»-ը սկզբնական ժամանակներում նշանակել է «ջրածին», քանզի «ուռ»-ը «խորքային ջուր»-ն է (*ուռուչոգիա-ն էակի ներքին-խորքային ջրերի վիճակի մասին գիտութիւնն է: «Ուռենի»-ն խորքային ջրերից սնուող ծառ է*), իսկ «ուր»-ը վերգետնեայ հոսող ջուրն է, «ջուր»-ը՝ «ջերմ» ջուրն է, աղբիւրի փրփրում ջուրն է, այլապէս՝ «ջերմուկը», «ծով»-ը լճացած, ոչ հոսուն եւ աղի ջուրն է:

Իսկ «ծուռ»-ի «ծ»-ն «ծնունդ» է: Հետեւաբար էպոսի հերոսների «ծուռ» մակդիրը գալիս է նրանց մօր՝ Ծովինարի, ընդերքից ժայթքող ջրից յղիանալու գործոնից, ի տարբերումն սովորական մարդկանց «հօրից» առաջանալու երեւոյթին (*Սանասարի ջրի յատակ սուզուելն ու հզօրացած դուրս գալն էլ է խօսում*): Այս երեւոյթն էլ տեղի է տուել «ծուռ»-ի իմաստափոխութեան, որպէս սովորականից շեղ ծնունդներ, ինչն էլ յետագայում ընկալուել է «գիժ»-եր:

Էպոսում «Ծուռ»-ջրածինն ու «ծուր»-պաշտպանը միաւորուել ու խտացել են «ծուռ»-ի մէջ:

#### 21. Յորենի Երզն ու Յրան Վերզոն

Ոչ անտեղիօրէն մենք կասկածում ենք, որ Սասնայ Ծերի տօհմից ինչ որ «Յռան» ծնուած լինէր:

Աւանդուած պիտի լինի «Յրան Վերզոյ», որի արմատն է «ցուր անող» Վերզոյ, այսինքն ցորեն մշակող Վերզոյ, որն իր ցորեն չափելու կոտով ստիպուած էր ուրիշների համար ոսկի չափել:

Իսկ «Յուրեան Վերզոյ»-ի «Վերզոյ» անունը յուշում է առաւել կարելոր մի տուեալ, այն է՝ «վեր գոյացնող», «աճեցնող»:

Սասունի Յուրեան աճեցնողները Տաւրոսեան լեռնաշղթայի ծնունդներն էին: Նրանց Տաւրոսեան լինելու եւ ցորեն աճեցընելու հանգամանքները հարաւում միաձուլուել են «Յուր»-ի մէջ ու յայտնուել արաբերէնում լեզուա-ատամնային «ս»-ով հնչող սօւր=ցուլ բառով, փոխանակ «տաւր»-«տօր»-ի:

Մեր աչքի առաջ յառնում է ցորենի մշակութեան հիմնադիրը, Յուրեան-Աշշուրեանների նախահայրը՝ Սասնայ «Յուրեան Վերզո»-ն:

### ՅՕԴՈՒՄԾ «3»

#### Եզնիկ Կողբացու զարմանահրաշ պատումներից

Մեսրոպ Մաշտոցի երեց աշակերտներից լինելով հանդերձ, Եզնիկ Կողբացին խորապես չի ընկալել իր ուսուցչի ուսմունքը, որտեղ ասուում է. «Աղանդները խուզարկելով ժամանակ մի կորցնիր» ... քանզի քեզ է տրուած Աստուածային գիտութիւնը: Սակայն ամէն մի սխալ էլ անպայման ունենում է ինչ որ կողմնակի դրական հետեւանք եւ մենք շնորհակալ ենք Եզնիկից, քանզի նա թեկուզ եւ անգիտակցաբար, մեզ է աւանդել նշանակալից պատմական, աստուածաբանական եւ լեզուաբանական հումք:

Նկարագրելով Պարսկական հնագոյն Մազդեզական կրօնը՝ Կողբացին ոչ մի անգամ չի օգտագործել «Ահրիման» բառը, այլ՝ «Արիմըն», որն հոլովուելով ստացել է «Արիմենի» ձեւը: Երկրորդ, երբէք չի գրել «Որմիզդ», այլ՝ «Որմըզդ»: Երրորդ, նա օգտագործել է «Բարսմունք» բառը, որը յետոյ փոխարինել է «գաւազան»-ով ու լեզուաբաններին դրել նեղը, որովհետեւ «բարսմունք»-ը յոգնակերտ «ք» տառով է աւարտուում եւ չէր կարող «մի» գաւազան լինել, ինչի պատճառով էլ թարգմանել են «ճիւղերի խուրձ»: Օգտագործել է նաեւ «յաշտ արար» արտայայտութիւնը, որը յետոյ փոխարինել է «զոհ մատուցեց» խօսքով, ինչը իմաստաբանական մեծ աղաւաղում է առաջացրել:

Պէտք է խոստովանել, որ Եզնիկ Կողբացին թիրիմացութիւնների մէջ է ընկել այդ բառերին իր իսկ տուած մեկնութիւնների պատճառով եւ վերջին հարիւր եւ աւելի տարիներին մեզ էլ քարշ է տուել դրանց ետեւից: Սա ի հարկէ իր մեղքը չէ, եւ դրանով հաստատուում է, որ Մաշտոցի ժամանակներում իսկ Յայկազեան բազմաթիւ բառերի բուն իմաստները խեղաթիւրուել էին ու անհասկանալի էին դարձել հայ մարդուն: Սա հաստատուում է նաեւ, որ մեր ազգի մշակութային ու հետեւեաբար հոգեւոր, ռազմական ու գիտական մակարդակի անկումը գալիս է շատ հեռու ժամանակներից:



Նա ասում է, թե Պարսից գերագոյն աստուածն Ջրուան հազար տարի «յաշտ արար» - իբր «զոհ մատուցեց» - եւ որդի չունեցաւ: Այս հիման վրայ էլ եզրակացնում է, թէ Ջրուանն պէտք է ունենար իրենից բարձր մի աստուած, որին զոհեր է մատուցել, ուստի եւ նա ինքն գերագոյն աստուած չէր կարող լինել:

### 1. Յաշտարար եւ Յաշտ

«Յաշտ» բառի արմատը «աշտ»-ն է, որից ունենք «հ-աշտ», «աշտ-անակ», «աշտ-արակ», «Աշտ-ի-շատ» եւ այլն, որոնց մէջ «աշտ»-ը ոչ մի զոհի գաղափար չի ներկրում: «աշտանակ»-ը մոմակալն է, որը ծառայում է լոյս սփռելու: «Աշտարակ»-ը հին ժամանակներում ծառայել է զինուորական եւ պաշտամունքային նպատակների (*այսօր էլ «փարոս» ձեւով նաւարկութեան*): Առաջին պարագայում եղել է դիտարան, որտեղից կրակի կամ լոյսի նշաններով այլ աշտարակների դիտորդներին տեղեկութիւն են յայտնել, ազդանշան են տուել: Երկրորդ, «աշտարակ»-ը ծառայել է աստղագիտական ուսումնասիրութիւնների, նաեւ աստղագուշակութեան համար: Երրորդ, կրակապաշտութեան ժամանակներում զոհերը (*մի գուցէ եւ հանգուցեալների մարմինները*) այրելու ծառայող խարոյկները տեղադրել են հենց աշտարակների վրայ, որպէսզի մօտիկ լինէին աստուածներին ու խնդրանքը շուտ տեղ հասնէր: Բոլորիս ծանօթ է «Յաշտ» բառը, «հաշտեցընել, հաշտուել» բայերով, որտեղ նոյնպէս զոհաբերութեան գաղափար չկայ, այլ կայ անհաշտ կողմերի հոգիները (*սրտերը*) լուսաւորելով իրար բարեկամացնելու գաղափարը: Քանզի «Յ»-ն հոգին է, «աշտ»-ը լոյսն է, ուստի «հաշտ»-ը հոգու կամ անձի հոգեւոր լուսաւորութիւնն է, առանց որի ոչ մի հաշտութիւն տեղի չի ունենայ: «Յաշտ» ձեւում «Յ»-ին փոխարինել է «Յ»-ն, որը լուսապսակ-աւորան է, մտաւոր իմացականութիւնն է, ինչը բխում է գլխից, ուստի բառը ենթադրում է «մտքի կամ գիտութեան լոյս»:

Այս ելակէտից մեկնելով, Ջրուանի «յաշտ արար»-ը ձեռք է բերում «գլխից բխող լոյս արարեց» բովանդակութիւնը, ինչը նոյնանում է սուրբ Գրային «Աստուած ասաց եղիցի լոյս՝ եւ եղել լոյս» դրոյթի հետ, քանզի «ասաց»-ը խօսք է, որի աղբիւրը գլուխն է:

Յետեւաբար պարզուում է, որ Ջրուանն հազար տարի մտաւոր լոյս է արարել եւ ոչ թէ զոհ մատուցել ինչ որ մէկին:

Հազար տարի անց, կասկած է մտել Ջրուանի մտքում, որովհետեւ արարուած մտաւոր լոյսը ոչ մի պտուղ չի տուել (*մի գուցէ լաբարատոր աշխատանք է տարել*): Չէ՞ որ լոյսն է ամէն ինչի աղբիւրը կամ «հայրը» (*եւ ոչ թէ մայրը, որն առանց հայրական լոյսին ինքնուրոյնաբար մայր չի դառնայ*):

### 2. Եզնիկեան-Մազդեզական Ջրուանի էութիւնը

Եզնիկ Կողբացին շարունակուում է. «Երբ Ջրուանն կասկած ունեցաւ՝ յղիացաւ զոյգ որդիներով»:

Նա հարց է առաջ քաշուում, թէ Ջրուանն արդեօք կի՞ն էր, որ յղիացաւ. կամ էլ արդեօք կի՞ն ունէր: Հիմք ընդունելով քրիստոնէական դրոյթները, նա մտորուում է. «Եթէ ինքը յղիացաւ՝ ապա կին էր ու չէր կարող Աստուած լինել: Իսկ եթէ կին ունէր՝ ապա նոյնպէս չէր կարող Աստուած լինել»:

Բայց չէ՞ որ Աստուածաշնչում ասուում է թէ Աստուած արարածներ արարեց իր «Բան»-ով, իսկ «բան»-ը մտքի լոյսն է: Այսպիսով «յաշտ»-ը նոյնանում է «Բան»-ի հետ եւ պարզուում է, որ Ջրուանն ունեցել է մտքի՝ յղացում ու արարում եւ ոչ արգանդային. ուստի նա ոչ կին է եղել, ոչ էլ կին է ունեցել:

### 3. Արհմըն առաջնեկն ու Որմըզդ Արամազդը

Եզնիկն ասում է, թէ Ջրուանն իմանալով որ զոյգ որդիներով է յղիացել, որոշում է առաջնեկին տալ իր իշխանութիւնը, քանզի յոյս է փայփայել, որ առաջնեկը իր ակնկալած Որմըզդը պիտի լինէր:

Դեռեւս չծնուած Որմըզդը լսում է հօր մտադրութիւնը եւ միամտօրէն հաղորդում է եղբօրը, Արհմենին: Արհմընը անմիջապէս լոյս աշխարհ է շտապում ու կանգնելով հօր առաջ պահանջում է իր իրաւունքը, խոստացուած իշխանութիւնը: Հայրը չի ճանաչում իր առաջնեկին եւ նրան անուանում է խաւարի որդի (*այլապէս՝ խափշիկ, նեզր*), ու գարշահոտ: Մինչդեռ նրանք կը վիճէին՝ ծնւում է Որմըզդը: Ջրուանն ասում է. «Ահա՛ իմ որդին որին սպասում էի», ու նրան է տալիս ձեռքի բարսմունքը, որով «յաշտ էր արարում»: Արհմընը բողոքում է եւ պահանջում իր

առաջնեկութեան իրաւունքը: Հայրը նրան է տալիս 9000 տարւան իշխանութիւն երկրի վրայ, որից յետոյ նա պէտք է ենթարկուէր Որմըզդի տնօրինութեան:

Նախ քննարկենք «Որմըզդ» բառը: Ըստ հայկական դիւցաբանութեան՝ դա «Արամազդ»-ն է: Կարելի է հետեւցնել, որ «ըզդ»-ը «ազդ»-ն է, ինչը ընդունուած է ասել, Աստուած է նշանակում: «Որմ»-ը կարելի է համեմատել անգլ. «worm=որդ» բառի հետ եւ չի բացառում, որ նոյնիմաստ է: Այս ի մտի ունենալով «Որմըզդ»-ը կը լինի «որդ Աստուծոյ» կամ «Աստուծոյ որդի»:

«Արհմըն»-ը կարելի է բաժանել երկու արմատներին, «Ար» եւ «հմըն»: Անուան հոլովման ժամանակ «հմըն»-ը դարձել է «հմեն», ինչը համեմատելի է անգլ. «human»-ի հետ: «Ար»-ը տառացիօրէն նշանակում է «Աստուծոյ մասնիկ»: Ստացում է, որ «Արհմըն»-ը ի սկզբանէ Աստուծոյ մասնիկն է, բայց human-ն է, այլապէս՝ «հում մէն», «հում մարդ» է, քանզի նա նախանձից ու ազահութիւնից դրդուած, դեռեւս չհասունացած շտապել էր ժամանակից շուտ լոյս աշխարհի գալ: Պէտք է նկատի ունենալ, որ «Արհմըն»-«Արհմեն»-«հում մէն»-ը երբէք էլ «Արմ-մէն»-ը կամ «Արի մէն»-ը չէ:

Այս երկու անուանումները իրենց վերոյիշեալ իմաստաբանութեամբ եթէ տեղադրենք Աստուածաշնչեան տուեալների կողքին, կը ստանանք համապատասխան «Աստուծոյ որդիներ»-ն ու «մարդկանց որդիներ»-ը:

Մօտաւորապէս նոյնպիսի զուգահեռ կայ Հոմերոսի մօտ, երբ Ջեւսն սպասում է Հերակլեսի ծննդեանը, ու խօստանում է նրան պարգեւել ամբողջ երկրի իշխանութիւնը, բայց նրա կինը, Հերան կասեցնում է այդ ծնունդը եւ աւետում է մի այլ ոմնի ծնունդը, որն էլ ստանում է այդ իշխանութիւնը (*Հոմերոս, «Իլիական», Ե-Գ, Եր. 1987, էջ 364*):

#### 4. Բարսմունք եւ Գաւազան

Այժմ քննարկենք թէ իսկութեան մէջ Զրուանն իր Որմըզդ որդուն ի՞նչ զօրութիւն է տուել, որով՝ ըստ Եզնիկ Կողբացու, «նա պարտաւոր էր շարունակել իր հօր առաքելութիւնը»:

Ըստ Եզնիկի՝ նա «բարսմունք»-«գաւազան» է տուել: Գաւազանը կամ մականը իսկապէս որ իշխանութեան խորհրդանիշ է

ել կրել են բոլոր թագաւորներն ու բարձրաստիճան հոգեւորականները: Եզնիկի ասածը ճիշդ է միայն այս դիտանկիւնից, իսկ «զոհ մատուցելու»-ն չի սազում: Սակայն դրանով Կողբացին կամ Պարսիկները հակասութեան մէջ են ընկել, որովհետեւ Ջըրլանն ստիպուել է իշխանութիւնն ու իշխանական գաւազանը 9000 տարով տալ առաջնեկ Արհմընին եւ ոչ թէ Որմըզդին:

Լեզուաբանները խնդիրը հասցրել են բոլորովին անհեթեթութեան: Ըստ նրանց՝ քանի որ «բարսմունք»-ը «ք» յոգնակերտ մասնիկով է աւարտուում, չի կարող «մի» գաւազան լինել, ուստի «ճիւղերի խուրձ» պէտք է լինէր:

Ստացում է, որ Ջրուանն «ճիւղերի խուրձ» է տուել Որմըզդին, որպէսզի «զոհ մատուցի»: Ինչ անհեթեթութիւն: Եթէ «դանակներ» ասէին՝ խելքի մօտ կը լինէր:

Յնարաւոր է սակայն, որ «բարսմունք»-ի խորհրդանիշը եղել է խաւարը լուսաւորող «ջահ»-ը, որը իսկապէս խոտերի խրձից են պատրաստել: Որովհետեւ այսօր էլ ոմանք «մտաւոր լոյս»-ի խորհուրդը արտայայտում են «ջահ»-ով, որը ոչ մի առնչութիւն չունի «զոհ մատուցելու» հետ:

«Բարսմունք».-

Բառակազութեան մէջ ձայնաւորների անկման երեւոյթը յայտնի է, ուստի եթէ ուզում ենք վերականգնել բառարմատները, պէտք է պարզենք թէ ո՞ր ձայնաւորներն են բացակայում: «Բարսմունք» բառում «րսմ» երեք բաղաձայները իրար են յաջորդել, ինչը նշանակում է, որ երկու միջանկեալ ձայնաւորներ կորել են: Մենք գտել ենք, որ դրանք «ու» պիտի լինեն, ինչի պարագայում կը ստանանք «բար-ուս-ում-ունք», որից «բար»-ը մտքի պտուղն է, «ուսում»-ն ու «ուսմունք»-ը հասկանալի են: «Բարսմունք»-ը կը լինի «մտքի պտղաբերութեան ուսմունք», ինչը Աստուածային գիտութիւնն է, Բանն է: Ուստի Ջրուանն իր Որմըզդ որդուն տուել է մտքի լոյս, արարչական ունակութիւններ եւ լեզու, որը հիմքն է բոլոր գիտութիւնների: Իսկ մտքի կարողութիւններն ու պտուղները ի հարկէ բազում են եւ բնականաբար «բարսմունք»-ը յոգնակերտ «ք»-ով է աւարտուում:

Արհմընին Ջրուանն տուել է ուղեղ, ձեռքեր, ոտքեր եւ իշխանութիւն, մի խօսքով բոլոր ֆիզիկական ու նիւթական հնարաւորութիւնները, բացի «Բան»-ից:

«Գաւազան»-ը բաղադրուած է «գ-աւազան» մասերից եւ նշանակում է «գոյի գլխի աւազան»: Այն պատկերում է անծի քթի ծայրից ուղեղ բարձրացող կորը, ապա ուղեղի կորն ու ողնաշարը մինչեւ վերջ: Այսինքն «գաւազանը» բովանդակում է ուղեղի գործունէութեան ամբողջ միջակայքը, քթից սկսեալ (*դրա համար էլ ասում ենք «քթի ծակ չունեն՝ս», կամ՝ «հոտառութիւն չունեն՝ս»*): Ուստի Եզնիկ Կողբացին իրաւացի է, երբ Արհմընի մասին խօսելիս «բարսմունք»-ը փոխարինել է «գաւազան»-ով, քանզի Արհմընը ունեցել է կատարեալ մարդկային ուղեղ եւ չի եղել «կապկամարդ»:

Ամփոփենք տուեալները:

Մեր «12»-րդ յօդուածում կը քննարկենք Աստուածաշնչում արարչութեան հետ առնչուող «անասուն» բառը, որը երկրածին մարդն է եղել (*գիտութիւնը կոչում է «նախամարդ»*), եւ որը «Բան»-լեզու չի ունեցել, եւ «Բանել»-աշխատել, ստեղծագործել չի իմացել, այլ միայն պատրաստին լափել, յափշտակել եւ սերնդագործել:

Աստուածաշունչն ասում է, որ «անասուն»-ը Աստուծոյ պատուերով (*Բանով*) ծնուեց երկրից, նախքան Աստուած Ադամին կ'արարէր իր պատկերով ու շնչով:

Եզնիկ Կողբացուց իմացանք, որ Մազդեզական կրօնում նոյն հորից առաջինը արարուել է ոչ լուսաւորեալ, իշխանատենչ ու փառամոլ «Արհմըն»-ը, ապա երկրորդ որդին՝ լուսաւորեալ «Որմըզդ»-ը, որն էլ ժառանգել է իր հօր մտաւոր իմաստութիւնը (*Յօր պատկերով*), շարունակելու համար լուսաւորութեան գործը եւ ոչ թէ զոհ մատուցելու համար: Ուստի թէ՛ Աստուածաշնչում եւ թէ՛ Մազդեզական կրօնում Աստուծոյ առաջնեկը «անասուն» մարդն է եղել:

Ադամին տրուել էր երկիրը, որպէսզի մշակէր այն: Երկիրը միայն հողը չէ, մշակելն էլ միայն հողագործութիւն չէ, այլ լոյս սփռելու առաքելութիւնն է:

Ինչպէս տեսնում ենք, մեր լեզուի բառերում, Աստուածաշնչում եւ Մազդեզական կրօնում տարբեր ձեւերով նոյն բաներն են ասում, եւ չի բացառում, որ այլ կրօններում էլ լինի այդպէս:

Եզնիկի աւանդած Պարսկական առասպելաբանութիւնում

կան այլ կարելու տուեալներ եւս, որոնք առաւել խորը լոյս են սփռում արարչութեան Պարսկական տարբերակին:

Զրուանն իր զօրութիւնը խօստացել էր տալ առաջնեկ որդուն, բայց տուել է երկրորդին: Ուստի առաջնեկ «Արհմըն»-ը բողոքել է իր խոստմնադրութեան դէմ: Զրուանն ստիպուած՝ նրան է յանձնել երկրի իշխանութիւնը (*բայց ոչ Բարսմունք-Բամը*) 9000 տարով, որից յետոյ Արհմընը պարտաւոր էր իր իշխանութիւնը յանձնել լուսաւոր եղբօրը եւ ենթարկուել նրան:

Գիտենք թէ ոչ ոք կամովին չի յանձնում իր ունեցած իշխանութիւնը, եւ յատկապէս «Արհմըն»-ի նման խաւարամիտ-նիւթապաշտ-իշխանատենչ մարդը, Սէմ-առաջնեկի սերունդը, որը երկարատեւ ու դաժան պայքար է մղում Աստուծոյ ընտրեալ Որմըզդ-Արամազդ որդու սերնդի դէմ, պահպանելու համար իշխանութիւնը, բայց ըստ երեւոյթին, հասել է ժամանակը, որ լուսաւորն ու արարողը յաղթանակի խաւարին ու խաւարամտին:

Այս անունների շուրջ շփոթութիւնը փորձենք յստակեցնել:

Ըստ երեւոյթին՝ նախաստեղծ «անասուն» մարդու եւ վերջաստեղծ լուսաւոր մարդու պատմութիւնը շաղախուել է, Ադամի առաջնեկ Կայենի ու նրա Աբել եղբօր, ապա Նօյի երեք որդիների պատմութեան հետ: Սուրբ գրքից գիտենք, որ Կայենը Հայր Աստուծոյ կողմից արհամարհուել է ու եղբայրասպան դարձել: Նրա վարմունքից դատելով՝ նա ունեցել է գիտակցութեան պակաս, ինչի պատճառով նոյնանուն է սուրբ Գրոց «անասուն»-ի հետ, այլապէս՝ Մազդեզականների «Արհմընի» հետ: Քանզի թէ՛ անասունը, թէ՛ Ադամի Կայենը առաջնեկ-սէմ են, եւ երկուսն էլ ունեցել են նոյնանման յատկանիշեր, եղել են խաւարամիտ: Իսկ Նօյի զաւակներից յիշատակուած են երեքը, որոնց առաջնեկը կոչուել է Զրուան: Զրուանի որդիները եղել են Յոյների աստուածները, ինչը ցոյց է տալիս, որ նա եւ նրա որդիները խաւարամիտ չեն եղել, այլ լուսամիտ: Ուստի Նօյի առաջնեկ Զրուան որդին չէր կարող «Սէմ» «անունը» կրել ու «Սէմիտ»-ների նախահայրը լինել: Քանզի իրականութիւնը ցոյց է տալիս, որ «սէմիտ»-ները դեռեւս զուրկ են հոգեւորից ու ձգտում են նիւթական մեծատիրութեան: Յուսանք որ կը բարեփոխուեն՝ առաջին հերթին հենց իրենց իսկ բարեկեցութեան համար, ապա եւ ամբողջ մարդկութեան ներդաշնակութեան ու յառաջդիմութեան համար:

## ՅՕԴ-ՈՒԿԾ «4»

«Նակ-առակ-որդը (*հուրիակը-արևը-նմանակող-որդին*)  
իր սաքանայություններով այնքան ճշմարտաման  
“գիպություններ” ներդրեց շրջանառության մեջ,  
որ իրականն ու ճշմարիտը գրնելը շատ դժուարացավ:  
Ովքեր կը լծուն այդ ծանր գործին՝ Աստուածահաճոյ կը դառնան:  
Ովքեր կը կարողանան վերականգնել ճշմարտության մի մասնիկն անգամ  
կարող են Աստուծոյ Որդուն եղբայր դառնալ»:  
*Մաշտոցի մտքերի բանաձեւումը՝ հեղինակից*

### ՀԱՅԿԱԿԱՆ ՏՕՍԱՐ Ամսանունների ժամանակի եւ Բովանդակութեան Մասին

Զօնում եւ Տիկին Էլիայ Յովհաննիսեանին

Մենք համաձայն չենք այն մարդկանց հետ, ովքեր թե-  
րագնահատում են մեր նախնիների իմացութիւնը աստղաբաշ-  
խութեան եւ տօնարագիտութեան ասպարէզներում, երբ ունենք  
առնուազն 4000 տարուան աստղադիտարան Մեծամօրում,  
առաւել հինը՝ Քարահունջում:

#### 1. Հայկական Տօնարի Ակունքները

Է. Բ. Աղաեանի «Ակնարկներ Հայոց Տօնարների Պատ-  
մութեան» գործի էջ 34-ում կարդում ենք.-

«Դիւլորիէն գտնում է, որ հայկական հին օրացույցը մուտք  
է գործել Իրանից, եւ իր դրույթը հիմնավորում է հին պարսկա-  
կան եւ հին հայկական օրացույցների կառուցվածքի նույնու-  
թեամբ»:

Դիւլորիէն ճիշդ է այնքանով, որ տուեալ օրացուցային հա-  
մակարգը Պարսկաստանից Հայաստան է վերադարձրել Հա-  
յաստանում Արշակունեաց թագաւորական տօհմի հիմնադիր  
Վաղարշակ թագաւորը:

Մեջբերենք Մովսէս Խորենացու խօսքը Վաղարշակ Ա. Ար-  
շակունի Պարթեւ Արքայի առաջին գործի մասին.-

«Եւ օրէնս իմն հաստատէ ի տան թագաւորութեան իւրոյ»:

եւ ժամս որոշէ ելից եւ մտից եւ խորհրդոց եւ խրախճանութեանց եւ զքօսանաց»:

Թարգմանենք. «Իր թագաւորութեան սահմաններում ընդհանրական օրէնքներ է հաստատում, եւ յստակեցնում է ել ու մուտի, խորհուրդների, խրախճանքների եւ զքօսանքների պահերը»:

Այո, նա իր թագաւորութեան սահմաններում հաստատել է օրէնքներ, ընդարձակ իմաստով ժամակարգ (*առանց որի հարկահաւաքութիւն չի լինի*) եւ տօնացոյց, որոնք բերել է տուել Պարսկաստանից:

Սակայն՝ ճշդեւ Պարթեւ Արշակունիների ինքնութիւնը, ճշդում է ամբողջ պատմական իրականութիւնը:

Կրկին անգամ յիշենք Մովսէս Խորենացու խօսքը, («Պատմութիւն Հայոց», էջ 41, Գիտ. Ակ. հր. 1991թ.) մեր թարգմանութեամբ.

«Այստեղ բնակուելով Սիսակ՝ շինութիւններով լցրեց իր բնակութեան սահմանները եւ տարածքը իր անունով կոչեց Սինիք: Այլեւ պարսիկները առաւել յստակօրէն (*կամ յստակագոյն պարսիկները*) Սիսական են կոչուում: Այստեղ (*Պարսկաստանում*) նրանից սերածներից է ուրեմն Վաղարշակը, որն Հայոց առաջին Պարթեւ արքան եղաւ. նա՝ անուանի այր համարուելով, մեր աշխարհին տիրակալ կարգուեց. նա Սիսակեան ազգից էր»:

Պարզում է որ՝

1. Վաղարշակը Սիսակեան ցեղից էր, Հայկի սերնդից:

2. Քանի որ Պարսից Արշակ Քաջ Պարթեւ արքան երեց եղբայրն էր Վաղարշակի, ուստի նա էլ Սիսակեան ցեղից էր ու հայկազուն:

3. Պարթեւները Սիսակի ցեղից էին, հայեր էին:

Արդ, Պարթեւ Արշակունիները մեզ համար ոչ թէ օտարականներ էին, այլ ուղղակի Հայկի սերնդից էին:

Հետեւաբար Վաղարշակ արքան Հայաստան է ներմուծել ոչ թէ ինչ որ օտարածին տօմարական համակարգ, այլ հենց Հայկ նահապետից աւանդուած եւ նրա որդիներից սերած Պարսից Պարթեւ արքայական տօհմի դիւաններում պահպանուած պատմութիւնը, օրէնքներն ու տօմարական համակարգը: Ուստի Պարսկական տօմարի հետ նոյնութիւնները օրինաչափ են: Այս



պատճառներով էլ հայոց հնագոյն տօմարը մենք կը կոչենք «Հայկեան Սրբազան Տօմար»:

## 2. Հայկեան Սրբազան Տօմարի Համակարգի Հիմքերը Աղաեանն շարունակում է.-

«Այս (*Պարսկական ու Հայկական տօմարների – Մ.Ն.*) նույնութիւնը անառարկելի է, հին օրացույցի կառուցվածքը բացարձակապէս նույնանում է պարսկականի հետ: Երկու տօմարներում էլ տարին բաժանվում է 12 երեսնօրյա ամիսների, որոնց ավելանում է հայոց հավելյաց 5 օրը, պարսիկներինը՝ նույնպէս: Պարսիկների նոր տարվա սկիզբն է եղել գարնանային գիշերահավասարի օրը, հայերինը՝ նույնպէս, որ կհաստատենք ստորեւ»:

Մենք չենք ժխտում, որ գարնանային եւ աշնանային գիշերահաւասարները տարեգրութեան հիմքերն են, որովհետեւ միայն դրանք են բնութեան ժամանակագրական երկու հաստատուն կռուանները, որոնցով կարելի է կողմնորոշուել ժամանակների մէջ: Սակայն այն որ Աղաեանն ցանկացել է «հաստատել» թէ հայկական տարին սկսուել է գարնանային գիշերահաւասարից՝ դա սկզբունքօրէն անընդունելի է:

Քանզի գիշերահաւասարները ոչ թէ Գարնան եւ կամ Աշնան ամիսներն սկսող օրերն են, այլ դրանց երկրորդ փուլն սկսող օրերն են, ահա թէ ինչու:

Ինչպէս որեւէ էութիւն նախ ունենում է արգանդային սկիզբ, ապա ծնուելով թեւակոխում է հասունացման անչափահաս փուլ, որի աւարտից յետոյ միայն անցնում է ինքնուրոյն գործունէութեան ու արգասաբերութեան, եւ վերջում թեւակոխում է անկումային ժամանակաշրջան ու մահ, այդպէս էլ տարին:

Տարուան սաղմնային փուլն սկսւում է դեռեւս ծնեռային արեւադարձի օրից: Ծնունդը կայանում է Փետրուարի 18-ին: Մի ամիս (30 օր) անց թեւակոխում է Գարնանային գիշերահաւասարին, որով սկիզբ է առնում հասունութեան ու գործունէութեան ժամանակաշրջանը:

Հայ իրականութեան մէջ մեր տեսակետին հակադրուել են քրիստոնեայ հայրերը դեռեւս V-րդ դարից սկսեալ: Հենուելով սուրբ գրոց տուեալներին՝ նրանք փորձել են արդարանալ, թէ

արարչութեան օրերից ի վեր նոր տարին սկսուել է Գարնանային գիշերահաւասարից, այսպէս.

«Եւ արդ՝ հասարակած տուրնջեան եւ գիշերոյ (*գիշերահաւասարը* – *Ն.Մ.*) սկիզբն է տարւոյն եւ ամսեանն առաջնոյ, քանզի ամիսն առաջին անտի առնու սկիզբն: Չի ի սկզբանէ արարածոց ոչ եթէ նախ սերմն ինչ իրիք էր, այլ գրեալ է, թէ՛ Բխեաց երկիր զբոյս խոտոյ եւ զամենայն ծառ պտղաբեր: Եւ ապա ստեղծաւ մարդն եւ հաստատեցան անասունք եւ զեռունք, զի առժամայն իբրեւ լինիցին, գտցին առաջի նոցա հունձք պատրաստականք առ ի դարման կերակրոյ նոցա, որպէս եւ այժմ ամենայն ինչ որ ծնանի զաւրութեամբ եւ առաջնորդութեամբն Աստուծոյ, գտանէ կաթն ի ստինս մաւր իւրոյ պատրաստական» (*Է.Բ.Աղայան, «Ակնարկներ Չայոց Տոմարների Պատմութեան», էջ 120*):

Այսինքն, թէ առաջին բոյսերն ու ծառերը բխել են երկրից, կենդանիներն ու մարդիկ արարուել են անմիջականօրէն եւ չեն առաջացել սերմերից, ձուերից ու սաղմերից, ինչպէս յետագայում եւ այսօր: Չետեաւբար չեն ունեցել արգանդային ու յետ արգանդային հասունացման շրջան, ինչի պատճառով էլ տօմարը պէտք է հաշուել հասունութեան սկզբից, այլպպէս Գարնանային գիշերահաւասարից:

Սակայն քննելով բնութեան երեւոյթները, բուսական ու կենդանական աշխարհը՝ մենք չենք կարող ժխտել ծննդից յետոյ զարգացման փուլի առկայութիւնը, ինչը կայանալու առաջին քայլն է:

Չայկեան Սրբազան Տօմարի ժամանակակարգը վերականգնելիս մենք այս սկզբունքով ենք առաջնորդուել, նաեւ հինք ենք ընդունել դարաւոր Տէրնտեսի անշարժ ամսաթիւը, հայկական ամսանունների իմաստների ստորեւ բերուող մեր վերլուծութիւնն ու մի քանի այլ կարեւոր փաստարկներ:

### 3. Նաւասարդեան Տօմախմբութեան

Ժամանակն ու խորհուրդը

Կորինի «Վարք Մաշտոցի» երկի (*1994թ., Երեւան, էջ 123*), երրորդ եւ ամփոփ տարբերակում Սուրբ Սահակ Պարթեւ Կաթողիկոսի մահուան առթիւ կարդում ենք.-

«Յառաջնում ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ թագաւորին Պարսից, ի Բագրեւանդ գաւառի, ի գելւն Բլուր, ի կատարել ամսոյն Նաւասարդի, յերրորդ ժամու աւուրն պաշտաման, որ եւ զաւր ծննդեան ի նոյն աւուր»:

Մանուկ Աբեղեանի թարգմանութիւնը.-

«Վռամի որդու Պարսից աշխարհին թագաւոր դարձած Յազկերտի առաջին տարում, Բագրեւանդ գաւառում, Բլրացւոց գյուղում, Նավասարդ ամսի վերջում, երբ եւ երանելիի ծննդյան օրն էին հիշում...»:

Վաստակաշատ Աբեղեանն ճիշդ չի ընկալել գրուածը: Ներկայացնենք մեր թարգմանութիւնը.-

Սուրբ Սահակ Պարթեւն մահացել է «Պարսից Վռամ թագաւորի որդի Յազկերտ երկրորդի առաջին տարում, Բագրեւանդ գաւառի Բլուր գիւղում, Նաւասարդ ամսի աւարտին, պաշտամունքի օրուան երրորդ ժամին, այն օրը՝ երբ նաեւ ծննդեան օր էր»:

Աբեղեանի սխալը առաջացել է դրանից, որ «ծննդեան» բառը ընկալել է «ծննդեանն»: Այսինքն եթէ սուրբ Սահակի (*երանելիի*) մահուան օրը համընկած լինէր նրա ծննդեան օրուան հետ, ապա Կորիւնն պարտ էր գրել «ծննդեանն»: (*Մի տառն իսկ ինչքան աւեր կարող է գործել*):

Ոմանք կարող են առարկել, որ գրիչների ձեռագրական վրիպումի հաւանականութիւնը չի բացառուում, բայց մենք պնդում ենք մեր տեսակետը, ահա թէ ինչու:

Նաւասարդ ամսին յաջորդել է Նաւասարդեան տօնախմբութիւնների Յաւելեաց 5-6 օրեայ ամիսը, որն ըստ Կորիւնի՝ մեր պապերը սկսել են «աւուրն պաշտաման»-ով, այսինքն առաջին օրը նուիրուել է նախնիների յիշատակին:

Քանզի «պաշտաման» բառի արմատներն են «պաշտ» եւ «ա-ման», որոնք նոյնանում են անգլ. «past=անցեալ, անցած» եւ «man=մարդ» (*«աման»-ի դէպքում էլ ունենք անցած գնացածների, ննջեց-եալների մարմինն ամփոփող ամանը՝ դամբարանը*), ուստի «աւուրն պաշտաման»-ը պէտք է հասկանալ «անցած գնացած մարդկանց օրը», «ննջեցեալների օրը»:

Չէ՞ որ հայերս այսօր էլ փոքր ու մեծ զատիկների մեռելոցի օրերում ոգեկոչում ենք նրանց:

Երկրորդ, Կորիւնն այդ օրը կոչել է «օր ծննդեան», ինչը

Քրիստոնեության մեջ դրսևորուել է Քրիստոսի յարութեան օրով: Դա գալիս է մեր նախահայրերի հնագոյն հաւատքից, թէ մահացած մարդիկ կարող են վերածնուել, եւ մեռելոցի օրը նրանց տրուող այցելութիւնն ու արարողութիւնը կը նպաստի դրան:

Սրան զուգընթաց՝ «օր ծննդեան»-ը նաեւ հացահատիկի եւ պտուղների «վերածննդի» օրն է, Անահտական տօնական առաջին օրը, ինչպէս եւ ամանորը:

Խորենացին շատ աւելի յստակ է ասում (նոյն, էջ 202).-

«Վաղարշ աշխարհախումբ տօն կարգեաց ի սկզբանն ամին նորոյ, ի մուտն Նաւասարդի»:

«Ի մուտն Նաւասարդի» խօսքի ընկալումից է առաջացել դարաւոր թիրիմացութիւնը, որովհետեւ հասկացուել է Նաւասարդի «մուտքին, սկզբին»: Մինչդեռ «մուտ»-ը ինչպէս «մայրամուտ» կամ «արեւամուտ» բառերում նշանակում է «արեւի մտնելը», «ցերեկի աւարտը», այդպէս էլ «Ի մուտն Նաւասարդի» նշանակում է «Նաւասարդի աւարտին»:

Թարգմանենք Խորենացու խօսքը.- «Վաղարշ աշխարհախումբ տօն կարգեց Նաւասարդի (*ամսի*) աւարտին, նոր ամիի սկզբուն»:

Խորենացու «Վաղարշ ժամս որոշէ ելից եւ մտից» խօսքում եւս «մտից»-«մուտ»-ն ունի նոյն բովանդակութիւնը, որտեղ «եւլից»-ը արեւի ելքն է, արեւածագը, լայն իմաստով՝ տարեսկիզբը, իսկ «մտից»-ը մայրամուտն է, ցերեկուայ աւարտը, տարեվերջը: (*«Եկամուտ»-ը գործունեութեան կամ գործարքի աւարտին ստացուած շահոյթն է, «Ելակետ»-ը «սկզբնակետն է, որտեղ «եւլ»-ը սկիզբն է, «Ելանել»-ը մի բան «սկսել»-ն է - շարժման կամ գործի առաջին քայլը անելն է*):

Աւելացնենք, որ «նոր ամին» տարբեր է «նոր տարուց»: Մեր լեզուում այսօր դրանք հոմանիշ են հնչում, մինչդեռ լեզուում չեն եղել ուղղակիօրէն «հոմանիշ» բառեր: Դրանք որակականօրէն տարբերում են իրարից. «նոր ամի»-ն երկրի եւ ընդհանրապէս իգական բնոյթի նոր ցիկլի սկիզբն է, ինչն սկսուում է պտղաբերութիւնից կամ ծննդաբերութիւնից յետոյ, եւ երկրի պարագայում ակնյայտօրէն համընկնում է Աշնան սկզբին: Մինչդեռ նոր տարին սկսուում է Փետրուարի 19-ին, Տէրնտեսի 5 օրեայ տօ-

ների աւարտին (այդ մասին տես վերջին յօդուածում «Տարի եւ Ամի» բառերիմ):

Ագաթանգեղոսն ասում է.- «Սնտեացն պաշտաման, ի ժամանակի դիցն Ամանորոյ ամենաբեր նոր պտղոց տօնին, հիւրընկալ դիցն վանատրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղոջ պաշտէին յուրախութեան նաւասարդ աւուր»:

Ագաթանգեղոսի ասածով՝ «Ամանորի օրերին նոր պտուղներին նուիրուած տօնակատարութիւններ» են կազմակերպուել: Ուստի տօնը նուիրուել է բերքին, եւ բերրիութեան մայր Անահիտին: Տօնախմբութիւնները տեղի են ունեցել հիւրընկալ վանքերի կողմից յատկացուած տեղերում: Այդ աւանդութիւնը՝ ըստ Ագաթանգեղոսի, դեռեւս գալիս է մեր առաջին նախահայրերից:

Ըստ վանական վարդապետի՝ տարբեր ազգերի մօտ «Ձանազան է մուտ տարեմտից... իսկ հայոց ընդմիջել ամարանն է, եւ ութ ազգաց՝ եգիպտացւոց, եթովպացւոց, աթենացւոց, բիթանացւոց, կապադովկացւոց, վրաց եւ աղուանից՝ չորից օրով զկնի հայոցն է...» (Է.Բ. Աղայան, «Ակնարկներ Հայոց Տոմարների Պատմության», էջ 128):

Վանական վարդապետի հաղորդածում կայ շփոթ: Քանզի հայկական Ամանորի՝ (բայց ոչ «նոր տարուան») դիրքը եղել է «ընդմիջել ամարանն» այսինքն ամառուայ կէսին:

Խորենացու մօտ (նոյն, էջ 51) Շամիրամ թագուհու խօսքում գտնում ենք. «...զչորրորդ մասն ի բոլորմանէ տարւոյն, որ է ամառնային եղանակ ...»:

Շամիրամի բերնով Խորենացին «Ամառ»-ը կոչել է չորրորդ եղանակ, որը՝ ըստ տուեալ մէջբերման, ամբողջացնում է «տարին»: Մինչդեռ եղանակների այս հերթագայութիւնը՝ Աշուն, Չմեռ, Գարուն եւ Ամառ՝ «Ամի»-ին է վերաբերում եւ ոչ թէ «տարւան»: Որովհետեւ Ամռան աւարտին ու Յաւելեաց ամսի հետ Ամանորն է սկսւում եւ ոչ թէ Նոր Տարին:

Արմեն Դավթյանը («Հայոց Աստղային Դիցաբանություն», էջ 93) բերում է Գր. Բրուտյանի «Օրացույց հայոց» երկի էջ 450-ում տեղ գտած հատուածը.

«Մատրան կոչված ամսվա հետ է կապված եւ Աշխարհամատրան տոնը, որ Ձատկվա երրորդ կիրակին է եղել եւ դրված

է եղել Յոռի ամսի սկզբին»:

Ապա Դաւթեանն ասում է. «Ինչպէս ցույց է տալիս ուրարտական զուգահեռը, այս տոնը պետք է լիներ Նավասարդի ամսի վերջին, ոչ թէ հաջորդ Յոռի ամսի սկզբին»:

Աշխարհամատրան տօնը հենց Աշխարհի Մայր Անահիտի տօնն է (*Աշխարհի-մատր-ան* = *աշխարհի-mother-Anne / Մայր Անահիտ*), որը նշուել է հենց «Նաւասարդ ամսի վերջին», Յաւելեաց ամսի 5-6 օրերուն եւ Յոռի ամսից առաջ:

[Սուրբ Գրքում Աննա-ն (*անգլ. st. Mother Anne-ը*) Մարիամ աստուածածնի մայրն է!!!: Մի՞թէ Աստուածածնի «զաղափարն» է ծնուել Մայր Անահիտից]:

Հետեւաբար Արմէն Դաւթեանի շփոթը անհարկի է եւ Հայոց ու Ուրարտական տօնարները գէթ այս դէպքում բացարձակ նոյնական են:

Սոյն մէջբերումից բխում է, որ Յաւելեացը կոչուել է նաեւ «Մատրան» Մայր Անահիտի ամիս (*Նայել «Յոռի» ամսանուան տակ*):

Այսպիսով պարզուեց, որ Նաւասարդեան տօնախմբութիւնների ժամանակն ու «Յաւելեաց» ամիսը եղել են Նաւասարդ ամսից անմիջապէս յետոյ եւ Յոռի ամսից առաջ: Բայց կ'ուզէինք նաեւ լեզուաբանականօրէն քննարկել ու լուսաբանել այն:

#### 4. Նաւասարդ Բառի Ստուգաբանութիւնը

«Նաւասարդ»-ը բաղկացած է երկու արմատներից, «նաւ» եւ «սարդ»: «Նաւ»-ը ըստ լեզուաբանների նշանակում է «նոր»: Ընդունում ենք, սակայն ունենք հաւելեալ բացատրութիւն: «Նաւ»-ը որպէս նոր, նշանակում է նաեւ «խո-նաւ», «թարմ»: Արմատի «ւ» տառը ցոյց է տալիս, որ բառը վերաբերում է հոգեւոր էութեան, այսինքն ապրող, շնչող էութեան եւ ոչ թէ ինչ որ միւթի: Ապրող-շնչող էութիւնը կարող է լինել եւ մարդ, եւ կենդանի, եւ բոյս: Բառի երկրորդ բաղադրիչ «սարդ»-ում «դ»-ն կամ «դարման»-ը (*բուսական ուտելիք*) ցոյց է տալիս որ այս «նաւ»-ը վերաբերում է բոյսի: Բոյսի «նորը» անպայման «խոնաւ» է. «կանաչ» է կամ «թարմ» է: Հետեւաբար ունենք «նոր», «կանաչ», «խոնաւ» եւ «թարմ» բոյս հացահատիկ:

Ըստ լեզուաբանների, «սարդ»-ը պարսկերէնում «տարի» է նշանակում: Դա այսօր հնարաւոր է այդ լեզւում այդպէս ըմբռնել, բայց անցեալում նաեւ մե՛ր լեզւում՝ ոչ: «Սարդ» բառին հանդիպում ենք մի քանի հնագոյն անուններում, ինչպէս Ուրարտական արքայ «Սարդուրի»-ում, տեղանուններից՝ «Սարդարապատ»-ում, ազգանուններից «Սարդարեան»-ում, եւայլն:

Մեր կողմից տառացի վերլուծութեամբ գտել ենք, որ «սարդ» նշանակում է «հացահատիկի հասկի սերմ»: «Սերմ»-ը ներկայանում է հենց առաջին «ս» տառով, ինչը փոխարինելով «յ» տառով կ'ունենանք «յարդ»-ը, «հացահատիկի կեղեւ»-ը: «Կեղեւ»-ի գաղափարը դրուած է «յ» տառի մէջ: Ուստի ստացւում է, որ «արդ»-ը ինքնին հացահատիկի հասկն է: Պէտք է նշել, որ «սարդ»-ն ու «արդ»-ը ունեն այլ իմաստներ եւս, որոնց այստեղ չենք անդրադառնայ: Զետեւաբար՝ արմատի այլ բովանդակութիւնների կողքին, «Սարդարեան»-ը կարող է նշանակել «հացահատիկի սերմ արարողների տօհմ», «Սարդարապատ»-ը՝ «հացահատիկի սերմ արարողների ապատ-բնակավայր», «Սարդուրի»՝ «հացահատիկի սերմերի ուրի (*տեղի, արտի, ամբարի*) «ի»-իմաստութիւն-ներոյժ ունեցող», այլապէս՝ «հացահատիկի մեծ արտեր կամ ամբարներ ունեցող»:

Յատկանշական է վրացական տօմարում Նաւասարդ ամսանուան փոխարինած «Ախալժլիսա»-ն, որի առաջին «ախալ» արմատը առանձին օգտագործման դէպքում յայտնւում է «ախալի» ձեւով եւ «նոր» իմաստով, իսկ երկրորդ բաղադրիչ «ժլիսա»-ն պարզապէս հայ. «ծիլ» արմատից է: Ուստի «Ախալժլիսա»-ն իրականում «նոր ծիլեր» է, որով եւս հաստատւում է մեր տեսակէտը, թէ Նաւասարդ ամիսը նոր ծիլ-սերմերի հասունացման ամիսն է:

Ամփոփելով քննարկումը, կարելի է ասել, որ «Նաւասարդ» նշանակում է «հացահատիկի նոր, խոնաւ, թարմ սերմ», որից էլ «նոր հացահատիկի ամիս»-ը:

Մենք ընդունում ենք Արմէն Դաւթեանի այն կարծիքը, թէ ինչպէս միւս ամսանունները, այդպէս էլ սոյն ամսի անունը նախկինում եղել է սեռական հոլովով՝ «Նաւասարդի»:

Կարծում ենք, «Նաւասարդ»-ի վերոնշեալ իմաստաբանութեան պատճառով էլ, յետագայում պարսիկների մօտ այն

դարձել է Գարնանային ամիս (Ներուզ), նշելու համար թե՛ Գարնանային գիշերահալասարի օրը եւ թե՛ աշնանացան գարու հատունացման ամիսը:

### 5. Յաւելեաց եւ Հաւ

«Յաւելեաց» ամսուան տելոդութիւնը քննարկող մասնագէտներից շատերն ընդունել են, որ դա 5 օրեայ ամիս է (*ըստ պարսից տօմարի*), եւ միայն Աճառեանն է կռահել, որ դա «5-6 օրեայ ամիս է»: Մենք կողմ ենք Աճառեանի վարկածին, հակառակ որ մեզ աւանդուած մատենագրութեամբ չի յիշատակուել հայոց հնագոյն տօմարական համակարգում «նահանջային ճշդումների» մասին (*ինչը ինքնին խախտումների բացակայութեան ինքնուրոյն փաստարկ է*):

Մեր համոզմամբ, սովորական տարիներում Յաւելեացը եղել է հինգ օր, իսկ նահանջ տարիներում՝ 6: Ընդ որում Յաւելեաց ամսի աւանդուած օրանունները հինգն են (*Լուծ, Եղջերու, Փառագնոտ, Արտախուր, Ծկրաւորի*) իսկ վեցերորդը կարող էր լինել հենց «Յաւելեաց»-ը կամ «Մատրան»-ը:

«Յաւելեաց» ամսանունը աւանդուած է նաեւ «Հաւելեաց» ձեւով (*Աշխարհացոյց-ում, Աղայան, նոյն էջ 68*): Երկուսն էլ արդարացնում են իրենց բովանդակութիւնը: Սկսենք երկրորդ ձեւից, որն առաւել ընկալելի արմատ ունի:

«Հաւ» բառը այսօր է, որ շատ նեղ բովանդակութեամբ է օգտագործուում, որպէս թռչնազգի կամ թռչուն - այն էլ էգը: Մատենագրութեան մէջ կայ «հաւօրհնէք»-ը, որը ըստ բառարանների՝ նշանակում է «մատաղացու հաւը օրհնելու արարողութիւն»: Սա ամբողջովին թիրիմացութիւն է: «Հաւօրհնէք»-ը նշանակում է «սերմերի օրհնութիւն», «հացահատիկի սերմերի օրհնութիւն», «խաղողօրհնէք»-ի նմանութեամբ: «Հաւօրհնէք»-ը այսպիսի բովանդակութեամբ աւանդուել է շատ վաղուց, երբ ցանուելիք հացահատիկը օրհնել տալու սովորութիւն է եղել: Ունենք «հաւանել» բայը, որը ոչ մի կապ չունի թռչունների հետ, այլ նշանակում է «սեր անել» կամ «սերմանել», ինչը անմիջականօրէն առնչուում է «հայր» բառի հոլովուած «հաւր-հօր» ձեւի հետ, որը սերմանելու եւ հայր դառնալու թոպէն է մատնանշում, ինչից էլ «հաւ»-ի «մեծ հայր, նախահայր» իմաստը: Ունեցել ենք «հաւահմայ», որը նշանակում է «սիրով հմայող»



եւ «սերմերով հմայութիւն անող», ինչպէս սիսեռի կամ լոբու սերմերով բախտ գուշակողը եւ ոչ թէ ինչ որ թռչուն մորթելով փորոտիքից գուշակութիւն անողը: Այսօր էլ կան հատիկների միջոցաւ գուշակութիւն անողներ, բայց ոչ թռչուն մորթելով:

«Հաւ» բառարմատով բերենք մի փաստարկ Ձեռք Գլակի Ասորացուց, էջ 23.-

«Այս առաջին պահք եղաւ յաւուրս սրբոյն Գրիգորի, զոր ի Հռոմ Սեղբեստրոս հաւանեցաւ, եւ պահեաց ինքն եւ Կոստանդիանոս թագաւորն, եւ ամենայն քաղաքն Եգիպտոսի, զոր եւ Առաջաւորք կոչենք»:

Թարգմանենք.- «Այս 'Առաջաւորաց' կոչուող առաջին պահքը սուրբ Գրիգորի ժամանակներում սահմանուեց: Դա Հռովմում Սողբեստրոսը սերմանեց ու ինքն ու Կոստանդիանոս թագաւորը առաջին պահողները եղան, ապա Եգիպտոսի բոլոր քաղաքների բնակիչները պահեցին»:

«Հաւանել»-ը այստեղ «սերմանել» է:

Դաւիթ փիլիսոփան ասում է (*Ա.Ն. Մուրդադյան, «Հունարան դպրոցը...», էջ 161*):-

«Բայց ասի եւ ոլորակ տաղ, յորժամ առաջարկութիւն մտացն երկարագոյն իցէ, երկրորդ տաղին սկիզբն ի բաղաձայնից եւ կամ ի կրկնակաց հաւիցի...»:

Այստեղ «հաւիցի»-ն համազօր է «սերմանիցի»-ին: Ուզում է ասել, որ «երկրորդ տաղի զկիզբը կը լինի բաղաձայներից կամ կրկնակ բաղաձայներից մէկը». «հաւ»-ը՝ «սկիզբ» իմաստով:

«Հաւ»-ի տառադարձուած ձեւերին հանդիպում ենք եւ արաբերէնում «Հ\*աբ=արական բնոյթի սերմ ու սէր, «Հ\*ուր=իզական բնոյթի սերմ ու սէր», որից էլ «հաբիբի, հուրբի», եւ անգլերէնում «Hob-by= սիրած զբաղմունք»:

Այս բոլորը նկատի ունենալով «Հաւ-ելեաց»-ը մենք հասկանում ենք «հացահատիկի ելնելու» կամ հաւաքի ամիս:

Իսկ «Յաւելեաց» ձեւում տառացիօրէն դրուած է, թէ հացահատիկի կեղեւն է ելած-հանուած:

Ուստի, «Նաւասարդ»-ն ու «Հաւելեաց» կամ «Յաւելեաց» ամիսները եւթեամբ իրարայաջորդ են:

ՀՍՄԳ Գիտ. Ակադ. 1973 թ. հրատ. «Հայ Ազգագրութիւն եւ Բանահյուսութիւն» ժողովածուի 5-րդ հատորում, էջ 23, հե-

դիմակ Գեորգ Չալաջեանն ասում է. «Դավթի սարի եւ Միանձուն  
լեռան միջեւ (*Դերսիմում*)... գտնվում էր... Դավթա վանքը...  
կիսակործան...: Ամեն տարի աշնանը, կալերի ավարտումից  
հետո, Դերսիմի ամեն կողմից (*այնտեղ - Ն.Մ.*) եկող հայ եւ քուրդ  
ուխտավորները... խանդավառությամբ տոնում (*էհմ - Ն.Մ.*)  
վանքի օրը»:

Միամիտ է ասուած, որ այդ տօնը պարզապէս «վանքի  
օր»-ն էր: Եղելութիւնը ուղղակիօրէն ակնարկում է դարաւոր  
Նաւասարդեան տօնակատարութիւնների վերապրուկներին,  
մինչեւ 1915 թուականի մեծ եղեռնը: Այստեղ կարելորն այն է,  
որ տօնախմբութիւնը կատարուել է «աշնանը, կալերի ավար-  
տից հետո», ինչը ապացուցում է, որ Նաւասարդեան տօները  
տեղի են ունեցել ոչ թէ հացահատիկի հաւաքից անմիջապէս յե-  
տոյ, այլ յարդը ցորենից զատելուց յետոյ, ինչը հաստատում է,  
որ մեզ աւանդուած «Յաւելեաց» ամսուան անունը ի սկզբանէ  
եղել է «յ»-ով եւ ոչ թէ «հ»-ով:

Վերջին մի ապացոյց էլ գալիս է սանսկրիտից: «Յաւել-  
եաց»-ի «յաւ» արմատը այդ լեզուում յայտնուում է «yava» ձեւով  
ու նշանակում է «ցորեն» (*Գ. Բյուլեր, «Սանսկրիտ», թրգմ. Բ.Ա.  
Չովսեփյան, Եր. 2004թ., էջ 32, երկրորդ տող*):

Ակադեմիայի հրատարակած վերոյիշեալ հատորի էջ  
107-ում կարդում ենք.

«Գարու եւ ցորենի քաղը սկսվում էր խոտհարքից հետո,  
հունիսի վերջերին եւ վերջանում Աստվածածնին, երբ կատար-  
վում էր խաղողի օրհնութիւնը, որը զուգադիպում էր օգոստոսի  
վերջերին»:

Գարու հաւաքը սկուել է ցորենի քաղից մի ամիս առաջ, Յու-  
նիսին: Յաջորդ Յուլիս ամսում սկսուել է ցորենի քաղն ու կալ-  
սումը, ինչը աւարտուել է հենց Չալաջեանի յիշատակած Օգոս-  
տոսին, բայց դրա երկրորդ կէսին եւ ոչ թէ վերջում: Ըստ նրա,  
հենց նոյն ժամանակում էլ կատարուել է խաղողօրհնէքը, որը  
նաեւ Աստուածածնին (*Մատրան - Անահիտ դիւցուհուն*) նուիր-  
ւած տօնակատարութիւնն է:

Հետեւութիւն 1.- Նաւասարդը հացահատիկի նոր սերմերի  
հասունացման, հաւաքի եւ կալսելու ամիսն է: Յաւելեացը հա-  
ցահատիկի հաւաքի եւ յարդից զատելու աշխատանքները

աւարտելու առթիւ կազմակրեպուած տօների ամիսն է:

Հետեւութիւն 2.- Նաւասարդ ամիսն ու ապա Նաւասարդեան տօնակատարութիւնները չէին կարող Աշնանամուտից բացի ուրիշ ժամանակներուն տեղի ունենալ, ուստի նախաքրիստոնէական շրջանում հայկական տօնարական համակարգը եղել է հաստատուն:

Յիշեցնենք, որ «Աշուն»-ն ինքնին նշանակում է «աշ-ունեցող», եւ դա ամբողջ տարուան համար ուտելիք ապահովող եղանակն է:

6. Նաւասարդի ամիսը համապատասխանում է «Առիւծ» կենդանակերպին, 19/18 Յուլ.- Օգոստ. 17/16: Նաւասարդին ամիի 13-րդ ամիսն է, իսկ տարուան 6-րդը:

Այս ամիսի առաջին օրում (*Յուլիսի 19 կամ 18*) պիտի կատարուած լինի Վարդավառը:

#### 7. Յաւելեաց

Աճառեանն ասում է (*Արմատ. Բառ., «Աւելեաց»*):-

«Հայկական տոմարով ամաւերջի յաւելուածական 5 կամ 6 օրը»:

Ամէն մի վերջ մի սկիզբ է. Յաւելեացը՝ որպէս «ամաւերջ», նաեւ ամիի սկիզբն է, Ամանորն է:

Սովորական տարիներում Յաւելեացն սկսուել է Օգոստոսի 18-ին, աւարտուել 5 օրից՝ Օգոստ. 22-ին: Նահանջ տարիներում սկսուել է Օգոստոսի 17-ին, աւարտուել 6 օրից՝ նոյնպէս Օգոստոսի 22-ին:

«Յաւելեաց»-ը եղել է Ամիի եւ Աշնան առաջին ամիսը, կարճ եւ տօնական, իսկ տարուայ 7-րդը:

Հայաստանեայց եկեղեցու տօնացոյցով Օգոստոսի 15-ի մերձաւոր Կիրակին Սբ. Աստուածածնի Վերափոխման տօնն է, ի յիշատակ գերեզմանից մարմնապէս նրա երկինք փոխադրուելուն:

Մեր կարծիքով, այդ տօնին հիմք է ծառայել նախաքրիստոնէական Օգոստոսի 18-ն կամ 17-ն, որպէս Մայր Անահիտի վերածննդեան օր: Քանզի Յաւելեացի առաջին օրը նուիրուել է ննջեցեալներին:

### 8. Գոռի

Ըստ Աճառեանի (*Արմատ. Բառ.*) «Գոռի - Հայկական տոմարի երկրորդ ամիսը»:

Նոյնպէս եւ մեր հաշուարկներով Յաւելեացից յետոյ Գոռին ամիսի եւ Աշնան երկրորդ ամիսն է, ինչից էլ վրացերէնում առաջացել է «օռի=երկու» թուային արժէքը: Գոռին տարուայ 8-րդ ամիսն է:

«Գոռի» ամիսը մրգերի եւ հողի ընդերքային բանջարեղենների հասունացման ու հաւաքի ամիսն է: Համապատասխանում է «Կոյս» կենդանակերպին, քանզի ցանքատարածութիւնները «կուսացել» են (*ոչ հերկուած են ոչ էլ ցանուած*):

Ստուգաբանութիւն.-

«Գոռի» բառը բաղադրուած է «հ-ուռ-ի» արմատներից, որտեղ «հ»=հուր-ուտելիք, «ուռ»=ընդերքային ջուր: Ուստի ունենք հողի ընդերքում «ընդերքային ջրերից առաջացող ուտելիք»-ի ամիսը:

Համընկնում է Օգոստոսի 23-ից Սեպտեմբերի 21-ը:

Աճառեանն «Մատրան» բառի տակ գրում է. «հին հայոց երկրորդ ամիսը... սրանից է կազմուած իբր թէ աշխարհամատրան (տօնը), որ Գոռի ամսուայ սկիզբն էր գալիս» (*տուեալը քաղել է Դ. Ալիշանից*):

Այստեղ ճշմարտութեան մօտիկ միակ հատուածը այն է, որ Աշխարհամատրան տօնը «Գոռի ամսուայ սկիզբն էր գալիս»:

Թիւրիմացաբար նոյնացնելով Մատրանն ու Գոռին՝ Ալիշանն ու Աճառեանը ենթադրել են թէ Մատրանը հին հայոց երկրորդ ամիսն է եղել: Մինչդեռ իրականում «Մատրան-Յաւելեաց» ամիսը նախորդում է Գոռի ամսուան, առանց դրան մաս կազմելու:

### 9. Սահմի

Աճառեանի մօտ (*Արմատ. Բառ.*) կարդում ենք. «Սահմի – հայկական երրորդ ամիսը»:

Մեզ մօտ նոյնպէս «Սահմի»-ն ամիսի երրորդ ամիսն է, ինչից էլ վրացերէնում առաջացել է «սամի=երեք» թուային արժէքը: Սահմին տարուայ 9-րդ ամիսն է:

«Սահմի» անունն ինքին խօսում է սահմանի մասին:

Սկսւում է Սեպտեմբերի 22-ին, աշնանային գիշերահալասարին, աւարտւում՝ Զոկտեմբերի 21-ին: Տառացիօրէն բառի մէջ կայ նաեւ հացահատիկները սահմանելու-ամբարելու եւ ծածկելու իմաստը («Սահմ»-ը արաբ. «շահ\*մ=իւղ, ճարպ», որից էլ իւղելով պաշտպանելու գաղափարը: Նոյնն է Անգլ. «shame=ամօթ»-ը, ինչը հասարակական յարաբերութիւններուն բարոյական սահման է):

Բառն ունի գիւղատնտեսական այլ իմաստաբանութիւն եւս, հողը պարարտացնելու-իւղելու-հալասարակշռութեան բերելու տեսակետով: Այս առումով էլ համապատասխանում է Կշեռք կենդանակերպին:

«Սահմի» (արաբ. «շահ\*մի»=ճարպի-իւղի) ամիսը կենդանիների կաթից իւղը, մեղուների մեղրը մթերելու ինչպէս եւ բոյսերից ձեթ քանելու ամիսը պէտք է լինի:

«Սահմի» անունն յուշում է նաեւ ճարպի սահմանման, այսինքն ճարպերը մաշելու – պահքի մասին, ինչը մարդուն ֆիզիկապէս հալասարակշռութեան բերելու գործընթաց է: Նոյնը կայ «Կշեռք»-ի խորհրդուն: Մեր կարծիքով, եթէ եղել է այդպիսին, ապա պահքը պէտք է սկսած լինէր սոյն ամսի 1-ից:

#### 10.Տրէ

Աճառեան, Արմատ. Բառ. «Հայկական չորրորդ ամիսը»:

Մեր քննարկումներում եւս «Տրէ»-ն ամիի չորրորդ ամիսն է, իսկ տարուայ 10-րդը:

«Տրէ»-ն սկսւում է Զոկտեմբերի 22-ին եւ աւարտւում՝ Նոյեմբերի 20-ին: Սա աշնանացանի ամիսն է եւ մեր ժողովուրդը նոյն ըմբռնումով պահպանել է «Տրի ցանք» արտայայտութիւնը:

«Տրէ»-ն համապատասխանում է «Կարիճ» կենդանակերպին եւ ուղիղ հակադարձն է այսօրուայ «ցուլ» կենդանակերպի, որը Գարնանային ցանքսի ամիսն է:

(Մինչ-ջրհեղեղեան ժամանկներում Տաւրոս-Ցուլ կենդանակերպի զոյգն է համարուել Կովկաս-Կովք: Ջրհեղեղից յետոյ Կով կենդանակերպին փոխարինել է Կարիճը, որը աշխարհագրականօրէն Քիչ քաղաքի հանդիպակաց բեւեռ Անահտական Աթոռն է, որպէս Նօյ նահապետի զոյգ՝ Անահիտի նստատեղի: Երեւոյթը ցոյց է տալիս ջրհեղեղի ժամանակ երկրի հիւսիսային

բելերի աջ դիրքից ծախ դիրք եւ հարաւային բելերի ծախից աջ փոխադրուելու պարագան):

«Տրէ»-ն ի սկզբանէ եղել է ամիի չորրորդ ամիսը, սակայն ինչ որ տեղ, ինչ որ դարաշրջանում տօմարի աղաւաղման պատճառով (երբ անտեսուել է «Յաւելեաց» ամիսը) գրաւել է երրորդ տեղը, որից էլ առաջացել է լատինա-եւրոպական «տրէ, three, trois=երեք» թուային արժէքը:

Գէորգ Յալաջեանի վերոյիշեալ «Դերսիմի Յայերի Ազգագրութիւնը» գործում (էջ 130) կարդում ենք.-

«Անասնապահը իր հոտի գերակայութիւնը եւ բազմածնութիւնը կապում էր խոյերի (դոչ) եւ նոխազների (թեքե) սերնդագործության հետ ...: Վաղաժամ ծնունդը կանխելու համար խոյերն ու նոխազները առանձին էին պահվում եւ հոտից հեռու արածեցվում ու միայն հոկտեմբերի 15-ից հետո խառնըվում հոտին»:

Ժամանակագրութեան առումով Յալաջեանի տուեալը ընդամենը 7 օրով է տարբերում մերինից, Հոկտեմբերի 15-ի փոխարէն կարծում ենք պէտք է լինի Հոկտեմբերի 22:

«Տրէ» բառի հիմքն է «տր >տու-ար»-ը, որտեղ «տու»-ն անգլ. «two=երկուս»-ն է: Հետեւաբար «Տուար» նշանակում է «իր պատճենը արարող», եւ «տուար»-ը («տաւար»-ի գոյգը) իր սկզբնական բովանդակութեամբ ոչ միայն կովն է («ցուլ»-ի գոյգը) այլեւ սերնդագործող որեւէ էգ կենդանին: Հետեւաբար «Տրէ»-ն ոչ միայն աշնանացան ամիսն է, այլեւ էգ կենդանիների ցանկասիրութեան ու խառնի ամիսն է: Իսկ ցանկասիրութիւնը «Կարիճ» կենդանակերպի տակ ծնուածների գլխաւոր յատկանիշն է:

Ըստ Աճառեանի՝ «պիլ. Tir-ը արեգակնային չորրորդ ամիսն է ու համապատասխանում է Շնիկ աստղին»: («Շունն ու շնացողը» բացայայտօրէն ու հրապարակայնօրէն «խառնի» գնացողն է):

Սակայն պահլաւական Tir-ը չի կարող նոյնանալ հայկական «Տրէ»-ի հետ, քանզի դա «արեգակնային» (տարուան) չորրորդ ամիսն է, մինչդեռ «Տրէ»-ն՝ «ամի»-ի: (Մանրամասնութիւնները տես «Տօմար» բառի տակ, յօդուած 12):

Աճառեան, Արմատ. Բառ. «Հայկական տոմարի հինգերորդ ամիսը»:

Նոյնպէս եւ մեզ մօտ Քաղոցը ամիսի 5-րդ ամիսն է, իսկ տարուայ 11-րդը:

«Քաղոց»-ն սկսուում է Նոյեմբերի 21-ին ու ավարտուում Դեկտեմբերի 20-ին: Բառի «քաղ» արմատը տառացիօրէն բովանդակուում է «ք (քանակ)- աղ (ուտելիք)-ի» իմաստը («ք»-ն յոգնակերտ մասնիկ է), ուստի ամիսը նուիրուել է Աշնան ավարտին հաւաքուող ուտելիքի պաշարների-պահածոների պատրաստմանն ու վառելափայտի կուտակմանը:

«Քաղոց»-ը ձմռան առաջին ամիսն է:

Աճառեանի Արմատ. Բառ. հաւելուածում «Քաղոց» բառի տակ կարդում ենք. «(Տաթել. հարց 200) «Ձի քաղոցի տասն ձըմեռնամուտ է»: Նաեւ «Արի մարդոց է արս եւ ոչ թուլից եւ վատաց», ըստ Վանականի ու Գրիգոր Տաթեւացու:

Համապատասխանում է «Աղեղնաւոր» կենդանակերպին, քանզի այս ամսում նաեւ որսորդութեամբ են զբաղուել:

«Քաղոց»-ը որպէս աղ-ուտելիքի քանակի ամիս, բովանդակուում է նաեւ պահեցողութեան խորհուրդն ու սկիզբը:

Հայ եկեղեցու կանոնադրութեամբ «Նոյեմբերի կեսերից մինչեւ ս. Ծնունդ հունվար 6, շուրջ 50 օր տեղւորութիւն ունեցող պահքը կոչվում է Հիսնակի Պահք» (*Գեվորգ Սերայդարեան, «Եկեղեցական Տոմարագիտութիւն», Եր. էջ 94*):

Եթէ Յիսնեակի Պահքը սկիզբ առնի Քաղոցի մէկից (*Նոյեմբերի 21-ից*), ապա կ'ավարտուի Արաց ամսի 20-րդ օրում (*Նոյեմբերում 10 օր + Դեկտեմբերում 31 օր + Յունուարում 9 օր = 50 օր*), Յունուարի 9-ին եւ ոչ թէ 6-ին: Սակայն քանի որ այդ պահքը «շուրջ 50 օր տեւողութիւն ունեցող» է, եւ Յունուարի 6-ը հաստատուում օր է որպէս Ծննդեան օր, ապա կարելի է ասել, որ Յիսնակի Պահքը կատարուել է 46 օրերի ընթացքում: Եկեղեցու կանոնակարգով ընթացիկ պահքի Շաբաթ եւ Կիրակի օրերը ուտիք են: Ըստ այնմ սոյն պահեցողութեան օրերի իսկական քանակը կը լինի մօտ 32 օր, ավարտուելով Արաց ամսի 17-րդ Ասակ օրում:

Աւելացնենք որ Քաղոցի զուգահեռ «Աղեղնաւոր» անուան

մէջ առկայ է յատկապէս պասուց ուտելիքը, երբ «աղ-եղն»-ը ե-  
ղոտ ուտելիքն է, եւ «եղ»-ը բուսական իւղն է, մինչդեռ «իւղ»-ը  
(հնագոյն «եւղ»-ը)՝ կենդանականը: (Այսպիսով պարզեցինք  
նաեւ աղեղնաւոր Չայկ նահապետի սննդակարգը):

#### 12. Արաց

Աճառեան, Արմատ. Բառ. «Չայկական տոմարի վեցերորդ  
ամիսը»:

Մեզ մօտ էլ Արաց-ը ամիի վեցերորդ ամիսն է, իսկ տար-  
ւայ 12-րդը:

«Արաց»-ն սկսուում է Դեկտեմբերի 21-ին ու աւարտուում Յուն-  
ւարի 19-ին: Գիտենք որ Դեկտեմբերի 22-ը արեւադարձ է,  
տարուան ամենաերկար գիշերը, որից յետոյ ցերեկները սկսում  
են երկարել: Այդ իմաստը կայ անուան մէջ, քանզի «Ար» նշանա-  
կում է «արեւի՝ հետեւաբար եւ լոյսի թոպէ», «դրական թոպէ»,  
իսկ «աց» ածանցով ունենում ենք «արեւի եւ լոյսի թոպէների»  
ամիս:

«Արաց»-ը համապատասխանում է «Այծեղջիւր» կենդա-  
նակերպին:

#### 13. Մեհեկան

Աճառեան, Արմատ. Բառ. «Չայկական տոմարի եօթներորդ  
ամիսը»:

Մեզ մօտ էլ Մեհեկանը ամիի եօթներորդ ամիսն է, իսկ  
տարուայ 13-րդը:

«Մեհեկան»-ն սկսուում է Յունուարի 20-ին եւ աւարտուում  
Փետրուարի 18-ին: Բառի արմատներից «Մեհ»-«մյէհ»-ը ասո-  
րերէնում եւ արաբերէնում պարզապէս «ջուր» է նշանակում, սա-  
կայն իրականում «երկնային ջուր»-ն է, այլապէս՝ «երկնքի հաս-  
տատութեան» ջուրը, «իսկ «եկան»-ը պարզապէս «գալ» բայի  
յոզմակի կատարեալ անցեալն է: Եւ քանի որ նախորդ ամսում  
ցերեկները սկսել են երկարել ու օրերը քիչ առ քիչ տաքանալ՝  
բնականաբար այս ամսում երկնային ջրերի - ձիւնի եւ անձրեւի  
հոսք-տեղումներն են սկսուում, հիմնականում Յունուարի 30 կամ  
31-ից, Մեհեկանի երկրորդ տասնօրեակից:

«Մեհեկան»-ը համապատասխանում է «Ջրիոս» կենդա-  
նակերպին:



Մեհեկանին անմիջապես նախորդող օրը, Յունուարի 19-ն՝ Ուղղափառ եկեղեցիների տօնացոյցում «խաչը ջուրը քցելու» օրն է, «ջրօրհնէքը», Յիսուսի մկրտութեան օրը: Հայոց եկեղեցին այդ տօնը նշում է Յունուարի 6-ին, Քրիստոսի ծննդեան հետ: Ի հարկէ ջրօրհնէքը պիտի կապ ունենայ բնութեան մի հաստատուն երեւոյթի հետ, եւ հաւանաբար դա ծննան ամենացրտագոյն օրուան եւ «ծննան մէջքը կտրելու»-ն է առնչուում:

Հայաստանեայց եկեղեցու շարժական տօնացոյցում Առաջաւորաց պահքը (*վեցօրեայ ծոմապահութիւնը*) կատարուում է սոյն ամսուան ընթացքում, որի աւարտին նշուում է Սբ. Սարգսի տօնը:

Թէ ի՞նչ առնչութիւն ունի Սբ. Սարգիսը երկնային ջրերի հոսքի հետ՝ մնում է առեղծուած, որովհետեւ ըստ աւանդութեան, ջրերի ակունքները ազատագրողը սուրբ Գեորգն է:

Կարծում ենք, որ «երկնային ջրեր»-ն ունեն փոխաբերական իմաստ: Դա առնչուում է արական բնոյթի շնչաւոր էակների «ջրերի հոսքի» սկզբին, սերմատուութեան զարթօնքին, երբ սբ. Սարգիսն էլ գործ ունի աղջիկ փախցնելու հետ:

Հայաստանեայց եկեղեցու շարժական տօնացոյցում այս ամսուան ընթացքում տեղի է ունենում Բուն Բարեկենդանը եւ սկսւում է Մեծ Պահքը: Դա՝ Առաջաւորած Պահքի հետ միասին, 40 օր է:

Ըստ մեզ, նախաքրիստոնէական շրջանում «Մեհեկան»-ի վերջին հինգ օրերը՝ սկսած Փետրուարի 14-ի Տէրնտեսի տօնակատարութիւնից, մինչեւ 18-ն ներառեալ, եղել են պաշտօնական հանգստեան օրեր (*ծոմապահութեան 5 օրերը*), որոնց պիտի յաջորդէր ծնունդը «Նոր Տարուան»:

Կարծում ենք, որ Փետրուարի 14-ը համապատասխանել է «Առաջաւորաց Բարեկենդան»-ի սկզբին:

#### 14. Արեգ

Աճառեան, Արմատ. Բառ. «Հայոց ութերորդ ամսուայ անունն է»:

Մեզ մօտ էլ Արեգը ամիի ութերորդ ամիսն է, իսկ տարւայ առաջինը:

Հայկեան Սրբազան Տօմարի ստեղծման ժամանակներում

«Արեգ»-ը եղել է տարուան (*ոչ ամիի*) առաջին ամիսը, եւ Արեգի 1-ին նշուել է հենց Նոր Տարին:

Արեգն սկսւում է Փետրուարի 19-ին, աւարտւում Մարտի 20-ին կամ 19-ին: «Արեգ» բառի «Ար» արմատը նշանակում է «արեւի ընթաց», «լոյսի ընթաց», իսկ «եգ»-ը (=անգլ. age=տարիք, սակայն agency=active operation, action...) «էութեան այգ»-ն է: Ուստի Արեգը բնութեան եւ բուսականութեան զարթօնքի ամիսն է, կենդանական աշխարհի արական բնոյթի աշխուժացումով ու զուգաւորուելու ձգտումով: Հնարաւոր է նաեւ, որ պատանհները այս ամսին են հասունութեան թեւակոխում:

«Արեգ»-ը համապատասխանում է «Ձուկ» կենդանակերպին, որի մէջ դրուած է իգական բնոյթի, նաեւ հողի «հանգըստեան» ժամանակահատուածի աւարտն ու ձուի կազմաւորման սկիզբը: Սոյն համեմատութիւնը մեզ իրաւունք է տալիս «Արեգ» բառը տառացիօրէն ստուգաբանելու նաեւ որպէս «էգի լուսապսակի (*արգանդի*) արական բնոյթի ընթացն ու մասնիկը», այսինքն գործ ունի իգական էութեան արտադրութեան՝ ձուի կազմաւորման հետ արգանդում:

Այս ամսում արունները ձգտում են դէպի էգերը, բայց սրանք դեռեւս պատրաստ չեն:

Ըստ մեզ, քրիստոնէութեան առաջին տարիներում Արեգ ամսի աւարտին կատարուած պիտի լինեն Ջատկական տօները, երբ սեղանին են դրուել ու դրւում են ձուն ու ձուկը:

	Սովորական տարի	Նահանջ տարի	Յաջորդ սովոր. տարին
Արեգ	18 Փետր. - 19 Մարտ	18 Փետր.-18 Մարտ	18 Փետր. - 19 Մարտ
Ահեկան	20 Մարտ - 18 Ապրիլ	19 Մարտ -17 Ապրիլ	20 Մարտ - 18 Ապրիլ
Մարտի	19 Ապրիլ - 18 Մայիս	18 Ապրիլ -17 Մայիս	19 Ապրիլ - 18 Մայիս
Մարգաց	19 Մայիս - 17 Յունիս	18 Մայիս -16 Յունիս	19 Մայիս - 17 Յունիս
Հրոտից	18 Յունիս - 17 Յուլիս	17 Յունիս -16 Յուլիս	18 Յունիս - 17 Յուլիս
Նաւասարդ	18 Յուլիս -16 Օգոստ.	17 Յուլիս - 15 Օգոստ.	18 Յուլիս - 16 Օգոստ.
Յաւելեաց	17 Օգոստ.- 21 Օգոստ.	16 Օգոստ. - 21 Օգոստ.	17 Օգոստ. - 21 Օգոստ.
Հոռի	22 Օգոստ.- 20 Սեպտ.	22 Օգոստ. - 20 Սեպտ.	22 Օգոստ. - 20 Սեպտ.
Սահմի	21 Սեպտ. - 20 Հոկտ.	21 Սեպտ. - 20 Հոկտ.	21 Սեպտ. - 20 Հոկտ.
Տրէ	21 Հոկտ.- 19 Նոյ.	21 Հոկտ.- 19 Նոյ.	21 Հոկտ.- 19 Նոյ.
Քաղոց	20 Նոյ. - 19 Դեկտ.	20 Նոյ. - 19 Դեկտ.	20 Նոյ. - 19 Դեկտ.
Արաց	20 Դեկտ.- 18 Յուն.	20 Դեկտ. -18 Յուն.	20 Դեկտ.- 18 Յուն.
Մեհեկան	19 Յուն. - 17 Փետր.	19 Յուն. -17 Փետր.	19 Յուն. - 17 Փետր.

### 15. Ահեկան

Աճառեան, Արմատ. Բառ. «Յին հայոց իններորդ ամիսը»:

Մեզ մօտ էլ Ահեկանը ամիի իններորդ ամիսն է, իսկ տարուայ 2-րդը:

«Ահեկան»-ը ձգուում է գարնանային գիշերահաւասարից (Մարտի 21 կամ 20), համապատասխանաբար մինչեւ Ապրիլի 19-ն կամ 18-ն:

«Ահ»-ը արեւի հուրն է եւ արական բնոյթի հուրն է: Իսկ «եկան»-ը «եկ» անող կամ «բերող» է, ուստի «Ահեկան»-ը առաջին դէպքում արեւի հուր կամ ջերմութիւն բերող ամիսն է, իսկ երկրորդ դէպքում՝ կենդանական աշխարհում զուգաւորումը իրականացնելու ամիսն է: Փաստօրէն զուգաւորումը տեղի չի ունենում մինչեւ գիշերահաւասարը, երբ դրականն ու բացասականը, արականն ու իգականը իրենց ցանկութեամբ եւ ձգտումով հաւասարում են, որից յետոյ դրական-արականը աւելանում-հզօրանում է եւ տիրում իգականին:

«Ահեկան»-ը համապատասխանում է «Խոյ» կենդանակերպին «խոփ» խորհրդանիշով, որը խմորողն է հողի, այսինքն հողը վարելու ամիսն է:

Գեորգ Յալաջեանի Դերսիմին նուիրուած վերոնշեալ երկուն, էջ 203, կարդում ենք.

«Ամեն մի բնակիչ վստահորեն գիտեր, թե մարտի իննին (հին տոմարով) սկսվելու է ծյուն հալը: Առանց բացառության ամեն տարի, հին թվականով մարտի իննին, առավոտյան, ամենաուշը երեկոյան, սկսվում էր ծյունհալ քամին՝ լստոսը, որն իր գործը վերջացնում էր մարտի 15-ից մինչեւ 21-ը»:

Յին տօմարով Մարտի 9-ն համապատասխանում է նոր տօմարի Մարտի 22-ին, ինչը գարնանային գիշերահաւասարին յաջորդող առաջին կամ երկրորդ օրն է:

### 16. Մարերի

Աճառեան, Արմատ. Բառ. «Յայկական տոմարի 10-րդ ամիսը»:

Մեզ մօտ Մարերի-ն նոյնպէս ամիի 10-րդ ամիսն է, իսկ տարուայ 3-րդը:

«Մարերի» ամիսը ձգուում է Ապրիլի 20/19-ից Մայիսի 19/

18-ը: Բառի արմատում «մար»-ը «մայր»-ն է, եւ այս ամսում հողի մայրանալու-պտղաւորութիւն գործընթացն է սկսւում:

Ըստ Աղանանի, Յրեաստանում Ապրիլի 20-ից Մայիսի 19-ը համարուել է աշնանացան գարու հասունացման շրջան, որն էլ «ելակետ է ծառայել հին հրեական օրացույցի 'ուղղման' համար:

«Մարերի»-ն համապատասխանում է «Ցուլ» կենդանակերպին, որը խորհրդանշն է սերմանողի: Ուստի եւ «Մարերի»-ն գարնանացան հացահատիկի սերմանման ամիսն է, հնարաւոր է նաեւ, որ աշնանացան գարու հասկերի հաւաքի ամիսը լինի:

Taurus – Bull, constellation, zodiac into which sun enters about 21-st April.

#### 17. Մարգաց

Աճառեան, Արմատ. Բառ. «Հայկական տոմարի 11-րդ ամիսը»:

Մեզ մօտ էլ Մարգացը ամիի 11-րդ ամիսն է, իսկ տարւայ 4-րդը:

«Մարգաց»-ը սկսւում է Մայիսի 20/19-ին եւ աւարտւում Յունիսի 18/17-ին: Այս ամսում երեւելի են դառնում բոյսերի ու «Մ»-մայրերի «արգ»-անդները:

«Մարգաց»-ը համապատասխանում է «Երկաւոր» կենդանակերպին, որի մէջ դրուած է յղիութեան, ծոցուորութեան գաղափարը: Մեր կարծիքով «Երկուորեակ»-ը սխալ է:

#### 18. Հրոտից

Աճառեան, Արմատ. Բառ. «Հայկական տարուայ վերջին ամիսը»:

Նախ պէտք է նկատի ունենալ որ հայկական տօմարը 13-ամսեայ է եւ ոչ 12: Հետեւաբար «Հրոտից»-ը՝ յաջորդելով 11-րդ «Մարգաց»-ին, չէր կարող «վերջին ամիսը» լինել, այլ ամիի հերթական 12-րդը, իսկ տարուայ 5-րդը: Ինչպէս եւ Աճառեանի օգտագործած «տարուայ» բառը պէտք է ուղղել «ամիի»:

«Հրոտից»-ն սկսւում է Յունիսի 19/18-ին եւ աւարտւում

Յուլիսի 18/17-ին: Այս միջոցին բոյսերի պտուղներն են աճում, փարթամանում: Բառի արմատների վերականգնումով ստանում ենք «հուր ուտ-ից», այսինքն ուտելու սնունդ: Հետեւաբար «Հրոտից» ամսին բանջարեղէն ուտելիքների եւ կաթնեղէնի առատութիւն է լինում:

Համապատասխանում է «խեցգետին» կենդանակերպին:

Հայաստանեայց եկեղեցու տօնացոյցով այս ամսուայ ընթացքում տեղի են ունենում «Բարեկենդան Վարդավառի Պահոց» եւ «Վարդավառ» տօները, որոնց միջոցում կայ պահք: Թերեւս «Հրոտից» անուան մէջ թաքնուած «ուտից»-ը հենց ակնարկում է այդ պահքի բանջարեղէնով սնուելու կարգը:

Կարծում ենք, որ «Հրոտից»-ի զուգահեռ «խեցգետին» անուան «խեցի»-ն պէտք է հասկանալ որպէս մարդու «հողեղէն մարմին»-ը, որը «գետին»՝ «հոսող ջրին» է տրուում. այսինքն մարդը հոսող ջրի մէջ մկրտուելու խնդիր ունի այդ ամսում, ինչը փոխարինուել է Վարդավառի տօնին իրար վրայ ջուր ցանելու մանկական խաղին: Այդ ծեսի իսկական կարգը պահպանել են հինդուսները:

Իրար յաջորդող Հրոտից-խեցգետինն ու Նաւասարդը անկասկած առնչւում են Ջրհեղեղին եւ դրանից մաքուր դուրս եկած նոր մարդուն՝ Նօյ նահապետին:

Վերջին յօդուածում նայել «Վարդավառ» բառի մեկնութեանը:

Վերոյիշեալ բացատրութիւնները ի հարկէ ամբողջական ու բացարձակ չեն: Յուսով ենք, որ գիտութեան տարբեր բնագաւառներում աշխատող մասնագէտների օգնութեամբ կարելի կը լինի ճշտումներ մտցնել ու նոր բացայայտումներ անել:

19. Գարնանային գիշերահաւասարի ճշգրիտ օրը

Տօնարագէտները միակարծիք չեն գարնանային գիշերահաւասարի օրուան շուրջ: Նրանք տարուբերում են երկու թուերի միջեւ: Ոմանք ընդունում են Մարտի 20-ը, իսկ ուրիշներ՝ 21-ը (*Աղայան, նոյն, էջ 40-41*): Պատմականօրէն երրորդ մի թիւ երբէք խնդրոյ առարկայ չի դարձել (*սա կարելոր է*):

Քննարկում.- Ընդունելով գարնանային գիշերահաւասարը Մարտի 20-ին՝ այն տեղադրենք Ահեկան ամսուան սկզբում: Սոյն հիմքով տօնարը կիրառենք երեք յաջորդական տարիներում, պայմանով որ առաջինն ու երրորդը լինեն սովորական տարիներ, միջանկեալը՝ նահանջ:

Սոյն աղիւսակով սովորական տարիներուն Ահեկան ամիսն սկսուում է Մարտի 20-ին, ուստի եւ գարնանային գիշերահաւասարին, իսկ նահանջ տարուն՝ ոչ (*Մարտի 19*):

Այժմ կառուցենք երկրորդ աղիւսակը, որտեղ սովորական տարուն գարնանային գիշերահաւասարը լինի Մարտի 21-ին եւ Ահեկան ամսի սկզբուն:

	Սովորական տարի	Նահանջ տարի	Յաջորդ սովոր. տարին
Արեգ	19 Փետր. - 20 Մարտ	19 Փետր.-19 Մարտ	19 Փետր. - 20 Մարտ
Ահեկան	21 Մարտ - 19 Ապրիլ	20 Մարտ -18 Ապրիլ	21 Մարտ - 19 Ապրիլ
Մարտի	20 Ապրիլ - 19 Մայիս	19 Ապրիլ -18 Մայիս	20 Ապրիլ - 19 Մայիս
Մարգաց	20 Մայիս - 18 Յունիս	19 Մայիս -17 Յունիս	20 Մայիս - 18 Յունիս
Հրոտից	19 Յունիս - 18 Յուլիս	18 Յունիս -17 Յուլիս	19 Յունիս - 18 Յուլիս
Նաւասարդ	19 Յուլիս -17 Օգոստ.	18 Յուլիս - 16 Օգոստ.	19 Յուլիս - 17 Օգոստ.
Յաւելեաց	18 Օգոստ.- 22 Օգոստ.	17 Օգոստ. - 22 Օգոստ.	18 Օգոստ. - 22 Օգոստ.
Հոռի	23 Օգոստ.- 21 Սեպտ.	23 Օգոստ. - 21 Սեպտ.	23 Օգոստ. - 21 Սեպտ.
Սահմի	22 Սեպտ. - 21 Հոկտ.	22 Սեպտ. - 21 Հոկտ.	22 Սեպտ. - 21 Հոկտ.
Տրէ	22 Հոկտ.- 20 Նոյ.	22 Հոկտ.- 20 Նոյ.	22 Հոկտ.- 20 Նոյ.
Քաղոց	21 Նոյ. - 20 Դեկտ.	21 Նոյ. - 20 Դեկտ.	21 Նոյ. - 20 Դեկտ.
Արաց	21 Դեկտ.- 19 Յուն.	21 Դեկտ. - 19 Յուն.	21 Դեկտ.- 19 Յուն.
Մեհեկան	20 Յուն. - 18 Փետր.	20 Յուն. -18 Փետր.	20 Յուն. - 18 Փետր.

Այստեղ սովորական տարիներուն Ահեկան ամսուան առաջին օր եւ գարնանային գիշերահաւասարի օր է յայտնուում Մարտի 21-ը, իսկ նահանջ տարուն՝ Մարտի 20-ը: Հետեւում է, որ թէ՛ Մարտի 21-ը եւ թէ՛ Մարտի 20-ը իրական են, որպէս գարնանային գիշերահաւասարի օրեր:

Այս իրողութեան հիմքի վրայ էլ հաւաստի ենք համարում երկրորդ աղիւսակը, որն էլ մեզ ծառայում է որպէս Հայկեան Սրբազան Տօմարի սկզբնապատճէն:

## 20.-Յաւելուած

Թէ ի՞նչ այլ կռուաններ ունենք Հայկեան Սրբազան Տօմարի ամիսները այս կերպ տեղաբաշխելու համար:

Հռովմէական ամսանուններից երեքի բուն իմաստներն ու նախնական դիրքերը.

Ստուգաբանութիւն.-

1.«Սեպտեմբեր» անուան առաջին արմատը «Sept=եօթ»-ն է, ինչից էլ իմանում ենք, թէ Սեպտեմբերը տօմարում գրաւել է եօթներորդ ամսուան դիրքը: Բայց հարց է առաջանում թէ տարուա՞ն եօթներորդ ամիսն է թէ՛ ամիի:

«Սեպտեմբեր»-ի երկրորդ արմատն է «եմ», որը նշանակում է «կ'ուտեմ», ինչպես ռուսերենում. (*հայ. «ես եմ»-ի հիմքում դրուած է, որ անձը դեռեւս ուտում է, ուստի եւ կայ*), թուրքերենում «եմ» նշանակում է «ուտելիք» եւայլն: Իսկ երրորդ արմատն է «ber =բեր-ք»-ը: Այսինքն այդ ամիսը ուտելու բերք բերող ամիսն է:

«Եօթ» թիւը ոչ միայն ամսուան դիրքը բնորոշող տուեալ է, այլեւ արական բնոյթը խորհրդանշող թիւն է:

Ի մի բերելով «եօթ», «եմ», ու «բեր» արմատների իմաստները՝ ստանում ենք՝ «արական բնոյթի ուտելի բերք բերող», երբ «արական բնոյթի ուտելիքը» առաջին հերթին հացահատիկն է, ապա վերգետնեայ այլ արական բնոյթի ուտելիքները (*հնդեղէն, ընկոյզ, նուշ, եւայլն*):

Բայց Սեպտեմբեր ամսուան ներկայիս դիրքը չի համընկնում հացահատիկի բերքի ստացման ժամանակաշրջանին, ինչը լինում է Յուլիսի երկրորդ կեսից Օգոստոսի առաջին կեսի միջոցում, որը «տարի»-ն կիսող ամիսն է, բայց «ամի»-ի վերջին ամիսն է: Ուստի Հռովմէական տօմարում Սեպտեմբերը եղել է «տարուան» եօթներորդ ամիսը, ու համապատասխանել է Հայկեան 6-րդ Նաւասարդ ամսին:

2. «Հոկտեմբեր» ամսանունը բաղադրուած է «Octo=ութ», «եմ» եւ «բեր» արմատներից: Դա եղել է Հռովմէական ութերորդ ամիսը, եւ յատկանշում է «Ութ»-ի (*Ը-ի*) կամ իգական բնոյթ ունեցող ուտելի բերքի (*խաղողի, մրգերի*) ամիսը: Սոյն բերքահաւաքը կատարում է Օգոստոսի երկրորդ կեսից Սեպտեմբերի առաջին կեսը, երբ Հայկեան 8-րդ Հոռի ամիսն է (*7-րդը Յաւելեացն է*):

3. «Նոյեմբեր»-ի «նոյեմ»-ը առաջացել է լատիներէն «novem=ինն» բառից, ուստի եւ ամիսը նախկինում եղել է իններորդը:

«Նոյեմբեր»-ում «նոյ-nov» արմատը նշանակում է «նոր», ինչպէս ռուս. «նովի», անգլ. «new»: Հայերէնում «nov»-ը համապատասխանում է «նու»-ին: Բայց քանի որ բառակազմութեան մէջ կայ ձայնաւորի շեշտազրկման պատճառով փոխակերպման պարագայ՝ ապա «նու»-ն դառնում է «նոյ» եւ November-ը հայերէնում ներկայանում է Նոյեմբեր:

Հայերենում յայտնի է, որ «Նուբար»-ը «նոր պտուղ» է նշանակում: Իսկ իւրաքանչիւր անգամ նոր պտղաբերող մօր մօտ սկսւում է նաեւ նոր կաթնատուութիւնը:

Նոյենբերը համապատասխանել է հայկական տարուան իններորդ «Սահմի»-ին (22 Սեպտ-21 Հոկտ.), երբ որպէս պաշար պահ դրուելիք նոր կաթնամթերքի, ձեթի եւ մեղրի կուօքն է կատարուել:

#### 21. Տօմարական Թուաքանութիւն.

Երկրագունդը Արեգակի շուրջ լրիւ պտոյտ է կատարում 365 օր, 5 ժամ, 48ր. եւ 48 վայրկեանում:

Այսօրուան գործող օրացոյցը 5 ժամ 48ր. 48 վայրկեանը կլորացրել է 6 ժամի, տոմարի 4-րդ տարում ստանալով մի հաւելեալ օր, ուստի եւ նահանջ տարի՝ 366 օրով:

Սակայն այս ձեւով իւրաքանչիւր 4 տարում ժամանակագրականօրէն մի քիչ առաջ ենք ընկնում բուն ցիկլից, 6 ժամի եւ 5ժ. 48ր. 48 վայրկեանի միջեւ տարբերութեան պատճառով:

Հարց 1. Քառամեակի նահանջ տարին իր հաւելեալ մի օրով ինչքա՞ն է առաջ ընկնում ժամանակից:

Տուեալ 1. 5 ժամ 48ր. 48 վայրկեանն = 20928 վայրկեանի:

Տուեալ 2. Մի օրը = 24ժ.=86400 վայրկեան:

Պատասխան 1.  $86400-20928=65472$ վ.

Հարց 2. Քառամեակի 3 հասարակ տարիները ինչքանօ՞վ են ետ մնում ժամանակից:

Պատասխան 2. (5ժ. 48վ. 48ր.)  $20928 \times 3 = 62784$ վ.

Հարց 3. Իւրաքանչիւր քառամեակի աւարտին տօմարը ինչքանօ՞վ է առաջ անցնում ժամանակից:

Պատասխան 3.  $65472-62784=2688$ վ.

Հարց 4. Քանի՞երորդ քառամեակում 2688 վայրկեանը կը դառնայ մօտ մի օր:

Պատասխան 4.  $86400:2688=32$ -րդ քառամեակում կը դառնայ մի օրից 384 վ. պակաս:

Հարց 5. 32 քառամեակը քանի՞ տարի է:

Պատասխան 5.  $32 \times 4 = 128$  տարի (-384վ.):

Հարց 6. 128 տարիների քանի՞ շրջապտոյտով պակասորդ 384 վայրկեանը կը դառնայ մի օր, ու մի օրով ետ կ'ընկնենք ժամանակից:



Տուեալ 1. Մի օրը հաւասար է 86400վ.

Պատասխան 6.  $86400:384=225$  ցիկլ:

Հարց 7. 128 տարիների 225 ցիկլը ինչքա՞ն տարի է անում:

Պատասխան 7.  $128 \times 225 = 28800$  տարի:

Հետեւութիւն 1.- 28800-րդ տարում միայն կ'ունենանք ժամանակից միօրեայ ետընթաց, ուստի Արեգակնային տօմարը կարելի է համարել առաւել հաստատուն քան լուսնայինն ու արեգանա-լուսնայինը:

Հետեւութիւն 2.- Արեգակնային տօմարում գործում է մի օրինաչափութիւն, ըստ որի 128-րդ նահանջ տարին պէտք է համարել սովորական տարի, որով 28800 տարուան ընթացքում ժամանակը կը սահի օրինաչափ, տօմարը կը լինի անխախտ ու անսխալ:

Հաշուի չենք առել միայն մի ոչ շատ էական հանգամանք, այն է՝ երկրագնդի բեւեռային թեքման պարագան, ինչը հաշուարկելը թողնում ենք աստղաֆիզիկոսներին:

Յօդուածի վերջում ներկայացրել ենք աղիւսակ, որով ցոյց է տրուած 128-ամեայ ցիկլերի հաշուարման ձեւն ու արդիւնքները:

Նկատի ենք ունեցել, որ տօմարի առաջին թուականը 0-ական է եւ ոչ թէ 1: Երկրորդ, որ իւրաքանչիւր նահանջ տարում ժամանակից առաջ ենք անցնում 65472վ., իսկ իւրաքանչիւր հասարակ տարում ետ ենք մնում 20928վ.: Այդ թուերի հաշուեկշռով որոշ նահանջ տարիներում կուտակուած աւելցուկ ժամանակը մօտենում է մի օրին (86400վ.), սակայն դա արհեստական ու թուացեալ առաջընթաց է, ինչը իրականութեան հետ պէտք չէ շփոթել: Մենք նահանջային բայց ոչ նահանջ տարի ենք համարել այն թուականը, երբ նախորդ քառամեակի վերջին տարում աւելցուկ ժամանակը գերազանցել է 20928 վայրկեանը (5ժ. 48ր. 48վ.) Երրորդ, աշխատել ենք դրական ու բացասական հաշուեկշիռներով, որով լինում են հաւելադիրով աւարտուող տարիներ, նաեւ պակասորդով աւարտուողներ, որպէսզի իրական ժամանակի հետ տարբերութիւնը մնայ մի օրուան սահմաններից ներս: Այդպիսով առաւելագոյն առաջընթացը կամ ետընթացը իրական

ժամանակից չի գերազանցել 17ժ. 16ր. 48վ.-ը: Սոյն աղիւ-

սակի պատկերից կարելի է եզրակացնել, որ յաջորդական տարիներում մի շարք տարիներ ունեն դրական հաշուեկշիռ, որոնց յետեւում է բացասական հաշուեկշռով տարիների շարքը: Կարելի է ասել, որ երկու հակադիր պտոյտ ունեցող պարոյրների կամ կեռ խաչերի գաղափարն է արտացոլւում դրանցով:

Ըստ մեր հաշուարկների՝ նահանջ տարիներ չեն լինի հետեւեալ նահանջայինները.-

32թ., 160թ., 292թ., 420թ., 548թ., 676թ., 804թ., 932թ., 1060թ., 1188թ., 1316թ., 1444թ., 1572թ., 1700թ., 1828թ., 1956թ., 2084թ., 2212թ., 2340թ., 2468թ., 2596թ., 2724թ., 2852թ., 2980թ., 3108թ., 3236թ., 3364թ., 3492թ., 3620թ., 3748թ., 3876թ., 4004թ., 4132թ., 4260թ., 4388թ., 4516թ., 4644թ., 4772թ., 4900թ., 5028թ., 5156թ., 5284թ., 5412թ., 5540թ., 5668թ., 5796թ., 5924թ., 6052թ., 6180թ., 6308թ., 6436թ., 6564թ., 6692թ., 6820թ., 6948թ., 7076թ., եւայլն:

Այս շարքում բացառաբար միայն 0 թուականից 32 թուականը եւ 160 թուականից 292-ը չեն ենթարկւում 128 տարիների օրինաչափութեան, իսկ մնացեալ պարբերութիւններում օրէնքը զործում է անխափան:

## 22. Յուլեան Տօմարի սկզբունքը

Ընդունուած է, որ Յուլեան տօմարի 352 թուականը եղել է նահանջ տարի, որից հետեւում է, որ այդ տօմարը սկսուել է հենց 366-օրեայ նահանջ տարով, եւ յաջորդ երեք 365-օրեայ տարիներում ժամանակի աւելցուկը կրճատուել է:

Յուլեան տօմարը նկատի չի ունեցել 128-ական տարիների միօրեայ առաջխաղացումը: 351 թուականին Յուլեան տօմարի աւելցուկը (*ժամանակից առաջ անցումը*) եղել է 236544վ., մօտաւորապէս 3 օր, իսկ 352 թուականին 302016վ., մօտ 4 օր: Այսինքն 351-352 թուականներին դա 'ժամանակից' առաջ է անցել 3-4 օրով, ինչը պատճառ է դարձել գիշերահաւասարների, տօնական օրերի դիրքի, հողատնտեսական աշխատանքների սկզբի եւ աւարտի հետ տօմարի անհամապատասխանութեանը: Նոյն պատճառներով էլ Անդրեաս Բիւզանդացին (*Իմաստասէրը*) 352 թուականին ստիպուել է 352 թուականից մինչեւ 551թ. ներառեալ 200-ամեայ նոր զատկացոյց կազմել: Յաջորդող 552 թուականից 561թ.-ը, 9 տարի տիրել է տօմարային ու տօնա-

ցուցային խառնաշփոթ: 561 թուականին էաս Աղեքսանդրեացին կազմել է 532 տարուայ աղիւսակ, որով առաջնորդուել են քրիստոնեայ եկեղեցիները, մինչեւ Գրիգորեան նոր տօմարի յայտնուելը 1582 թուականին: Վերջինս՝ ըստ հայր Գեվորգ Աւրայդարյանի («*Եկեղեցական Տոմարագիտություն*», էջ 119) «1 օրվա տարբերություն (*է տալիս – Մ.Ն.*) 3280 տարվա ընթացքում»:

Իրականում Հռովմի Պապ Գրիգորիոս XIII-ի օրերում Յուլեան տօմարը 10 օրով ետ էր մնացել բնութեան օրինաչափութիւններից: Նրա կազմակերպած գիտաժողովի մասնակիցները գտել էին 128 տարիների օրէնքը, սակայն նրանք արմատական լուծում չկարողացան տալ երեւոյթին: Նախ գիտաժողովում որոշուեց 10 օրերի բացը վերացնել նոյն թուականի Նոյեմբերի 4-ին յաջորդող օրը հռչակելով Նոյեմբերի 15: Ապա, նկատի առնելով, որ մօտ 400 տարին մէկ տօմարը 3 օրով առաջ է անցնում բնական երեւոյթներից, ուստի այդ թուականից (1582թ.) սկսած իւրաքանչիւր դարագլուխ կազմող տարիներից (1600թ., 1700թ., 1800թ., 1900թ., 2000թ. եւայլն) դրանք որոնք 400-ով բաժանելիս կտորակ են ունենում՝ հռչակել ոչ նահանջային տարի:

Դեռեւս ներկայիս գործող տօմարն ունի այդ սկզբունքը:

### 23. Քրիստոնեական ժամանակներում

Հայոց առաջին շարժական տօմարի սկզբունքը

Շարժական դարձած Հայոց տօմարում նկատի չի առնուած ոչ 128 տարուան շրջանը, ոչ էլ 4-ամեայ նահանջը, ինչի պատճառով էլ իւրաքանչիւր քառամեակում դա մի օրով ետ է ընկել Յուլեանից (*է.Բ. Աղայան, նոյն, էջ 21*):

### 24. Հայկեան Սրբազան Տօմարը

ե՞րբ է փոխարինուել շարժականով

Հնագոյն հայկական մատենագրական աղբիւրներում (*Ազաթանգեղոս, Ձենոր Գլակի Ասորեցի, Կորիւն*) օգտագործուած են հայկական ամսանուններից ոմանք, առանց Յուլեան տօմարի ու ամիսների յիշատակութեան, եւ առանց զուգահեռների: Սա խօսում է այն փաստի մասին, որ քրիստոնեացումից մինչեւ 5-րդ դարը Հայաստանում չի կիրառուել շարժական տօմար:

Ըստ մատենագրական տեղեկությունների՝ Յուլեան տոմարի 428 թուականի Օգոստոսի 11-ը համընկել է Հայոց Նաւասարդեան տօնախմբութիւնների սկզբին, նոյնն է թէ Յաւելեաց ամսի սկզբին եւ Ամանորին:

Է. Աղաեանն հարց է տալիս. «Թե ինչո՞ւ Հովհաննեսն (*Սարկաւազ Իմաստասէրը – Մ.Ն.*) իր տոմարի սկզբի՝ ամանորի համար 428 թվականի դրութիւնն է ընդունել, մնում է բաց» (*նոյն, էջ 186*):

Փորձենք լրացնել այդ բացը:

428-ից յետադարձ հաշուարկով 301 թուականին քրիստոնէութեան պետականացման ժամանակ Նաւասարդեան տօնակատարութեան սկիզբը (*Յաւելեացի 1-ը*) կը զուգահիսի Յուլեան Սեպտեմբերի 12-ին (*Աղայան, նոյն էջ 23*), ինչը չի համապատասխանում մեր վերականգնած Հայկեան Սրբազան Տօմարի Յաւելեացի սկզբին: Այսինքն, եթէ անշարժ տօմարից շարժականի անցումը կատարուած լինէր հենց քրիստոնէութեան պետականացման օրերին՝ ապա 301 թուականին Յաւելեացի 1-ը պիտի զուգահեռ ունենար Յուլեան Օգոստոսի 17-ն կամ 18-ն, նայած թէ Հայկեան Տօմարում Յուլեան 301-ը նահա՞նջ էր թէ ոչ:

Մեր կարծիքով, անշարժ տօմարից շարժականին անցումը տեղի է ունեցել աւելի ուշ, երբ Հայաստանում քաղաքական իրադրութիւնը գործել է ընդդէմ պետական ու հոգեւոր-եկեղեցական ինքնուրոյնութեանն ու շահերին, սակայն...

Կրկին 428-ից յետադարձ կատարելով Յաւելեացի 1-ն իր բուն զուգահեռներից Օգոստ. 17-ն է գտնում 404 թուականին, իսկ 400-ին հանդիպում է Օգոստոսի 18-ին (*Աղայան, նոյն, էջ 23*): Սոյն թուականներից մէկն էլ հիմք պիտի ծառայէր ու սկիզբ լինէր հայկական շարժական տօմարին:

Քննարկենք երկու պարագաները, ու փորձենք գտնել անցումային հնարաւոր թուականը:

Յովհաննէս Սարկաւազ Իմաստասէրն իր տօմարը կազմելիս՝ «հատուկ սյունակում որպէս գիշերահավասարի կայուն օր գրել է մարտի 20-ը, իսկ իր տոմարական զանազան աշխատութիւններում էլ բազմիցս շեշտում է, որ զարմանամուտը եւ գիշերահավասարի օրը մարտի 20-ն է» (*Աղայան, նոյն, էջ 43*):

Յովհաննէս Սարկաւազի այս պնդումները երբէք պատահականութիւն չեն:

Պէտք է նշել նաեւ, որ Յովհաննէս Սարկաւազի տօմարն սկսող 1084 թուականը եղել է նահանջ տարի ու այդ պատճառով էլ իր հիմքում պէտք է ունենար Մարտի 20-գարնանային գիշերահաւասար դրոյթը: Նա այդպիսով անուղղակիօրէն յուշել է մեզ, որ տօմարի շարժականացման թուականը, այն է Յայկեան Սրբազան Տօմարի վերջին տարին եղել է նահանջ տարի, երբ գարնանային գիշերահաւասարի օրը Մարտի 20-ն է եւ ոչ 21-ը:

Իսկ քանի որ 428 թուականից յետադարձ հաշուարկով Յուլեան նահանջային 400 թուականին գարնանային գիշերահաւասարն ու Ահեկանի 1-ը պատահում են Մարտի 21-ին, փոխանակ 20-ի, ապա այդ թուականը չէր կարող լինել Յայկեան Սրբազան Տօմարի օգտագործման վերջին տարին:

Գարնանային գիշերահաւասարը Մարտի 20-ին եւ Ահեկան ամսուան սկզբում, իսկ Ամանորը Օգոստոսի 17-ին են զուգադիպում միայն նահանջ տարիներում: Այդ իրականութեան հանդիպում ենք Յուլեան 404 թուականին: Ուստի կարելի է համարել, որ հենց 404 թուականն է եղել Յայկեան Սրբազան անշարժ տօմարի օգտագործման վերջին տարին, որը կասեցուել է Յաւելեացի 1-ին, համապատասխանաբար Յուլեան Օգոստոսի 17ին:

Յայագէտներից շատերն են հարց տուել, թէ ի՞նչ առիթով 428 թուականը յետագայ դարերում դարձել է տօմարական հաշուարկների ելակէտ: Արդեօք 428-ին Յայաստանի երկփեղկո՞ւմն է առիթ դարձել այն հիմք ընդունելու համար: Բայց չէ՞ որ դատիսուր մի իրադարձութիւն է, ոչ արժանի մեծարման:

Մեր ուսումնասիրութիւնը ցոյց տուեց, որ 428-ի հիմքը 404 թուականն է, ուստի հայկական առաջին շարժական տօմարի կիրառումը նուիրուած պիտի լինի նոյն թուականում գրերի գիւտի մեծ իրադարձութեանը (*ոչ թէ 405-ին*), միակ պայծառ եղելութեանը այդ տասնամեակներում: Մեծ հաւանականութեամբ սոյն տօմարի հեղինակը կարելի է համարել սուրբ Սահակ Պարթեւ հայրապետին: Մեր կարծիքով, նահանջ տարիներ չունեցող այդ անկատար տօմարով նա փորձել է հակադրուել եւ պարսկականին (*որը նոյնական էր հայկականի հետ*), եւ հռովմէականին (*որը նահանջ տարի ունէր*), որպէս մշակութային անկախութեան մի դրսեւորում, նաեւ ի հաւերժացումն գրերի գիւտին:

Փորձենք յետադարձ հայեացքով վերլուծել դրութիւնը եւ

գտնել այդպիսի կոպիտ փոփոխման ենթապատճառները:

Հայոց Հայկեան Սրբազան Տօմարը շարժականի վերածողը աշխատել է զուգորդել աւանդական հայկականն ու Յուլեանը: Նա ստիպուած է եղել հայկական 13 ամսեայ տարուան փոխարէն ընդունել 12-ամսեայ Յուլեանը: Նաեւ 30-օրեայ ամիսների փոխարէն հետեւել է Յուլեանին: Երկու խնդիրները միանգամից լուծել է հրաժարուելով հայկական 5-6-օրեայ Յաւելեաց ամսից եւ ունեցել է 12-ամսեայ տարի, առանց քառամեայ նահանջների: Յաւելեացի 5 օրերը տեղաբաշխել է միւս ամիսների վրայ, համապատասխանեցնելով Յուլեան ամիսների օրերի քանակին:

Սակայն՝ վերացնելով հայկական տօմարից Յաւելեաց ամիսը, Ամանորը յայտնուում էր Հռոմի ամսի սկզբում: Բայց Ամանորի «Նաւասարդեան» կոչուող տօնախմբութիւնների ժողովրդական դարաւոր աւանդութիւնը պատճառ է հանդիսացել, որ նա Ամանորը տեղափոխել Նաւասարդ ամսուան սկիզբը: Սրանից էլ առաջացել է «Նաւասարդի 1=Ամանոր» ու «Նաւասարդի 1 = Օգոստոսի 17» դրոյթը, ինչը 24 տարի անց, 428 թուականին պիտի դառնար «Նաւասարդի 1 = Օգոստոսի 11»:

Այս կերպ նա ինքնուրոյնութեանը է օժտել հայկական շարժական տօմարը, այն հեռացնելով թէ՛ պարսկականից եւ թէ՛ Յուլեանից, մշակութային անկախութեան ձգտումով, թեկուզ եւ հետեւանքները լինէին քառսային:

Այդ տօմարն իր տօնացոյցերով գործել է մինչեւ Յուլեան 551 թուականը, այսինքն 146 տարի, երբ Յուլեանից ետ է ընկել 36.5 օրով: Իսկ 128-ամեայ օրէնքը նկատի ունենալու դէպքում 35.5 օրով (*1 ամիս եւ 5.5 օրով*) ետ է ընկել բնութեան օրինաչափութիւններից, ինչը ահռելի տեղաշարժ է: Սոյն խառնաշըփոքը Հայաստանում տիրել է մինչեւ 584 թուականը, երբ Մովսէս Եղուարդեցի հայրապետը Դուինի Գ. ժողովում ընդունել է Էաս Աղեքսանդրացու 532-ամեայ պարբերաշրջանը, եւ 552 թուականի Յուլիսի 11 = Նաւասարդի 1 կացութեանը կիրառութեան է դրել Հայոց Մեծ թուականը: Սոյն 552-ամեայ պարբերաշրջանի աւարտի պատճառով 1085 թուականին, Յովհաննէս Իմաստասէրն ստեղծել է հայոց նոր անշարժ տօնացոյցն ու տօմարը (*Նահանջների մուտքագրումով*) որի սկիզբը կոչուել է «Հայոց Փոքր Թուականութիւն», իսկ տօմարը՝ «Սարկաւազադիր տօմար Հայոց» (*Աղայան, նոյն, էջ 22, 27*):

Հետևում է, որ հայ իրականության մեջ շարժական տոմարը գործել է 404-ի կեսից 1085 թուականի կեսը, 681 տարի:

25. Շարժական դարձաց Հայոց տոմարի հնարաւոր տեսքը 404 թուականին՝ Յուլեան տոմարի Համեմատութեամբ՝ Ստորեւ բերուած աղիւսակը հիմք կը ծառայի 404-ից 1085 թուականն ընկած ժամանակմիջոցում տեղի ունեցած եղելութիւնների թուականութիւնները ճշգրտելու համար: Աղիւսակի հիմնաքարն է «Նաւասարդի 1=Օգոստ. 17» դրոյթը 404 թուականում:

Քանի որ Յուլեան 404 թուականը նահանջ տարի է եղել, Հայոց Շարժական Տոմարի առաջին (*գրոյական*) տարում հաշի է առնուել նահանջային մի օրը, որպէսզի տոմարի հիմքը հաստատուն լինէր ու լիարժէքօրէն համապատասխանէր Յուլեանին: Յաջորդ քառամեակից սկսեալ նահանջային օրը անտեսուել է:

	Հայոց Շարժական Տոմարը 404թ.	Հայկեան Անշարժ Տոմարը
1.Արեգ	Մարտ 17 - Ապրիլ 16 (31 օր)	19 Փետր.- 20(19) Մարտ
2.Ահեկան	Ապրիլ 17 - Մայիս 16 (30 օր)	21(20) Մարտ - 19(18) Ապրիլ
3.Մարերի	Մայիս 17 - Յունիս 16 (31 օր)	20(19) Ապրիլ - 19(18) Մայիս
4.Մարգաց	Յունիս 17 - Յուլիս 16 (30 օր)	20(19) Մայիս - 18(17) Յունիս
5.Գրոտից	Յուլիս 17 - Օգոստ. 16 (31 օր)	19(18) Յունիս - 18(17) Յուլիս
6.Նաւասարդի	Օգոստ 17 - Սեպտ. 16 (31 օր)	19(18) Յուլիս-17(16) Օգոստ.+ Յաւելեաց
7.Գոռի	Սեպտ.17 - Հոկտ. 16 (30 օր)	23 Օգոստ.- 21 Սեպտ.
8.Սահմի	Հոկտ. 17 - Նոյ. 16 (31 օր)	22 Սեպտ.- 21 Հոկտ.
9.Տրէ	Նոյ. 17 - Դեկտ. 16 (30 օր)	21 Հոկտ.- 20 Նոյ.
10.Քաղոց	Դեկտ. 17 - Յունր. 16 (31 օր)	21 Նոյ. - 20 Դեկտ.
11.Արաց	Յունր. 17 - Փետր. 16 (31 օր)	21 Դեկտ.- 19 Յուն.
12.Մեհեկան	Փետր. 17 - Մարտ 16 (29 օր)	20 Յուն. - 18 Փետր.

Աղիւսակների համեմատութիւնից պարզուում է, թէ երբ եւ ի՞նչ պայմանների տակ Արեգ ամիսը Չուկ կենդանակերպից փոխադրուել է Նոյ-ի տարածք:

Շարժականացած տոմարի հետ առնչուող ժամանակագրական մի խնդրի ենք հանդիպում Տիմոթէոս Կուզի «Հակաճառութիւն» երկի հայերէնի թարգմանուած մատեանում (*Ա.Ն. Մուրադյան «Հունարան դպրոցը եւ նրա դերը հայերէնի քերականական տերմինաբանության ստեղծման գործում», էջ 96-97*):

Մէջբերենք Ա.Ն. Մուրադեանի խօսքը.

«Գ. Տեր-Մկրտչյանը պարզելով նույն թարգմանության մեջ հիշված Դիոսկորոսի մահվան թվականը, տոմարական հաստատ հաշիվների համաձայն գտնում է, որ Թովթ Ե. սեպտ. Բ, 30-ի 2 զուգավորությունը կարող է հանդիպել միայն 480-484 քառամյակին: Հետեւաբար թարգմանության ճշտագույն սահմանները նա որոշում է 480 թ. փետր. 29-ից 484 թ. փետր. 28-ի քառամյակը»:

Հենուելով մեր վերականգնած աղիւսակի վրայ, շարժականացած Հայոց տօմարի առաջին տարում «30-ի 2»-ն կը լինի Սեպտեմբերի 22-ը, մինչդեռ Դիոսկորոսի մահուան տարում համապատասխանել է Սեպտեմբերի 2-ին: Պարզ է, որ երկու «30-ի 2»-երի միջեւ 20-օրեայ տարբերութիւնը առաջացել է նահանջ տարիների հաշուին, հայկական շարժական տօմարի ընկրկումից: Դա արդիւնք է ( $20 \times 4 = 80$ ) տարիների ժամանակային առաջխաղացմանը:

Այսպիսով որոշակիանում է «Հակաճառութիւն» երկի թարգմանութեան մեջ նշուած Դիոսկորոսի մահուան թուականը, որ է  $404 + 80 = 484$  թուականի Սեպտեմբերի 2-ը:

26. Յովհաննէս Իմաստասէրի 1084-ին կազմած

«Սարկաւագադիր Տօմար»-ի տեսքը

Յիշեցնենք, որ 404 թուականին հայկական շարժական տօմարն ստեղծողի գլխաւոր մտահոգութիւնն է եղել պահպանումը ազգային-մշակութային ինքնուրոյնութեան: Նոյն գերխնդիրն է ունեցել նաեւ Յովհաննէս սարկաւագը: Հայոց շարժական տօմարը անշարժացնելով եւ Յուլեանի հետ համադրելով նա ուզեցել է որ երկու տօմարներն իրարից անպայման ու ակներեւաբար տարբերուէին:

Դա իրականացրել է վերականգնելով հայոց հնագոյն տօմարի 13 ամսեայ եւ 30 օրեայ համակարգը, բայց հիմքային փոփոխութեամբ: Նա առաջինն է, որ 404 թուականից 681 տարի անց Յաւելեացը վերադարձրել է կիրառութեան: Սակայն տեղադրելով այն Նաւասարդից առաջ, իրենից յետոյ եկած սերունդներին մատնել է շփոթմունքի: Իրականում նա այլ կերպ չէր էլ կարող վարուել: Քանզի շատ դժուար պիտի լինէր համա-



կարգի ամբողջական վերականգնումը, քանի որ արմատական փոփոխությունները կարող էին ազգային հոգեբանությունը խարխուլել ու կործանարար լինել մի երկու սերնդի համար: Նա ընտրել է չարեաց փոքրագոյնը: Նոյնպիսի խնդիր է ծառացած այսօր այբուբենի եւ ուղղագրութեան պարագաներում (*է, ե, լ, օ, ֆ տառերի եւ երկրարբառների հարցերը եւայլն*):

Իմաստատրի տօմարը (*ոչ նահանջ / նահանջ*)

1. Արեգ	Մարտ 9/8	- Ապրիլ 7/6
2. Ահեկան	Ապրիլ 8/7	- Մայիս 7/6
3. Մարերի	Մայիս 8/7	- Յունիս 6/5
4. Մարգաց	Յունիս 7/6	- Յուլիս 6/5
5. Հրոտից	Յուլիս 7/6	- Օգոստ. 5/4
3աւելեաց	Օգոստ. 6/5	- Օգոստ. 10
6. Նաւասարդի	Օգոստ. 11	- Սեպտ. 9
7. Հոռի	Սեպտ. 10	- Հոկտ. 9
8. Սահմի	Հոկտ. 10	- Նոյեմ. 8
9. Տրէ	Նոյեմ. 9	- Դեկտ. 8
10. Քաղոց	Դեկտ. 9	- Յուն. 7
11. Արաց	Յուն. 8	- Փետր. 6
12. Մեհեկան	Փետր. 7	- Մարտ 8

### 27. Հայկեան Սրբագան Տօմարի Սկզբունքը

Հայաստանում նախաքրիստոնէական շրջանում անշարժ տօմար լինելու օգտին է արտայայտը-ւել Դեւոնդ Ալիշանը, որի կարծիքով հայերս ունեցել ենք եւ անշարժ եւ շարժական տօմարային համակարգեր: Խորհրդային ժամանակներում Ա. Աբրահամեանն խօսել է քրիստոնէութիւնից առաջ անշարժ տօմարի առկայութեան մասին Հայաստանում: Սակայն ո՛չ Ալիշանը եւ ո՛չ էլ Աբրահամեանը գիտականօրէն չեն հիմնաւորել իրենց կարծիքը:

Ինչպէս սուրբ Մեսրոպ Մաշտոցն է ասում, Աստուած ամէն ինչ ստեղծեց գոյգերով, արական ու իգական, դրական ու բացասական, երկնային ու երկրային, եւայլն: Ըստ այնմ, տօմարն էլ պէտք է լինէր երկսեռ: «Տարի» եւ «ամի» բառերի գոյութիւնն անգամ յուշում է երկու համակարգերի մասին:

Տօմարում նոյն երկութիւնը դրսեւորում է նաեւ մեր հնագոյն ամսանուններին զուգահեռ կենդանակերպի ներկայիս օգտագործուող նոյնքան հին անուններով: Կարելի է մտածել,

որ դրանք բովանդակութեամբ իրար ամբողջացնող ժամանակաչափի արական ու իգական զոյգերն են, սկզբից եւ եթ ւաւանդուած:

Թէւ այստեղ չենք անդրադառնայ սոյն հարցին, սակայն կ'ուզէինք յուշել հետաքրքրուողներին, որ Հայկեան Սրբազան Տօմարի Յաւելեաց ամսում Նաւասարդեան տօնախմբութիւնների «Անահտական օրեր» կոչուելը միտք է յղում, որ այդ օրերից է սկսուել «Անահտական Սրբազան Տօմարը»՝ «ամի»-ն, «Հայկեան Սրբազան Տօմարի» զոյգը: Յիշեցէք մեր մէջբերումը Շամիրամից:

Այս ուղղութեամբ դեռեւս շատ անելիք ունենք:

Մեր վերականգնած Հայկեան Սրբազան Տօմարը «անշարժ» չէր կարող կոչուել եթէ հայոց նախնիները հաշուարկէին միայն Յուլեան սկզբունքով, այն է՝ քառամեակից քառամեակ մի նահանջ տարի որդեգրելով: Անկասկած նրանք նկատի են ունեցել նաեւ իւրաքանչիւր 128 տարում կուտակուող ու մի օր դարձող րոպէները եւ կատարելապէս լուծել այդ խնդիրը:

Վստահ ենք՝ որ անյիշելի ժամանակներից մինչեւ 404 թուականը, Հայոց բուն տօմարը այս հիմքերի վրայ է աշխատել, քանզի մեր քրմերը եղել են աստղագիտութեան եւ ժամանակաչափի մեծագոյն գիտակներ:

## 28. Հայկեան Սրբազան Տօմարում

ժամերի անուններն ու դիրքերը

Ըստ գիտնականներից ոմանց՝ հայկական ժամերի անունները կամայականօրէն են սարքուել ուշ միջնադարում (*Ղ. Ալիշան եւ այլք*):

Ճիշդ հակառակը, մենք վստահ ենք, որ դրանք Հայկեան Սրբազան Տօմարին հասակակից են եւ իմաստաւորուած:

Մեր կարծիքով, նախկինում «ցերեկ ու գիշեր» բաժանումը չի եղել կէս գիշերին, ինչպէս այսօր: Ոչ էլ երեկոն է համարուել օրուան սկիզբ, ինչպէս ընդունել է եկեղեցին:

Քանզի տօմարի ու տուեալ բառերի ստեղծման ժամանակ գործող համակարգը եղել է արեգակնային, ուստի եւ օրուան սկիզբը պիտի լինէր արեւագալը, այլապէս՝ երկրի մթնոլորտից ներս արեւի լոյսի առաջին թափանցումով:

Եթէ շրջանագծի 12 մասերի բաժանումը հիմք է ծառայել տարուան 12 ամիսների բաժանման, ապա օրուան ժամերի բաժանման հիմք է ծառայել շրջանագծի բաժանումը 24 մասերի: Այդ պատկերում եթէ ամէն մի ամիսը ընդունենք որպէս մէկ միաւոր, ապա իւրաքանչիւր ամիս-միաւորին (*հետեւաբար կենդանակերպի ազդեցութեան*) համապատասխանում է երկու ժամ:

Ինչպէս որ Գարունը չի սկսվում գարնանային գիշերահաւասարի օրում, այլ մի ամիս (*մէկ միաւոր*) առաջ, այդպէս էլ ցերեկային ժամերը սկսում են ոչ թէ արեւի երեւալու հետ, այլ մի միաւոր կամ երկու ժամ առաջ:

Մեր կարծիքով (*նաեւ աստղաֆիզիկոս Գագիկ Պողոսյանի բանաւոր խօսքով*), այս համակարգում թէւ եղել են 24 ժամեր, սակայն Գարնանն ու Ամռանը ցերեկային ժամերը երկարել են գիշերային ժամերի հաշուին, իսկ Աշնանն ու Ձմռանը գիշերային ժամերն են երկարել ցերեկային ժամերի հաշուին (*հայկական ժամադրութիւնների նման*): Այսինքն հայկական արեւային ժամացոյցով ժամը 60 րոպէ հաշուելու պարագան գործել է միայն գիշերահաւասարի օրերում: Այս տեսանկիւնից էլ, ստորեւ բերւած աղիւսակը իրական կարող է լինել միայն գիշերահաւասարի օրերի համար:

Սոյն համակարգը ոչ թէ կամայական ու հակագիտական է, ինչպէս պիտի մտածեն շատերը, այլ ընդհակառակը, առաւել գիտական է քան մեր օգտագործած արհեստական ու մեքենայական ժամակարգը: Քանզի ցերեկուայ եւ գիշերուայ իւրաքանչիւր պահին երկիրն ու էակները ստանում են տիեզերական էներգիայի մի առանձնայատուկ տեսականի, որոշակի քանակով: Հայկական արեւային ժամացոյցն իր երկարացող ու կարճացող ժամերով մատնանշում է տարբեր որակի տիեզերական էներգիաների ընդունման սահմանները տարբեր եղանակներում: Հայոց ժամանուններում պէտք է որոնել ահա այդ խորհուրդները:

Գիշերը՝ երբ չկայ արեւ եւ չի գործում արեւային ժամացոյցը, հայերս կողմնորոշուել ենք լուսատուներով (*յիշեցէք մեր առեւտրական-ճանապարհորդների*): Հնարաւոր է, որ այդ գիտութիւնը աւանդուած լինի մատենադարանի մատեաններում, սակայն անձնապէս անտեղեակ ենք:

Ժամանունների հերթականութիւնը պահպանել ենք ըստ

աւանդուած տուեալների: Բայց թէ ո՞ր անունը ի՞նչ ժամ է ներկայացնում ներկայ ըմբռնումով՝ տրուած չէ մատենագրութեամբ: Դա կարողացել ենք ճշդել «Այգ» եւ «Ծայգ» բառերի ստուգաբանութեամբ, էզոթերիկ եւ բնագիտական որոշ օրինաչափութիւնների հետ զուգորդումներով:

Որեւէ անհատ երբ գիշերը պառկում է քնելու, նրա եթերային լուսապսակ-աուրան լքում է մարմինն ու ճանապարհուում տիեզերական շրջագայութեան, որի ընթացքում հանդիպումներ է ունենում այլ անձանց հոգիների հետ, իմանում է մօտ օրերին իրեն պատահելիք դէպքերը, կամ իրեն յուզող երեւոյթների բացատրութիւնները, եւայլն: Այնուհետեւ նա (*եթերային լուսապսակը*), ցանկութեան դէպքում կարող է վերադառնալ իր մարմնին ու անձը պատրաստ է արթնանալու երազներով ծանրաբեռնուած. հակառակ դէպքում անձը կը մահանայ:

Ըստ Զնդկական հոգեւոր գիտութիւնների, ոչ հիւանդ բայց մահամերձ մարդը եթէ չքնի մինչեւ առաւօտեան ժամը 4-ը՝ ապա նա չի մեռնի օրուայ ընթացքում քնելիս, քանի որ ցերեկ ժամանակ եթերային լուսապսակը չի լքի մարմինը: Երեւոյթը չի վերաբերում արկածահարներին:

Օրուայ նոյն ժամին տեղի է ունենում մի այլ կարեւոր իրադարձութիւն եւս: Մայրական արգանդում զարգացող սաղմը չունի իր ինքնուրոյն լուսապսակ-աուրան: Նա մայրական լուսապսակի հովանու տակ է: Սակայն կեանքի կոչուած սաղմը ծնուելուց մի ժամ առաջ կը ստանայ Աստուածատուր անհատական լուսապսակը: Այդ ընթացքում կ'ընտելանայ դրան, որպէսզի յաջորդ ժամին լոյս աշխարհ գայ: Սոյն երեւոյթները առնչուում են Այգ եւ Ծայգ ժամերին:

Ըստ Աղաեանի (*Նոյն, էջ 83*), «Գարնանային գիշերահավասարի օրը արեւածագը լինում է ժ. 6.37-ին, մայրամուտը՝ 18.40-ին, աշնանային գիշերահավասարի օրը՝ արեւածագը լինում է ժ. 7.21-ին, մայրամուտը՝ 19.20-ին»:

Սոյն տուեալներն հիմք ընդունելով կազմել ենք հայկական ժամանունների դասակարգումը, որտեղ «Զօրացեալ» ժամը կը լինի ներկայիս ըմբռնումով «արեւածագը», իսկ «Մթացեալ» ժամը կը համապատասխանի «մայրամուտին», այսպէս.

Գարնանային Ցերեկային ժամեր	
1. Այգ	- ժամը 4:37-ից 5:36-ը:
2. Ծայգ	- ժամը 5:37-ից 6:36-ը:
3. Զօրացեալ	- ժամը 6:37-ից 7:36-ը:
4. Գառագայթեալ	- ժամը 7:37-ից 8:36-ը:
5. Շառաւիղեալ	- ժամը 8:37-ից 9:36-ը:
6. Երկրատես	- ժամը 9:37-ից 10:36-ը:
7. Շանթակող	- ժամը 10:37-ից 11:36-ը:
8. Հրակաթ	- ժամը 11:37-ից 12:36-ը:
9. Հուրփայլեալ	- ժամը 12:37-ից 13:36-ը:
10. Թաղանթեալ	- ժամը 13:37-ից 14:36-ը:
11. Արագոտ	- ժամը 14:37-ից 15:36-ը:
12. Արփող	- ժամը 15:37-ից 16:36-ը:

Գարնանային Գիշերային ժամեր	
14. Աղջամուղջ	- ժամը 17:37-ից 18:36-ը:
15. Մթացեալ	- ժամը 18:37-ից 19:36-ը:
16. Շաղաւօտ	- ժամը 19:37-ից 20:36-ը:
17. Կամաւոտ	- ժամը 20:37-ից 21:36-ը:
18. Բաւական	- ժամը 21:37-ից 22:36-ը:
19. Խօթափեալ	- ժամը 22:37-ից 23:36-ը:
20. Գիգակ	- ժամը 23:37-ից 24:36-ը:
21. Լուսակն	- ժամը 24:37-ից 1:36-ը:
22. Առաւօտ	- ժամը 1:37-ից 2:36-ը:
23. Լուսափայլ	- ժամը 2:37-ից 3:36-ը:
24. Փայլածու	- ժամը 3:37-ից 4:36-ը:

Գարնանային ու Աշնանային ժամերի անցումը տեղի է ունեցել գիշերահաւասարներին:

**Ցերեկային ժամեր**

1.«Այգ»-ը տառացիօրէն նշանակում է «արելի լուսապսակ գոյի գլխին», ինչից հետեւում է, որ ծնունելիք գոյերը Աստուածատուր լուսապսակ-աուրան ստանում են, կամ քնածների եթերային լուսապսակը վերադառնում է նրանց գլխին հենց Այգ ժամին:

Գարնանային գիշերահաւասարի օրում «Այգ»-ը համապատասխանում է ժ. 4:37-ից 5:36-ը, իսկ Աշնանային գիշերահաւասարի օրում՝ 5:37-ից 6:36-ը: Զուգահեռ է Արեգ ամսուան:

2.«Ծայգ» (աւանդուած է նաեւ «Ծագեալ»)  
 Բառի առաջին «Ծ» տառը մատնանշում է «ծնունդը»: Բառն

իր անբողջութեամբ սուր բովանդակութիւնը «ծնունդ արեւի լուսապսակ ստացած գոյի» իմաստը, այսինքն վերածնութեան (արթնացման) կամ ծննդեան ժամն է:

Մանկաբարձ բժիշկների տուեալներով, ծնունդների մեծամասնութիւնը պատահում են հենց ժամը 5-ի եւ 6-ի սահմաններում:

Սոյն ժամին արեւի լոյսի ծնունդն է տեղի ունենում, լոյսը երեւելի է դառնում:

Զուգահեռ է Արեգ ամսուան:

Այնուհետեւ միւս ժամերի անուններից մեծ մասը որոշ չափով ընկալելի են իրենց իմաստներով, ու համապատասխանում են իրենց դիրքին: Փորձենք վերլուծել մի քանիսը: Ժամերը տուել ենք Գարնանային գիշերահաւասարի դրութեամբ

3. Զօրացեալ (աւանդուած է նաեւ «Զայրացեալ» կամ «Ծայրացեալ»)

Ժամը 6:37-ից 7:36-ն է: Զուգահեռ է Ահեկան ամսուան:

Բառը ինքն է յուշում, որ նախորդ ժամին նոր-նոր երեւելի դարձող լոյսը սկսում է զօրանալ, իսկ խաւարը նահանջում է:

4. Ճառագայթեալ

Ժամը 7:37-ից 8:36-ն է: Զուգահեռ է Ահեկան ամսուան:

Լոյսի հետ մեկտեղ երեւի են դառնում արեւի առաջին ճառագայթները:

5. Շառաւիղեալ (աւանդուած է նաեւ «Շառաւելեալ»)

Ժամը 8:37-ից 9:36-ն է: Զուգահեռ է Մարերի ամսուան:

Արեւի ճառագայթների սփռման ու ծաւալման ժամն է:

6. Երկրատես

Ժամը 9:37-ից 10:36-ն է: Զուգահեռ է Մարերի ամսուան:

Երկրի արեւին հանդիպակաց կէտը անբողջովին ողողում է արեւի ճառագայթներով:

7. Շանթակողն (աւանդուած է նաեւ «Շանթակալ» ու «Շանթակող»)

Ժամը 10:37-ից 11:36-ն է: Զուգահեռ է Մարգաց ամսուան:

Փորձենք մեկնել բառը:

«Կայծակ»-ն ու «շանթ»-ը ներկայիս նոյնիմաստ ենք ըմբռնում, մինչդէռ տարբերութիւն պէտք է ունենան: Ակնյայտ է, որ «կայծակ»-ը երկրի մթնոլորտի եւ ամպերի պտուղն է, իսկ

«շանթ»-ը՝ մեր կարծիքով, արեւի ճառագայթունը պետք է լինի: «Շան=անգլ. sun=արեւ», «թ»-ն թիւն է, ճառագայթը, ուստի «շանթ=արեւի թիւը»=«արեւի ճառագայթը»: Այս դէպքում «շանթահարուել»-ը պիտի նշանակի «արեւահարուել»: «Արեւահարուել»-ը ճշգրիտ չի տալիս պատկերը – ուղիղ իմաստով արեւը չէ խփողը, այլ նրա ճառագայթը, մինչդեռ «շանթահարուել»-ը առաւել յստակ է պատկերում եղածը:

Եթէ ընդունենք այս տեսակէտը, ապա «Շանթակողն»-ը կ'ունենայ լիարժէք բացատրութիւն, այն է՝ «Շանթ-թակողն», «արեւի թակող ճառագայթներ»-ի ժամը, «արեւահարող» ժամը:

#### 8. Զրակաթ

Ժամը 11:37-ից 12:36-ն է: Զուգահեռ է Մարգաց ամսուան: Բառը բաղադրուած է «հուր» եւ «կաթիլ» արմատներից: Մի գուցէ նախորդ ժամից առաւել ուժեղ եւ ընդհանրական ճառագայթուն է տեղի ունենում:

«Զրակաթ»-ը հաւասարազօր է «Զրատ»-«Mars»-ին, եւ մի գուցէ նրա իշխանութեան ժամը պետք է լինի սա, թէւ ցերեկ է:

9. Զուրփայլեալ (աւանդուած է նաեւ «Զուր թափեալ» եւ «Զուր կաթեալ»)

Ժամը 12:37-ից 13:36-ն է: Զուգահեռ է Զրոտից ամսուան:

Զուգահեռ «Զրոտից» ամսանունը բացայայտում է «Զուրփայլեալ» ժամին կատարելու գործողութիւնը, քանզի «Զրոտից»-«Զուր-ուտից»-ի «հուր»-ը սնունդ է նշանակում, ուստի եւ ճաշի ժամն է:

10. Թաղաթեալ (աւանդուած է նաեւ «Թաղանթեալ» եւ «Թաղաթափեալ»)

Ժամը 13:37-ից 14:36-ն է: Զուգահեռ է Զրոտից ամսուան:

«Թաղ»-ը ինքնին նշանակում է թաղիքեայ «թագ», որը կրում են հոգեւոր հայրերից քահանաները: Սրանից ելնելով, կարելի է համարել, որ այս ժամին արեւը թագաւորում է երկնականարում, այսինքն իր բարձրակէտին է հասել:

Զնարաւոր է, որ ճաշից յետոյ աշխատաւոր մարդու հանգըստեան ժամն է, այն էլ «թաղ»-ժածկի տակ:

11. Արագոտ (աւանդուած է նաեւ «Առաղոտ», «Առաւար», «Տարափ»)

Ժամը 14:37-ից 15:36-ն է: Զուգահեռ է Նաւասարդ ամսուան:

Մեր կարծիքով անուանումներից ամենադիպուկը «Առա-  
ղոտ»-ն է, միայն թե «Առաղօտ» ուղղագրութեամբ: Քանզի արելը  
մեր գլխաւերելում է եւ ստանում ենք նրա ստորին լոյսը, ինչը  
արտայայտուած է «առ»-ով, իսկ «աղօտ»-ը նշանակում է «սուր»,  
այլապէս՝ ուղղահայեաց, այսինքն արելի «ստորին սուր-ուղ-  
ղահայեաց լոյս»-ն է հասնում մեզ:

«Տարափ»-ը բացայայտում է այդ լոյսի «հարուածող»  
յայտկանիշը:

12.Արփող (աւանդուած է նաեւ «Տարփող»)

Ժամը 15:37-ից 16:36-ն է: Ձուգահեռ է Նաւասարդ ամսուան:

Գիշերային ժամեր

13.Խաւարակ (աւանդուած է նաեւ «Գիշերակ»)

Ժամը 16:37-ից 17:36-ն է: Ձուգահեռ է Հոռի ամսուան:

Երկու անուններն էլ խօսում են խաւարի կամ գիշերուան  
ակի մասին, ինչը լուսինն է: Ըստ երեւոյթին՝ հորիզոնում լուսնի  
երեւալու պահն է:

14.Աղջամուղջ (աւանդուած է նաեւ «Աղջամղջակ»)

Ժամը 17:37-ից 18:36-ն է: Ձուգահեռ է Հոռի ամսուան:

15.Մթացեալ (աւանդուած է նաեւ «Բաւանդակ»)

Ժամը 18:37-ից 19:36-ն է: Ձուգահեռ է Սահմի ամսուան:

«Մթացեալ»-ը առնչում է երկրի մթնոլորտին: Իսկ «Բա-  
ւանդակ»-ը բաղադրուած է «բաւ-անդ-ակ» արմատներից, որ-  
տեղ ակը մի դէպքում արելն է, եւ նրա ինքնամփոփման (*բաւ-  
բար-դուռ, նայել «Բաւական» ժամի բացատրութեան մէջ*)  
աւարտն է (անդ=անգլ. end=աւարտ), այսինքն «արելանուտ»-ի  
ժամն է: Երկրորդ դէպքում «ակ»-ը մարդ անհատն է, որը այդ ժա-  
մին «անդ»-ից, դաշտից, աշխատավարից պէտք է վերադառնայ  
ու ամփոփուի տանը: Աշխատանքն աւարտելու ժամն է:

Ձուգահեռ «Սահմի» ամսանունը նոյնպէս բովանդակում է  
«սահման»-ն ու սահմանուելու գաղափարը:

16.Շաղաւօտ (աւանդուած է նաեւ «Խուժակ»)

Ժամը 19:37-ից 20:36-ն է: Ձուգահեռ է Սահմի ամսուան:

Այս պարագայում զուգահեռ «Սահմի»-ն «իւղուելու», սըն-  
ւելու գաղափարն է յուշում, որը առկայ է «Շաղաւօտ»-ի «աղ»-ի  
մէջ, սակայն «շ»-ն ցոյց է տալիս որ հոգեւոր սնունդի պահն է եւ



ոչ ուտելու: Այս պարագան կարող են ճշդել ազգագրագետները, թէ ե՞րբ են ընտանիքներում «կարդացել» ասքերը, աւանդապատումները եւայլն:

17. Կամաւօտ (աւանդուած է նաեւ «Չամառօտ»)

Ժամը 20:37-ից 21:36-ն է: Ձուգահեռ է Տրէ ամսուան:

18. Բաւական (աւանդուած է նաեւ «Կատաղատես»)

Ժամը 21:37-ից 22:36-ն է: Ձուգահեռ է Տրէ ամսուան:

«Բաւական»-ը ներկայիս էլ օգտագործուում է որպէս անձնանուն, ինչը հասկանում ենք «բաւարար», երբ ծնողները այլեւս չեն ցանկանում զաւակ ունենալ: Նոյնպիսին է նաեւ «Չերիք» անձնանունը: Արանով հանդերձ, բառի մէջ կայ այլ կիրառական խորք: «Բաւ» արմատը արաբերէն է տառադարձուում «բար» եւ նշանակում է «դուռ»: Իսկ «ակ»-ը պարիսպն է: Ունեցանք «պարըսպին դուռ»: Այսինքն պարսպի դուռը կամ դարպասը փակելու ժամը կոչուել է «Բաւական»:

«Ակ»-ը ի հարկէ նաեւ մի ամբողջական ինքնուրոյն միաւոր է, անձ է: Անձի դուռը աչքն է, որը փակելու եւ բուն մտնելու ժամը «Բաւական» է կոչուել: (Կարծում ենք, որ անգլ. «բայ-բայ»-«ցտեսութիւն»-ը, ռուս. բայուբայ-օրորոցայինը «բաւ»-ից են առաջացել եւ ունեցել են նոյն խորհուրդը):

«Բաւական»-ի «Կատաղատես» զոյգը պիտի աստղագիտական բովանդակութիւն ունենայ: Կարծում ենք, որ «կատաղ»-ը անգլ. «cattle=արջառ» բառն է, ինչը կարող է օգտագործուած լինել «կենդանակերպ» իմաստով, եւ «կատաղատես»-ը տուեալ ամսուան կենդանակերպի տեսանելի դառնալու ժամը կարող է լինել:

19. Խօթափեալ (աւանդուած է նաեւ «Չաւթափեալ»)

Ժամը 22:37-ից 23:36-ն է: Ձուգահեռ է Քաղոց ամսուան:

«Խօթափեալ»-ը ճիշդ կը լինէր «խաւթափեալ» կարդալ: Խաւարի թափուելու-հորդելու ժամն է, այլապէս այս ժամին խաւարը ծածկում է անէն ինչ:

Իսկ «Չաւթափեալ» տարբերակում «հաւ»-ը որպէս «սերմ» փոխարինում է «աստղ» բառին, հետեւաբար «Չաւթափեալ»-ը երկինքի աստղերով ծածկուելու ժամը կարելի է համարել: Սա արդիւնք է նախորդ ժամին երկնքի ամբողջական խաւարապատմանը:

Ջուզահեռ «Քաղոց» ամսանուան «աղ»-ը այստեղ երկնային «բացասական» լոյս է նշանակում, ինչը մեզ է հասնում լուսնից ու աստղերից:

20.Գիզակ (աւանդուած է նաեւ «Գիջակ», «Դազակ»)

Ժամը 23:37-ից 24:36-ն է: Ջուզահեռ է Քաղոց ամսուան:

Թէեւ մենք առաջարկել ենք «Գիսակ» ուղղագրութիւնը, սակայն «Գիզակ»-ը եւս իր բովանդակութեամբ չի հեռանում «Գիսակ»-ից:

«Գիզակ»-ը կազմուած է «գիզ» եւ «ակ» արմատներից, որտեղ «գիզ»-ը տառացիօրէն նշանակում է «գոյի գլխի իմաստութեան զօրութիւն», հետեւաբար «Գիզակ» ժամին գործունէնք միտքն ու ուղեղը պայծառացնող ակի հետ:

Ըստ մեր երկրորդ յօդուածի՝ այդ ակը առաջին հերթին Արուսեակ մոլորակն է (*Լուսաբեր-Venus-Venera*) եւ նրա գիշերային իշխանութեան պահը պէտք է համընկնի այս ժամի հետ:

21.Լուսակն (աւանդուած է նաեւ «Լուսածեն», «Լուսագայ»)

Ժամը 0:37-ից 1:36-ն է: Ջուզահեռն է Արաց ամիսը:

Ենթադրում ենք, որ «Լուսակն»-ը լուսինը պէտք է լինի ու այս ժամը նրա իշխանութեան պահն է:

22.Առաւօտ (աւանդուած է նաեւ «Փողահար»)

Նոր օրուան երկրորդ ժամը «Առաւօտ»-ն է, կէս-գիշերուան ժամը 1:37-ից 2:36-ը: Դա առածգական հասկացողութիւն չէ, ինչպէս ընդունուած է այսօր «առաւօտ» ասելիս: Ջուզահեռ է Արաց ամսին:

23.Լուսափայլ (աւանդուած է նաեւ «Յետագօտ»)

Ժամը 2:37-ից 3:36-ն է: Ջուզահեռ է Մեհեկան ամսուան:

24.Փայլածու (աւանդուած է նաեւ «Փայլածունն», «Կաքաւող»)

Ժամը 3:37-ից 4:36-ն է: Ջուզահեռ է Մեհեկան ամսուան:

Ջուզահեռ «Մեհեկան»-ը «ջրիոս»-«երկնային ջրերի հոսք»-ի ամիսն է, երբ «երկնային ջուր»-ը մտաւոր էներգիան է, ուստի «Փայլածու»-ն ուղեղի պայծառացման (*վերակենդանացման*) ժամն է:

Փայլածուն «Mercury» մոլորակն է, եւ նրա իշխանութեան ժամն է այս:

29. Տօմար եւ Ախթարք բառերի բովանդակութեան տարբերութիւնը. նրանց ստուգաբանութիւնը «Տօմար»-ը «տոմար» ձեւում առաջին հայեացքից «տոմ» արմատից է, որի դիմաց Աճառեանն գրում է. «Գրքի հատոր, որից կազմուած են 'տոմքն', 'տոմի', 'տոմիւ', 'տոմն' հոլովական ձեւերը»: Ըստ նրա՝ բառն առաջացել է յուն. «տոմոս=1.պապիրուսի կամ մագաղաթի կտոր, 2.գրքի հատոր, որը յուն. 'տեմնէ=կտրել' բայից է, կտոր՝ իմաստով: Ֆր. Tome, ռուս. 'տոմ' = հատոր, լատ. tomos, ասոր. Tu~msa»:

Այս տուեալներից նա բխեցրել է «տոմար=մի հատոր գիրք, մի գրքի բաժանումները»:

Բայց նրա բերած մատենագրական աղբիւրների տուեալներով՝ «տոմար=գրուածք, օրագրութիւն, թուական, ժամանակագրութիւն»:

Աճառեանն յիշատակել է սոյն բառի աւանդուած այլ ուղղագրական ձեւերը. «տօմար, տաւմար», որոնք՝ ըստ իրեն, «յետին ուղղագրութեամբ» են, իսկ «տումար»-ը «արաբ. ձեւից» է:

Բարբառային ձեւերում նա յիշատակում է Ասլ. «դամար=տօմար», Դճ. «դօմայ=երազահան»:

Քննարկում.-

Մեր կարծիքով, բառը կառուցուած պէտք է լինի «տաւմ+ար» կամ «տում+ար» հատուածներից, աւելի ստոյգ՝ «տաւ-ամ-ար» կամ «տու-ամ-ար» արմատներից:

«Տաւ»-ը եւ «տով» հնչող «տու»-ն միախորհուրդ են, այն տարբերութեամբ, որ առաջինը արական բնոյթի է, իսկ երկրորդը՝ իգական: «Տու»-ն համազօր է անգլ. two-ին (*երկուս*), այսինքն դա իգական բնոյթի «երկուս»-ն է, այլապէս՝ իգական բնոյթի ամուսնական զոյգը. մինչդէռ «տաւ»-ը արական բնոյթի ամուսնական զոյգն է: Նշենք որ «տով» հնչող «տու»-ից է առաջացել Աճառեանի յիշատակած «տովմար»-ը:

Ամուսնական այս զոյգից ծնուելու է զաւակը: «Մ»-ն «մոլորակ» է, «մասնիկ» է, որը «տաւ-մ»-ում կամ «տու-մ» -ում ծնողների շուրջ պտտուող նրանց մասնիկն է, «զաւակն» է: Եթէ զաւակը արու է՝ ապա ունենք «տաւմար», իսկ եթէ էգ է՝ ունենք «տումար»:

Այս բոլորը խօսում են սերնդաբանութեան, ժամանա-

գրութեան եւ դարաւոր պատմութեան հետ «տօմար»-«տու-  
ր»-ի ունեցած առնչութեան մասին:

«Տում» արմատի «ւ»-ը եթէ փոխարինենք դրա զոյգ «ի»-  
կը ստանանք «տոհմ» բառը (*մայրշխանական համակարգ*),  
ը մի ընտանիքի ժառանգորդների հաւաքականութիւնն է:  
Վանից հետեւում է, որ անցեալում ունեցել ենք նաեւ «տահմ»  
բառը, որը խօսում է «հայրիշխանական» տոհմի մասին:  
*Նամենատել ռուս. «դոմ=տուն», թրք. «թիւմ=ամբողջ», արաբ.  
դաուււմ= շարունակականութիւն» եւ «տաուււմ=երկուորեակ,  
ոյգ» բառերի հետ):*

Լինելով հայրիշխանական համակարգը դաւանաող ազգ,  
ենք առաջարկում ենք օգտագործել ուղղագրական «տօմար»  
եւը, նաեւ տօմարն հաշուել ոչ թէ Աշունից, այլ Գարունից,  
այլապէս «տարուց» եւ ոչ թէ «ամիից»:

Ինչ վերաբերում է տօմարի եւ լուսատուների առնչու-  
թեանը, ապա պէտք է նկատի ունենալ, որ լուսատուներն էլ  
ծնւում են, գործում ու ծննդաբերում, ու ապա մեռնում, սակայն  
ոչ մեր ժամանակային ու որակական չափանիշերով: Ենթադրում  
ենք, որ սոյն տարբերութեան պատճառով էլ դրանց սերնդագոր-  
ծութեան ու լուսատուութեան ժամանակաչափը պիտի կոչուէր  
«դաւմար (*դօմար*) ու «դումար»: Քանզի «դաւ»-ը նշանակում է  
«լոյս», ինչպէս «դաւանանք» բառում («*դաւանել*» նշանակում է  
Աստուածային լոյս անել: Անգլ. «*dawn=արեւագալ*» կամ «արշա-  
լոյս», որը *հայ. նոյն «դաւան»* բառն է: «*Դաւադրել*» նշանակում  
է Աստուածային լոյսը – իմաստութիւնը, գիտելիքները, օրէնք-  
ները - մի կողմ դնել, անտեսել, ուստի եւ չարանալ: Արաբերէ-  
նում «դաւ»-ը հնչում է «դաու» եւ նշանակում է լոյս: Իսկ  
«դաոիզմ»-ը լոյսի ուսմունք կարելի է համարել: Անգլերէնում  
«դաւ»-ի «ւ»-ն փոխարինուել է «յ»-ով եւ բառը վերածուել  
«դայ»-«*day*»-ցերեկի, ինչը գլխաւոր լուսատու արեւի իշխա-  
նութեան պահն է.):

Այս ամէնը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ «դաւ»-ը  
եղել է նաեւ տիեզերական լոյսի արագութեան չափման միաւոր  
(*լուսային տարի!*):

Բայց հայկական իրականութեան մէջ «դաւմար»-ի փո-  
խարէն ունեցել ենք «Ախթարք»-ը: Ինչո՞ւ:

Երկրորդ յօդուածում քննարկեցինք «Ջաւախք» տեղանունը, եւ ասացինք թէ «ախ»-ը որեւէ էութեան կենտրոնն է, սիրտն է, իսկ տիեզերքի պարագայում արեւն է:

Աճառեանի արմատ. բառարանում հանդիպում ենք «ախ» արմատով մի շարք հայերէն բառերի, որոնց մեծ մասը չեն ստուգաբանուած ու մեկնուած: Ծանօթանանք մի օրինակի:

«Կրտսեր ինչ չեն մեր իրքս, այլ անդուստ ի վերուստ մատակարարեալք եւ ախանկեալք»:

Աճառեանն «ախանկեալ»-ը բացատրել է «հաստատուած, տնօրինուած»:

Մեր թարգմ. «Մեր իմաստութեան մասերն ու սերմերը (*իրքս*) փոքրագոյն չեն, այլ այնտեղից, վերելից են մատակարարուած եւ արելից իջած»: Այստեղ «ախ»-ը արեւն է:

Երկրորդ յատկանշական բառն է «ախերակ»-ը, որից «յախերկան»-ը Ագաթանգեղոսի մօտ, այսպէս.

«Յախերկան կոտորել զանասունս իւրեանց ի զոս ծենճերոյն»:

Մեր թարգմ. «Իրենց անասունների միջից՝ այրուելիք (*հասկանալ «խորովուելիք»*) զոհերը նրանք սպանում էին արեան շրջանառութեան սրտի՝ երակից»:

«Ախերակ»-ը պարզապէս «սրտերակ» է: («յախ»=սրտի լուսապսակ=արեան շրջանառութեան համարկարգ: «Յախերակ»=արեան շրջանառութեան համակարգում կենտրոնական-գլխաւոր երակ):

Այս օրինակները հաւելեալ ապացոյց են, թէ «ախ»-ը սիրտն է եւ արեւն է:

Մեր լեզուի բազմաթիւ բառերի հիմքում արեւն է եղել չափանիշը: Չետեւաբար ժամանակաչափութեան ու լուսատուների քննման եւ դասակարգման հիմնական միաւորն ու ուղղենիշը նոյնպէս եղել է արելը:


«Ախթարք»-ի արմատներն են «ախթ» եւ «արք», որտեղ (*եւ ընդհանրապէս*) «թ»-ն «թիւ»-ն է եւ «գործող միաւորը»: «Ախթ»-ը «արելի թիւ»-ն է, նրա գործող միաւորը՝ ճառագայթը: «Ար»-ը «արելի թոպէն» է եւ «արելի մասնիկ»-ը: Ուստի «Ախթարք»-ը արելի լոյսի ապա եւ արելի երեւալու, լուսաւորելու եւ արարելու մասին գիտութիւնն է առաջին հերթին: Երկրորդ, «ախ»-ը

տառացիորեն «վերին խաչ»-երի, լուսատուների երեւալու, լուսաւորելու եւ արարելու մասին գիտելիքն է: Երրորդ, «ախ»-ը ապրող էութիւնների սիրտն է, իսկ «թ»-թիւը դրանց սրտի տրոփիւնն է, գործունէութիւնն ու արարչութիւնը:

Այսպիսով «Ախթարք»-ի մէջ միաւորուած են թէ՛ արելը, թէ՛ լուսատուները եւ թէ՛ շնչաւոր էակները, նրանց շարժումներն ու փոխազդեցութիւնները: Այդ բոլորի մասին գիտութիւնը կոչուել է Ախթարք:

## ՀԱՅԿԵԱՆ ՄՐԲԱԶԱՆ ԱՆՇԱՐԺ ՏՕՄԱՐԸ (մեր մտապատկերով)

Համադրությամբ ասիթարք-կենդանակերպի,  
փարուան չորս եղանակների,  
աշխարհագրական չորս ուղղությունների,  
չորս փարերքների, արեւի գերիշխող ճառագայթի,  
երկրաչափական x-y առանցքների, ժամերի դիրքի  
և հայկական աւանդական փօների հետ:



\* «/» նշանով բաժանուած թուականներից առաջինը սովորական տարում է, երկրորդը՝ նահանջ:  
«Էլեկտրա-մագնիսական դաշտում a- ճառագայթները շեղոււմ են դէպի բացասական դաշտ, b- ճառագայթները՝ դէպի դրական դաշտ. իսկ g- ճառագայթները չեն շեղոււմ» (Ս. Գրիգորյան, «Ընդհանուր Քիմիա» ուսումնական ձեռնարկ, «Ձանգակ-97» հրատ., Երեւան-2002, էջ 9):

## ԱՂԻՒՍԱԿ

Թուական - Աւելցուկ		Թուական - Աւելցուկ		Թուական - Աւելցուկ		Թուական - Աւելցուկ	
0 ք. (նշ.)	65472վ.	56 ք. (նշ.)	16704վ.	112 ք. (նշ.)	54336վ.	168 ք. (նշ.)	5568վ.
1 ք.	44544վ.	57 ք.	-4224վ.	113 ք.	33408վ.	169 ք.	-15360վ.
2 ք.	23616վ.	58 ք.	-25152վ.	114 ք.	12480վ.	170 ք.	-36288վ.
3 ք.	2688վ.	59 ք.	-46080վ.	115 ք.	-8448վ.	171 ք.	-57216վ.
4 ք. (նշ.)	68160վ.	60 ք. (նշ.)	19392վ.	116 ք. (նշ.)	57024վ.	172 ք. (նշ.)	8256վ.
5 ք.	47232վ.	61 ք.	-1536վ.	117 ք.	36096վ.	173 ք.	-12672վ.
6 ք.	26304վ.	62 ք.	-22464վ.	118 ք.	15168վ.	174 ք.	-33600վ.
7 ք.	5376վ.	63 ք.	-43392վ.	119 ք.	-5760վ.	175 ք.	-54528վ.
8 ք. (նշ.)	70848վ.	64 ք. (նշ.)	22080վ.	120 ք. (նշ.)	59712վ.	176 ք. (նշ.)	10944վ.
9 ք.	49920վ.	65 ք.	1152վ.	121 ք.	38784վ.	177 ք.	9984վ.
10 ք.	28992վ.	66 ք.	-19776վ.	122 ք.	17856վ.	178 ք.	-30912վ.
11 ք.	8064վ.	67 ք.	-40704վ.	123 ք.	-3072վ.	179 ք.	-51840վ.
12 ք. (նշ.)	73536վ.	68 ք. (նշ.)	24768վ.	124 ք. (նշ.)	62400վ.	180 ք. (նշ.)	13632վ.
13 ք.	52608վ.	69 ք.	3840վ.	125 ք.	41472վ.	181 ք.	-7296վ.
14 ք.	31680վ.	70 ք.	-17088վ.	126 ք.	20544վ.	182 ք.	-28224վ.
15 ք.	10752վ.	71 ք.	-38016վ.	127 ք.	-384վ.	183 ք.	-49152վ.
16 ք. (նշ.)	76224վ.	72 ք. (նշ.)	27456վ.	128 ք. (նշ.)	65088վ.	184 ք. (նշ.)	16320վ.
17 ք.	55296վ.	73 ք.	6528վ.	129 ք.	44160վ.	185 ք.	-4608վ.
18 ք.	34368վ.	74 ք.	-14400վ.	130 ք.	23232վ.	186 ք.	-25536վ.
19 ք.	13440վ.	75 ք.	-35328վ.	131 ք.	2304վ.	187 ք.	-46464վ.
20 ք. (նշ.)	78912վ.	76 ք. (նշ.)	30144վ.	132 ք. (նշ.)	67776վ.	188 ք. (նշ.)	19008վ.
21 ք.	57984վ.	77 ք.	9216վ.	133 ք.	46848վ.	189 ք.	-1920վ.
22 ք.	37056վ.	78 ք.	-11712վ.	134 ք.	25920վ.	190 ք.	-22848վ.
23 ք.	16128վ.	79 ք.	-32640վ.	135 ք.	4992վ.	191 ք.	-43776վ.
24 ք. (նշ.)	81600վ.	80 ք. (նշ.)	32832վ.	136 ք. (նշ.)	70464վ.	192 ք. (նշ.)	21696վ.
25 ք.	60672վ.	81 ք.	11904վ.	137 ք.	49536վ.	193 ք.	768վ.
26 ք.	39744վ.	82 ք.	-9024վ.	138 ք.	28608վ.	194 ք.	-20160վ.
27 ք.	18816վ.	83 ք.	-29952վ.	139 ք.	7680վ.	195 ք.	-41088վ.
28 ք. (նշ.)	84288վ.	84 ք. (նշ.)	35520վ.	140 ք. (նշ.)	73152վ.	196 ք. (նշ.)	24384վ.
29 ք.	63360վ.	85 ք.	14592վ.	141 ք.	52224վ.	197 ք.	3456վ.
30 ք.	42432վ.	86 ք.	-6336վ.	142 ք.	31296վ.	198 ք.	-17472վ.
31 ք.	21504վ.	87 ք.	-27264վ.	143 ք.	10368վ.	199 ք.	-38400վ.
32 ք. (նշ. նշ.)	576վ.	88 ք. (նշ.)	38208վ.	144 ք. (նշ.)	75840վ.	200 ք. (նշ.)	27072վ.
33 ք.	-20352վ.	89 ք.	17280վ.	145 ք.	54912վ.	201 ք.	6144վ.
34 ք.	-41280վ.	90 ք.	-3648վ.	146 ք.	33984վ.	202 ք.	-14784վ.
35 ք.	-62208վ.	91 ք.	-24576վ.	147 ք.	13056վ.	203 ք.	-35712վ.
36 ք. (նշ.)	3264վ.	92 ք. (նշ.)	40896վ.	148 ք. (նշ.)	78528վ.	204 ք. (նշ.)	29760վ.
37 ք.	-17664վ.	93 ք.	19968վ.	149 ք.	57600վ.	205 ք.	8832վ.
38 ք.	-38592վ.	94 ք.	-960վ.	150 ք.	36672վ.	206 ք.	-12096վ.
39 ք.	-59520վ.	95 ք.	-21888վ.	151 ք.	15744վ.	207 ք.	-33024վ.
40 ք. (նշ.)	5952վ.	96 ք. (նշ.)	43584վ.	152 ք. (նշ.)	81216վ.	208 ք. (նշ.)	32448վ.
41 ք.	-14976վ.	97 ք.	22656վ.	153 ք.	60288վ.	209 ք.	11520վ.
42 ք.	-35904վ.	98 ք.	1728վ.	154 ք.	39360վ.	210 ք.	-9408վ.
43 ք.	-56832վ.	99 ք.	-19200վ.	155 ք.	18432վ.	211 ք.	-30336վ.
44 ք. (նշ.)	8640վ.	100 ք. (նշ.)	46272վ.	156 ք. (նշ.)	83904վ.	212 ք. (նշ.)	35136վ.
45 ք.	-12288վ.	101 ք.	25344վ.	157 ք.	62976վ.	213 ք.	14208վ.
46 ք.	-33216վ.	102 ք.	4416վ.	158 ք.	42048վ.	214 ք.	-6720վ.
47 ք.	-54144վ.	103 ք.	-16512վ.	159 ք.	21120վ.	215 ք.	-27648վ.
48 ք. (նշ.)	11328վ.	104 ք. (նշ.)	48960վ.	160 ք. (նշ. նշ.)	192վ.	216 ք. (նշ.)	37824վ.
49 ք.	-9600վ.	105 ք.	28032վ.	161 ք.	-20736վ.	217 ք.	16896վ.
50 ք.	-30528վ.	106 ք.	7104վ.	162 ք.	-41664վ.	218 ք.	-4032վ.
51 ք.	-51456վ.	107 ք.	-13824վ.	163 ք.	-62592վ.	219 ք.	-24960վ.
52 ք. (նշ.)	14016վ.	108 ք. (նշ.)	51648վ.	164 ք. (նշ.)	2880վ.	220 ք. (նշ.)	40512վ.
53 ք.	-6912վ.	109 ք.	30720վ.	165 ք.	-18048վ.	221 ք.	19584վ.
54 ք.	-27840վ.	110 ք.	9792վ.	166 ք.	-38976վ.	222 ք.	-1344վ.
55 ք.	-48768վ.	111 ք.	-11136վ.	167 ք.	-59904վ.	223 ք.	-22272վ.



<u>Թուական - Աւելում</u>		<u>Թուական - Աւելում</u>		<u>Թուական - Աւելում</u>		<u>Թուական - Աւելում</u>	
224 ք. (նգ.)	43200վ.	284 ք. (նգ.)	83520վ.	344 ք. (նգ.)	37440վ.	404 ք. (նգ.)	77760վ.
225 ք.	22272վ.	285 ք.	62592վ.	345 ք.	16512վ.	405 ք.	56832վ.
226 ք.	1344վ.	286 ք.	41664վ.	346 ք.	-4416վ.	406 ք.	35904վ.
227 ք.	-19584վ.	287 ք.	20736վ.	347 ք.	-25344վ.	407 ք.	14976վ.
228 ք. (նգ.)	45888վ.	288 ք. (նգ.)	86208վ.	348 ք. (նգ.)	40128վ.	408 ք. (նգ.)	80448վ.
229 ք.	24960վ.	289 ք.	65280վ.	349 ք.	19200վ.	409 ք.	59520վ.
230 ք.	4032վ.	290 ք.	44352վ.	350 ք.	-1728վ.	410 ք.	38592վ.
231 ք.	-16896վ.	291 ք.	23424վ.	351 ք.	-22656վ.	411 ք.	17664վ.
232 ք. (նգ.)	48576վ.	292 ք. (նգ. նգ.)	2496վ.	352 ք. (նգ.)	42816վ.	412 ք. (նգ.)	83136վ.
233 ք.	27648վ.	293 ք.	-18432վ.	353 ք.	21888վ.	413 ք.	62208վ.
234 ք.	6720վ.	294 ք.	-39360վ.	354 ք.	960վ.	414 ք.	41280վ.
235 ք.	-14208վ.	295 ք.	-60288վ.	355 ք.	-19968վ.	415 ք.	20352վ.
236 ք. (նգ.)	51264վ.	296 ք. (նգ.)	5184վ.	356 ք. (նգ.)	45504վ.	416 ք. (նգ.)	85824վ.
237 ք.	30336վ.	297 ք.	-15744վ.	357 ք.	24576վ.	417 ք.	64896վ.
238 ք.	9408վ.	298 ք.	-36672վ.	358 ք.	3648վ.	418 ք.	43968վ.
239 ք.	-11520վ.	299 ք.	-57600վ.	359 ք.	-17280վ.	419 ք.	23040վ.
240 ք. (նգ.)	53952վ.	300 ք. (նգ.)	7872վ.	360 ք. (նգ.)	48192վ.	420 ք. (նգ. նգ.)	2112վ.
241 ք.	33024վ.	301 ք.	-13056վ.	361 ք.	27264վ.	421 ք.	-18816վ.
242 ք.	12096վ.	302 ք.	-33984վ.	362 ք.	6336վ.	422 ք.	-39744վ.
243 ք.	-8832վ.	303 ք.	-54912վ.	363 ք.	-14592վ.	423 ք.	-60672վ.
244 ք. (նգ.)	56640վ.	304 ք. (նգ.)	10560վ.	364 ք. (նգ.)	50880վ.	424 ք. (նգ.)	4800վ.
245 ք.	35712վ.	305 ք.	-10368վ.	365 ք.	29952վ.	425 ք.	-16126վ.
246 ք.	14784վ.	306 ք.	-31296վ.	366 ք.	9024վ.	426 ք.	-37056վ.
247 ք.	-6144վ.	307 ք.	-52224վ.	367 ք.	-11904վ.	427 ք.	-57984վ.
248 ք. (նգ.)	59328վ.	308 ք. (նգ.)	13248վ.	368 ք. (նգ.)	53568վ.	428 ք. (նգ.)	7488վ.
249 ք.	38400վ.	309 ք.	-7680վ.	369 ք.	32640վ.	429 ք.	-13440վ.
250 ք.	17472վ.	310 ք.	-28608վ.	370 ք.	11712վ.	430 ք.	-34368վ.
251 ք.	-3456վ.	311 ք.	-49536վ.	371 ք.	-9216վ.	431 ք.	-55296վ.
252 ք. (նգ.)	62016վ.	312 ք. (նգ.)	15936վ.	372 ք. (նգ.)	56258վ.	432 ք. (նգ.)	10176վ.
253 ք.	41088վ.	313 ք.	-4992վ.	373 ք.	35328վ.	433 ք.	-10752վ.
254 ք.	20160վ.	314 ք.	-25920վ.	374 ք.	14400վ.	434 ք.	-31680վ.
255 ք.	-768վ.	315 ք.	-46848վ.	375 ք.	-6528վ.	435 ք.	-52608վ.
256 ք. (նգ.)	64704վ.	316 ք. (նգ.)	18624վ.	376 ք. (նգ.)	58944վ.	436 ք. (նգ.)	12864վ.
257 ք.	43776վ.	317 ք.	-2304վ.	377 ք.	38016վ.	437 ք.	-8064վ.
258 ք.	22848վ.	318 ք.	-23232վ.	378 ք.	17088վ.	438 ք.	-28992վ.
259 ք.	1920վ.	319 ք.	-44160վ.	379 ք.	-3840վ.	439 ք.	-49920վ.
260 ք. (նգ.)	67392վ.	320 ք. (նգ.)	21312վ.	380 ք. (նգ.)	61632վ.	440 ք. (նգ.)	15552վ.
261 ք.	46464վ.	321 ք.	384վ.	381 ք.	40704վ.	441 ք.	-5376վ.
262 ք.	25536վ.	322 ք.	-20544վ.	382 ք.	19776վ.	442 ք.	-26304վ.
263 ք.	4608վ.	323 ք.	-41472վ.	383 ք.	-1152վ.	443 ք.	-47232վ.
264 ք. (նգ.)	70080վ.	324 ք. (նգ.)	24000վ.	384 ք. (նգ.)	64320վ.	444 ք. (նգ.)	18240վ.
265 ք.	49152վ.	325 ք.	3072վ.	385 ք.	43392վ.	445 ք.	-2688վ.
266 ք.	28224վ.	326 ք.	-17856վ.	386 ք.	22464վ.	446 ք.	-23616վ.
267 ք.	7296վ.	327 ք.	-38784վ.	387 ք.	1536վ.	447 ք.	-44544վ.
268 ք. (նգ.)	72768վ.	328 ք. (նգ.)	26688վ.	388 ք. (նգ.)	67008վ.	448 ք. (նգ.)	20928վ.
269 ք.	51840վ.	329 ք.	5760վ.	389 ք.	46080վ.	449 ք.	0վ.
270 ք.	30912վ.	330 ք.	-15168վ.	390 ք.	25152վ.	450 ք.	-20928վ.
271 ք.	9984վ.	331 ք.	-36096վ.	391 ք.	4224վ.	451 ք.	-41856վ.
272 ք. (նգ.)	75456վ.	332 ք. (նգ.)	29376վ.	392 ք. (նգ.)	69696վ.	452 ք. (նգ.)	23616վ.
273 ք.	54528վ.	333 ք.	8448վ.	393 ք.	48768վ.	453 ք.	2688վ.
274 ք.	33600վ.	334 ք.	-12480վ.	394 ք.	27840վ.	454 ք.	-18240վ.
275 ք.	12672վ.	335 ք.	-33408վ.	395 ք.	6912վ.	455 ք.	-39168վ.
276 ք. (նգ.)	78144վ.	336 ք. (նգ.)	32064վ.	396 ք. (նգ.)	72384վ.	456 ք. (նգ.)	26304վ.
277 ք.	57216վ.	337 ք.	11136վ.	397 ք.	51456վ.	457 ք.	5376վ.
278 ք.	36288վ.	338 ք.	-9792վ.	398 ք.	30528վ.	458 ք.	-15552վ.
279 ք.	15360վ.	339 ք.	-30720վ.	399 ք.	9600վ.	459 ք.	-36480վ.
280 ք. (նգ.)	80832վ.	340 ք. (նգ.)	34752վ.	400 ք. (նգ.)	75072վ.	460 ք. (նգ.)	28992վ.
281 ք.	59904վ.	341 ք.	13824վ.	401 ք.	54144վ.	461 ք.	8064վ.
282 ք.	38976վ.	342 ք.	-7104վ.	402 ք.	33216վ.	462 ք.	-12864վ.
283 ք.	18048վ.	343 ք.	-28032վ.	403 ք.	12288վ.	463 ք.	-33792վ.

## ՅՕԴ-ՈՒՄԾ «5»

Ոչ միայն հացիւ՝ այլեւ  
ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ

*«Այն քարը՝ որ շինողները անարգեցին,  
անհկա անկինին գլուխը եղաւ»:  
Ա. Թուղթ Պեպրոսի, 1,2.*

Նրա «Յաճախապատում Գառք»-ը

Սօտաւորապէս 1600 տարի մեր գիտական միտքը ճիշդ չխընայելով հանդերձ, չի կարողացել վերծանել սուրբ Ս. Մաշտոցից մեզ հասած միակ երկը, որը գրել է իր կեանքի վերջալոյսին: Առաւել եւս՝ էջմիածնում երբ Խրիմեան Հայրիկի հովանաւորութեամբ 1894 թուականին այդ աշխատութեան քննական տրպագրութիւնն է իրականացուել գրաբարով, հրատարակիչը համոզուած է եղել, որ դա պէտք է լինէր ամէն մի հայի սեղանի գիրքը, ինչպէս Աստուածաշունչը: Սակայն 100 տարի անց, այս օրերում, հայ մարդը դրա գոյութիւնից անգամ անտեղեակ է: Կարելի է ասել, որ սա ամենամեծ եղեռնագործութիւնն է մեր ազգի ու մշակոյթի գլխին, այն ալ կարծէք թէ մեր իսկ ձեռքերով: Ինչո՞ւ: Որովհետեւ ինչպէս ժողովրդական ասացուածքն է ասում, «եթէ Աստուած ուզում է մէկին պատժել՝ առաջ նրա խելքն է առնում»: Քանզի դրա հետեւանքով մենք կտրուած ենք այսօր մեր մշակոյթի հիմնաքարից, եւ ապրում ենք դրա փշրանքներով միայն ու չենք կայանում որպէս լիարժէք ազգ, լիիրաւ պետականութիւն: Մենք կտրուել ենք մեր հոգեւոր եսից: Առանց հոգեւոր լիարժէքութեան գիտակցութեան՝ մարդը դառնում է գործիք, անասուն: Մեծաւ մասամբ հոգեւոր սնանկութեան պատճառով է որ հայ մարդը անվերադարձ թողնում է իր հայրենիքը, ոչ մի նպատակ ու իմաստ չգտնելով «Հայ» մնալու մէջ:

Սակայն կը համոզուէք շուտով, որ մենք ձեզ հետ միասին ունենք հսկայական ներուժ (սբ. Ս. Մաշտոց պիտի ասէր «իմաստութիւն»), որը քնած է մեր լեզուի շտեմարաններում: Պէտք է բանալ լեզուի դռները եւ օգտուել նրանից:

Դժուարութեամբ ձեռք բերելուց յետոյ Մաշտոցի «Յաճախապատում ճառք»-ը, կարդացի եւ համոզուեցի հրատարակչի խօսքին: Այնտեղ դրուած է մեզ հասած հոգեւոր աղերից իմաստնագոյնը: Այնտեղ բացայայտուած են կարեւորագոյն հարցեր, որոնք հուզել են եւ հուզում են մարդ էակին, ինչպէս ասենք՝ թէ ինչո՞ւ է նա արարուել, ինչի՞ց է ծնուել, ինչո՞ւ է մահանում եւ մահանալուց ի՞նչ է սպասում նրան: Հարցեր՝ որոնց մեծ մասին առ այսօր չի պատասխանել ոչ մի փիլիսոփայ եւ ոչ մի գիտնական:

Նախքան կը ներկայացնենք մեր պրպտումների արդիւնքները, պատմական մի շրջագայութեան ելնենք գրերի գիւտի ուղորտում, որպէսզի կարողանանք մտքի աչքերով հետեւել իրողութեանը:

Քրիստոնէութեան պետականացումից 100 տարի անց, հայոց հոգեւոր առաջնորդն ու արքունիքը որոշում են վերականգնել մեր նախնեաց մշակութային հիմունքները: Առաջարկը բխել է Մաշտոցից:

Ըստ երեւոյթին, Վռամշապուհ թագաւորը ժառանգաբար իմացել է, որ հայոց հնագոյն արքունական դիւանն ու քրմական-մեհենական գրականութիւնը դեռեւս պահոււմ էին Եդեսիայում: Ինչպէս Մ. Խորենացին է տեղեկացնում, Արշակունեաց առաջին թագաւորի օրոք, Հայոց թագաւորանիստ Մծբին քաղաքում էր արքայական դիւանը: Երբ Մծբինը երկրաշարժի է ենթարկուել, մայրաքաղաքն ու դիւանը փոխադրել են Եդեսիայ: Քիչ յետոյ Եդեսիայ է փոխադրուել նաեւ քրմական գրականութիւնը, որը մինչ այդ գտնուել է Սեւ ծովի ափին, հայոց Սինոպ քաղաքում:

Խօսքը տանք Խորենացուն.- «Սկիզբն արասցուք պատմել քեզ ի հինգերորդ գրոցն Ափրիկանոսի ժամանակագրի, որում վկայէ Յովսէպոս եւ Հիւպոդիտայ եւ այլք բազումք ի Յունաց. քանզի նա բովանդակ փոխադրեաց որ ինչ ի քարտէսս դիւանին Եդեսիայ, որ է Ուռհայ, որ ՅԱՂԱԳՍ ԹԱԳԱՒՈՐԱՅ ՄԵՐՈՑ ՊԱՏՄԵՐ, որ մատենաքն ի Մծբնայ էին փոխադրեալ անդր եւ ի Սինոպայ Պոնտոսէ ի մեհենական պատմութեանցն: Մի՛ ոք անհաւատացի, քանզի եւ մեզէն իսկ ականատես եղաք այնմ դիւանի»:

Աբ. Մեսրոպ Մաշտոցի ժամանակ Եդեսիայում էին գտնուում մեր իսկ թագաւորների տնտեսական, վարչական, կառավար-

չական ու պատմական մատեանները, ինչպէս եւ մեհենական – հոգեւոր, գիտական – մատեանները:

Ահա թէ ինչո՞ւ սբ. Մ. Մաշտոցն դիմել է Եդեսիայ: Այդ ժամանակներուն Դանիէլ ասորի եպիսկոպոսը նոյն Եդեսիայուն փորձել է կարդալ տուեալ մատեանները, գտել է դրանցում օգտագործուած այբուբենի մեծ մասի հնչիւնները, սակայն մնացել են չպարզաբանուած կարեւոր հանգամանքներ:

Սուրբ Մեսրոպ Մաշտոցն իր հերթին Եդեսիայուն ուսումնասիրելով Յայոց հնագոյն գրականութիւնը, բացայայտել է Յայոց վաղնջական տառերի պատկերային կառուցուածքի հիմքերը, գաղափարային խորհուրդները, եւ կարողացել է վերականգնել դրանց հնչիւնային ամբողջական համակարգը ու ապա միայն տարել օգտագործման:

Նա շատ լաւ է հասկացել ու իմացել Յայոց տառերի իմաստաբանութիւնը, բայց չէր կարող այդ մասին խօսել ուղղակիօրէն, որովհետեւ չէր հասկացուելու (*այսօր էլ դժուար է հասկանալը, մանաւանդ բացատրելը*): Բարեբախտաբար Մաշտոցն իր խորաթափանցութեամբ՝ իմաստութիւնն է ունեցել նաեւ գրելու հանճարեղ «Յաճախապատուն ճառք»-ը, որտեղ խօսում է տառերի, բառերի կառուցուածքի եւ նրանց խորհուրդների մասին, անմիջականօրէն դրանք շաղկապելով մարդու եւ նրա էութեան, նրա ծննդեան ու մահուան, գոյութեան նպատակի, ածի, գործունէութեան, ապրելակերպի հետ: Ապա խօսում է նաեւ մարդու ֆիզիկական, հոգեւոր-մտաւոր հզօրութիւն ձեռք բերելու միջոցների մասին:

Կրկին անդրադառնանք Յայոց այբուբենի գոյութեան հարցին՝ նախքան սուրբ Մ. Մաշտոցն:

Կորիւնն իր «Վարք Մաշտոցի» գործի առաջին պարբերութեան մէջ ասում է (*մեր թարգմանութեամբ*).-

«Մտածում էի առանձին մատենագիր յիշատակարան ծաղկեցնել այն մասին, թէ ե՞րբ եւ ո՞ւմ ժամանակում Ասքանազեան Ազգին եւ Յայաստան աշխարհին մատակարարուեց զօրութիւնը Աստուածապարգեւ գրի»:

Պարզ է ասուած, որ գրերը «Աստուածապարգեւ» են եւ ոչ թէ մարդու ստեղծագործութիւն: «Գրի զօրութիւնը» ընդգրկում է գրի (*խօսքի, հնչիւնի*) իմաստը եւ պատկերային խորհուրդը

(այբուբենը): Իսկ այդ ամենը «նորոգատուր» է երեւացել կամ յայտնուել մեզ:

Աբ. Մ. Մաշտոց ոչ թէ նկարչութեամբ է զբաղուել ու մտացածին տառեր ստեղծել, այլ կարողացել է կարդալ մեր հնագոյն տառերն ու մատենագրութիւնը: Ապա, նա այդ տառերից ոմանց տուել է նոր իմաստաւորում եւ հնչիւններ (տարբերակելու համար նախաքրիստոնէականից) ու մատուցել մեզ:

Այս տուեալները ի հարկէ չեն նսեմացնում սուրբ Մ. Մաշտոցի կատարածը: Նրա մեծութիւնը չի սահմանափակուում գրերի գիւտով, այլ ծաւալուում է նաեւ իր հզօրագոյն վարդապետութեամբ, որը աւանդուել է Կորիւնի յիշատակած Մաշտոցեան «Յաճախապատում ճառք» երկով: Այս երկը երկար ժամանակ թիւրիմացաբար վերագրուել է սուրբ Գրիգոր Լուսաւորչին, շփոթելով Ագաթանգեղոսի «Պատմութիւն»-ում տեղ գտած Լուսաւորչի «Վարդապետութիւն» երկի հետ, որը Ագաթանգեղոսն որակել է «ճառս յաճախագոյնս, դժուարապատումս» (ներքելում կը ծանօթանանք դրա մի հատուածիմ): Սակայն անուանակոչումը (խորագիրը) եւ որակումը նոյն բաները չեն եւ երկու երկերն ունեն հիմնական տարբերութիւններ, որոնցից ամենադիպուկը այն է, որ Մաշտոցի մօտ, եօթներորդ գլխում կայ տառերի եւ բառերի կառուցուածքին վերաբերող հատուած, իսկ վերջին 23-րդ գլխում նա զգուշացնում է Հայոց Արշակունեաց թագաւորական տօհմին, որ եթէ այդպիսի անվայել վարքով շարունակեն ապրել՝ ապա չի ուշանայ նրանց կործանումը:

Ժամանակագրականօրէն, ոչ առաջին եւ ոչ էլ երկրորդ տուեալը չէին կարող Լուսաւորչին պատկանել:

Անցնենք մեր բուն ասելիքին:

Ըստ մեզ, որեւէ նկարիչ, նախքան նկարելը, պէտք է ունենայ մտայղացում, որը գաղափարի տեսք ստանալով կը վերածուի գծագրութեան կամ նկարչութեան: Այլապէս, միտք չբովանդակող գործը մենք կ'անուանենք խզբզոց: Ուստի, որեւէ պատկերագիր, սեպագիր թէ տառ՝ ենթադրում է մտքի ու գաղափարի արտայայտութիւն: Հետեւաբար այբուբենի ամեն մի տառը պէտք է ունենայ իր ինքնուրոյն իմաստը: Սա մեր կողմից առաջադրուած առաջին լուծելի խնդիրն է:

Երկրորդ, ամեն մի հայ դպրոցական, երբ կը ծանօթանայ

որեւ օտար լեզուի քերականութեան, զարմանքով կը նկատի, որ այդ լեզուն, օրինակ ռուսերէնում, ֆրանսերէնում կամ արաբերէնում, իւրաքանչիւր գոյական անուն (*հո*) ունի իր սեռը, իսկ հայերէնում չկայ այդ երեւոյթը: Եւ բնականաբար հայ երեխան պիտի մտածի թէ ինչպէ՞ս կարող է դուռը կամ պատուհանը արական (*արու*) կամ իգական (*էգ*) կամ էլ չէզոք լինել. մի՞թէ դրանք ապրող էակներ են:

Երրորդ, ինչն՞ է օրինակի համար իմ անունը հայերէնում Մովսէս է հնչում, եբրայերէնում՝ Մօշէ, արաբերէնում՝ Մուսա, անգլ. Մօզըս, ֆր. Մօիզ, ռուս. Մայիսէյ եւայլն: Թէ ի՞նչ սկզբունքով «Մովսէս»-ի այսքան տարբերակներ են առաջացել լեզուաբանութեան համար մնում է անբացատրելի: Մինչդեռ լեզուների միջեւ գոյութիւն է ունեցել յստակ գործող տառադարձութեան օրէնք, որի մէջ թաքնուած է լեզուաբանական մեծագոյն բանալիներից մին:

Կարող է հարցնէք, թէ գործնական ի՞նչ օգուտ կը բերեն մեզ այս գիտելիքները: Կ'ասենք՝ ապշեցուցիչ. խորը ճանաչողութիւն տիեզերքի, կեանքի ու գիտութեան բոլոր ասպարէզներում:

«Յաճախապատում»-ից բերենք մի հատուած.

«Զի որպէս մի՛ արեւ եւ լոյս եւ ջերմութիւն իւր, եւ մի՛  
արեւ ու ոչ երբեք արեւք,  
եւ որպէս հուրն եւ լոյսն եւ տապն մի՛ հուր ասի եւ ոչ  
երբեք հուրք,  
եւ որպէս աղբիւրն եւ գետն եւ ջուրն մի՛ ջուր ասի եւ ոչ  
երբեք ջուրք,  
եւ որպէս հոգի, միտք եւ բան՝ մի՛ հոգի ասի եւ ոչ  
երբեք հոգիք,  
այլ հոգի ասի կենդանութիւնս եւ միտք ասի  
իմաստութիւնս,

եւ բան ասի խօսողութիւնս միոյ հոգւորյն»:

Ըստ մեզ, այստեղ դրուած է իմաստասիրութեան եւ գիտութիւնների բանալին: Վերլուծենք այն:

Արեւը մէկ ամբողջութիւն է, որպէս արեւ եւ իր լոյսն ու ջերմութիւնը, եւ երբեք արեւներ: Այսինքն երբ արեւ ենք ասում, հասկանում ենք թէ՛ արեւը, թէ՛ իր լոյսը եւ թէ՛ իր ջերմութիւնը, որոնք մէկ ամբողջութիւն են ուստի եւ մէկ երրորդութիւն:

Եւ հուրը մէկ ամբողջութիւն է, որպէս հուր, լոյս եւ տապ:  
Եւ աղբիւրը մէկ ամբողջութիւն է, որպէս աղբիւր, գետ եւ  
ջուր:

Եւ հոգին մէկ ամբողջութիւն է, որպէս հոգի, միտք եւ խօսք:  
Յոգի ասելով հասկանում ենք 1. անձի կենդանի լինելը,  
2. նրա միտքը, ու 3. նրա խօսքը:

Այսօր էլ կան մարդիկ, որոնք կարդալով այս տողերը, ասում են թէ անհասկանալի բան չկայ այդտեղ: Մանուկին էլ պարզ է, որ երբ արեւ ենք ասում, ընկալում ենք թէ՛ արեւը, թէ՛ նրա լոյսը եւ թէ՛ ջերմութիւնը, բայց թէ ինչո՞ւ սուրբ Մ. Մաշտոց մեզ այսպիսի պարզունակ մտքեր պիտի հաղորդէր գրերի գիւտից յետոյ:

Ներկայացնենք նաեւ յաջորդ պարբերութեան թարգմանութիւնը:

«Արեւը երբեւիցէ եղե՞լ է առանց իր լոյսին եւ ջերմութեան, կամ հուրը՝ առանց իր լոյսին ու տապին, կամ աղբիւրը՝ առանց բղխման եւ խոնաւութեան, կամ հոգին երբեւիցէ եղե՞լ է առանց իր խօսքին ու մտքին: Այդպէս էլ՝ չի՛ եղել Յայրը առանց իր Որդուն եւ Սուրբ Յոգուն»:

Ըստ մեզ, այս օրինակներում յաջորդաբար համակարգը ւած են.-

ա. Էութիւն-երրորդութիւնը՝ որպէս արեւ, հուր, աղբիւր կամ հոգի:

բ. Էութեան իմաստութիւնը, այլապէս՝ լոյս-ներուժն ու դրա հոսքագիծը, որպէս արեւի լոյս, հրոյ լոյս, աղբիւրի գետ եւ հոգուն մտաւոր կարողութիւն:

գ. Էութեան էներգակիրը՝ որպէս արեւի լոյսի ջերմութիւնը, հրոյ լոյսի տապը, աղբիւրի գետի ջուրը, հոգուն մտքի խօսքը:

Սբ. Մ. Մաշտոցն իր երկի առաջին իսկ նախադասութեամբ ասում է. «Մի է գոյի ինքնութիւնը»: Այդ գոյը լինի էակ, լոյս, գոյն, ձայն, թէ լեզու՝ ունի մէկ ինքնութիւն, եւ սկզբունքը անփոփոխ է:

Այսքանը վերաբերում է որեւէ էութեան էներգետիկ կառուցուածքին: Դրանով սուրբ Մ. Մաշտոցն յուշում է, որ էութիւն ներկայացնող իւրաքանչիւր տառ նոյնպէս ունի այդպիսի եռաստիճան էներգետիկ բաղադրիչներ:

Մի այլ տեղում, Մաշտոցն ասում է. «Աստուած չի առնում

կենդանիների կեանքը, այլ տալիս է նրանց 1.լինելութիւն, 2.գլուխ, 3.սիրտ եւ 4.մշտնջենաւորութիւն»:

Սա էլ վերաբերում է էութեան (*նաեւ էութիւն պատկերող տառերի*) ֆիզիկական կառուցուածքին ու դրա հիմնական կենտրոններին, որոնք են գլուխը, սիրտը եւ սեռական օրգանը:

Ազաթանգեղոսի մօտ, սուրբ Գրիգոր Լուսաւորչի բերնով ասուած թեթեւակի ակնարկութիւն կայ էութեան կառոյցի մասին, այսպէս.-

«Ահա սիւնք հաստատուն կանգնեցան ձերում խարխուլ շինուածոյն: Այս այն սիւնք են, ասէ, որ ունիք զբեռն ծանրութեան ձերոյ շինուածոյն փրկութեան, ահա երեք սիւնք. եւ չորրորդ սիւն՝ կենդանութեան, որ ձեզ առ Աստուած վերացուցէ»:

Երեք սիւները էութեան հենց հիմնական կենտրոն-հանգոյցներն են (*գլուխ, սիրտ, սեռական օրգան*), որոնցից մէկի անգործունէութիւնը կամ ջլատումը մահ կը պատճառէ էութեան, իսկ չորրորդ՝ «կենդանութեան սիւն»-ը լուսապսակ-աուրան է, որն էլ «ձեզ առ Աստուած կը բարձրացնի»:

Չետեւաբար կարելի է ասել, որ սուրբ Գրիգոր Լուսաւորչի եւ սուրբ Մեսրոպ Մաշտոցի վարդապետութիւնների հիմքը նոյնն է, բայց սբ. Մաշտոցն առաւել պարզորոշ է տուել սկզբունքները:

Մեր ընկալումով, Մաշտոցն յուշում է, որ տառերի մէջ որոնենք էութիւն-ամբողջութիւններ, որոնք կազմուած լինեն երեք մասերից, որոնցից մէկը ներկայացնի էութիւնն ինքնին ու նրա գլխաւոր աղբիւրը, երկրորդը՝ էութեան ներուժն ու հոսքագիծը (*գործունէութեան ծիրը*), երրորդը՝ էներգակիրը: Իսկ չորրորդը՝ տառի հնչիւնն է, հոգին:

Էութեան ամենակատարեալ տիպարը՝ հոգեւոր ունակութիւններ ունեցող մարդն է, որի կառուցուածքից է բխում մտքի պտուղ խօսքը, իսկ խօսքի մասնիկները կարող են բխել գլխից, սրտից կամ սեռական օրգանից, բայց հնչել բերնից: Սա որոշ առումով հասկանալի է օպերային երգիչներին, երաժիշտներին, որոնք ձայները բխեցնում են գլխային, կոկորդային, փորային եւ այլ աղբիւրներից: Չետեւաբար իւրաքանչիւր տառի կառուցուածքի մէջ դրուած է տուեալ տառը ներկայացնող հնչիւնի ակունքը: Սա վերաբերում է խազագրութեան հետեւաբար եւ երաժշտութեան:



Երրորդութիւնը հիմք ընդունելով, նկատել ենք որ Մաշտոցեան այբուբենի 36 նշաններից 26-ն ունեն երեք տառանի անուանում, որոնցից մէկը «է»-ն ներկայացնում է ամբողջ էութիւնը, իսկ մնացեալ 25-ը պէտք է լինեն մարմնի ինքնուրոյն մի միաւորը ներկայացնող ենթաէութիւն-օրգանները: Մաշտոցեան մնացեալ 10 տառերն ունեն երկտառանի անուանում, հետեւաբար դրանք էութիւն կամ կատարեալ էութիւն չեն եւ ունեն տարբեր բովանդակութիւն:

Երրորդութիւն-էութիւն պատկերող տառերն են.-

1.Այբ, 2.Բեն, 3.Գիւն, 4.Դայ, 5.Եչ, 6.Զայ, 7.Է, 8.Թոյ, 9.Ինի, 10.Լիւն, 11.Ծայ, 12.Կեն, 13.Յոյ, 14.Չայ, 15.Ղատ, 16.Սեն, 17.Նու, 18.Շայ, 19.Ոյ, 20.Չայ, 21.Ռայ, 22.Վել, 23.Տիւն, 24.Ցոյ, 25.Յիւն, 26.Փիւր:

*(Չինական 10.000-ի հասնող պատկերագրերը նկարուած են 26 հիմնարար նշանագծերի համադրութիւններից, ինչը վկայում է տարբեր մշակոյթների նոյն սկզբնաղբիւրից ծագման մասին):*

Սրանցից «Լիւն, Տիւն, Յիւն եւ Փիւր» անուններն ունեն չորսական տառ, սակայն դրանց մէջ «իւ»-ը որպէս երկբարբառային ծայնաւոր, ունի ֆրանսերէնի «ս» տառի հնչիւնը եւ ներկայացնում է որպէս մէկ ամբողջութիւն եւ մէկ հնչիւն, հետեւաբար այդ անուանումները եռածայն են ու չեն հակադրուած մեզ հիմք ծառայող երրորդութեան սկզբունքին: «Եչ»-ը երկտառանի է, սակայն բաղադրուած է «յէչ» երեք ծայներից, ուստի նոյնպէս չի հակադրուած սկզբունքին: «է»-ն միատառ անուն ունենալով հանդերձ, որպէս էութիւն, իր մէջ ընդգրկում է երրորդութիւնը, հետեւաբար բովանդակում է «մէկ երրորդութիւն» գաղափարը եւ չի շեղում սկզբունքից: «Ոյ»-ը թէւ երկտառանի է, սակայն «ո»-ն լինելով բաղադրեալ տառ, հնչում է «ւո», ուստի «յ»-ի հետ միասին կազմում է երրորդութիւն:

Այսքանը վերաբերում է մեր առաջ քաշած առաջին հարցին, թէ տառերը ունեն խորհուրդ:

Երկրորդ հարցադրումը անմիջապէս շարունակութիւնն է առաջինի: Դա վերաբերում է լեզուներում բառերի սեռերի առկայութեանը, ինչը չկայ մեր քերականութեան մէջ:

Ստիպուած ենք յայտարարելու, որ սեռերը գործել են ու

կան բոլոր լեզուներում եւ մեր լեզուն բացառութիւն չէ: Քանզի լեզուն գիտութիւն է եւ բնագիտութիւն է, որի մէջ կամայ թէ ակամայ կան արուն եւ էգը, դրականն ու բացասականը, երեւցողն ու աներեւոյթը, երկնայինն ու երկրայինը, արտաքինն ու ներքինը, վերինն ու ստորինը, աջն ու ձախը: Սուրբ Մ. Մաշտոցն իր գործում մեզ ծանօթացնում է 13 զոյգ (26) անունների, նոյնպիսի յարաբերակցութեամբ (*Յաճախապատում, գլխ. եօթն., էջ 68*):

Բնութեան մէջ եւ լեզուն երկու սեռերից բացի կան նաեւ այն ազդակները, որոնք ներդաշնակում են երկու սեռերի յարաբերութիւնները, արագացնելով կամ դանդաղեցնելով գործընթացը (*ինչպէս քիմիայում կատալիզալտորները, էլեկտրոնիկայում կիսահաղորդիչները, էկրանները*): Այդ ազդակներից են տաքն ու ցուրտը, թացութիւնն ու չորութիւնը, ժամանակը, եւայլն:

Վերոյիշեալ 26 էութիւն պատկերող տառերի խումբը ինքնին բաժանուած է երկու հաւասար 13 արական եւ 13 իգական խմբակների (*սրանից էլ 13 թուի դրական կամ բացասական լինելը*), իսկ մնացեալ 10-ն նշուած չէզոք ազդակներն են:

Փորձենք գտնել այդ խմբերը:

Ա. խումբ.- Արական բնոյթի կամ դրական, արեւային էներգետիկ միաւորներ.

1.«Ա»-Այբ, 2.«Բ»-Բեն, 3.«Գ»-Գիմ, 4.«Դ»-Դայ, 5.«Զ»-Զայ, 6.«Է»-Էլ, 7.«Լ»-Լիւն, 8.«Ծ»-Ծայ, 9.«Ձ»-Ձայ, 10.«Շ»-Շայ, 11.«Չ»-Չայ, 12.«Ռ»-Ռայ, 13.«Տ»-Տիւն:

Բ. խումբ.- Իգական բնոյթի կամ երկրային, կամ բացասական էներգետիկ միաւորներ.

1.«Ե»-Եջ, 2.«Թ»-Թոյ, 3.«Ի»-Ինի, 4.«Կ»-Կեն, 5.«Յ»-Յոյ, 6.«Ղ»-Ղատ, 7.«Մ»-Մեն, 8.«Ն»-Նու, 9.«Ո»-Ուոյ, 10.«Վ»-Վել, 11.«Յ»-Յոյ, 12.«Ի»-Յիւն կամ Վիւն, 13.«Փ»-Փիւր:

Գ. խումբ.- Չէզոք կամ ոչ կատարեալ երկբնոյթ միաւորներ.

1.«Ը»-Ըթ, 2.«Ժ»-Ժէ, 3.«Խ»-Խէ, 4.«Ճ»-Ճէ, 5.«Յ»-Յի, 6.«Պ»-Պէ, 7.«Ջ»-Ջէ, 8.«Ս»-Սէ, 9.«Ր»-Րէ, 10.«Ք»-Քէ:

Այս բաժանումները կատարել ենք որոշ սկզբունքով, բայց եւ այնպէս Ա. եւ Բ. խմբերի բաժանումը վերջնական չենք համարում: Պէտք է խորագոյն հետազօտութեամբ հիմնաւորելով

հաստատել կամ վերանայել դրանց պատկանելիությունը:

Ձեր ուշադրութեան յանձնենք հայերեն լեզուում տառերի սե-  
ռերի շուրջ երկու օրինակ:

«Սատ» եւ «Շատ» արմատները, որպէս զոյգեր, պայմանա-  
կանօրէն հոմանիշ են: Շատացնել նշանակում է բազմացնել  
դրական իմաստով: Իսկ «սատ» անել՝ կտորների վերածելով շա-  
տացնել, այսինքն կտորատել: «Սատ»-ը բարդութիւնների մէջ  
երբեմն բացասական բնոյթ ունի (*սատանայ*, *սատիրայ*,  
*սատուր*), երբեմն՝ դրական (*սատարել*), ինչը հաստատում է, որ  
դա չէզոք արմատ է: Մինչդեռ «շատ»-ը միշտ դրական է, արական  
բնոյթի է: Այդ բնոյթները դրուած են «ս»՝ չէզոք եւ «շ»՝ արական  
բնոյթի տառերի մէջ, որովհետեւ երկու արմատների մէջ էլ «ատ»-  
ը մնում է նոյնական:

«Սատանայ» նշանակում է «սատ» անող մարդ, այսինքն  
մէկ ամբողջութիւնը կամ մէկ ամբողջական էութիւնը մասնատող,  
անդամահատող: Այս նոյն գաղափարից էլ առաջացել է «բա-  
ժանիր՝ որ տիրես» սատանայական սկզբունքը:

«Սատիրայ» նշանակում է՝ իրերը եւ կամ իրողութիւնները  
«սատ» անող, այսինքն մէկ-մէկ առանձնացնող ու մատնանշող:  
Նոյնպիսի զոյգեր են «զատ» եւ «ջատ» արմատները, «զատել»  
եւ «ան-ջատել» բայերում, որոնց մէջ «զ»-ն արական բնոյթի է,  
իսկ «ջ»-ն՝ չէզոք:

«Սատակել», «սատկել» կամ «սատակ անել» բայը այսօր  
է որ կենդանիների մեռնելուն ենք յատկացնում, մինչդեռ Մաշ-  
տոցի ժամանակակիցները «անդամահատել, անդամահատ-  
ւել» իմաստով են օգտագործել: Օրինակ Փաւստոս Բիւզանդն  
Վաղէս կայսրի մասին ասում է. «Կամ զհա՞րդ կայսրն Վաղէս  
սատակեցաւ»: Սա ոչ թէ արհամարհական արտայայտութիւն  
է, իբր «շան նման» է մահացել Վաղէսը, այլ ուղղակիօրէն նրան  
անդամահատել են: Հայոց Պապ թագաւորի սպանութեան առթիւ  
նկարագրում է թէ ինչպէ՞ս յոյն զինուորականներից մէկը նրա  
վզին է հարուածել, իսկ միւսը նրա աջ ձեռքն է կտրել ու ապա  
«եւ անդէն սատակէր թագաւորն Պապ»: Այսինքն Պապ թագա-  
ւորը անդամահատուելով է մահացել:

Ունենք «աստիճան» բառը, ունեցել ենք նաեւ «աշտիճա-  
ն»-ը: Սա ուղղագրական սխալ չէ, քանզի աստիճանը երկբնոյթ

է, այսինքն կարող է թէ՛ բարձրացնել եւ թէ՛ իջեցնել, իսկ «աշտի-  
ճան»-ը միայն բարձրացող-բարձրացնող բնոյթ ունի: Այդ բնոյթ-  
ները դրուած են «ս» եւ «շ» տառերի մէջ: Ասենք զինուորականը  
կամ գիտութեամբ զբաղուողը աստիճան առ աստիճան բարձր  
որակաւորում է ձեռք բերում, այդ աստիճանակարգը կարելի է  
«աշտիճան» կոչել: Ջերմաչափի սնդիկը թէ բարձրանում է եւ թէ՛  
իջնում. այդ պատճառով էլ դրա սանդղակները «աստիճան» են:

Թէ ի՞նչ ենք հասկանում չէզոք բառ ասելով, ներկայա-  
ցընենք եւս մի օրինակով: Ռուսերէն «վեդրո»-դոյլ բառը եւ  
համապատասխան արաբերէն «դալու»-ն չէզոք են: Ինչո՞ւ:  
Քանզի դոյլը սարքուած պահին դատարկ է եւ ունի լցուելու ու-  
նակութիւն, ուստի սկզբնապէս ունի իգական բնոյթ: Բայց երբ  
լցում է՝ դառնում է արական բնոյթի, քանզի ուրիշ մի աման լցնե-  
լու ունակութիւն է ձեռք բերում, որից յետոյ իգական բնոյթին է  
վերադառնում: Եւ քանի որ մի դէպքում իգական է եւ երկրորդում  
արական՝ ապա բառը երկբնոյթ է ու կոչւում է չէզոք («չէզոք»-ը  
նշանակում է նաեւ «իներտ»):

Էլեկտրոնիկայի լեզուով «ո-ր-ո»-ի եւ «ր-ո-ր»-ի պարագա-  
ները համազօր են «չէզոք»-ին:

Այս օրինակից էլ կարելի է եզրակացնել, որ կինն ու իգա-  
կան էութիւնները («Ը» տառը) ընդհանրապէս երկբնոյթ են ու  
չէզոք, եւ լեզւում տարբերակում են իգական բնոյթից:

Յետեւում է, որ լեզուն կառուցողները իմացել են էութիւն-  
ների եւ նիւթերի բնոյթների մասին, ինչի հիմքով էլ ստեղծել են  
բառերը:

Մեր լեզւում՝ բացի տառերի սեռերից, կան նաեւ արմատ-  
ներ («հեզ»-եր - զոյգ տառերից բաղադրուած արմատներ), ո-  
րոնք որակային առումով արական կամ իգական են: «Աման»  
բառում «ամ»-ը «իգական բնոյթի» է, իսկ «ան»-ը՝ արական բը-  
նոյթի: Քանի որ երկու բնոյթներն էլ առկայ են «աման»-ում  
հետեւում է, որ դա չէզոք բառ է, ինչպէս «դոյլ»-ը:

Անհեթեթութիւն է եւ տգիտութիւն, ասել թէ լեզուները դա-  
րերի ընթացքում են մշակուել ու զարգացել. իբր թէ նախամարդը  
դարերի հոլովոյթում մի հնչիւնին կցորդել է երկրորդն ու երրոր-  
դը ու կազմել բառեր, ապա եւ ինքնուրոյն լեզու, որտեղ բառերը  
յանկարծ չգիտես ինչպէս՝ ձեռք են բերել սեռական որակումներ:

Մենք չենք ժխտում զարգացող գիտութիւնների թելադրանքով նոր բառերի կազմութիւնն ու լեզուի հարստացումը: Դա ոչ մի դէպքում կանայականութեամբ չի լինում, այլ հնագոյն բառարմատների նորովի իմաստաւորումներով ու ձեւաւորումներով:

Անտառում թողնուած նորածինը՝ եթէ հազար տարի էլ ապրի, չի կարող համակարգուած լեզու ստեղծել, որովհետեւ լեզուն կամ «Բանը ի սկզբանէ էր» ու Աստուածատուր, եւ աւանդուում է ծնողների եւ ուսուցիչների միջոցով:

### ՅՕԴՈՒԱԾ «6»

#### ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՅՐՈՒԴԻՈՎ

*«Երբոր արարածների տարիքային չափերի աճումով բազմանայ իմաստութիւնը եւ նրանք տղայութիւնից հասունանան կատարեալ այրերի լոկ այն ատեն կըմբռնեն ճշմարտութեան գործերն ու խօսքերը: Եւ ճշմարիտ հոգեւոր օրէնքների միջոցաւ գիտութիւն արարելով՝ կը ծանօթանան իսկական հաճոյքներին: Պահպանելով պատուիրանները՝ հեռու եւ անվնաս կը մնան դժնդակ վարքերից, եւ գտնուելով բարի վարքերի մէջ՝ օգտակար կը լինեն հեռաւորներին ու մերձաւորներին, փրկելով նաեւ նրանց»:*

*«Յաճախապատում ճառք»՝ «Է» գլուխ,  
«Վասն Յօրինուածոց Արարածոց»*

Ի՞նչ է ասում սբ. Մ. Մաշտոցն գրերի էութեան մասին:

«Եւ (Աստուած) սկիզբը արարած խօսքով յօրինելու համար արարածներին՝ կոչելով ասաց. Լոյսը թող տիւ լինի (Լոյսը -նաեւ արարածը- թող երեւելի լինի - ծնուի), ինչը յայտնում է արարածների կազմութիւնը»:

Մեր ուսումնասիրութեամբ գտել ենք, որ ոչ միայն արարածներն են լոյս, այլեւ տառերը լոյսի տարբեր վիճակներ են ու տարբեր լոյսերի համադրութիւններ: Բառերի կառուցուածքները նոյնպէս մեծ ու փոքր լոյսերի, լուսապսակների համադրութիւններ են:

Ի հարկէ բաւականին բարդ է, նոյնիսկ անհնար է թուում զանազանել մի լոյսի տեսակը մնացած լոյսերից, մի տառի ու բառի իմաստը ուրիշներից: Սակայն վստահ ենք, որ սթափ մտքով եւ անկոտորում հաւատքով կարելի է ի յայտ բերել դրանց խորութիւնները:

Առանց հասկանալու «էութիւն»-ն իր անբողջութեան մէջ հնարաւոր չէ թափանցել որեւէ գիտութեան հիմնախնդիրներից ներս, մեր պարագայում՝ լեզուաբանական երեւոյթներից ներս:

Այլապէս կը նմանուենք փիղը ճանաչել փորձող այն կոյրերին՝ որոնցից փղի պոչը բռնողն ասում է թէ դա օձ է, ոտքը շօշափողն ասում է թէ սիւն է, կնճիթը բռնողն ասում է թէ խողովակ է, իսկ փորը շօշափողն ասում է թէ քարանձաւ է:

Ընդարձակենք «էութեան» բացատրութիւնը:

Սուրբ Մ. Մաշտոցն ասում է.-

(Աստուած) «չառնու կեանք ինչ ի կենդանեաց, այլ տայ նոցա զլինելն եւ զգլուխն եւ զկեալն եւ զմշտնջենաւորելն»:

Աստուած չի առնում կենդանիների կեանքը, այլ տալիս նրանց՝

1.«լինելութեան զօրութիւն», որը Աստուածատուր «լուսապրսակ»-աւուրան է, էութիւնը կեանքի կոչող եւ ֆիզիկական համակարգը շղկապող էներգետիկ դաշտն է:

2.«Զգլուխն»՝ եակի գլխաւոր էներգետիկ հանգոյցն է:

3.«զկեալն»-սիրտն է:

4.«զմշտնջենաւորելն»՝ սերնդագործական օրգանը:

Այս չորսից որեւէ մէկի անգործունէութիւնը կամ ջլատումը պատճառ կը դառնայ էութեան կործանմանն ու մահուան:

Է-ի կամ էութեան ամենապարզ գծապատկերը՝ որպէս տառի մասնիկ, ուղղահայեաց գիծն է:

Մաշտոցի տուեալներից բացի, էութեան պատկերն ու գրլխաւոր բաղադրիչները գտել ենք Մեծամօրի առնուազն չորս հազարամեայ աստղադիտարանի վրայ փորագրուած, այսպէս.-



պատկեր «1», «2», «3»

Մեկնենք բարձրաքանդակը մանրամասնությամբ:

«1»-ը էութիւնն է: «2»-ը՝ «հաւասարագօր է»: «3րդ պատկերի անունը կնքել ենք «թիթեռնիկ»:

«Հաւասարագօր»-ը ներկայացնող եռանկիւնին (*պատկ. «2»*) իր երեք կողմերով կազմում է նաեւ «երրորդութիւն», ուստի էութիւնը նախ եւ առաջ երրորդութիւն է: Ճշդենք թիթեռնիկում էութիւն-երրորդութիւնը ներկայացնող տարրերը: Թիթեռնիկի միջին ուղղահայեաց գիծը էութեան ողնասիւնն է, որի վերին բեւեռը «գլուխ»-ն է, կենտրոնական հանգոյցը «սիրտ»-ն է, իսկ ստորին բեւեռը «սերնդագործական օրգան»-ն է: Ահա երրորդութեան ֆիզիկական գլխաւոր հանգոյցները:

Թիթեռնիկի դէմ հանդիման թելերը միասնաբար պատկերում են լուսապսակ-աուրան իր ամբողջութեան մէջ: Դրանով երրորդութիւնը դառնում է «Սուրբ երրորդութիւն»:

Թիթեռնիկի թելերը չորսն են, այսինքն լուսապսակը չորս ենթամասնիկներ ունի, վերին ծախ թելը անձի հօրից ստացած ժառանգութիւնն է, ստորին ծախ թելը մօրից, վերին աջ թելը Աստծու տուածն է, իսկ ստորինը՝ երկրի: Այսպիսով գտնում ենք էութեան եւ «է» տառի (*Y-h*) թուային արժէքը. ֆիզիկական 3 գլխաւոր հանգոյցները, գումարած լուսապսակի 4 հատուածները կազմում են «7» թիւը:

Թիթեռնիկը պատկերում է ոչ միայն էութիւնը, այլեւ սիրտը, արեան շրջանառութեան համակարգը, եւայլն, իսկ կենտրոնում է խաչը:

Աւելացնենք մի կարելուր կէտ:


Երկրագնդի էլեկտրա-մագնիսական դաշտը՝ ըստ ֆիզիկոսների, ձգւում է երկրագնդի շուրջ հիւսիսային բեւեռից հարաւային բեւեռ, հարաւայինից հիւսիսային:

Այս պատկերացումը պակասաւոր է, քանզի երկիրը շնչաւոր էակ է եւ ունի սիրտ, որի միջով պէտք է անցնի նրա էներգետիկ դաշտը: Այդ դաշտն ունի «թիթեռնիկի» թելերի պատկերը: Այն հանգամանքը թէ հասարակածում նուազագոյն է էլեկտրա-մագնիսականութիւնը, հետեւանք է սիրտ մտնող բացասական (*կեղտոտուած*) եւ սրտից ելնող դրական (*մաքրուած*) հոսքերի խաչածեւմանը («+»-ը կողք-կողքի իրար չէզոքացնում են: *Չէզոքացման պարագան մեզ է յուշել մասնագիտութեամբ*

էնտրգետիկ, նաեւ հոգեւոր մշակ Արմենակ Տրտրեանը): Իրականում սրտի դիրքը էութեան կենտրոնում չէ (այնտեղ պորտն  $\Delta$ ), այլ մի քիչ վերել: Նոյնպէս էլ երկրագնդի սրտի տեղադրութիւնը հասարակածում չէ, այլ  $36^\circ$ -ից  $44^\circ$  միջօրեականների Յայկական Լեռնաշխարհ – Լոս Անջելոս» շրջանագծի միջակայքում, ուստի եւ տեսականօրէն առաւելապէս այս միջոցում «անորսալի» պէտք է լինի էլեկտրա-մագնիսականութիւնը:

Առաջ քաշուած դրոյթներից ելնելով գտնենք «Ա», «ա» տառի աղբիւրը:

Պատկերացնենք կանգնած մի մարդ (պատկեր «4»), որի երկինք բարձրացրած ձեռքերը «Ա»-ի երկու սիւներն են, իսկ սիւների միացման առանցքում գլուխն է (պատկեր «5»):



«4»-րորդ պատկերից բխում է նաեւ «Ո»-ն (պատկեր «6»), որը մարդու ստորին կէսն է:

Մեծատառ «Ա»-ն կարող է ներկայացնել «Աստուածայինը», «Արեւայինը», «Երկնայինը», «Վերինը», «անտեսանելին»: Փոքրատառ «ա»-ն կը ներկայացնի «արական բնոյթը», «ցցունը», «երեւացողը», «ապրողը», «հնչող ձայնը», «սպիտակը», «արեւագոյնը»:

Մեծատառ «Ո»-ն տարբեր արմատ բառերում կը ներկայացնի «ծածկեալը», «մութը», «սեւը», «չգործողը», «չհնչողը» («պաուզան»), իսկ փոքրատառը՝ «իգական բնոյթը», «ստորինը», «երկիրը», «երկրայինը», «բացասականը», «մեռածը»:


Ինձ հարց է տրուել, թէ ինչո՞ւ «Ա»-ն էութեան վերին կէսն է, իսկ «Ո»-ն ստորինը, եւ ոչ թէ ընդհակառակը: Սա արդէն էնտրգետիկ յարաբերութիւնների բնագաւառն է, որտեղ արական բնոյթը Աստուծոց, արեւից եւ երկնային միւս լուսատուներից է ստանում իր գլխաւոր կարողութիւնները եւ իր հիմնական ֆունկցիան մտաւոր-հոգեւոր գործունէութիւնն է, իսկ իգական բնոյթն իր հիմնական ներուժն ստանում է երկրից, երկրայինից (արական բնոյթից), եւ նրա գլխաւոր ֆունկցիան հոգեւոր-ֆի-



զիկական սերնդագործութիւնն է: Պէտք չէ մոռանալ նաեւ, որ երկու սեռերի մերձաւորութեան պահին արականը վերելում է, իսկ իգականը ներքելում:


Սուր աչքով ու դիւցարանական խորհրդանշաններով հետաքրքրուող անձը «Ա»-ն ներկայացնող «5»-րորդ պատկերում կը նկատի թռչունն ու խոյր:

Սբ. Մ. Մաշտոցն ասում է թէ Աստուած տառերը արարեց զոյգերով: «Ա»-ն ու «Ո»-ն զոյգեր են, որոնք մեզ են աւանդուել նաեւ ժայռապատկերներում, գորգերում եւ ուրարտական քանդակներում, պարզացուած ձեւով այսպէս.-



«9»-րորդ պատկերը ներկայացնում է արականի եւ իգականի, երկնայինի եւ երկրայինի միասնութիւնը:

Ս.Գ.Յնայակեանի «Վանի Թագաւորութեան Պետական Կրօնը» գրքի 8-9-11-27/2-րորդ աղիւսակներում հանդիպում ենք դրօշակակիր աղջկայ, կնոջ եւ տղամարդու, որոնց դրօշակները հիմնականում պատկերուած են այսպէս.-



պատկեր «10»

Յատկանշական է, որ դրօշակուն պատկեր «7»-ին համապատասխանող հատուածը չունի կենտրոնական ելուստը, սակայն դա առկայ է դրօշակի գլխավերելում: Մեծատառ «Ա»-ում այդ ելուստը դրուած է աջ ստորոտում պոչիկի տեսքով: Դա զուտ գեղագրական դասաւորութիւն է:

Ժամանակի ընթացքում «ա»-ի (պատկեր «7») սոյն միջանկեալ ելուստը մոռացութեան է տրուել ու մնացել է միայն «Վ»-ն, որն այսօր օգտագործուած է արաբերէնում որպէս «7» թիւը պատկերող նշան: Նկատենք, որ «7»-ն եւ «Վ»-ն ունեն համարեայ թէ նոյն գծագրութիւնը, դիրքային փոփոխութեամբ: Գիտենք

Ունի թե հայկական այբուբենում արական բնոյթի էութիւնը ներկայացնող «Է» տառն ունի թուային «7» արժէքը, եւ իր կառուցածքով շրջուած «7»-ն է, միջանկեալ ելուստի առկայութեամբ, ուստի առաւել ճշգրիտ է ներկայացնում գաղափարային բովանդակութիւնը:

Դրօշակում «V»-«7»-ին հակադրուող զոյգը «L» պատկերն է, որը ներկայացնում է իգական բնոյթը, իսկ արաբերէնում «ուք» թիւն է: «L» պատկերը համապատասխանում է հայկական «Ը»-ին, ոչ միայն նմանողութեամբ, այլեւ թուային արժէքով:

Հնագոյն ժամանակներից հասած գաղափարագրերում ինչն՞վ են տարբերուել արական կամ իգական էութիւնները արական կամ իգական բնոյթներից: Ասացինք թէ «V»-ն արական բնոյթն ու թիւն է ներկայացրել, իսկ «L»-ը իգական բնոյթն ու թիւը: Իսկ էութիւնները դրանց հիման վրայ կառուցուած եռանկիւնիներ են, արտացոլուած պատկեր «11» եւ «12»-ում (*այդ պատճառով էլ «Է»-ն եւ «Ը»-ն կազմուած են երէք բաղադրիչ մասնիկներից*):



արական  
էութիւն  
պտկ. «11»



իգական  
էութիւն  
«12»



«13»



«14»

Պատկեր «11»-ի եւ «12»-ի շաղկապումը՝ ինչպէս պատկեր «13»-ում, նշանակում է երկու սեռի էութիւնների ֆիզիկական միասնութիւնը, որտեղ հոգեւոր-մտաւորը բացակայում է:

Մեզ աւանդուած հայկական վեցթեւեան աստղն ունի մի առանձնայատկութիւն եւս, որը այդ միասնութիւնը դարձնում է կատարեալ: Դա լուսապսակային օղակն է, ինչով խորհրդանիշը լինում է ոչ միայն երկու սեռի երրորդութիւնների զուտ ֆիզիկական միասնութիւն, այլեւ հոգեւոր-մտաւոր միասնութիւն, սուրբ երրորդութիւնների միասնութիւն (*պատկեր «14»*):

Կարծում ենք թէ Ուրարտական դրօշակում լուսապսակային օղակին փոխարինել է հենց դրօշակի շրջանակը: Դրօշակով ներկայացող կինը, աղջիկը կամ տղամարդը դիմում է

Աստծուն՝ որպեսզի շնորհ անի նրան, գտնելու իր լիարժեք գոյգը: Իրաւունք ունէք հարցնելու թէ մեր ինչի՞ն են պետք այս բոլորը:

Հայերէնի բառերուն հանդիպում ենք «աթ»-«թա» հեզին (*զոյգ տառանի արմատիմ*), որը «արական բնոյթի թիւ» իմաստն ունի: Դրա փոխարէն դնելով համապատասխան «Վ» նշանը, իսկ «ոթ»-«թո»-«իզական բնոյթի թիւ»-ը փոխարինելով «Լ» նշանով ստացել ենք բառը ներկայացնող իրի՝ «աթոռ»-ի (*աթ-թո-ռո*) պատկերը, ինչը «ձկնորսական» կամ «պիկնիկային» ծալովի աթոռն է X-աձեւ (*յիշեցէք «Անահտական Աթոռ» լեռնահամակարգը*): «Թագ» բառը տարբադադրելով ստանուն ենք «թա-ագ» եւ կարդում ենք «թիւ արական բնոյթի - արական բնոյթի գոյի գլխին» եւ փոխարինելով թիւը համապատասխան պատկերով՝ ստանուն ենք թագի կառուցուածքն ու դիրքը մարդու գլխին: «Թագ» բառի ստեղծման ժամանակ դրա տեսքն եղել է «7»-րդ «Վ» նկարի պէս (*ինչպէս Կիլիկիայի Հայոց թագաւորների թագերը*) եւ ոչ թէ ուղղահայեաց կողմերով (*ինչպէս Տիգրան Մեծինը*):

Հետեւաբար կարելի է ասել, որ բառերը կառուցուել են ընդունուած պայմանական նշանների (*ստանդարտ սիմբոլների*) համադրութիւններից, նրանց տրուած իմաստներով եւ հնչիւններով եւ ոչ թէ առաջացել են քմահաճ ու անասնական-անգիտակից բացականչութիւններից:

Մեր տեսակէտը հաստատող բառ է «տրամաբանութիւն»-ը, որտեղ «տրամ»-ը նոյնանուն է անգլ. «term=պայման»-ի հետ (*որից էլ «տերմին»-ը*): Այսինքն «տրամաբանութիւն»-ը մարդկանց կողմից ի սկզբանէ ընդունուած պայմանական նշանների համադրումներով «բանելու»՝ խօսելու, մտածելու, ստեղծագործելու եւ արտայայտուելու արուեստն է: Այդ նոյն պայմանական նշանները (*սիմբոլները*) առկայ են ոչ միայն Հայոց այբուբենում եւ բառապաշարում, այլեւ գրութեան բոլոր ձեւերում, ընդհուպ մինչեւ չինական, ճապոնական ու եգիպտական պատկերագրերում, հնդկական ու արաբական գրածեւերում, գորգերի «զարդերում», եւայլն: Այս ամէնը գալիս են բացայայտելու տառերի, բառերի եւ լեզուների էութիւնը, մարդկութեան մտածողութեան, գիտութեան, եւ քաղաքակրթութիւնների զարգացման հիմնական նախադրեալները:

## ՅՕԴՈՒՄԾ «7»

### ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՂՈՎ

*«Մեզ պատիւ է տրուած, որ ոչնչից դառնանք էակներ,  
անարգութիւնից եւ փոքրութիւնից անցնենք  
մտաւոր եւ բանաւոր կեանքի»:*

Սուրբ Մ. Մաշտոց, «Յաճախապատում»

1. Ժողովրդական խաղերից եւ Ձեռնածութիւններից Ոմանց Խորհուրդները՝ Այբուբենում  
Ձեռնածութիւնը ձեռքերով ու մատներով սիմբոլներ ցուցադրելով արտայայտուելու միջոց է, ինչից օգտուում են յատկապէս խուլ-համրերը, պարի վարպետները: Օրինակ՝  
Ի՞նչ ենք հասկանում բթամատը վեր բարձրացնելով:  
Ի՞նչ ենք հասկանում ցուցամատն ու միջմեմատը բարձրացնելով V ձեւով:  
Իսկ ի՞նչեր են թագնուած լարախաղացի եւ ժողովրդական այլ խաղերի մէջ:  
Ո՞րտեղից է առաջացել եւ ի՞նչ հիմունքներով է կառուցուել «Բումերանգը»:  
Եւ վերջապէս այս բոլորը ի՞նչ առնչութիւն ունեն Զայոց Այբուբենի հետ:  
Քննարկենք ու գտնենք այդ կապը:  
Մեր ուսումնասիրութիւնը ոչ պատահաբար անուանել ենք հնաւանդ ու մոռացուած բայց շատ ընդգրկուն «իմաստասիրութիւն» բառով, քանզի դա համատեղում է ոչ միայն փիլիսոփայութիւնը, այլեւ լեզուաբանութիւնը, մատեմատիկան, երաժշտութիւնը, բնագիտութիւնը, գծագրութիւնը, ինչպէս եւ անտեսանելիի (*էզոթերիք*) գիտութիւնը:  
Երբ ձեռքի մատներով հաշուումներ ենք կատարում՝ աջ ձեռքի դէպի երկինք ցցուած բութ մատը ներկայացնում է «մէկ» թիւը: Իսկ մէկն ու միակը առաջին հերթին պատկերում է երկնքի բարձրեալին, Աստծուն: Մի՞թէ Աստուած բութ է, պիտի ասէք: Ոչ ի հարկէ: Մենք ենք բութ Աստուծոյ առաջ, նա մե՛զ համար է անհասկանալի ուստի եւ մեզ է ներկայանում բութ մատի կերպարանքով, որպէս «չհասկացուած» մի իրողութիւն:

Չ՞է որ բութ մատը՝ հակառակ իր անուանը, մատներից ամենագործունիան ու օգտաշատն է:

Ահա թե ինչն՞ է բութ մատը բարձրացնելով հասկանում ենք «գերազանց, հրաշալի, կատարելա»:

Ահա թե ինչն՞ է «Մէկ»-ը ներկայացնող «Ա» տառը Աստուած ու Աստուածային է նշանակում, նաեւ գերագոյն, վերին:

Ահա թե ինչն՞ է մկրտութեան արարողութեան ընթացքում քահանան աջ ձեռքի բութ մատով է միւռնը քսում ենթակայի անդամներին ու կնքում:

Ահա թե ինչն՞ է ֆրանսերէնում «Աս»-ը, անգլերէնում Ace-ը կամ ռուսերէնում «դուզ»-ը որպէս «մէկ»՝ թղթախաղում հզօրագոյն կարդն է: «Աս»-ի մասին «Ասիայ» անունը վերլուծելիս խօսեցինք (*Նայել ստորեւ «ասուն» եւ «անասուն» բառերի վերլուծութեան*): Իսկ ռուս. «դուզ»-ը հայերէնում մնացել է «Դոյզն», «Դուզնաքեայ» բառերում, ինչպէս եւ Դերսիմի Ալեւի-Եզիդի քրտերի մօտ «Դուզիկ»-«Դուժիկ Բաբայ»-ի մէջ, որպէս գլխաւոր եւ միակ Յայր Աստուած:

Սրանցով չի աւարտուում Բութ մատի բովանդակութիւնը: Ռուսների (*եւ ոչ միայն նրանց*) օգտագործած «երեքի կոմբինացիայ»-ում բութը ներկայանում է որպէս արական բնոյթ: Քանզի «Ա»-ն (*մեր փոքրատառը*) ընդհանրապէս բոլոր լեզուներում պատկերում է նաեւ արական բնոյթը:

Աջ ցուցամատի թուային արժէքն է «երկուս»-ը, ինչը այբուբեններում «Բ»-ն է, «Բան»-ը, որն ի սկզբանէ էր: Բանը առաջին հերթին հոգին է ու շունչը: «Բան»-խօսքը հոգու եւ մտքի միասնական դրսեւորումն է: Միտքն ու լուսապսակ-աուրան գլխից են ծագում եւ աստուածային են, իսկ հոգին սրտում է եւ հայրատուր (*բայց շնորհողը նոյնպէս Աստուածն է*): «Բանել»-ը պարզապէս «աշխատել» չի նշանակում, այլ «հոգուով աշխատել», «գործի մէջ միտք ու հոգի դնել»:

Բթամատ-Աստուածային թիւն ու Յուցամատ-հոգու թիւը միասնաբար անսայթաք գործող մատներն են: Երբ երկուսը միաժամանակ ցցուած են՝ ուրուագծում են Բումերանգը: Դա Աստուածային հոգու նիւթականացուած կերպարն է:

Բումերանգը նոյն իմաստաբանութեամբ ու պատկերով մեզ է աւանդուել «1» տառով, «2» թուով: Արաբների (*Պարսիկ-*

ների, Պակիստանցիների եւայլն) ներկայիս օգտագործած թուային համակարգում «2»-ը պատկերւում է նոյն «L»-ի տեսքով, մի քիչ դիրքափոխուած, այսպէս.

պատկեր 1

Պատահականութեամբ թէ գիտակցուած՝ խորհրդային մատերիալիստները ոչ միայն եկեղեցիները քանդեցին, այլեւ մեր այբուբենից դուրս շարտեցին հոգու պատկերը եղող «L»-ը, եւ Հայոց արեւելեան հատուածը մնաց անհոգի այբուբենով, ու կրթուեց անհոգի գիտութեամբ:

Ցուցամատի ու միջնեմատի զուգորդումով «Յաղթութիւն կամ յաղթանակ» նշանակող V արտայայտութիւնը չի բխում լոկ անգլերէնի «Victory» բառից, ոչ էլ հռովմէական «հինգ» թուանշանի խորհրդից, որտեղ V-ի իմաստն ու թուային արժէքը աղաւաղուած են:

«V»-ի արմատները քաղաքակրթութեան ամենախորքերում են: Դրան հանդիպեցինք Ուրարտական դրօշակում, հանդիպում ենք մարդկութեան ամենահին տարազների պատկերներում, կուժերի վրայ, գորգերում, եւայն: Դա ե՛լ թռչունն է, ե՛լ խոյը, ե՛լ է-էութեան թիւը: Այդ թիւն ունենալ՝ նշանակում է լինել «է»-ի (*Աստուծոյ*) որդի, Նրան մարմնաւորել երկրի վրայ, ուստի եւ դրանով արտայայտուած թագն ու «յաղթանակ»-ը առաջին հերթին հոգեւորի յաղթանակն է նիւթապաշտութեան դէմ:

Քրիստոսն ասել է «Ես եմ Ալֆան ու Օմեկան», որտեղ «Ալֆան» պարունակում է այբուբենի «Ա»-ն եւ «Բ»-ն, իսկ «Օմեկան» հայոց այբուբենական շարքում «Ք»-ն է: Այս երէքը միասնաբար ներկայացնում են աստուածային երրորդութիւնը: Մարդկային երրորդութիւնն սկսւում է «Գ»-ից, միջնեմատից, որը «երէք» թիւն է, բայց մարդ էութեան (*նաեւ շնչաւորների*) առաջատարն է, գլուխը:

Մատնեմատը «չորս»-ն է ու չորրորդը: Բայց էութիւն-երրորդութեան սիրտն է ու երկրորդ կենտրոնը, նաեւ «Դ» տառը:


Երբ հոգեւոր հայրերը – Ամենայն Հայոց հայրապետը, Հռոմովմի Պապը – ուզում են օրհնել հաւատացեալ բազմութեանը՝ միացնում են աջ ձեռքի բթամատն ու մատնեմատը ու մատների այդ դիրքով օդում խաչակնքում: Ի՞նչ է դրա խորհուրդը: Պարզե-

ցինք, որ բթամատը խորհրդանշում է Աստծուն, իսկ մատնեմատը մարդ-էութեան սիրտը: Դրանց շաղկապումը նշանակում է մարդկանց սրտերի ու Աստուծոյ միջեւ կապի կամ հաղորդակցութեան հաստատումը խաչ-սիրոյ միջոցով:

Մատնեմատին դրուող ամուսնական մատանին առաջին հերթին նշանակում է երկու էութիւնների սրտերի միասնութիւնը:

2. Գայոց այբուբենի կառուցուածքն ու խորհուրդները

Նախորդ յօդուածում ասացինք, որ մեզ տեսանելի ու հասանելի ամէն ինչ լոյս է կամ լոյսերի համադրութիւն: Առաջնորդուելով սբ. Մ. Մաշտոցի ավանդած Սուրբ Երրորդութեան սկզբունքով՝ գտել ենք, որ տառերի բաղադրիչները ընդամենը չորս տեսակի լոյսեր են, այսպէս.-




Նկատելի է, որ առաջին երէք գծագրերը «L»-լոյսի տարբեր դրսեւորումներն են, ու բումերանգի երէք տարբերակները:

Լոյսերի այս չորս տեսակները տառերի մէջ տարբեր դիրքերում յայտնուելով՝ կ'ունենան որակական փոփոխութիւններ, բայց ոչ էական: Անհրաժեշտ է կրկնել, որ բումերանգը (L-ն) առաջանում է բութ մատից եւ ցուցամատից, եւ նիւթականացուած պատկերն է Աստուածային Բանի ու Գոգու, որը շարժիչ ոյժն է եւ ճշգրիտ գիտութիւնների աղբիւրը: Պատահական չէ, որ գրաբարում որոշ պայմանների տակ «L»-ին փոխարինում է «բ»-ն, օրինակ՝ գործիական հոլովում «բան»-«բանի»-«բանի-ւ», բայց «աստղ-աստեղ-աստեղ»:


«4»-րորդ գծագիրը որեւէ էակի ողնաշարն է, մարմինը, որին կ'աւելանայ բումերանգ-հոգին (պատկեր «2» եւ նա կը դառնայ շնչաւոր: Իսկ միւս բումերանգ-լոյսերը (շնորհները) էակին կամ անձին կը տրուեն ըստ ընկալունակութեան: Եթէ շնչաւորը մարդ է՝ նրան կը տրուի կատարեալ ուղեղային («ուս»-ի) փառապսակ, եթէ կենդանի է՝ «ուշ»-ի փառապսակ-բումերանգ, եւայլն:

Բումերանգներն ունեն դիրքային տարբերակներ, որոնք բխում են տիեզերքի խորհրդանիշ շրջանագծից, երբ մատնեմա-

տիկօրէն բաժանում ենք դա x հորիզոնական եւ y ուղղահայեաց հատուածների (պատկեր «3»-ում թանձրացուած հատուածները)




պատկեր «3»



պատկեր «4»

Այդ բուններանգներին հաստատուն տեսք տալու համար դրանց բութ անկիւնները վերածենք ուղիղ անկեան (պատկեր «4»):

Նոյն ձեւով էլ՝ այլ համաձայնութիւններ ունեցող «բուններանգները» պատկերելով, կ'ունենանք այբուբենում գործող անհատ «բուններանգների» այսպիսի մի շարք (պատկեր «5»):-



պատկեր «5»

12 բուններանգներից իւրաքանչիւրն ունի ինքնուրոյն խորհուրդ: Դրանցով կը բացայայտուեն տառերի իմաստները: Այդ միջոցով կարելի է բանալ բառերի բուն բովանդակութիւնը:

«Թիթեռնիկ»-ի բացատրութեան մէջ մենք անդրադարձանք դրանց հիմնական խորհուրդներին: Փորձենք մանրամասնել:

Պատկեր «5»-ում

Գծ. «1»-ը տիեզերական որել է լոյս է: «2»-ը Աստուածապարգել լոյսն է: «3»-ը երկրային որել է լոյս է: «4»-ը երկրի լոյսն է:

Գծ. «5»-ը երկնային որել է հոգեւոր լոյս է: «6»-ը Աստուածապարգել հոգեւոր լոյսն է: «7»-ն երկրային որել է հոգեւոր լոյս է: «8»-ն երկրի հոգեւոր լոյսն է:



Գծ. «9»-ն հայրապարգել լուսապսակն է: «10»-ն Աստ-  
լածապարգել լուսապսակն է: «11»-ը մայրապարգել լուսապար-  
սակն է: «12»-ը երկրի պարգելած լուսապսակն է:

Վերադառնանք պատկեր «2»-ին:

Այնտեղ գծ. «4»-ը էութեան լոյսն է, ողնաշարը, որն ունի  
զարգացման բոլորովին այլ սկզբունք:

Մաշտոցն ասում է, որ էութիւնն ունի կեանքի երեք փուլ:

Սակայն մինչեւ այդ փուլերին անցնելը՝ էութեան հոգի-սեր-  
մը գտնուում է անձի հօր մէջ: Դա «ոչինչ»-ն է եւ պատկերւում է  
«շեշտ»-ով (*պատկեր «6»-ի գծագիր «1»*): Հոգու մարմնաւորման  
առաջին քայլը այն է՝ երբ մայրական ծուին (*նիւթեղէն հունքին*)  
է փոխանցուում հայրական սիրոյ հուրը (*շեշտը*) եւ սկսուում է  
սաղմնաւորումը: Այս փուլը էակի բացարձակ անգիտակից ժա-  
մանակն է եւ պատկերւում է փոքր «բութ»-ով (*պատկեր «6»-ի  
գծ. «2»*): Փոքր «բութ»-ը խորհրդանշում է նաեւ առաջին փուլի  
աւարտին տրուած աստուածապարգել կայծը (*լուսապսակը*),  
որի ներգործութեամբ միայն էութիւնը կարող է ծնուել: Էակի  
կեանքի երկրորդ փուլը անչափահասութեան շրջանն է, երբ ապ-  
րում ու աճում է դեռեւս հենուելով ծնողների եւ հարազատների  
օժանդակութեանը. պատկերւում է մեծ բութով (*պատկեր «6»-ի  
գծ. «3»*): Երրորդը չափահասութեան շրջանն է, երբ էութիւնը ար-  
դէն իսկ կայացած է եւ ներկայանում է տառերում յաճախ օգտա-  
գործուող ուղղահայեաց գծով (*պտկ. «6»-ի գծ. «4»*):

գծ. «1» «2» «3» «4»  
պատկեր «6»

Պատկեր «6»-ի մասնիկների գաղափարային հիմքի վրայ  
են կառուցուած սեպագիր տառերը: Սեպախմբի սեպերի ա-  
տոցեան այբուբենի «ժամանակ»-ի բաղադրիչ հորիզոնական  
գծիկին:

Համոզուած ենք, որ սոյն 16 մասնիկներն ու դրանց խոր-  
հուրդները ոչ միայն Հայոց այբուբենի հիմքերն են, այլ ան-  
կասկած մարդկութեան ծանօթ բոլոր այբուբենների:

Ներկայացնենք Հայոց այբուբենի իւրաքանչիւր տառն իր

հոգեւոր, լուսապսակային եւ էական բաղադրիչներով, ըստ սեր պատկերացումների: Հիմք ենք վերցրել վաստակաշատ լեզուաբան Վահան Սարգսեանի «Հայոց Գրերի Ծագումը» երկուն բերած տառերի հնագոյն կերպարանքները:

- 1.«Ա» - 2.«Բ» - 3.«Գ» - 4.«Դ» - 5.«Ե» - 6.«Զ» - 7.«Է» - 8.«Ը» - 9.«Թ»  
 10.«Ժ» - 11.«Ի» - 12.«Լ» - 13.«Խ» - 14.«Ծ» - 15.«Կ» - 16.«Հ» - 17.«Ձ» - 18.«Ղ»  
 19.«Ճ» - 20.«Մ» - 21.«Յ» - 22.«Ն» - 23.«Շ» - 24.«Ո» - 25.«Չ» - 26.«Պ» - 27.«Ջ»  
 28.«Ռ» - 29.«Ս» - 30.«Վ» - 31.«Տ» - 32.«Ր» - 33.«Ց» - 34.«Բ» - 35.«Փ» - 36.«Ք»

**Վերադառնանք լարախաղացին:**

Պատահականութիւն չէ, որ դեռեւս ոչ վաղ անցեալում լարախաղացները իրենց վարպետութիւնը ցուցադրել են յատկապէս կրօնական մեծ տօների օրերում (*Նաւասարդեան տօնախմբութիւններում, Չատկի օրերում*), վանքերի հարեւանութեամբ: Լարախաղացն ու նրա օգնականը, նրանց ներկայացումն ու հանդերձանքները ունեցել են ծիսական ու խորհրդապաշտական, ինչպէս եւ դաստիարակչական խորք: Դրանք անմիջականօրէն կապ ունեն այբուբենի կառուցուածքի ու խորհուրդների հետ:

Լարախաղացի լարը ամրացնող չորս ցիցերը էութեան առաջընթացը ապահովող չորս սիւներն են (*սբ. Գրիգոր Լուսաւորչի ակնարկած չորս սիւները*): Պարանը՝ ապրելու համար տրուած տեւողութեան ժամանակամիջոցն է, որը պէտք է անցնել արեւնուտքից դէպի արեւելք (*Ժմնդից զարգացում*): Եթէ էակը ձգտի կամ թեքուի դէպի աջ կամ ձախ՝ կը դատապարտուի ընկնել-մեռնելու: Այսինքն նա իրաւունք չունի ծայրահեղ մտաւորական եւ կամ ծայրահեղ միութապաշտ լինելու: Երկուսն էլ մահացու են: Քանզի «աջ»-ը հոգեւոր-մտաւոր ոլորտն է, իսկ «ձախ»-ը՝ ֆիզիկական, միութական: Անձը՝ երկրի երկբնոյթ իրականութեան պայմաններում, պէտք է կարողանայ հաւասարակշռել

իր գործունեությունը, յատկապես թռիչքներ կատարելու պահերին (*հոգեւոր, գիտական թռիչք*):

Պարան-ժամանակամիջոցը այբուբենում արտայայտուում է կցորդող հորիզոնական գծիկներով (*պտկ. «7»-ում սլաքներով նշուած*), որոնք հասունացման տարբեր պարբերաշրջանների տեւողութիւններն են, երաժշտական տերմինով՝ «ինտերվալները», հայերէնով՝ «ամանակ»-ները:



պատկեր «7»

Լարախաղացը պարանի վրայ հասուն եւ գործող մարդն է (*պատկեր «6»-ում գծ. «4»*):

Ասպարէզ դուրս գալու համար, նա մագլցում է շեղադիր պարանով - մեծ բութով (*պտկ. «6»-ում գծ. «3»*), ցոյց տալով անչափահասութիւնից չափահասութեան եւ ինքնագործունեութեան անցման ուղին ու խորհուրդը:

Մինչեւ դուրս կը գայ այդ ճանապարհը՝ նա գետնի վրայ է եւ «ոչինչ» է (*նախ հոր մէջ է, ապա մօր արգանդում*):


Նրա օգնական ծաղրածուն ոչնչութեան եւ անգիտակցութեան մէջ մոլորուած անձն է, (*հոգին «քաւարանում», որի մէջ պէտք է հասկանալ նաեւ անգիտակից կենդանական կենցաղը*), որը չի արժանացել մարմինաւորուելու որպէս ՄԱՐԴ եւ կեանք մտնելու: Նա փորձում է հետեւել լարախաղացին՝ բայց ընկնում է առաջին իսկ քայլից, որովհետեւ դեռեւս չգիտի իր անելիքը լոյս աշխարհում (*մահացող նորածինը, մանուկը*): Նա ստիպւած է ողորմութիւն խնդրել ներկաներից (*հրեշտակներից*) մտաւոր-հոգեւոր տհասութիւնից դուրս գալու համար, նաեւ խնդրել Աստուծոյ ողորմածութիւնը՝ վերստին մարդ ծնուելու համար:

Կեանքի յիշեալ փուլերը առնչութիւն ունեն երաժշտական գլխաւոր 4 ձայնանիշերի հետ, 4 գլխաւոր գոյների հետ, ճառագայթի 4 գլխաւոր տեսակների հետ եւ այլն:

Էութեան գոյութեան տարբեր պարբերաշրջաններն ունեն նաեւ հակառակ ընթացք, ծերութիւն-իմաստութիւն, պառաւութիւն (*երբ հենարան-գաւազանով են շարժուում*), մահ՝ եւ մեծաւ

մասամբ կրկին «ոչինչ»: Հակադարձ 4 միաւորների հետ (8 փուլերով) ամբողջանում է շրջանառութիւնը, փակուում է շրջանակը, սկիզբ տալով նոր մի պարբերաշրջանի, նոր կեանքի:

Գորգերի վրայ հանդիպում ենք «լարախաղաց»-ի (ուխաջի) խորհրդին (պատկեր 8), սակայն խորհրդապաշտական փոքր ինչ այլ իմաստաւորումով, կապուած լարն ամրացնող չորս հեմարանների հետ:



Ինչպէս արդէն տեսանք «Յօդուած 6»-ում, պտկ. 9-ն նշանակում է «Աստուծոյ թիւը», որի մէջ կայ նաեւ «երկինք» գաղափարը: Իսկ պտկ. 10-ն ունի «երկիր» իմաստը: Ուստի լարախաղացի լարը մի կողմից ամրացուած է երկնքին, միւս կողմից՝ երկրին: Հետեւաբար լարախաղացը գտնուում է երկրի եւ երկնքի միջեւ: Նա կամ կը հասնի աստուածային բարձունքին, կամ էլ կը գլորուի երկրի անդունդները:

## ՅՕԴՈՒԱԾ «8»

### ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՅՐՈՒԴԻՈՎ՝ «2»

*«Հանապազ ակն կալեալ ինամակալ աջոյն,  
որ զօրացուցանէ գլուսացեալս իւր.  
զի իմանալեաց աչաց եւ երեւելեաց լոյս  
նորա է (յոյսն նա է)»:*

Մ. Մաշտոց՝ «Յաճախապատում ճառք»

Թարգմ.

*Միշտ հետեւել ինամակալի մտքին,  
որը կը զօրացնի նրան յուսացողներին.  
որովհետեւ աչքերով իմանալիների լոյսը  
եւ յայտնուելիք լոյսերը նրանում են:*

Շարունակենք մտորումները տառերի իմաստների մասին: Մ.Մաշտոցն հանճարեղ օրինակ է բերում, որ կարողանանք ըմբռնել, թե իւրաքանչիւր տառն ունի իր իմաստը:

«Եւ եթէ ոչ էր խաւար, լոյս իւ անուանէր տիւ», ապա՝ «Որպէս կոչեաց զլոյսն տիւ, սկիզբն արար կարգելոց պատմութեանն, զի թիւ անկցին»:

Այսինքն երբ «իւ»-խաւարը «տ»-ով կամ լոյսով վերացաւ ունեցանք տիւ=ցերեկը: Նաեւ երբ հրաւիրեց լոյսին (*Նաեւ էակի՞*) երեւութանալու՝ սկիզբ դրաւ պատմութեան ընթացքին, քանզի լոյսն ու էակները թիւով են ծնւում»:

Ինչպէս տեսնում ենք օրինակից, «Լոյս» կամ «տ» գումարած «իւ» լինում է «տիւ», ցերեկ, «թ» գումարած «իւ» ստացւում է «թիւ», թուականութիւն: Սրանից եզրակացնում ենք, որ իւրաքանչիւր տառ պէտք է ունենայ իր նախնական հաստատուն իմաստը, որպէսզի կարողանայ մի՛ հարուածով այսքան տարիմաստ բառեր կազմել:

Ի՞նչ է նշանակում «իւ»-ը հայերէնում: Ճիշդ է որ ըստ Մաշտոցի «խաւար» է նշանակում, սակայն դա ամբողջական բովանդակութիւնը չէ: Գրաբարում ունենք «իւ իւիք» արտայայտութիւնը, որի իմաստը դեռեւս յստակ չէ: Ընդունուած է թէ «իւնչով» է նշանակում: Արեւմտահայոց մօտ կայ ժողովրդական մի խօսք՝ «իւիք տիւիք ընել», այսինքն գիշերներն ու ցերեկները իրար խառնելով տքնել, ինչը համապատասխանում է Մաշտոցի տուեալներին:

Պարզելու համար «իւ»-ի առաւել խոր բովանդակութիւնը, դիմենք անգլերէնի օգնութեան:

Անգլերէնի «Eve»-ը «նախօրէ» իմաստով համապատասխանում է հայոց «իւ»-ին: Դրանից է կառուցուած «evening»-«երեկո»-ն, որը մեր կարծիքով նախկինում ունեցել է «նախօրէացում» իմաստը, այսինքն ցերեկից անցումը գիշերային ժամերին: Անգլերէնում «Eve»-ի երկրորդ իմաստն է «Եւայ», սակայն հայերէնում «իւ»-ը ուղղակիօրէն Եւան կամ կինը չէ, քանզի «իւ»-ը բովանդակում է առաւել ընդհանրական եւ ծաւալուն իմաստ, ինչի համար էլ մեր պապերը առանձնացրել են «Եւայ»-ն «իւ»-ից:

«Իւ»-ը տառացիօրէն ոչ թէ «ունայն խաւար»-ն է կամ «քառս»-ը, ինչպէս Աստուածաշնչեան մեկնութիւններում, այլ ապրող

շնչաւոր էակի («ւ»-ի) «ստատիկ» կամ չէզոք վիճակում գտնուող ներուժն է («ի»-ձ): «Տիւ»-ը շնչաւոր էակի ու նրա ներուժի չէզոք վիճակից անցումն է գործունէութեան: «Տ»-ն մի դէպքում «նախօրէին» կամ երկրին տրուած Աստուծոյ եւ արեւի սիրոյ ջերմութիւնն է, երկրորդ դէպքում իգական բնոյթին կամ կնոջը տրուած արական սիրոյ էներգակիրն է. գիտական տերմինով կարելի է նոյնացնել «քվանտ»-ի հետ:

Տառերի իմաստները շօշափող մի քանի օրինակ բերենք մեր կողմից:

«Չէ» բառը մեր լեզուամտածողութեամբ ունի ժխտական իմաստ, այսինքն «է»-ն չկայ: Գտել ենք, որ «Չ»-ն նշանակում է «չափ» եւ «պուլս», «ճառագայթում»: Դնելով «պուլս»-ը դրա փոխարէն՝ ստանում ենք «պուլս էութեան», այսինքն զգում ենք էութեան պուլսը, իսկ էութիւնը ֆիզիկապէս անտեսանելի է մեզ համար: Երկրորդ առումով «չ»-ն որպէս «չափ», նաեւ սահման է, ուստի ունենք «սահմանուած էութիւն» կամ «սահմանափակուած էութիւն», այսինքն էութիւնը ինքնագոյ է եւ ուրիշների վրայ ներգործութիւն չունի: Երրորդ առումով նոյնպէս «չ»-ն որպէս չափ՝ նշանակում է «չափուած» այսինքն «չէ»-ի պարագայում խօսք է գնում մեր կողմից ճանաչուած էութեան մասին, ինչպէս եթէ ասենք «այս գիրքը իմն չէ», կը հասկանանք թէ տուեալ գիրքը մենք «չափել ենք», քննել եւ չի համապատասխանում մեր կամ այլոց պահանջածին:

Նոյն տրամաբանութեամբ էլ «չար»-ը «չափուած ար» է, այսինքն «սահմանափակ լոյս» է եւ չարութիւնը սահմանափակութեան կամ տգիտութեան արդիւնք է:

Մեր այսօր օգտագործած «աչք» բառը երբէք էլ գրաբարեան «ակն»-ը չէ: «Աչ»-ը «ա»-ի կամ արեւի «չ»-ն է, պուլսն է, այլապէս արեւի (*տեսանող*) «ճառագայթ»-ն է: Իւրաքանչիւր մարդու ակնից բխում է նաեւ տեսանող իր ճառագայթը: Երբ ասում ենք «աչքով տուաւ»՝ չի նշանակում թէ ուղղակիօրէն «ակնով հարուածեց»: Ակն-աչքը թելեր չունի որ հարուած հասցնի: Սակայն դա ունի ճառագայթ, մէկի մօտ թոյլ, մէկի մօտ զօրեղ: Եւ «աչքով տալ»-ը հենց ակնի զօրեղ ճառագայթով հարուածելն է: Թող թէ գիտնականները չեն ընդունում դրա գոյութիւնը: Երեւի նրանցից ոչ մէկը խաւարում չի տեսել կատուի կամ գայլի փայլող աչքեր:

Հայկական այբուբենի «Լ»-ը ունի բունտրանգի ձևեր: Դա հոգու պատկերն է, կամ մարմնաւորուած հոգին է: Իսկ հոգին անմահ է եւ մեր մահից յետոյ վերադառնում է տիրոջը, Աստծուն, ինչպէս բունտրանգը: Հիւնը կամ վիւնը փոքրիկ «Լ» է, փոքրիկ լոյս է, եւ քանի որ հոգու պատկերն է, զայն կոչել ենք «հոգեւոր լոյս»: Դա այբուբենի տառերի հիմնական բաղադրիչն է:


Արտակ Ե. Մովսիսեանի «Վանի Թագաւորութեան Մեհենագրութիւնը» աշխատութեան մէջ, XXVII աղիւսակի նկար 257-ում (*ստորեւ պատկեր «1»*), աջից ձախ թեքուող «1-1» անկիւնակը բունտրանգ-լուսապսակն է, իսկ ձախից աջ թեքուող «1-2»-ն՝ բունտրանգ-հոգին:



պտկ. «1»      «1-1»      «1-2»

Այստեղ էութիւնը բացակայում է, քանզի ուղղահայեաց գիծը չկայ: Ուստի կարելի է եզրակացնել, որ պատկերի գաղափարն է «լուսապսակ՝ հոգուն»: Կարծում ենք, որ սա խնդրագիր է Աստծուն ուղղուած, որպէսզի նա լուսապսակ տայ մահացածի կամ արգանդի սաղմուն գտնուող հոգուն, որ առաջինը վերածնուի իսկ երկրորդը՝ ծնուի:

Մովսիսեանի յիշեալ գրքի XXVII աղիւսակի 237-րորդ գծագրում նկարուած է արաբական այբուբենի «լամալէֆ» տառը այսպէս.-



պտկ. «2»      «2-1»      «2-2»

Դա հնչում է «Լա՛» եւ նշանակում է «չէ», «ոչ»:

Մեր «չէ» բառի մեկնաբանութեան առաջին հատուածը համընկնում է արաբերէն «Լա՛»-ի տուեալներին: Աջից ձախ թեքուող «2-1» անկիւնակը հենց մեր «Լ» տառն է, հայելային արտացոլմամբ: Իսկ ուղղահայեաց «2-2» գիծը՝ էութիւնն է: Հետեւաբար կայ «էութեան լոյսը», բայց ոչ էութիւնը: Այստեղ բացակայում է «չափ»-ի գաղափարը:

Այժմ ձեր ուշադրութեանն յանձնենք մտով-ոսկորով երկու բառ, որոնք անմիջականօրէն առնչուում են «Լ»-ին կամ «հոգու պատկերին»:

Բոլորիս յայտնի է «հոյակապ» բառը, իսկ ճարտարապետական գրականության մէջ կայ «խոյակապ»-ը:



Բառարաններում դրանք նոյնացուած են: Մինչդեռ լեզուում «հենց էդպէս» հոմանիշ բառեր չեն եղել: Հոմանիշները անպայման արտայայտել են իմաստային նրբերանգներ:

Ջարմանալի է, որ առաւել դիւրըմբռնելի «խոյակապ»-ը դուրս է մղուել օգտագործումից, իսկ վերացական դարձած «հոյակապ»-ը շրջանառութեան մէջ է:

Պէտք է ասել, որ լեզուի մէջ չեն եղել վերացական բառեր: Ներկայի վերացականութիւնը առաջացել է իմացականութեան խամրելուց (*միայն մատերիալիստական չափանիշերն ընդունելուց*):

«Հոյակապ»-ը նշանակում է «հոգու պատկերով կապուած շինութիւն»:

Հին ճարտարապետութեան մէջ ընդունուած է եղել հոգեւոր շինութեան ծածկը հոգու պատկերով կառուցել: Մեզ յայտնի յունա-հռովմէական հոգեւոր շինութիւնների ծածկերը եղել են «L» ձեւի, ինչը հենց «L» տառի կամ բուներանգ-հոգու դիրքափոխուած պատկերն է: Հետեւաբար «հոյակապ»-ը այն շինութիւնն է, որն ունի հոգու պատկերով ծածկ, ինչը համապատասխանում է մեր «Ո»-ի երկրորդ գծագրին, պատկեր «3»:



Իսկ «խոյակապ»-ը չինա-ճապոնական ոճի ծածկ ունեցող շինութիւնն է, որը նման է «Ա»-ի նախնական գծագրին, պատկեր «4»:


Խնդիրն այն է, որ Հայաստանում այսօր էլ շինութիւնների ծածկերը պատկեր «3»-ի օրինակով են, եւ չկան կամ չեն պահպանուել «4»-ի նման ծածկոյթ ունեցող շինութիւններ, ինչի պատճառով էլ «խոյակապ»-ը վերացել է լեզուական շրջանառութիւնից, իսկ «հոյակապ»-ը մնացել:

Մեր լեզուում «խոյակապ»-ը ամբողջութեամբ չի վերացել: Դրա առաջին արմատը առկայ է «խոյակ» բառում, որտեղ «խոյ»-ը սիւնն է, ճառագայթն է, իսկ «ակ»-ը ճառագայթի աղբիւրն է:

Ներկայացնենք Սիւնիքում յայտնաբերուած մի ժայռապատկեր եւ բացայայտենք բովանդակութիւնը (*պատկեր «5»*):



Նայել Վահան Սարգսեանի «Հայոց Գրերի Ծագումը», էջ 64)



Պատկեր «5»-ի վերին կենդանին (5-1) արական բնոյթ ունի, որովհետեւ պոչը ցցած է, իսկ ներքեւինը (5-2) իգական բնոյթի է, քանզի պոչը կախ է ու ամօթանքը ծածկած, ուստի վերինը ցուլ է, ստորինը կով:

Այստեղ պատկերուած է արական ու իգական էութիւնների մերձեցումն ու «ամբողջականացումը», որից պիտի ծլարձակի մի նոր էութիւն (5-3), իր ողնաշարով (*միջանկեալ երկար գիծը*) եւ չորս հիմնական բաղադրիչներով («5-3»-ում չորս օղակներն ու հորիզոնական գծիկները):

Սոյն ժայռապատկերից բխում է Մաշտոցեան «3» տառը, ցուլի ու կովի կոտոշ-մահիկների շաղկապմամբ:

Իսկ միջանկեալ հորիզոնական երկար գիծն ու քառանիստ վերջոյթը գտնում ենք «3» տառի աւանդուած հնագոյն կերպարանքներից մէկի մէջ (Վ. Սարգսեան, նոյն, էջ 102), պատկեր «6»-ում:



պտկ. «6»

Պատկեր «5»-ի ժայռապատկերում ցուլի եւ կովի կոտոշները «3»-ի «կոտոշների» համեմատ հակառակ ուղղութեամբ են: Նոյնն էր արաբերէնի ու հայերէնի «Լ» տառի պարագայում (*պատկեր «2», «2-1»*): Երեւոյթի մէջ թաքնուած է աջից ձախ կամ ձախից աջ գրելու խորհուրդը:

Ձախից աջ գրելը նշանակում է արեւմուտքից, խաւարից (*չգոյից*) գնալ դէպի արեւելեք՝ լոյս. այսինքն ծնուել ու լուսաւորուելով հասնել կատարելութեան:

Աջից ձախ գրելը նշանակում է արեւելքից կամ լոյսից գընալ դէպի արեւմուտք՝ խաւար. այսինքն կեանքից գնալ դէպի մահ, որն անմահութեան կը տանի: Աջից ձախ գրողները հաւատում են, որ իրենց դաւանած կրօնքն ու կենցաղավարութիւնը

կատարեալ են, այդ պատճառով էլ կարող են երկրային կեանքից անմիջապէս անցնել երկնայինին, կատարելութեան վերջին հանգրուանին կամ անմահութեան (*դրա համար էլ իսլամական աշխարհում կամաւոր մահապարտների շարքը չի ավարտուում*):

Հիմնադրոյթին հանդիպում ենք նաեւ քրիստոնէական կրօնական կառոյցներում:

Եկեղեցու մուտքը արեւմտեան կողմում է եւ այնտեղից եկեղեցի մտնելը նշանակում է ծնուել կամ վերածնուել, ինչին հետեւում է մարդու առաջընթացը դէպի խորան-արեւելք, լուսաւորելու Աստուածային լոյսով, ապա մոմ է վառում իր իսկ շահած դրամով, այսինքն ստացածի փոխարէն իր ներդրումն է անում լուսաւորութեան գործում, ինչից յետոյ վերադառնում է դէպի արեւմուտք՝ մահ, վերածնուելու եւ առաւել եւս կատարելագործուելու համար:

Մենք կոտոշը անուանեցինք ոչ միայն լուսապսակ, այլեւ մահիկ: Ինչո՞ւ:

Մահիկը՝ Մահմետական կրօնի գլխաւոր խորհրդանիշը լինելուց առաջ, ունեցել է հնագոյն դիւցաբանական արմատներ: Չենք ժխտում, որ մահիկը կարող է առնչութիւն ունենալ լուսնի եւ լուսնապաշտութեան հետ, սակայն մեր խորին համոզմամբ՝ դա առաջին հերթին պատկերում է լուսապսակը: Քանզի մարդարարածը դրանով է կեանքի կոչում, լուսապսակի մաքրութեամբ է առողջ ու երկար ապրում, նաեւ իմացականութիւնը զարգացնում:

Ահա այս տեսանկիւնից էլ պէտք է ընկալել հնագոյն քանդակներում ներկայացող մահիկի խորհուրդը:

«Յ» տառում երկու մահիկ-կոտոշների, ուստի եւ էութեան երկնային ու երկրային լուսապսակների միասնականութեան հիմնական գաղափարն է դրուած: Հետեւաբար ժամանակի ընթացքում միջանկեալ հորիզոնական գիծն իր վերջոյթով հանդերձ կարճուել է:

Ի՞նչ ենք հասկանում «լուսապսակ» ասելով:

Լուսապսակ «Յ»-ն ընդհանուր առմամբ պատկերում է.-

1.«լուսային» էլեկտրամագնիսական դաշտը, որը անտեսանելի պաշտպան աւուրան է:

2. շօշափելի աւուրան, որը էակն իր մէջ ամփոփող ու նրան ձեւ տուող մաշկն է կամ մորթը:

Ունենալով երկտառ «Յի» անուանումը, «Յ»-ն մտնում է չեզոք բնոյթի տառերի շարքում: Այսինքն, մի տեղ կարող է լինել արական-դրական բնոյթի, ուրիշ տեղ՝ իգական-բացասական բնոյթի: Բայց «Յ»-«Լուսապսակ»-ը իրականում «պարունակիչ» է, «աման» է, որը կ'ամ դատարկ է, կամ էլ լիքը: Եթե դատարկ է ապա «բացասական» է, եթե լիքն է՝ ապա «դրական»: Սակայն լցուած լինելով հանդերձ կարող է նաեւ բացասական լինել, նայած թէ աղբո՞վ է լցուած թէ՛ ինչ որ արժեքով:

Այս ամենը զանազանելու համար «յ»-ին օգնութեան են գալիս «ա»-ն եւ «ո»-ն, եւ ունենք 1.«այ»՝ «արական բնոյթի», «դրական», «մեծ» եւ «լիքը» լուսապսակ, եւ 2.«ոյ»՝ «իգական բնոյթի» «բացասական», «փոքր» կամ «դատարկ» լուսապսակ:

Սրանց մէջ «արական բնոյթի»-ն նշանակում է «վերին», «երկնային», փոխանակ «ցցուն» եւ «տեսանելի» հասկացութեան:

Ջոկել է պէտք, ապա թէ ոչ՝ կ'ընկնենք թիրիմացութիւնների եւ անհեթեթութիւնների գիրկը:

«Յ» տառի թիւն է «300», որի 3-ը նշում է էութեան երեք գըլխաւոր հանգոյցները. գլուխը սիրտը եւ սեռական օրգանները, որոնցից իւրաքանչիւրն ունի երկու «0», այսինքն երկու հիմնական ակ (*աջ ու ձախ ուղեղ, սրտի աջ ու ձախ կէտերը, սեռական աջ ու ձախ ծուարանները*). նաեւ ցոյց է տալիս, որ այդ օրգաններն ունեն երկուական աշխատանքային ցիկլ, երկու որակի արտադրանք: Ձախակողմեան հատուածն ունի ֆիզիկական-նիւթական կամ իգական-բացասական բնոյթի ֆունկցիա եւ արտադրութիւն, իսկ աջակողմեանը՝ մտաւոր-հոգեւոր կամ արական-դրական բնոյթի ֆունկցիա եւ արտադրութիւն:

«Յ» տառի անուանումն է «Յի» (*հնչում է «Յի»*), որը նշանակում է «լուսապսակի իմաստութիւն», այսինքն աւուրայի ներոյժ, աւուրայի ազդեցութեան կամ գործունէութեան դաշտ եւ արտադրութիւն: Այդ դաշտը նաեւ էութեան պաշտպանական օղակն է:

Այդ պաշտպանական օղակ-լուսապսակին հանդիպում ենք նաեւ աստղաֆիզիկայի մէջ: Մեր պանծալի ակադեմիկոս Գրիգոր Գուրզադեանն իր «Մի Սիրո Պատմութիւն» գիտա-գեղարուեստական երկում խօսում է երկնային մոլորակների եւ բնական արբանեակների մասին, որոնք բոլորն էլ ունեն գի-

տականօրէն այսպէս կոչուած ինքնապաշտպանական «Ռոշի գոնա»: Դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ այդ մոլորակների լուսապսակային շերտը: Հետաքրքիրն այն է, որ երկրագնդի դէպքում այդ շերտը երկիր մոլորակի շառավիղի չորս անգամ մեծութեամբ է, իսկ Յուպիտերի դէպքում դրա շառավիղից միայն երկուսուկէ անգամ է մեծ: Այս յարաբերական տարբերութեան մասին նա մեկնաբանութիւն չի արել: Մեր կարծիքով, մոլորակը (*Մաեւ մարդը*) ինչքան մաքուր է ներքուստ – ֆիզիկապէս ու հոգեպէս – նրա լուսապսակը այդքան մեծ է, եւ ընդհակառակը: Այսինքն դա կարող է մեծանալ կամ փոքրանալ...:

Այժմ վերցնենք «Յ»-ով կառուցուած «Յարութիւն» բառը, որը բոլորիս ծանօթ է Յիսուսի յարութիւնից: Ի՞նչ է նշանակում: Բաժանենք բառը իր գլխաւոր մասերին. «Յ-արութիւն», որտեղ «յ»-ն լուսապսակն է, իսկ «արութիւն»-ը «առնելու գործընթացն է», այսինքն «լուսապսակ առնելու գործընթաց»-ը: Քրիստոնէական ըմբռնումով «Յարութիւն»-ը Աստուածատուր լուսային լուսապսակի վերընծայումն է անձի հոգուն եւ մարմնին: «Յիսուս» անունը նոյնպէս սկսւում է «Յ»-լուսապսակով, եւ բառն իր ամբողջութեան մէջ նշանակում է «լուսապսակի իմաստութիւնը սերմանող ուսմունք», նաեւ որպէս անձ՝ «լուսապսակի իմաստութիւնները ուսուցանող»:

«Յոյս» բառը մեծ տեղ ունի կեանքում: «Յոյս»-ը նշանակում է «լուսապսակ՝ ոյս-ին», «լուսապսակ՝ ապրող էակի մտքին եւ մարմնին», այսինքն մարդու մտքի պայծառացմամբ ֆիզիկականի եւ հոգեկանի վերականգնում: Սա վերացականութիւն չէ արդէն:

«Յարդ» նշանակում է ցորենի կամ հացահատիկի կեղեւ: Կեղեւի գաղափարը դրուած է հենց առաջին «յ» տառի մէջ: Բուսականութեան պարագայում լուսապսակը կեղեւն է, որի մէջ ամփոփուած է ամբողջ լուսեղէն էներգիան: Պատահական չէ, որ բժիշկներն ասուն են թէ մրգի կեղեւի մէջ է վիտամինների բուն քանակը: Բոյսերը նոյնպէս ունեն երկու լուսապսակ, սակայն միւթականացուած: Լուսեղէնին փոխարինում է արտաքին կեղեւը, իսկ մաշկին փոխարինում է կեղեւի եւ «մսի» միջեւ գտնուող բարակ թաղանթը:

## ՅՕԴՈՒԱԾ «9»

### ՁԱՅՆԱԻՈՐՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆՈՒՄ Երկբարբառներն ու դրանց հնչիւնները

(Հապաւումներով Կարդացուած Հայաստանի  
Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի  
Պատմութեան Ինստիտուտում 2005 թուականի  
Փետրուարին կայացած գիտաժողովում)

*«Իսկ եօթնագրեանք են այտքիկ, ա, ե, է, ը, ի, ո, ւ:  
Սորա են ախեալ եւ փակեալ տաճար, որով ...  
զփական դպրութեան ծանաչէ... զհետ սորա  
անհնարին հնարաւոր լիցի եւ դժուարին ի դիւրին»:*

«Եօթնագրեանք»

#### *Թարգմանենք.-*

*«Իսկ եօթ հնչիւնանիներն են՝ ա, ե, է, ը, ի, ո, ւ: Սրանք  
կապուած ու փակ տաճար են, որով դպրութեան փականն  
է ծանաչուում... դրանցով անհնարինը հնարաւոր կը դառ-  
նայ եւ դժուարինը դիւրին»:*

#### 1. ՁԱՅՆԱԻՈՐՆԵՐ

Անդրադառնանք հայերէնում ձայնաւոր տառերի մասին  
ակադեմիական ընդունուած սահմանումներին:

Հ.Դ. Մուրադեանն ասում է.

«Հայերենագիտական հետազոտություններում գրաբարի  
ձայնավորների համար ավանդաբար առանձնացվել են հետեւ-  
յալ միավորները՝ 'ա, ե, է, ո, ի, ու' որոնք փաստորեն, այսօրվա  
դրությամբ, համընկնում են գրական լեզվում ձայնավորներն  
արտահայտող տառերին»:<sup>1</sup>

Հարց է առաջանում թէ ադրեօ՞ք «Ը» ձայնաւոր չենք ունե-  
ցել եւ այժմ էլ չունենք, հակառակ որ ինքն իսկ օգտագործել է  
այն «համընկնում են» խօսքում, որպէս վանկարար ձայնաւոր:

Ապա խօսելով բարբառների մասին ասում է.

1. Հ.Դ.Մուրադեան, «Նայոց Լեզվի Պատմական Քերականություն», էջ 25, եր.:

«Կատարվող համեմատությունների ընթացքում առաջին բնորոշ առանձնահատկությունը, որ աչքի է ընկնում՝ այն է, որ բարբառներում արձանագրվող ձայնավոր հնչյուններն իրենց միավորների թվով միատարր չեն. նրանց քանակը 6-ից տատանվում է մինչև 12-ի»<sup>2</sup>:

Հետևում է, որ բարբառները կամ դրանցից ոմանք կրկնապատիկ ձայնաւոր հնչիւններ ունեն քան ներկայ գրականը... Ահա թէ ուր է թաքնուած շան գլուխը:

Արդեօ՞ք սբ. Մ. Մաշտոցի ժամանակ այդ բարբառները՝ հետևաբար նաեւ տուեալ հնչիւնները, չեն եղել: Եթէ եղել են՝ (ինչը ապացուցման կարիք չունի) ապա հարցերի շղթայ է առաջանում:

1. Մի՞թէ բարբառները մեր լեզուի մաս չեն կազմել սբ. Մ. Մաշտոցի ժամանակ:

2. Ո՞ւր են այն տառերը որոնք պէտք էր յատկացուէին բարբառներում մինչև այսօր գոյատեւող այդ ձայնաւոր հնչիւնների համար:

3. Ո՞վ է ասում, որ սբ. Մ. Մաշտոցն մեր լեզուի իւրաքանչիւր հնչիւնին տուել է համապատասխան մի տառ:

Այս առումով Էդ. Աղաեանն ասում է. «Մեսրոպյան այբուբենն ընդհանրապէս մեկ հնչյունին մեկ տառ սկզբունքի վրա է հիմնված»<sup>3</sup>:

4. Մի՞թէ գրաբարեան գրական լեզուն բարբառների համեմատ ունեցել է հնչիւնային սահմանափակումներ:

Վերջին ամփոփիչ հարցին ի պատասխան ասենք հաստատուն ո՛չ:

Սուրբ Մեսրոպ Մաշտոցն մեր այբուբենով կարողացել է արտայայտել մեր լեզուի բոլոր ձայնաւորները, որոնց քանակը հասնում է 36-ից 39-ի, իսկ չորս ամանակ-չափերով՝ 47-ից 54-ի:

Հակառակ մերօրեայ մասնագէտների զանազան ու հակասական պնդումներին՝ Դիոնիսիոս Թրակացին ու հայ թարգմանիչն ասում են. «Եւ նոցա (տառերի – Մ.Ս.) ձայնաւորք են ութ. «ա, ե, է, ը, ի, ո, ւ, փ»<sup>4</sup>:

2. Ն.Մուրադյան, «Նայոց Լեզվի Պատմական Քերականություն», էջ 32, Եր.:

3. Էդ. Աղայան, «Գրաբարի Քերականություն», էջ 92, հր. I, Եր. 1964:

4. Ն. Ադունց, «Արուեստ Դիոնիսեայ Քերականի եւ Նայ Մեկնութիւնք Նորին», «Զ. Յաղագս Տառի», էջ 5, Պետերբուրգ, 1915:

Թարգմանիչը չի կարողացել գտնել Օմեկային համապատասխանող հայկական տառը: Ըստ մեզ, դա Օմեկայի կանգնած-ուղղահայեաց դիրքն ունեցող «Յ» տառն է, ուստի ունենք «ա, ե, է, ը, ի, ո, ւ, յ» ութ ձայնաւորները:

Ըստ մեզ, դրանցից վեցը՝ «ա, ե, է, ը, ի, ո», կատարեալ ձայնաւորներ են, իսկ երկուսը՝ «ւ» եւ «յ», անկատար են: Մնացեալը կը ներկայացնենք ստորեւ:

2. «է», «ե» եւ «Ը» ձայնաւորների պարագան:

Պարտադրուած ենք քննարկել շատ կարելոր մի սկզբունքային հարց: «է» տառը ձայնաւոր է, թե՞ երկբարբառ: Հայ եւ օտար հայագէտ քերականներից ոմանք ընդունել են, որ դա երկբարբառ է, ինչից երեւում է, թէ նրանք թիրիմացութեան մէջ են: Քանզի երկբարբառը չի կարող մի տառից բաղկանալ: Նրանք շփոթել են նաեւ «է»-ի ու «ե»-ի հնչիւնները: Եթէ նկատի են ունեցել «է»-ի իբր «էյ» հնչելը՝ ապա իրաւացի չեն: Իսկ «ե»-ն իհարկէ հնչել է, եւ հնչում է «յէ», ինչի համար «ե»-ն պետք է անուանել ոչ թէ երկբարբառ, այլ «բաղադրեալ ձայնաւոր»: «ե»-ից բացի՝ այդպիսի բաղադրեալ ձայնաւոր է «ո»-ն, որը հնչում է «վո» եւ ոչ թէ «օ»: Օրինակ, «որակ» արտասանում ենք «վորակ» եւ ոչ թէ «օրակ», «որդի»՝ «վորդի» եւ ոչ թէ «օրդի»: Նոյնպէս եւ «ե»-ի պարագայում «երակ»՝ «յէրակ» եւ ոչ թէ «էրակ», «եղանակ»՝ «յէղանակ» եւ ոչ «էղանակ»:

Համոզուած ենք, որ «է»-ն ի սկզբանէ եղել է եւ կայ մաքուր ձայնաւոր: Սբ. Մեսրոպ Մաշտոցն «է» տառը անուանակոչել է «է» եւ ոչ թէ «էյ». նաեւ Դիոնիսիոս Թրակացու թարգմանիչը «է»-ն տեղադրել է ձայնաւորների մէջ եւ ոչ թէ երկբարբառների: Իսկ «ե»-ի անունը աւանդաբար հնչում է «յէ», որտեղ «յէ» երկտառ հնչիւնը ակնյայտ է, բայց եւ այնպէս, Թրակացու թարգմանիչը այն չի ներգրաւել երկբարբառների շարքում:

Նկատի ունենալով «է»-ն՝ Աղաեանն ասում է.

«Հնագոյն ժամանակներում նա երկբարբառ է եղել՝ էյ, այն հայտնի է բոլորին. հայտնի է նաեւ, որ ուշ շրջանի գրաբարում նա վերածվել է պարզ ձայնավորի, որ հանգեցրել է նրա եւ ե-ի նույնացման»:<sup>5</sup>

5. Աղայան, նոյն, էջ 134:

Հարց է առաջանում, թե ինչո՞ւ Մաշտոցն աւանդել է շփոթութեան տեղիք տուող «է»-ն եւ «ե»-ն եւ չի սահմանափակուել դրանցից մէկով: Ըստ մեզ, դա լուրջ իմաստասիրական խնդիր է, ինչը պարզաբանելը լեզուաբանների պարտականութիւնն էր:

Երկրորդ, թե ովքե՞ր են այն «բոլորը», որոնց յայտնի է չակերտեալ ճշմարտութիւնը, թե «է»ն «եյ» է եղել ու երկբարբառ՝ պարզ չէ: Եթէ այդ «բոլորը» ընդգրկում է Մեյէ-ին ու նրա հետեւորդներին՝ ապա ասուածը համոզիչ չէ: Արդեօ՞ք այսօր «էրեբունի» գրելով կարդում ենք «էրեբունի», կամ արեւմտահայերը գրելով «ամենագէտ»՝ կարդում են «ամենագէտ»:

Պարզենք թիրիմացութեան աղբիւրը, ինչը Աղաեանն ինքն է յուշում:

Անտուան Մեյէն իրաւացիօրէն գտել է, որ մեր «է»-ն համապատասխանում է Աւեստայի լեզուի ae-ին, ինչը սակայն երբէք չի նշանակում թե ae-ն հետեւաբար եւ «է»-ն հնչել են «էյ»: Քանզի՞ ըստ մեզ, Աւեստայի լեզուում «e»-ն նշանակում է ընդհանրապէս «եութիւն», առանց սեռական տարբերակման, իսկ «ae»-ն՝ տառացիօրէն պիտի լինի «արական բնոյթի եութիւն»-ը, ինչը հայոց այբուբենում արտայայտուում է «է»-ով: Նոյն տրամաբանութեամբ էլ Աւեստայի «oe»-ն պիտի փոխարինի հայոց «ճ»-ին, որը «իգական բնոյթի եութիւն»-ն է ներկայացնում:<sup>6</sup>

Աւեստայից Աղաեանի բերած օրինակները շատ խօսուն են.

Taega>տէգ, gaesa>գէս, paesa>պէս, vaega>վէգ, pairidaeza>պարտէգ, handaesa>հանդէս<sup>7</sup>, որոնց մէջ «ae»-երը համապատասխանել են հայոց «է»-ին, ու հնչել են ու հնչում են «է»:

Չիմանալով Աւեստայի «ae»-ի եւ հայերէնում նրան համապատասխանող «է»-ի իմաստաբանական խորքը՝ գիտնականները հանգել են թիւր եզրակացութիւնների, թե «է»-ն հաւասար է «եյ»-ի:

Յետեւութիւն.- Աւեստայի «ae»-ն եւ մեր «է» ծայնաւորը հնչել են «է» եւ ոչ թէ «էյ»:

Աղաեանի երկրորդ փաստարկն ու եզրակացութիւնն է.

6. Նայել «Յօդուած 6»-ում:

7. Էդ. Աղայան, նոյն, էջ 138:



«Շեշտակիր ձայնավորները՝ շեշտից զրկվելով ու նախաշեշտ դառնալով՝ ընկնում են կամ վերածվում Ը-ի, իսկ երկբարբառները վերածվում են պարզ ձայնավորի. Է-ն շեշտից զրկվելով դառնում է Ի, այսինքն կրում է երկբարբառներին հատուկ փոփոխություն ինչպես՝ դեզ-դիզեմ, ուրեմն նա երկբարբառ էր»:<sup>8</sup>

Մեջբերուած խօսքը այնպես է շարադասուած, որ կասկած է առաջացնում, թէ՛

1.«Ը»-ն ընդհանրապէս ձայնաւոր է թէ ոչ (*երելոյթին հանդիպեցինք նաեւ 3. Մուրադեանի մօտ*):

2.«Ը»-ն դասուում է պարզ ձայնաւորների շարքում թէ ոչ:

3.«Ի»-ն արդեօ՞ք յատկապէս երկբարբառներին առնչուելու կարգավիճակ ունեցող ձայնաւոր է:

Մենք համաձայն չենք Աղաեանի հետեւութեան հետ, ահա թէ ինչու.-

«Է»-ն ինչպէս վերելում նշեցինք, «արական բնոյթի եութին»-ն է եւ շեշտազրկուելով (*տկարանաւով*) չի կարող «Ը»-ի, այսինքն «իգական բնոյթի եութեան» փոխակերպուել: Արուն չի դառնայ էգ: Սա ոչ միայն բնագիտութեան, կենդանաբանութեան, մարդաբանութեան կամ քիմիայի օրէնք է, այլ առաւել եւս լեզուի օրէնք է: Գետեւաբար «Է»-ն շեշտազրկուելով չի՛ կարող «Ը»-ի վերածուել, այլ «Ի» ձայնաւորին, որը «իմաստութիւն»-«նեւրոյժ»-«մնացորդ» է նշանակում,<sup>9</sup> եւ բնագիտական օրինաչափութիւն է, որ որեւէ եութին փոխակերպուի իրեն համապատասխան էներգիային ու մնացորդին:

Հաստատաբար կարելի է եզրակացնել, որ «Է»-ն ոչ «Եյ» է հնչել, ոչ էլ երկբարբառ է:

### 3. ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐ

Հայոց բարբառներում առկայ միւս ձայնաւորները հնչեցրնելու համար սբ. Մ. Մաշտոցն աւանդել է շատ հետաքրքիր միջոց: Երկու ձայնաւորների զուգորդութեամբ ստացել է մնացեալ ձայնաւոր հնչիւնները, ինչպէս գրաբարից մեզ ծանօթ «աւ»-ը՝ «օ» հնչիւնով, բոլորիս ծանօթ «ու»-ն, արեւմտահայերիս ծա-

8. Էդ. Աղայան, նոյն, էջ 134:

9. Նայել «Յօդուած 8»-ում, «Ի» բառարմարի բացատրութեան մէջ:

նօթ «իւ»-ը՝ ֆր. «ս» տառի հնչիւնով եւայլն: Ահա այդ երկու ծայնաւորների միացութիւնները կարող են՝

1. առանձին-առանձին բաղկացուցիչ տառերով հնչել, ինչպէս «աւ»-ը մի դէպքում հնչում է «ավ» (Աւետիս),

2. միաձոյլ ինքնուրոյն ծայնաւոր հնչիւն ունենալ, երբ «աւ»-ը հնչում է «օ» (Աւր-օր):

Դրա համար էլ այդ երկու ծայնաւորների միացութիւնները կոչուել են «երկբարբառ»:

Իհարկէ լեզուաբանները ճիշդ են, երբ «ու»-ն ծայնաւոր են համարում, բայց սխալ են երբ այն պարզ ծայնաւոր են որակում, մինչդէռ՝ երկբարբառ է: Նրանք սխալ են երբ «իւ» երկբարբառը «իվ»-ից բացի վերածել են «յու»-ի, երբ դրա երկրորդ հնչիւնը ճիշդ են պահպանել արեւմտահայերը, ֆր. «ս» տառի հնչիւնով, ինչպէս «գիւտ» բառում:

Մի քանի այսպիսի ակնյայտ սխալների պատճառով՝ արհեստականօրէն սահմանափակուել են արդի արեւելահայ գրաւոր լեզուի եւ դրանով սնուած հայ մարդու լեզուահնչիւնային հնարաւորութիւնները:

#### 4. ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻ և ՄԱԱՆԱԳԷՏՆԵՐԻ

կարծիքները երկբարբառների մասին.

Էդ. Աղաեանն գրել է.

«Այսպիսով, վանկ կազմող հնչույթների շարքում մենք կարող ենք ունենալ ա, ո, ե եւայլն. եաւ, ուաւ եւայլն: Եվ որպէսզի վանկարար հնչույթը տարբերել կարողանանք այդպիսի կապակցութիւն-ներից, վանկի հիմքը կազմող միավորները կոչենք վանկաբուն ընդհանուր անունով»:<sup>10</sup>

Անհեթեթ ենք գտնում «վանկաբուն» տարբերակումը: Յայտնի է, որ որեւէ վանկի հիմքը ծայնաւորն է: Գիտնականները պարտաւոր էին այդ ծայնաւորները որոնել ու գտնել: «Նո՛ր» գիտութիւն յօրինելու կարիք չկար:

Աղաեանն՝ եւ ոչ միայն նա, նշելով երկտառ եւ եռատառ երկբարբառ ծայնաւորները, չի՛ անդրադարձել, որ դրանցից իւրաքանչիւրն իր բաղադրիչների հնչիւնով արտասանուելուց բացի ունի նաեւ ինքնուրոյն մի ծայնաւոր հնչիւն:

10. Էդ. Աղայան, նոյն, էջ 104:

Ա.Ն. Մուրադեանն ասում է.

«Երկբարբառի բացատրությանը հանդիպում ենք Դավիթի փիլիսոփայի մոտ: Ըստ նրա՝ երկբարբառն այն է, երբ երկ ձայնավորներ մի վանկում միասին լինելով երկու ձայնագորություն ունեն, կամ երբ երկու ձայնավորներ միասին վանկ են կազմում»:<sup>11</sup>

Մեջբերումից պարզում է, որ երբ երկու ձայնավորներ գոգորդուելով մի վանկ են կազմել՝ կոչուել են երկբարբառ: Փոփոխություններ կան: Այսօրուայ մեր ընկալումով կ'ունենանք ոչ միավանկ հնչյուն, այլ՝ երկվանկ. օրինակ՝ «էա»-ն «էակ» բառու ակամայ կը հնչի «էյա», «աի»-ն կը հնչի «այի» եւայլն: Բայց ասածի մէջ կայ՝ ճշմարտութիւն, որին պէտք է ուրիշ մօտեցուցուցաբերել:

Յ. Դ. Մուրադեանն իր հերթին Թրակացուց մեջբերել է հետեւեալը.

«Երկբարբառք երկու ձայնավորք ի միասին լեալք երկու նշանակս ձայնի ցուցանեն եւ ասին երկձայնք, զի ի միու հեգի սոքա պատահեալք յանուան կամ ի բայի, երկձայն ասի հեգն այն»:<sup>12</sup>

Թրակացին պարզ է ասել, որ «մի՝ հեգի» կամ միահունչ արտասանուող երկու ձայնավորները կոչուում են երկբարբառ, թէւ հնչած ձայնը «երկձայն» է:

Սա նման է ներկայակուսում գտնուող երկու գոյների, որոնց խառնուրդից ստացուում է երրորդ մի գոյն, ինչը սկզբունքօրէն կարելի է կոչել «երկգոյն»: Նոյն երեւոյթը առկայ է նաեւ երաժշտութեան մէջ:

Յետեւութիւն 1. Պէտք է ունեցած լինենք երկբարբառների մի տեսակ՝ կազմուած երկու պարզ ձայնավորներից, որոնք միասնաբար հնչել են որպէս մի՝ ձայնավոր:

Դրանք անուանենք «Բաղադրեալ երկբարբառներ»:

Բայց կան նաեւ այլ որակի երկբարբառներ:

Խազագրութեան մէջ հանդիպում ենք մի նշանի, որը կոչուում է «թաւ», ինչը՝ ըստ մեր դիտարկումների, գլխադրուել է յատկապէս երկբարբառների վրայ, ու հնչուն (*հնչող*) է դարձրել

11. Ա. Ն. Մուրադեան, «Նունարան Դպրոցը», Եր., էջ 189:

12. Յ. Դ. Մուրադեան, նոյն, էջ 187:

դրա իւրաքանչիւր տառը, ինչպէս «աւ»-ի վրայ դրուելով ունեցել ենք «ավ» հնչիւնը եւ ոչ թէ «Օ»:

Արթուր Շահնազարեանն բերել է թաւ նշանի ( ^ ) օգտագործման հետեւեալ պարագան.

«Երբ ւ (հյուն) հնչյունը գործածվում է իբրեւ կես-բաղաձայն՝ թավ նշանը դրվում է նրա վրա ձայնավորից զանազանելու համար, եւ ցույց տալու համար, որ այն պետք է առանձին արտասանել.

օրինակ՝ հաշիւ, պատիւ, բանիւ, կաքաւ եւ այլն»: «Այսինքն թավով տիւն=ցերեկ, իսկ առանց թավի տիւն=տ տառի անունն է»:<sup>13</sup>

Սրանից իմանում ենք, թէ թաւ-ի առկայութեամբ «տիւ»-ի «իվ» հնչող «իւ» երկբարբառը դրա բացակայութեան հնչել է ֆր. «ս» տառի նման: Բերուած օրինակներից հետեւում է, որ թաւով «կաքաւ»-ը հնչել է «կաքավ», իսկ առանց թաւի «աւ-ը պիտի հնչէր «օ»: Հետեւում է, որ թաւ նշանը կիրառուել է ոչ թէ «ւ»-ի վրայ, այլ՝ երկբարբառների: Շահնազարեանի բերած մատենագրական այլ օրինակներում դա բացայայտ է: Ըստ իրեն, թաւը նաեւ դրուել է՝ ու, աւ, իւ, եւ, այ, ոյ երկբարբառների վրայ, որպէսզի «ու»-ն հնչի «վ», «աւ»-ը՝ «ավ», «իւ»-ը՝ «իվ», «եւ»-ը՝ «եվ», «այ»-ը՝ «այ», «ոյ»-ը՝ «ոյ»:<sup>14</sup>

Բայց թաւի բացակայութեան դէպքում ինչպէ՞ս պետք է հընչէին «եւ, այ, ոյ» երկբարբառները: Սրան չի անդրադարձել Շահնազարեանն, ոչ էլ մեր առաջատար լեզուաբաններն ունեն պատասխանը: Հետեւաբար ստիպուեցինք ինքներս որոնել այն:

Դիոնիսիոս Թրակացին գրել է, թէ բուն երկբարբառները վեցն են. « a i , a u , e i , e u , o i , o u »,<sup>15</sup> սակայն հայերէնի թարգմանիչը դրանց փոխարէն նշում է հայկական հինգ երկբարբառներ, «աւ, եւ, ու, աի, ոի»: Մինչդեռ մեր կարծիքով, հայոց լեզուի «այ, աւ, եյ, եւ, ոյ, ու» վեց երկբարբառները հերթագայութեամբ եւ քանակով ճշգրտօրէն համապատասխանում են Դիոնիսիոսի բնագրի տուեալներին:

13. Ա. Շահնազարյան, «Միջնադարյան խազարվեսպը հայ երաժշտական մշակույթի համակարգում», հափոր 1, էջ 353, Եր. 1990:

14. Ա. Շահնազարյան, նոյն, էջ 354:

15. Ն Ադոնց, նոյն, էջ 5:

Մեջբերենք Ա.Ն. Մուրադեանի կարծիքը երկբարբառների մասին.

«Որոշ ծայնավորներ երկբարբառների կազմութեան ժամանակ 'առաջադաս' էին եւ վանկարար, իսկ ուրիշներ 'ետադաս' եւ ոչ վանկարար: Այս երկու խմբի ծայնավորների զուգորդումից կազմվում էին 'երկբարբառները', որոնք բաժանվում էին 'բուն երկբարբառների' եւ 'բռնաբարբառների' կամ 'վատածայների':<sup>16</sup>

Այս պարբերութեան մէջ կայ շփոթ: Քանզի «բուն երկբարբառ» որակուածները վերելում Դաւիթ փիլիսոփայի ակնարկած երկու պարզ ծայնաւորներից բաղադրեալ երկբարբառներն են: Իսկ միւս որակաւորումները վերաբերում են երկրորդ տեսակի երկբարբառներին, որոնց մէջ «առաջադաս» եւ «վանկարար» ծայնաւորը կարող է լինել բոլորիս ծանօթ պարզ մի ծայնաւոր կամ երկու ծայնաւորների միաձուլումից առաջացած մի բաղադրեալ երկբարբառ ծայնաւոր: Դրանց ածանցուած «ետադաս» եւ «ոչ վանկարար» անկատար ծայնաւորը կարող է լինել «ւ»-ը կամ «յ»-ն, կազմելով «բռնաբարբառ», քանզի բուն ծայնաւորի հնչիւնը երկուսի դէպքում էլ կաշկանդուում է, չափաւորուում, ընդ որում «ւ»-ի կցման դէպքում արտադրուած ծայնը «վատածայն» է, որովհետեւ դա հնչել է ազլ. «W»-ի նման, ինչպէս «եւ»-ի պարագայում՝ «yew»:

Ըստ երեւոյթին յոյն քերական Դիոնիսիոս Թրակացու «Արլեստ» երկում կան չհասկացուած նոյնատիպ հարցեր ոչ միայն հայ, այլեւ մերօրեայ յոյն քերականների մօտ:

Քանզի Աղաեանն ասում է.- «Յունարեւը, ինչպէս հայտնի է, ուներ միայն իջնող երկբարբառներ, որոնց մեջ ոչ վանկարարն էր իկամ ս»:<sup>17</sup>

Այստեղ կայ ընդհանրական թիրիմացութիւն կապուած յունարէնի բոլոր ծայնաւորների հետ, քանզի ոչ միայն երկբարբառները, այլեւ որեւէ ծայնաւոր շեշտագրկուելուց փոխակերպուում է իրենից ցածր որակի ծայնաւորի: Եւ սա ճիշդ է ոչ միայն յունարէնի համար, այլեւ՝ հայերէնի: Ասել թէ յունարէնը «ուներ» իջնող երկբարբառներ՝ սխալ է հիմնաւորապէս, այն

16. Ա.Ն. Մուրադյան, նոյն, էջ 187:

17. Էդ. Աղայան, նոյն, էջ 31-32:

առունով, որ թե՛ յունարենը եւ թե՛ հայերենը ոչ միայն անցեալին են ունեցել ձայնաւորների իջնող սանդղակարգ, այլեւ մեր կարծիքով այսօր էլ ունեն, ինչպէս «սէր» որտեղ «է»-ն շեշտուած է, բայց «սիրել» որտեղ «է»-ն փոխարինուեց «ի»-ով հենց շեշտազրկման պատճառով:

Այս տուեալները կարելոր են թե՛ արմատական եւ թե՛ համեմատական լեզուաբանութեան համար:

### 5. ՁԱՅՆԱԲՈՐՆԵՐԻ ՍԱՆԴՂԱԿԱՐԳԸ

ըստ մեր հետազօտութիւնների:

Ինչպէս որ երաժշտութեան մէջ միաւոր ձայների շարքը չի լրանում 8 հիմնական ձայնանիշերով, այլ կան նաեւ 1. կիսածայներ, 2. քառորդ ձայներ, 3. ածանցեալ-բաղադրեալ ձայների խմբեր՝ մաժէօր եւ մինէօր սանդղակներով, կարծում ենք այդպէս էլ պէտք է լինի հայոց լեզուին: Սակայն ձեռնպահ ենք մնում մեր յայտնաբերածները ուղղակիօրէն այդպիսի բաժանումներով ներկայացնելուց, որովհետեւ դա կարելի է անել միայն հմուտ երաժշտագէտի եւ ձայնալիքների մասնագէտ ֆիզիկոսի խորհուրդներով:

Ա. Բաղադրեալ երկբարբառ ձայնաւորներ.-

Սրանք երկու պարզ ձայնաւորների զուգորդումից առաջացող կիսածայն ձայնաւորներն են:

1. «Եա», որն արտասանուել է երկվանկ «յէա» եւ կամ միավանկ անգլ. «Yet» բառում «ye»-ի հնչիւնով, ինչպէս ասենք «ամեակ» բառը կարող էր հնչել amy'e'c:

«Եա» երկբարբառը շեշտազրկութեան ժամանակ վերածուում է «ե» ձայնաւորի, ինչպէս սեռ. հոլով «քաջութեան» - բացառական հոլով՝ «ի քաջութենէ»:

2. «էա», որն արտասանուել է երկվանկ «էյա» եւ կամ միավանկ, ինչպէս «էակ» բառը կարող էր հնչել անգլ. «egg»-ի նման, այսինքն «էա»-ն տուեալ «e»-ի հնչիւնով:

3. «Իա», որն արտասանուել է երկվանկ «իյա», ինչպէս «միակ», «դիակ» բառերում, եւ միավանկ «յա», ինչպէս «Ամասիա», «Եղիա» անուններում:

Սոյն երկբարբառների երկվանկ հնչիւնները չեն մտնում ինքնուրոյն ձայնաւորների շարքը:

«իէ»-ի պարագան.-

Երկու պարզ ձայնաւորներից բաղադրուած «իէ»-ն երբ հնչել է երկվանկ «իյէ»՝ ապա պահպանուել է բառերում նոյնութեամբ, ինչպէս «Դանիէլ», «Մաղաղիէլ» անուններում (*հնչել են «Դանիյէլ», «Մաղաղիյէլ»*):

Սակայն «իէ»-ն չունի ինքնուրոյն միավանկ հնչիւն, քանզի «ի»-ն մի այլ ձայնաւորից առաջ վերածուում է «յ»-ի, եւ բնականաբար «իէ»-ն պիտի հնչէր «յէ» եւ նոյնանար «ե»-ի հետ, ինչի պատճառով էլ «իէ»-ն չենք մտցնում երկբարբառ ձայնաւորների շարքերի մէջ:

Խորենացու Պատմութեան տարբեր գրչագրերում «Մաղաղիէլ»-ը աւանդուել է «Մաղաղյէլ» ուղղագրութեամբ, ինչը մենք սխալագրութիւն ենք համարում, որովհետեւ «իյէ» հնչող «իէ»-ն եւ «յէ»-ն տարբերուում են ոչ միայն հնչիւնով, այլեւ իմաստային բովանդակութեամբ:

«էի»-ի պարագան.-

«էի»-ն երբ հնչել է երկվանկ «էյի»՝ ապա պահպանուել է բառերում նոյնութեամբ, ինչպէս էական բայում: Բայց միավանկ հնչելու պարագայում փոխարկուել է «էյ» երկբարբառին: Այս պատճառով էլ չի մտնում երկբարբառ ձայնաւորների շարքերի մէջ:

Բ. Կիսաձայն բռնաբարբառներ, որոնք առաջանում են երբ պարզ ձայնաւորին կամ բաղադրեալ երկբարբառ ձայնաւորին կցուում է չափաւորող «ւ»-ը, որպէս բաղաձայն, ու չափինշան.

ա. Կիսաձայն պարզ բռնաբարբառներ.-

- 4 - 1.«Աւ» - «aw» հնչիւնով, որը այսօր արտասանուում է «ավ»:
- 5 - 2.«Եւ» - «yew» հնչիւնով, որն այսօր արտասանուում է «եվ»:
- 6 - 3.«Էւ» - «ew» հնչիւնով, որն այսօր արտասանուում է «էվ»:
- 7 - 4.«ըւ» - «rw» հնչիւնով:
- 8 - 5.«Իւ» - «iw» հնչիւնով, որն այսօր արտասանուում է «իվ»:
- 9 - 6.«ու» - «wow» կամ «ով» հնչիւնով, եւ ոչ թէ ֆր. «ou»-ի նման: Օրինակ «խրատ» բառը սեռ. հոլովում եղել է «խրատու» եւ հնչել «խրատ+ou», գործ. հոլով «խրատու» - հնչել է «խը-

րատ+ow», ինչը յետագայում փոխարկուել է «խրատով»-ի: Գործիականի դեպքում պետք է կրած լինի թաւ նշանը:

Սոյնպիսի իրողութեան հանդիպում ենք հնագոյն մատենագրութեան մէջ (*Կիւրեղ Աղեքսանդրացի, «Մեկնութիւն Աստուածաշունչ Ս. Գրոց»: Նայել Ա.Ն. Մուրադյանի «Յունարան Դպիրոցը» երկում, էջ 129*):

Այսպէս. «Չուն եւ զով եբրայեցի հեգենայն ոչ ընտրէ ի միմեանց»:

Խօսքը եբրայերէն «ու» տառի («ուաու»-ի) մասին է, որը այդ լեզուի մի բառում հնչել է «ու», այլ բառում՝ «ով», առանց տարբերակող ցուցիչ ունենալու:

Մինչդեռ հայերէնում «ու»-ի տարբեր հնչիւնները զանազանուել են թաւ նշանի առկայութեամբ կամ բացակայութեամբ:

բ. Կիսածայն եռատառ բռնաբարբառներ (եռաբարբառներ) .-

10 - 1. «եաւ» - «ye'w» հնչիւնով (անգլ. yet բառի «ye»-ին գումարած «w»): Չի՛ հնչել «յավ»:

11 - 2. «եաւ» - «e'w» հնչիւնով (անգլ. at բառի «a»-ին գումարած «w»):

12 - 3. «իաւ» - «yaw» հնչիւնով, մօտաւորապէս «յավ»:

Գ. Քառորդ ձայնով բռնաբարբառներ. առաջանում են երբ պարզ ձայնաւորին կամ բաղադրեալ երկբարբառ ձայնաւորին կցուում է չափաւորող «յ»-ն որպէս բաղածայն ու չափի նշան:

ա. Քառորդ ձայնով պարզ բռնաբարբառներ. -

13 - 1. «Այ» - բառամիջում «այ» արտասանութեամբ, իսկ բառավերջում «ա»՝ 1/4-րդ չափով, օրինակ «Արայ»:

14 - 2. «Եյ» - բառամիջում «յէյ» արտասանութեամբ, բառավերջում՝ «ե» - երկուսն էլ 1/4-րդ չափով:

15 - 3. «Էյ» - բառամիջում «էյ» արտասանութեամբ, բառավերջում՝ «է» - երկուսն էլ 1/4-րդ չափով:

16 - 4. «ըյ» - բառամիջում «ըյ» արտասանութեամբ, բառավերջում՝ «ը» - երկուսն էլ 1/4-րդ չափով:

17 - 5. «իյ» - բառամիջում «իյ» արտասանութեամբ, բառավերջում՝ «ի» - երկուսն էլ 1/4-րդ չափով:

18 - 6. «ոյ» - բառամիջում «ոյ» արտասանութեամբ, բառավերջում՝ «ո» - երկուսն էլ 1/4-րդ չափով:



ջում «wo» - երկուսն էլ 1/4-րդ չափով (այսօր հնչում է միայն «oj»):

Պետք է նշել, որ «ել», «ըլ», «եյ» եւ «ըյ» բռնաբարբառ երկբարբառների ուղղակի օգտագործմանն անձնապէս առայժմ չենք հանդիպել մատենագրութեան մէջ, հակառակ որ Դիոնիսիոսի թարգմանիչը նշում է թէ «ա, ե, ո, ը» ձայնաւորները բառի վերջում անպայման ստացել են «յ» (*չափի*) նշանը: Եթէ մէկն ու մէկը մեր ուշադրութեանը յանձնի այդպիսի ձեւերի առկայութիւնը՝ մենք երախտապարտ կը լինենք:

բ. Քառորդ ձայնով բաղադրեալ բռնաբարբառներ (*«եռաբարբառներ»*) - *մենք այս բառը չենք օգտագործում, որովհետեւ «եռատառ» իմաստից բացի՝ նշանակում է «եռահնչիւն», մինչդեռ առկայ եռատառ ձայնաւորները ունեն երկակի հնչիւն»*.- 19 - 1. «էայ» - բառամիջում «ye'y» հնչիւնով (*անգլ. yet բառի «ye»-ին գումարած «յ»*), բառավերջում «ye'» - երկուսն էլ 1/4-րդ չափով:

20 - 2. «էայ» - բառամիջում «e'y» հնչիւնով (*անգլ. at բառի «a»-ին գումարած «յ»*), բառավերջում «e'» - երկուսն էլ 1/4-րդ չափով:

21 - 3. «իայ» - բառամիջում «յայ» հնչիւնով, իսկ բառավերջում «յա»՝ երկուսն էլ 1/4-րդ չափով:

Դ. Բարդ երկբարբառ ձայնաւորներ, որոնք առաջանում են երբ ձայնաւորին միացած է «ւ» կամ «յ» անկատար ձայնաւորը (օրինակ «ել», «այ») եւ երկուսի արանքն է մտնում չգրուող բայց ներգործող տառ, եւ առաջացնում է մի նոր ձայնաւոր հնչիւն: Մատենագրութեան մէջ սրանցից ոմանք երբեմն շփոթուել ու փոխարինուել են 'եռաբարբառ' կոչուածների հետ:

Ֆրանսերէնի հնչիւնաբանութեան եւ ուղղագրութեան մէջ հանդիպում ենք երեք եւ չորս տառանոց միաւորների, որոնք մէկ հնչիւն են արտայայտում: Յնչող բայց անտեսանելի տառերը այդ լեզուում դարձրել են տեսանելի, ինչպէս արեւելահայերէնի ներկայիս ուղղագրութեան մէջ: Ուղղագրական այդպիսի «ռեֆորմ»-ի պարագան պատմականօրէն նորութիւն չէ. դրան հանդիպում ենք մեր միջնադարեան մատենագրութեան մէջ եւս:

22 - 1. «աւ» - արտասանուում է «o», երբ տուեալ երկու տառերի արանքն է մտնում չգրուող բայց ներգործող «ո»-ն (ստացւում է «աու»):

23 - 2. «այ» - բառամիջում արտասանում է «Օյ», բառավերջում «Օ» - երկուսն էլ 1/4-րդ չափով: Տուեալ տառերի արանքն է մտնում չգրուող բայց ներգործող «ւ»-ն (ստացում է «աւ >օյ»):

Օրինակ՝ գրաբարեան «յայս»-ը, հնչել է նաեւ «հօյս», որից առաջացել է արեւմտահայ «հոս»-ը: «Պայման»-ը հնչել է նաեւ «պօյման» ու Մխիթար Գօշի մօտ դարձել է «պոման»: Դա այսօր էլ Շամշատինի բարբառում հնչում է «պօյման»: Դ. Դ. Մուրադեանն յիշատակում է. «Ողորմեա՛ Դշխունին եւ Պոծառին»,<sup>18</sup> որտեղ «Պոծառ»-ը «Պայծառ»-ն է եւ նոյնպիսի աղաւաղման է ենթարկուել:

Ներկայիս Գաւառի բարբառով «Գայանէ» անունը դեռեւս հնչում է «Գօյան»: Հայաստանում այսօր էլ «Արայ» անունը կրողին կանչում են «Արօյ» որը նշանակում է Արեւորդի եւ ոչ թէ արեւի ճառագայթ: «Արօյ»-ն այլ լեզուներում յայտնում է առանց «ւ»-ի, «Roy, royal, roi» ձեւերով:

Պարսից Ջանդ արքայական տօհմի հիմնադիր Karim Khan Zand-ն իրեն կոչել է «Vakil-Ro'aya», իբր՝ «the deputy of Masses»: <sup>19</sup> Մինչդեռ «Vakil» նշանակում է «փոխանորդ», իսկ «Ro'aya»-ի առաջին հատուածը «Արօյ-Արայ»-ն է, իսկ «aya»-ն՝ տիեզերական Աչքն է, ուստի ունենք «Տիեզերական Աչքի փոխանորդ՝ Արօյ-Արեւորդին»:

24 - 3. «ել» - արտասանում է ֆր. «Yeux»-ի հնչիւնով, երբ տուեալ տառերի արանքն է մտնում չգրուող բայց գործող «ա»-ն (ստացում է «եաւ >եօ >յեօ»):

Պարզում է, որ տարբեր ժամանակներում «ել»-ի yeux հնչման անգիտացումից առաջացել են զանազան ուղղագրական տարբերակներ: Դրանցից ոմանք պահպանել են բառի մօտաւոր նախնական հնչողութիւնը, ոմանք՝ ոչ: Ինչպէս աւանդուած հնագոյն գրաբարեան առ-yeuts հնչող «առելծ»-ը դարձել է «առիւծ» («ել» > «իւ» *անցում*), ապա «առյուծ»: «Հար-yeur» հնչող «հարելր»-ը՝ «հարիւր», ապա «հարյուր». «Prometyeus» հնչող «Պրոմեթեւս»-ը՝ «Պրոմեթէոս». «Մաթ-yeus» հնչող «Մա-

18. Կ. Դ. Մուրադյան, նոյն, էջ 160:

19. «Vakil Bath House» բացիկում, [www.iranculturalheritage.org](http://www.iranculturalheritage.org) Cultural Heritage Organization, Fars Main Office.:

թելս»-ը՝ «Մաթես» («ել» >«տ» անցում): «Մ-yeuk» հնչող «Մելք»-ը՝ «Մեօք» (մեր). «արդ-yeuk» հնչող «արդելք»-ը՝ «արդեօք» («ել» >«եօ» անցում): «Ելրոպայ» անունը նախկինում հնչել է «Կես-րոպայ», ինչի մասնակի մնացորդն է անգլ. «Յիրոպ»-ը: «Ար-yeus» հնչող «արելն»-ը արելնուտքում դարձել է «Օրիոն», ինչպես հայ. մի շարք բարբառներում, իսկ ապա՝ «արիւն» ու «արյուն»: «Դել»-ը հնչել է «D-yeu», ինչպես ֆրանսերենում «Աստուած» բառի հոմանիշը: «Դել» բառի ածանցմամբ «ել»-ը դարձել է «իւ»՝ «դիւցազուն», եւ ոչ թէ «դելցազուն»: Որովհետեւ «ե» ձայնաւորը՝ առանձին վերցրած, շեշտազրկուելուց փոփոխութեան չի ենթարկուում, ինչպես «ել»-ը՝ երբ հնչում է «ել»: «ել»-ը «yeux» հնչելու դէպքում միայն վերածուում է «իւ»: ի:

Քաղղեացուց ազգաբանութեան մէջ Խորենացու յիշատակած «Տելտամոս»-ի «ել»-ը հնչեցնելով «yeux»՝ բացայայտում է նրա պատմական ինքնութիւնը: Նա եգիպտացուց «Թիութմոս» փարաւօնն է: Անցումները եղել են այսպէս.-

«Տելտամոս >Տլէտամոս >Տլէաւտամոս >Տլէօտամոս >Tyeutamos, որի «յ»-ն (y) սխալմամբ «հ» ընթերցելով ու «a» ձայնաւորի արձանագրուած չլինելու պատճառով ընթերցել են «Թիութմոս»:

Յաջորդ փարաւօնը կոչուել է «Տելտես», ինչը կարող էր հնչել «Tyeuteus», աղաւաղ՝ «Թիութես»:

Սոյն «Տելտես»-ը չի բացառում որ լինի «Թեոդոս»-ի նախատիպը:

25 - 4.«Եյ» - բառամիջում արատասանում է ֆր. «yeuy»-ի հնչիւնով, բառավերջում՝ «yeux». երկուսն էլ 1/4-րդ չափով: Տուեալ տառերի արանքն է մտնում չգրուող բայց գործող «աւ»-ը (ստացում է՝ «եյ >եաւյ >եօյ >յեօյ»):

26 - 5.«ել» - արտասանում է ֆր.«e» տառի անուան հնչիւնով: Տառերի արանքն է մտնում չգրուող բայց գործող «ա»-ն (ստացում է «էաւ >էօ»):

Օրինակ՝ արելնտահայերը գրում են «էօթենի», որտեղ «էօ»-ն (ֆր. «e») ծնուել է «ել»-ից, որի մէջ առկայ է «ա»-ն (էաւ). եւ այբուբենում «օ»-ի ներմուծումից առաջ կարող էին գրել «էօթենի» ու կարդալ «էօթենի»: Ռուսների մօտ այդ անունն հնչում է «ելգենի», որովհետեւ այդ լեզուում «ել»-ը չունի երկբարբառային երկրորդ հնչիւնը:

27 - 6.«էյ» - բառամիջուն արտասանում է ֆր. «oeil» բառի հնչիւնով, բառավերջում ֆր. «e» տառի անուան հնչիւնով: Երկուսն էլ 1/4-րդ չափով: Տառերի արանքն է մտնում չգրուող բայց գործող «աւ»-ը (ստացւում է «էաւյ >էոյ»):

28 - 7.«իւ» - արտասանում է ֆր. «u» տառի հնչիւնով: Տառերի արանքն է մտնում չգրուող բայց գործող «ո»-ն (ստացւում է «իու»):

29 - 8.«իյ» - բառամիջուն արտասանում է ֆր. «uy»-ի հնչիւնով, բառավերջում ֆր. «u» տառի անուան հնչիւնով: Երկուսն էլ 1/4-րդ չափով: Տառերի արանքն է մտնում չգրուող բայց գործող «ւ»-ն (ստացւում է «իյ >իւյ»): Օրինակ՝ «Քիւ»-ից առաջացել է «քիյ», որը հնչել է անգ. cue կամ queue բառի նման, որից էլ առաջացել է queen=թագուհի-ն: Նոյն արմատն է պահլ. արքայական «քեյ» տիտղոսը (Շահնամէում «Քեյ Քաուս»), որը պէտք է ուղղել «քիյ» եւ հնչեցնել անգլ. cue-ի նման:

30 - 9.«ու» - արտասանում է ֆր. «ou» հնչիւնով: Երկուսի արանքն է մտնում չգրուող բայց գործող «ա»-ն (ստացւում է «ուա»):

31-10.«ոյ» - բառամիջուն արտասանում է «ույ», բառավերջում՝ «ու»: Երկուսն էլ 1/4-րդ չափով: Երկուսի արանքն է մտնում չգրուող բայց գործող «ւ»-ը:

Այսպիսով՝ գտնուած երկբարբառների ընդհանուր գումարը լինում է 31 միաւոր:

#### 6.ՅԵՏԵԻՈՒԹԻՒՆ.-

Հայոց աւանդական այբուրենը բաղկացած է 36 տառերից, որոնցից 6-ը կատարեալ ձայնաւորներ են, իսկ երկուսը՝ անկատար: Մնացեալ 28 տառերը բաղաձայներ են, բայց քանի որ «ւ» եւ «յ» անկատար ձայնաւորները նաեւ բաղաձայներ են, ուստի իրականում ունենք  $28+2=30$  բաղաձայն, որոնց դիմաց յայտնաբերել ենք  $8+31=39$  ձայնաւոր, ինչը դեռեւս քննարկելի է:

#### 7.ԻՍԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ

Քննարկենք բարդ երկբարբառներում առաջ քաշուած «չգրուող բայց ներգործող» տառի երեւոյթը:

Որոշ դեպքերում, լեզուում հանդիպում ենք չգրուող բայց հնչող կամ ներգործող ութ ձայնաւորների, որոնք են «ա, աւ, է, ը, ո, ւ, ու, յ»:

Սա նորամուծութիւն չէ մեր լեզուում: Չգրուող բայց հնչող «ը» տառի պարագան յայտնի է բոլորիս: Գրում ենք «գնաց», բայց արտասանում ու տողադարձում ենք «գը-նաց», որտեղ «ը»-ն երկուորեակն է «ո»-ի, այսինքն «գնաց»-ի բուն հիմքը եղել է «գոն-աց» (անգլ. go, gone): «Գո» բառարմատի ածանցմամբ «ո»-ն կորցրել է շեշտը ու վերածուել աներեւոյթ «ը»-ի: Չգրուող բայց հնչող «Ը»-ն նախկինում կոչուել է «լռելեայն իմացուող տառ», մերօրեայ լեզուով՝ «գաղտնավանկ ը», սակայն ըստ մեզ, անուանումները ճիշդ չեն բնութագրում երեւոյթը: Դրանց փոխարէն կարելի է ասել «աներեւոյթ ձայնաւոր»:

Աներեւոյթ ձայնաւորին փոխարինած «ը»-ն ընդհանրապէս հնչում է: Սակայն երբ այդպիսի ձայնաւորը չհնչեցնելու անհրաժեշտութիւն է եղել (*ասենք ոտանաւորներում*)՝ խազագիր մատեններում սղման միջակայքում դրել են սոսկ նշանը (>), ինչպէս օրինակ «յօդս ցնդեց»-ում «դ»-ի եւ «ս»-ի միջեւ՝ նրանց վերելում:

«Ո»-ն իգական բնոյթն է եւ՝ որպէս պատկեր, ունի կափարիչի տեսք:<sup>20</sup> Երբ բառարմատի ածանցման պատճառով «ո»-ն ընկում եւ փոխարինւում է չգրուող բայց հնչող «ը»-ով՝ նա ձեռք է բերում «անտեսանելի ծածկոյթ» իմաստը:

Սակայն «ո»-ին փոխարինող «ը»-ն չի՝ կարող ֆիզիկապէս փոխարինել նրան, որովհետեւ գրուելու դեպքում կ'աղաւաղի բառի իմաստը, ուստի հնչում է բայց չի գրուում:

«Գնաց»-ի օրինակում «գո»-ի «ո»-ն նշանակում է, որ «գ»-գոյը ծածկուել է կամ աներեւութացել: Բայց «ը»-ն «իգական էութիւնն» է, եւ փոխարինելով «ո»-ին ու գրուելով՝ պիտի ունենանք «գոյը ծածկուած լինելու վիճակից վերածուել է իգական էութեան»: Մինչդեռ գնացողի բնոյթը անփոփոխ է եւ գնալու գործողութիւնը կապ չունի գնացողի բնոյթի հետ, ուստի «ը»-ն չի՝ գրուում:

«Աներեւոյթ տառ» դառնալու օրէնքին ենթակայ են նշուած միւս ձայնաւորները եւս:

20. Նայել «Յօդուած 6»-ում:

«Ա»-ն աստուածայինն է, որը կայ, գործում է բայց մեծաւ ճասամբ մեզ համար մնում է անտեսանելի: Այդ իսկ պատճառով հայերէնի որոշ բառերուն առկայ սկզբնատառ «Ա»-ն այլ լեզուներուն ընկել է (*երեւի թէ այդ լեզուները կրողների Աստուծոց հեռացած լինելուն պատճառով*) ինչպէս Հայոց մեռնող ու յարութիւն առնող «Արայ»-ն հին Եգիպտոսում դարձել է «Րա-յ», որպէս արեւ-աստուծոյ ճառագայթ: Անգլ. Ray-ը պահպանել է Արայի «ճառագայթ» իմաստը ընդհանրացուած բովանդակութեամբ, մինչդեռ հայոց «Արայ»-ն արեւի ճառագայթն է միայն:

Էութեան երեք գլխաւոր կենտրոններն ու ենթամասերը ի մի բերող ու որպէս մի ամբողջութիւն ներկայացնող աստուածութիւնն է: Անգլ. Wednesday-ը որպէս 4-րդ օր՝ նուիրուած է Սուրբ-ին, սբ. Երրորդութեան 4-րդ միաւորին: Wedding-պսակադրութիւնը ոչ այլ ինչ է, ապա թէ ոչ երկու սեռի ներկայացուցիչներին «պրսակ-թագով» միասնական մի էներգետիկ միաւոր յայտարարելու արարողութիւնը, Աստուծոյ օրհնութեամբ:

Իսկ արաբերէնում «woud»-ը որպէս բառ ներկայիս հասկացում է «սէր», «համակրանք», «մտերմութիւն», որոնց մէջ ֆիզիկական սիրուց աւելի, շեշտւում է հոգեւոր ու մտաւոր բիրեղային (*սուրբ*) կապը (*չուսապսակային բայց ոչ մարմնական-բելեռային կապը*), ինչպիսին բնութեան մէջ հանդիպում է միայն ադամանդի եւ նմանատիպ բիրեղների կերտուածքում...:

### ՅՕԴՈՒՄԾ «13»

#### Լեզուաբանութիւն Թէ Իմաստասիրութիւն

Մատենագրութեան մէջ օգտագործուած բառեր կան, որոնք այսօրուայ ընկալումներով սահմանելն ու թարգմանելը աղաւաղում է աւանդուած գրութեան բովանդակութիւնը, քանզի ժամանակի ընթացքում մթագնել է դրանց բուն էութիւնը: Ձեր ուշադրութեանն ենք յանձնում դրանցից մի քանիսը մեր մեկնաբանութիւններով, համոզուած լինելով, որ դրանք կենսական նշանակութիւն կ'ունենան այսօր՝ հոգեւոր, հաւատամքային, տիեզերաճանաչողական, գիտական եւ ազգային հիմնախնդիրներ քննարկելիս:

#### 1. Աջ

Կարելորում ենք բառի նախնական իմաստը, որովհետեւ առնչւում է աստուածաբանական, կրօնական, ծիսական, գիտական եւ քաղաքական ոլորտներին:

Աճառեանի տուեալներով ունենք «աջակողմն, աջաթել, աջակից, աջակցիլ, աջեակ, աջել, աջին, աջանալ» բառերը նոյն արմատից:

Աճառեանն «աջ»-ի հետ զուգադրել է սոգդ. «s r y» բառը, 1.«աջ», 2.«առաջին» եւ 3.«այն որ գլուխն է» իմաստներով:

Մեր կարծիքով, «աջ» բառի բանալին գտնուում է հենց վերջին իմաստաբանութեան մէջ:

Մեկնութիւն.- «Ձ» տառը առանձին վերցրած նշանակում է «ջերմութիւն», որը բխում է էութեան վերին կէսից, գլխից եւ թոքերից (*շունչը եւ դրա հետ մէկտեղ բանը, խօսքը*): Ունենք նաեւ «տապ»-ը, ֆիզիկական տաքութիւնը, որի ակունքն է էութեան սիրտը: Էութեան երրորդ կենտրոնի՝ սեռական գործարանի էներգակիրը եւ ջերմութիւնը կոչուել է «հուր»: Դրանից էլ ֆալլոսապաշտ «հուրիայ-հրեաները»:

«Աջ»-ը՝ որպէս մտքի էներգակիր, հզօրագոյն է քան «ծախ»ը՝ ֆիզիկական-սերնդագործականն ու նիւթական էներգակիրը: Ուստի երբ ասում ենք «գործը աջ է գնում»՝ ապա պէտք է հասկանալ, որ խօսքը մարդու մտաւոր արգասաբերութեան մասին է, ինչը առաւել է քան երբ «գործը ծախ է գնում», այսինքն միայն ֆիզիկական ու նիւթական գործունէութեան արգասաբերութիւն է ունենում:

«Առաջանալ» բայը մի դէպքում կարելի է հասկանալ «դէպի աջ գնալ», ինչպէս եւ «դէպի գլուխը կամ գլխաւորը գնալ»:

Քաղաքական ասպարեզում ձախակողմեան ուժերին կոչում են «յառաջդիմական»: «Ձախ»-ը՝ «առ աջ»:

«Յառաջդիմական» բառը նշանակում է «դէպի աջ դիմող»: Կենսաբանականօրէն բնական է, որ հակոտնեայ բեւեռների ուժերը իրար ձգտեն, ձախակողմեան մատերիալիստները (*ամբարիշտները*) ձգտեն հասնել «աջ»-ին, այսինքն մտաւոր-հոգեւոր իմացականութեան, ինչը պակասում է նրանց եւ դա դրական ձգտում է, եթէ իսկապէս այդ է նրանց նպատակակէտը, իդիալը...(*ամբողջանալու ձգտում է*): Ընդհակառակը, աջակողմեաններին կոչում են «յետադիմական», այսինքն բարձրագոյնից, հոգեւոր-մտաւորից ձգտում են ֆիզիկական-կենդանականին եւ նիւթականին, ինչը պակասում է իրենց:

Մեր հետազօտութեան արդիւնքում գտանք, որ հայերէնում «աջ»-ը (*նաեւ*) գլուխն է (*հիւսիսային բեւեռն է*) իսկ «ծախ»-ը (*նաեւ*) սեռական գործարանն է (*հարաւային բեւեռն է*): Տարբեր լեզուներում «աջ»-ն ու «ծախ»-ը արտայայտուել են «գլուխ»

եւ «ոտք» արտայայտող բառերով (*էութեան երկու բեւեռներին փոխարինել են երկու ծայրամասերը*), որոնք անպայման չէ որ տուեալ լեզուներում ունեն «գլուխ» եւ «ոտք» իմաստները: Այսպէս. (*Աճառեանի տուեալներով*) պրս. «peshrav=առջելից գնացող», «Peshin=առաջուց, կանխաւ», որոնց «pesh» արմատը հայերէնում եւ թուրքերէնում յայտնուում է «Բաշ» հնչիւնով եւ «գլուխ» իմաստով (*անգլերէնում base, basic=գլխաւոր*) եւ պատահական չէ, որ հայ մարդը «կանխիկ» ասելու փոխարէն ասում է նաեւ «գլխանց»: Բելուճ. «p'eshi=առաջին, այն որ առջեւն է» բխում է նոյն «բաշ» արմատից: Հայերէնում «Բաշ»-ը աւանդուել է որպէս «ծիու գլխի մագ», մինչդեռ կարծում ենք, որ պիտի լինի «գլուխ», յատկապէս «ծիու գլուխ» կամ «կենդանիների գլուխ», տարբերելու համար մարդկային գլխից:

Ֆրանս. «gauch=ծախ», որը հայերէնի «կաւշ-կօշ» արմատն է «կօշիկ» բառում, որտեղ «կօշ»-ը ոտքն է, իսկ «իկ»-ը ոտքը ծածկողը, ամփոփողը, հետեւաբար ֆրանսերէն gauch=ծախ բառի նախնական իմաստը՝ եղել է «ոտք»:

Արաբերէնում «Յասա՛ր» նշանակում է «ծախ» եւ բառի արմատ «սա՛րա»-ն նշանակում է «քայլել», ինչը նոյնպէս ոտքի հետ է առնչուում:

Մատենագրական.- Վ.Ս. Նալբանդեանի «Մարդերգութիւնը Գրիգոր Նարեկացու Մատեան ողբերգութեան պոեմում» յօդուածում (*Պատմա-Բանասիրական հանդես, 1-1989թ.*) կարդում ենք.-

«Փառաբանութիւնը քերթողն սկսում է մարդու գլխից.

Իբր զճրագ բազմաբերանեան

Ի յաշտանակի մարմնիդ հաստատեցաւ գլխոյդ բոլորութիւն,... (*կենդանիների գլուխը տափակ է*)

Իբր կցորդ համացեղութեամբ անենաբաշխ աջոյն աստուծոյ՝ աստուած կոչեցար» (բան ԽԶ,բ):

Մեկնաբանութիւն.- Նարեկացին «գլխոյդ բոլորութիւն»-ին զուգահեռ է դրել «աջոյն աստուծոյ» արտայայտութիւնը, եւ նկատի է ունեցել հենց Աստուծոյ գլուխը:

Բերենք ս. Գրիգոր Լուսաւորչի խօսքը, նրա «Վարդապետութիւն» երկից, (Ագաթանգ. էջ 194).-

«Հաւատք ճշմարիտ այս են: Խոնարհեցաւ եւ խառնեաց զԱստուածութիւնն ընդ մարդկութեանս, եւ զանմեռն ընդ

մեռոտս. զի զամենայն մարդիկ անբնակ արասցէ յանմահութենէ Աստուածութեան իւրոյ. յորժամ մարմնովն առ Զօրն ընդ աջմէն եմուտ, եւ խառնեաց զմեզ յԱստուածութիւն իւր միածին Աստուածորդին հզօրակիցն Զօր»:

Խոնարհուողն ու իր աստուածային մասը մարդկութեան խառնողը Յիսուս Քրիստոսն է, Աստուծոյ Որդին: Ուստի «Յորժամ մարմնովն առ Զօրն ընդ աջմէն եմուտ» նախադասութիւնը «Զօր աջ կողմը նստաւ» չի կարող նշանակել, քանզի «եմուտ»ը «մտաւ» իմաստն ունի, իսկ «ընդ»-ը հենց «մէջը» կը նշանակի, ուստի Յիսուս Քրիստոս ոչ թէ նստել է Զօր աջ կողմը, այլ «մտել է իր Զօր գլխից ներս», ինչը նոյնպէս բառացի չի կարելի հասկանալ, որովհետեւ «աջ»-ը գլխի ուղեղի լոյսն է, միտքն է, ուստի Քրիստոս տեղ է գտել իր հօր մտքի լուսապսակի մէջ, որպէս լուսեղէն էներգակիր:

(Ագաթ. էջ 194) «Վասն որոյ մարգարէն ասէ. 'Յայտնեաց Տէր զաջ իւր եւ զբազուկ իւր ամենայն հեթանոսաց, եւ տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ»: «Աջն Զօր ինքն իսկ է եւ բազուկն՝ միածինն Քրիստոս. եւ նովաւ լուսաւորեցան ամենայն եղեալքս. որ՝ - ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն, որ ամենայն ինչ նովաւ եղել»:

Առաջին նախադասութիւնում «Յայտնեաց Տէր զաջ իւր»ը նշանակում է «Տէրը իր միտքը յայտնեց» բոլոր հեթանոսներին:

«Աջն հօր ինքն իսկ է» նախադասութեան մէջ «աջը» եթէ «ծեռք» հասկանանք՝ ապա կ'ընկնենք թիրիմացութեան մէջ: Որովհետեւ Զայրը միայն ծեռք չի այլ առաջին հերթին միտքն է (*հայրը ընտանիքի գլուխն է*) ինչը սբ. Գրիգոր Լուսաւորիչն ներկայացնում է որպէս «Բանն», որով Աստուած նոյնանում է «Աջ»ի կամ «Բան»-ի հետ:

Այսքանից յետոյ, Ագաթանգեղոսն գրում է (էջ 197).- «Եւ ել նստաւ ընդ աջմէ ծնողին իւրոյ Աստուծոյ»: Այսինքն «նստաւ իր ծնողի աջի մէջ», այլապէս՝ «նստաւ իր ծնողի ուղեղի կամ մտքի մէջ» եւ ոչ թէ ծեռքի մէջ, ոչ էլ «աջ կողմը», քանզի «ընդ»-ը «կողմ» չէ, իսկ եթէ ասելու լինէր աջ կողմում՝ պիտի գրէր «յաջմէ»:

Խորեմացի, էջ 107.- «Այլ ոչ ինչ կարի յամեցին ընդ մէջ անցանել արք քաջք եւ անուանիք ի զարմիցն Զայկայ եւ ասորես-



տանույն Սենեքերիմայ եւ հարեալ աշտէիք զքաջն՝ սատակէին, եւ զգօրսն առաջի արկեալ՝ ի փախուստ դարձուցանէին»:

«Եւ զգօրսն առաջի արկեալ» նշանակում է «զօրքը գլխից խփելով», այսինքն զօրքի առաջնորդին-գլխաւորին են սպանել ու մնացեալները փախուստի են դիմել:

Խորենացի, էջ 202.- Խօսում է Ագաթանգեղոսի երկի եւ Տրդատ Մեծի մասին . «Յաղագս սորա եւ համատոհմիցն կարճ ի կարճոյ իմն անցանելով աջող քարտուղարն Տրդատայ Ագաթանգեղոս, փոքր ի շատ պատմէ զմահն Արտաւանայ...»:

Տրդատի «աջող քարտուղարը» նշանակում է «գլխաւոր կամ գլխաւորող քարտուղարը»:

Գիտական մեկնաբանութիւն.- Ներկայիս աշխիւների եւ ծախիւիկների մասին եղած կարծիքները մենք չենք կիսում: Աշխիւները հիմնականում մտաւոր եւ հոգեւոր հետաքրքրութիւնների եւ ունակութիւնների տէր մարդիկ են, իսկ ծախիւիկները նիւթական, երկրային հետաքրքրութիւններ ունեցողներն են, ինչը նշանակում է թէ առաւել գործնական են: Կան նաեւ թաքուն աշխիւներ ու թաքուն ծախիւիկներ, որոնք կարողանում են միաւորել հոգեւորն ու նիւթականը, երկնայինն ու երկրայինը, ինչը շատ աւելի բեղուն է եւ արգասաբեր: Աջ ուղեղը հոգեւոր ու մտաւոր գործարանն է, իսկ ձախ ուղեղը գործնական եւ նիւթական հարցերի պատասխանատունն է, ինչպէս եւ սերնդագործական կենտրոնն է: Արական թէ իգական աջ ձուարանը արական սերմերի արտադրողն է, իսկ ձախը՝ իգական: Աջ ձեռքը լոյս տուող է, արարող, իսկ ձախը՝ տիեզերական լոյսը ստացողն է (*դրա համար էլ աջով ենք ծեռնուում*):

Կարելի է երեւոյթն ու գաղափարը ընդհանրացնել:

## 2. Աջահամբոյր

«Աջը համբուրել»-ը առաջին հերթին «ճակատը համբուրել»-ն է:

Անցեալում երբ նորահարսը մօտեցել ու համբուրել է կիսուր հօր կամ կիսուր մօր ձեռքը, նրանք էլ համբուրել են հարսի ճակատը: Մեր կարծիքով այս երկկողմանի գործողութիւնն է որ կոչուել է «աջահամբոյր» եւ ոչ թէ միայն ձեռքը համբուրելը:

## 3. Ասուն եւ Անասուն

Սրանց մեկնութիւնը կարելորում ենք այն հանգամանքով, որ սուրբ Գրքում հենց արարչութեան գործընթացի հերթակա-

նութեան մէջ օգտագործուել է «անասուն» բառը, որի էութիւնը պարզելով միայն կարելի է լուծել սուրբ Գրային մի հանելուկ, որը վերաբերում է «Աստուծոյ որդիների» եւ «մարդկանց որդիների» բնութագրին:

Ստուգաբանութիւն՝ արմատներով եւ իւրաքանչիւր տառին մեր կողմից տրուած իմաստային սահմանումներով.-

=1.ա-սուն

Մեկնութիւն.- Աստուածայինով, արելով եւ արելայինով սնուող: Նշանակում է արելով, կաթով, հացահատիկով եւ Աստուածային իմաստութեամբ սնուող:

=2.աս-ուն:

Մեկնաբանութիւն.- Ինչպէս Մ. Մաշտոցն է ասում, բառի տառերի առաջին զոյգը բառի բուն բովանդակութիւնն է, իսկ երկրորդը՝ դրա բացատրութիւնն է տալիս: Այդ հիմքով էլ բանանք բառը:

=«արական բնոյթի սերմ»+«իգական բնոյթի հոգեւոր լուսոյ լուսապսակաւոր սերմ»:

Մեկնութիւն.- «Արական բնոյթի սերմը» դրական լիցքով, սպիտակ կամ արեւագոյն, երկարաւուն կամ հոսուն սերմ է: «Իգական բնոյթի հոգեւոր լոյսը» էգ կենդանին է կամ կինն է, որի «լուսապսակաւոր սերմը» կուրծքն է, որի կաթի մասին է խօսքը: Իսկ կաթը «արական բնոյթի սերմ» է:

Չեւտելութիւն.- «Ասուն»-ը իգական էութիւնից բխող մայրական կաթն է:

=3.«Արական բնոյթի սերմ»+«երկրային հոգեւոր լուսոյ լուսապսակաւոր սերմ»:

Մեկնութիւն.- «Արական բնոյթի սերմեր» են նաեւ բոլոր հացահատիկները, որոնք կորիզի վրայ չունեն արտաքին մսային մաս (ինչպէս հատապտուղներն ու մրգերը, որոնք իգական բնոյթի են): «Երկրային հոգեւոր լոյսը» այս պարագայում երկրից ելած բոյսն է, որի «լուսապսակաւոր սերմը» «կեղեւաւոր սերմն»-ն է:

Չեւտելութիւն.- «Ասուն»-ը առաջին հերթին բովանդակում է կենդանական կաթն ու հացահատիկը: Յետոյ է որ «ասունը» սնունդից անցել է «սնող» եւ «սնուող» բովանդակութիւններին, որոնք պարունակել են «կաթով եւ հացահատիկով սնող եւ սըն-

ւող» իմաստը: Սակայն ժամանակի ընթացքում «ասունը» կոր-  
ցընելով իր բովանդակած «կաթն ու հացահատիկը»՝ այսօր  
հասկացւում է պարզապէս «սնուել, սնել», ինչպէս «կաթն-ա-  
սուն» բառում:

«Ասունը» «ան» ժխտական նախածանցով «անասուն»  
դառնալով՝ պէտք է ունենար «չսնող» եւ «չսնուող» իմաստները,  
որոնք չեն համապատասխանում իրականութեանը: Հետեւա-  
բար «անասուն»-ի եւ դրա «ան» նախդիրի մէջ թաքնուած է եւս  
մի գաղտնիք, որին կ'անդրադառնանք ներքեւում: Այսքանը  
ամփոփելով կարելի է ասել որ «անասունը» կարող է լինել՝

1. Ոչ կաթնասուն կենդանին:

2. Ուրիշ կենդանիների կաթից չսնուող «նախամարդը»,  
որովհետեւ չի ընտելացրել դրանք:

3. Հացահատիկ մշակել չիմացող եւ չուտող երկրածին մար-  
դը:

Հայկական բանահիւսութեան եւ ժողովրդական խօսքի մէջ  
յաճախ հանդիպում ենք «հալալ կաթնակեր», «մայրական կա-  
թը հարամ լինի» արտայայտութիւններին, որոնք գալիս են հաս-  
տատելու մայրական կաթի կարեւորութիւնը մեր ազգային մտա-  
ծելակերպի մէջ: Յաճախ նաեւ ոչ պատահաբար «մայրական  
կաթը հարամ լինի» խօսքին հետեւում է «անասուն» բառը, որով-  
հետեւ երկուսը անմիջականօրէն իրար լրացնող եւ հաստատող  
գաղափար են կրում:

Անասուն =ան-ասուն

Մեկնութիւն.- «Անասունը» պարզեցինք որ կաթով ու հացա-  
հատիկով չսնուող է նշանակում: Սակայն բառի մէջ կայ առաւել  
խոր բովանդակութիւն:

«Ան» =արական բնոյթի լուսապսակաւոր սերմ: Այսինքն  
երեւելի կամ ցցուն, ապրող, արեւագոյն կամ սպիտակաւուն լու-  
սապսակ-կեղեւ ունեցող սերմ է, ինչը ծուն է:

Հետեւութիւն.- Քանի որ ասունը նաեւ սնուող եւ սնող ի-  
մաստն է ձեռք բերել, ապա անասունը «ան»-ով սնուող եւ սնող  
իմաստն ունի, այսինքն ծուով սնուող: Իսկ ծուն գիտենք որ մսե-  
ղէն է, հետեւաբար անասունը նաեւ մսով սնուողն է: Մեզ թող նե-  
րեն մեր մսակեր ընթերցողները, որովհետեւ մենք էլ դեռեւս չա-  
փաւոր՝ բայց մսակեր ենք:

4. «Անասուն» են կոչել ծուով ու մսով սնուողներին:

Ի հարկէ «ասուն»-ն ունի «ասող-խօսող» իմաստը: «Աս»-ը «աստուածային սերմ» է նշանակում (*ինչին հանդիպեցինք Ասիայ բառում*), որտեղ սերմը նաեւ մտքի սերմ է, հետեւաբար «Աս»-ը բովանդակում է «աստուածային մտքի սերմ» իմաստը, հետեւաբար «ասուն»-ը «աստուածային մտքի սերմեր ունեցող»-ն:

Ազաթանգեղոսի մօտ կարդում ենք (էջ 155).-

«Որոյ (*Աստուծոյ*) բարձրագոյն ազդեցութեամբ ցուցեալ զաստուածագործ գիտութիւնն ի խառնակելն, յամբոխելն եւ զմիասնունդ ազգն ի բազում ազգս այլալեզուս օտարածայն անծանօթս միմեանց ընդ երեսս երկրի սփռէր»:

Խօսքը վերաբերում է Բաբելոնում անյաջող աշտարակաշինութեան ավարտին լեզուների խառնակչութեանը:

«Ձմիասնունդ» բառը ուղղակիօրէն «միատեղ սնուելու» կամ «միեւնոյն սնունդը ունեցող» չի նշանակում այստեղ, այլ «մի լեզուով խօսող»:

Բառը առաջացել է հետեւեալ կերպ.-

«Մի՛ աս ունեցող ունդ», որը նշանակում է «Մէկի (*Աստուծոյ*) լեզուն ունեցող ունդ-սերմ» (*«աս»-ից էլ «ասել» բայը*), նաեւ «մի՛ Աստուած ունեցող սերունդ»:

Եզնիկ Կողբացին («Եղծ Աղանդոց», էջ 8) տարբերակում է ասունն ու խօսունը, այսպէս.- (*Աստուած*) «Որ աղբիւրն է բարութեան, որ զամենայն զոր արար գեղեցիկս արար, այս ինքն զբանաւորս եւ զանբանաւորս, զմտաւորս եւ զանմտաւորս, զխօսունս եւ զանխօսունս, զասունս եւ զանասունս»:

Այստեղ «բանաւորն ու անբանը» զոյգը նոյնանում է «մտաւորի ու անմիտի», «խօսունի ու անխօսի», «ասունի ու անասունի» հետ:

Յետեւաբար «զասունս եւ զանասունս» ասելով՝ նա նկատի է ունեցել սուրբ Գրային «Աստուծոյ որդիներին» եւ «մարդկանց որդիներին», այլապէս «Աստուծոյ որդիներին» եւ «կապկամարդ-նախամարդուն»:

#### 4. Աստուած

Արմատներն են «աս-տու-ած» կամ «աստ-տու-ած, որտեղ «տու»-ն առաջացել է «տիւ»-ից, երբ «իւ»-ը շեշտազրկուել է բարդուելու պատճառով, ուստի արմատների բուն ձեւը եղել է.-

=1.աս-տիւ-ած

=2.աստ-տիւ-ած

Մեկնութիւն 1.- «Աս»-ը՝ ինչպէս տեսանք, Աստուածային սերմն է, «տիւ»-ը ցերեկը եւ լոյսը, «ած»-ը՝ ածել, լցնել կամ տալ: Հետեւաբար «Աստուած» նշանակում է.

ա.Աստուածային, դրական սերմին լոյս ածող,

բ.արեւային սերմին լոյս ածող,

գ.Վերին սերմին (*գլխիմ*) լոյս ածող:

=2. աստ-տիւ-ած

Մեկնութիւն 2. «Աստ»-ը նշանակում է «այստեղ», այսինքն երկիրն ու երկրայինները, «տիւ»-ը լոյսն է, ցերեկը, «ած»-ը՝ ածողը: Ուստի ունեցանք «այստեղ լոյս ածողը, տուողը»:

Մեկնաբանութիւն.- Երկու մեկնութիւնները վերջին հաշուով նոյնական են եւ ամբողջացնում են իրար, առանց հակադրուելու: Հետեւաբար «Աստուած»-ը մեզ լոյս մատակարարողն է, թէ՛ ֆիզիկական եւ թէ՛ հոգեւոր: Քանզի «լոյսը» թէ՛ մարմնական սնունդ է եւ թէ՛ մտաւոր լիցք, ինչը լիարժէք արդարացնում է բառի բովանդակութիւնն ու իմաստը:

«Աստուած» բառը ինքնին Բարձրեալի անունը չէ, այլ նրա եւս մի յատկանիշը:

Նայել «Այլ» բառին:

5.Այլ

Այսօր է որ «այլ» ասելով հասկանում ենք «մի ուրիշ»-ը, մինչդեռ սուրբ Մեսրոպ Մաշտոցն իր «Յաճախապատում ճառք» երկի երկրորդ գլխում բազում անգամներ օգտագործել է բառը Եբրայերէնի «էլ»-ին ու արաբերէնի «Ալլահ»-ին համազօր:

Նա ասում է. «Այլը ինքն գիտի միայն իր անունը», ինչը նոյնն է թէ ասենք «Աստուածն ինք գիտի միայն իր անունը»: Ասում է նաեւ, թէ մենք Բարձրեալին ճանաչում ենք նրա գործերից, արարչութեան համար նրան կոչում ենք Արարիչ, մեզ ստեղծելուն համար կոչում ենք Հայր, բարերարութեան համար անուանում ենք Բարի, գթառատութեան համար՝ Գթացող, անսահմանութեան պատճառով կոչում ենք Անեզր, անկրկնելի լինելուն համար կոչում ենք Եզակի, բոլորից բարձր լինելուն համար՝ Բարձրեալ, աննկարագրելի լինելուն համար կոչում ենք Անճառելի, ի սկզբանէ լինելուն համար՝ Անպատճառ, մեզ տիրութիւն անելուն համար՝ Տէր, եւ այլն:

Մենք էլ համեստաբար համակարծիք ենք սբ. Մ. Մաշտոցին:

Սակայն ինչ որ «վկաներ» ուզում են մեր հաւատացեալ ժողովրդին համոզել, թէ իրենք գիտեն Աստուծոյ անունը, իսկ պետութիւնների մէջ առաջինը Քրիստոնէութիւնն ընդունած հայերս իբր թէ տգէտ մեռնում ենք եւ մեր երկնային Հօր անունն իսկ չգիտենք:

Սուրբ Մեսրոպ Մաշտոցն ասում է, թէ ճշմարիտն ու ճշմարտութիւնը մէկն է: Եկէք պարզ տրամաբանութեամբ հասնենք դրան:

Այդ «վկաները» քարոզում են թէ իրենց աստուծոյ անունը Եհովայ է:

Սարդիկ շատ են ու անուններ են կրում իրարից զանազան-ւելու համար: Բայց Աստուած միակն է ու չունի իրեն հաւասարը, որից էլ ստիպուած լինէինք զանազանել Նրան ու անունով կանչէինք: Իսկ «վկաները» արդեօք ունանի՞ց են ուզում զանազանել իրենց անուանակրին՝ եթէ ոչ միակ Աստուծոց, որն իր անունը միայն ինք գիտի: Բայց ո՞վ էր ուզում նմանակել Տիրոջն ու աստուածանալ՝ եթէ ոչ հակառակորդը, սատանան, որին «վկաները» երեւի ոչ պատահաբար կոչում են Եհովայ: Քանզի այդ անունը ըստ մեր ստուգաբանութեան, նշանակում է «Երկիրն ու երկրայինը սիրող», «նիւթը սիրող, նիւթապաշտ», ինչը հենց սատանայի եւ նրա ծառաների միակ որակն է: Ծիշդ է, որ որեւէ մարդ էլ պարտաւոր է սիրել երկիրը (*իր մարմինը*), հոգ տանել նրա մաքրութեանն ու անապականութեանը, սակայն դրա գերին դառնալը եւ հոգին ու հոգեւորը մոռանալը աններելի է:

#### 6. Աղանդ

Անգլ. «Land = ցամաք կամ հող»:

Land բառի հայերէն տառադարձութիւնն է «աղանդ», ինչից երեւում է, որ աղանդաւոր են կոչուել զուտ երկրային գործերին նուիրուած մարդիկ, այլաբանաբար՝ մատերիալիստ մարդիկ: Այս լոյսի տակ, Աճառեանի Արմատական Բառարանում յիշատակուած «աղանդաբեր»-ը կարող է օգտագործուած լինել «հողաբեր» իմաստով, «աղանդագործ»-ը՝ «հողագործ», «երկրագործ»: «Աղանդ»-ը սկզբնապէս «հող», «հիմք» իմաստն էլ է ունեցել, ուստի՝

1. «Արհամարիեցան հարանցն աղանդք, առաքելական

աւանդութիւնք անարգեցան» նախադասութիւնը կը թարգմանուի.

«Արհամարհուեցին հայրերի հիմունքները (մի գուցէ նաեւ «աճիւնները»), անարգուեցին առաքելական աւանդութիւնները»:

2.«Անաղանդ հաւատք»-ը կարելի է հասկանալ «անհող, անհիմն հաւատք»:

3.«Աղանդասար»-ը պիտի ունենայ «հողասար» իմաստը: Եւստի

4.«Երանելին Կիրիղոսս ամենայն ուրեք մի որդի, մի Տէր աղանդէ»-ն պէտք է ըմբռնել «Երանելի Կիրիղոսսն բոլոր վայրերում հիմնաւորել է մի Որդին եւ մի Տէրը», այլապէս՝ մի Որդու եւ մի՛ Տիրոջ գաղափարը:

7. Stone Hange եւ Քարահունջ

Սբ. Մեսրոպ Մաշտոցի «Յաճախապատում ճառք» երկի ժժ գլխում կարդում ենք.

«Իսկ որում հաւատացաւ վերակացութիւն ժողովրդոց, եւ հեղգացի ի նոցա խնամս ի հոգեւոր ուսումն եւ ի խրատ, եւ ստունգ(կ)անիցէ եւ կան ոչ տայցէ զմարմնաւոր պէտս կարօտելոց, այլ ուտէ եւ ըմպէ անզգայաբար, յանկարծակի գայ ի վերայ նորա մահ՝ յորում աւուր ակն ոչ ունիցի»:

Ժժ գլխում կարդում ենք.

«Եւ ստունգ(կ)անութեան ցաւուցն ի մարդասէր բժշկէն զառողջութեան դեղս ընկալցի զարդարութեանն վարս, որ ընդդէմ մեղացն եւ դժնդակ ցաւուցն զոր ունէր»:

Առաջին օրինակում անորոշ է մնում «ստունգանիցէ» բառի բովանդակութիւնը: Երկրորդում «ստունգանութեան»-ը անմիջականօրէն կապւում է «ցաւուց»-ի, «դժնդակ ցաւուցն»-ի եւ դրանք բուժելու միջոցների հետ, հետեւաբար գործ ունի ահռելի ցաւեր պատճառող մի երեւոյթի հետ:

Փորձենք ստուգաբանել բառը:

«Ստունգանել», որտեղ առաջին «ստուն» արմատը անգլերէնի տառադարձելով ստանում ենք «stone=քար» բառը: Երկրորդ «գան» արմատը, ինչպէս «գանակոժել» բայում ձեռք է բերել ինչ որ «ծեծելու գործիք, գաւազան» իմաստը: Իսկ «գանել» ձեւում հասկացւում է «գանի ենթարկել», այլապէս «գանով ծեծել»:

Այսպիսով «ստունգանել»-ը կարելի է հասկանալ «քար գանով կոծել»: Այսինքն տուեալ երկու նախադասութիւններում գործ ունենք քարկոծուած մարդու եւ նրա անբուժելի ցաւերի հետ:

Յիշենք, որ անցեալում անօրէն սեռական յարաբերութեան մէջ բռնուողներին մինչեւ մէջքը հասնող փոսի մէջ անրացուած ցցից կապել են ու անցնող դարձող մի քար է շարտել նրա ուղղութեամբ: Քարերի կոյտը երբ հավասարուել է հողի մակերեսին՝ նրան ազատ են արձակել, եթէ ողջ է մնացել: Այդպիսի վիճակում յայտնուած մարդու մասին է Մաշտոցի խօսքը:

Յետեւում է, որ անգլ. stone-ը խորթ չի եղել հայ մարդուն: Աւելին:

Չայերէնից անգլերէնի տառադարձութեան հիմքում դրուած է, որ հայ. «ս»-ն անգլերէնում պէտք է վերածուի «sh»-ի: Բայց այս բառի պարագայում օրէնքը չի գործել: Երեւոյթը ցոյց է տալիս, որ stone բառը Անգլիայ է է հասել աշտարակաշինութիւնից շատ յետոյ, տերմինը կրող մեծաթիւ հայ մարդկանց միջնորդութեամբ, ու անրագրուել անգլերէնի բառապաշարում առանց ձեւափոխման:

Քանզի «stone-ստուն»-ի նախակազմիկ իմաստը մասնակիօրէն է առնչուում «քար»-ին, իսկ «գան»-ը՝ «ծեծել»-ու հետ երբէք կապ չունի: «Գան»-ը շփոթուել է «կան=cane=եղեգ»-ի հետ, եւ եղեգնեայ գաւազանով ծեծելը պիտի տար «կանել» եւ «կանակոծել», ինչպէս «ստունգանել» բառի «ստունկանել» սխալագիր տարբերակում:

Չայերէնի «տուն»-ը անգլ. town բառն է: «Ս-տուն»-ը (*ստուն չէ*) «սերմի տուն» է, իսկ «գան»-ը տառացիօրէն նշանակում է «գոյ անող, գոյացնող», կամ «գոյ անել, գոյացնել», ինչը վերջապէս «գալ» բայի խոնարհումից է առաջանում (*կը գան*): Ուստի «ստունգանել»-ը «սերմի տուն գոյացնել» է եւ կամ «սերմի տուն գոյացնող»-ն է: Իսկ «սերմի տունը» առաջին հերթին մայրական արգանդն է, ապա եւ հողն է, որոնցում սերմը ցանուում է վերածննդեան համար: Այս խորանկարի վրայ էլ «stone-ստուն»-ը ոչ թէ պարզապէս քարի կտոր է, այլ այն տապանաքարը, որի տակ թաղուել է վերածնութեան ենթակայ սերմը, հանգուցեալը:



Երկրորդ ընթերցմամբ, «գան»-ը անգլ. «gain=շահ, շահել» բառն ու բայն է, եւ «ստունգանել»-ը նշանակում է «քար շահել», այսինքն քարի արժանանալ, քարկոծուել, ինչը վերջին հաշուով տապանաքարի արժանանալն է: «Գան»-ով հայերէնում ունենք «գանձ, գանձանակ» եւ այլ բառեր, երբ գանձը անձի ձեռքերէն ելիքն է, գանձանակը՝ անձի ձեռքերումների ակն է, միատեղողը:

Stone Hange-ում «hange»-ը հենց հայ. «հանգ»-ն է, «հանգած»-ն է ու «հանգուցեալ»-ը: «Հանգ»-ն ու «հունգ»-ը նոյնիմաստ զոյգեր են, առաջինը արական բնոյթի է, իսկ երկրորդը՝ իգական: Այսինքն եթէ մահացածը տղամարդ է՝ ապա կոչուել է «հանգուցեալ», իսկ երբ կին է եղել՝ կոչուել է «հունգուցեալ» (*որից էլ «հունգուր-հունգուր կամ հոնգուր-հոնգուր լալը» - իգական սեռի հանգուցեալի վրայ լաց լինելը, երբ լացողները նոյնպէս իգական սեռին են պատկանում*):

Stone Hange-ը այն «st»-«sit» եղած (*նստեցուած, կանգնեցուած*) քարերի շրջանակն է, որը՝ որպէս «տուն», իր կենտրոնում ամփոփում է արական սեռի հանգուցեալին:

Հունգ-ը բարբառայնանալով Հայաստանում եղել է «հունջ», «Քարահունջ» տեղանունն մէջ: Սրանից էլ կարելի է եզրակացնել, որ «Քարահունջ»-ում թաղուած է (*կամ թաղուած են*) իգական սեռի հանգուցեալ – մի գուցէ Անահիտ կամ Աստղիկ աստուածուհին:

Բայց չէ՞ որ Stone Hange-ն ու Քարահունջը աստղադիտարաններ են, պիտի ասէք: Այո, մեր նախահայրերը հաւատացել են, որ լուսաւոր մեծ մարդկանց – ուսուցիչների, սուրբերի - հօգիները վերածուում են լուսատուների, ուստի եւ նրանք այդ դամբարան-աստղադիտարանների միջոցով կապ են պահպանել տուեալ կոթողի շրջանակում թաղուած անձի լուսատու դարձած հոգու-լուսապսակի հետ:

Մօտաւորապէս նոյնպիսի միտք է արտայայտուած Հոմերոսի մօտ. «Պրիամոսի Պոլիտ որդին, որն ... դետ էր նստել էսիետի շիրիմի վրա բարձրադիտակ...» («Իլիական», Հոմերոս, ԵՀՀ, Եր. 1987, էջ 69):

Ամփոփում.-

1.«Տուն-town»-ը եղել է ոչ թէ մի ընտանիքի բնակարանը,

այլ մի տոհմի բնակատեղին: Իսկ «ս»-ն մի սերմն է, մի բջիջը: Հետեւաբար «ստուն-stone»-ը տոհմային համայնքում ապրող մի ընտանիքի բնակարանն է: Stone Hange-ը կարող է լինել մի ընտանիքի հանգուցեալների դամբարանը:

2.«Տուն»-ը՝ որպէս շինութիւն, կառուցուած է շինանիւթից: «Ս-տուն»-ում խօսքը վերաբերում է նաեւ շինանիւթի մի սերմին, մի միաւորին, որը կարող է լինել եւ քար, եւ փայտ, եւ մետաղ, եւ աղիւս:

Բայց քանի որ «ստուն-stone»-ը անգլերէնում (*եւ հայերէնում*) «քար» իմաստով է աւանդուել, ապա հետեւում է, որ այդ բառը օգտագործողներն իրենց բնակարանները կառուցել են հենց քարից, եւ ոչ թէ մի այլ շինանիւթից:

Իսկ հայերը համզարամեակների պատմութեան մէջ եղել են քարէ շինութիւններ եւ բնակարաններ կառուցողներ, աշխարհով մէկ յայտնի ու նշանաւոր քարագործ ճարտարապետներ ու վարպետներ: Մինչդեռ եւրոպական ժողովուրդներից շատերը, այդ թւում նաեւ Անգլիացիներից շատերը աւանդաբար փայտեայ բնակարաններ են ունեցել:

Հաւելուած.

«Հայկազնեան Լեզուի» եւ «Առձեռն» բառարանի տուեալներով, ունեցել ենք «ունջ» բառը, «ծայրը, տակը», նաեւ «գետին, յատակ» իմաստներով: Ունեցել ենք «ընդ ունջ տանին» արտայայտութիւնը, «գետինն անցընել, գետնի հաւասար ընել»:

«Ունջ»-ի սկզբում երբ «հ»-ն չկայ, ապա բառը վերաբերում է որեւէ շինութեան, նիւթի, որը գետնին հաւասար անելը կամ գետնի տակ անցկացնելը նշանակում է «հիմնայատակ կործանել», նաեւ «հողով ծածկել»: «Հ»-ով «հունջ»-ը նշանակում է «հոգին» - անձը թաղել: Այնպէս որ, «հունջ»-ը եւս հայերէնով է բացատրուում եւ կարիք չկայ վերածելու «հունչ»-ի, ինչպէս վարել է յարգելի ակադեմիկոս Հերունին:

«Ստուն»-ին վերաբերեալ հաւելեալ ասենք, որ «ս»-ն ոչ միայն «մի սերմ» է, այլեւ «սահման» է: Այս առումով, «ստուն»-ը ունեցած պիտի լինի եւս մի իմաստ՝ տոհմային տան կամ town-ի մէկ բջիջի սահմանը, այն երիզող պատը, պարիսպը, պատնէշը, ցանկապատը եւայլն, ինչպէս «սանձ»-ը առաջին հերթին անձի սահմանն է ու սահմանադիրը լայն առումով, ասենք բերանը՝

անձի սահմանագլխային մի սանձն է, որը կարող է եւ բացուել եւ փակուել ըստ ցանկութեան եւ իմացականութեան:

#### 8. Ուրբաթ եւ Շաբաթ

«Ուրբաթ» բառի տակ Աճառեանն գրում է. «Շաբաթուայ վեցերորդ օրը - բուն նշանակումն է "պատրաստութիւն", արամերէն եւ եբրայերէն "պատրաստութիւն շաբաթու" - «այսպէս էր կոչուում այդ օրը, որովհետեւ այդ օրն էին պատրաստուում բոլոր այն բաները, որ կարելի չէր անել շաբաթ օրը՝ սուրբ պահելու համար: Սակայն այս բացատրութիւնը յառաջացած է ըստ յունականին, որովհետեւ ասոր. բառը ծագում է ընդհանուր սեմական "rb" - արեւը մայր մտնել, երեկոյանալ - արմատից»:

«Ուրբաթ» կազմուած է «ուր» եւ «բաթ» արմատներից: «Ուրարտու» անուան տակ տեսանք թէ «ուր»-ը նաեւ «հոսող ջուր» է նշանակում: Իսկ «բաթ»-ը անգլ. «bathe=բաղնիք, bath=լոգանք» բառն է (նոյն արմատից է ռուս. «վատա»=ջուր»-ը): Հետեւաբար «Ուրբաթ»-ը «ջրով լոգանք» իմաստն ունի, եւ այդ օրը եղել է «լոգանքի օր», երբ «պատրաստուում-մաքրուում էին յաջորդ սուրբ օրուան համար:

Ըստ մեզ, «Ուրբաթ» բառի «արեւը մայր մտնել, երեկոյանալ» իմաստը առաջացել է ծովում արեւի ընկղմելու, իբր լողանալ-մաքրուելու եւ վերածնութեան պատրաստուելու գաղափարից:

Հայերէնում «բաթ» արմատով ունեցել ենք «բաթաթուկ» բոյսը, որը ըստ մեզ նոյնանում է ռուսական աւանդական բաղնիքի «աւել»-ի հետ, որով թակում են մարմինը:

Հայ. «բաթրոն»ը ըստ Աճառեանի, նշանակում է «բազմոց, սանդուխք, բեմի աստիճանները»:

Ըստ մեզ, «բաթրոն»-ը առնչուում է բաղնիքին ու լոգանքին, ուստի որպէս «բազմոց» կարող է եղած լինել բաղնիքում «լոգանքի աթոռ», իսկ որպէս «սանդուխք» ու «բեմի աստիճաններ» բաղնիքում գոլորշու սենեակի աստիճաններն ու բեմը:

Հետեւաբար «բաթ» արմատ-բառը խորթ չի հայերէնին:

«Շաբաթ» բառի տակ Աճառեանն գրել է. «Շաբաթուայ եօթներորդ օրը», «մի եօթնեակ», որից՝ «շաբաթանալ=հանգ-չիլ»:

Բառը պագենտերէնում եւ պարսկերէնում յայտնուում է «շանբաթ» ձեւում, որը խօսում է «արեւի լոգանք»-ի մասին:

Ուստի «Ուրբաթ»-ը՝ ջրով լողանալու օրն է, իսկ «Շաբաթ»-  
«Շանբաթ»-ը՝ արեւի լոյսով:

Հետեւութիւն.- «Ուրբաթ»-ի եւ «Շաբաթ»-ի բովանդակած  
գաղափարները յայտնուում են քրիստոնէական ծիսակատարու-  
թիւններում, ուր ջրով մաքրուելը կոչուում է «մկրտութիւն», իսկ  
«արեւի լոյսով» կամ առաւել եւս «Աստուածային լոյսով»  
մաքրուելը կոչուում է «սուրբ Հոգուով մկրտուել»:

Սոյն գաղափարներից երկրորդը արտայայտուում է նաեւ  
ժողովրդական «Տէրնտես»-ի արարողութեան մէջ, երբ խարոյկի  
վրայով են ցատկում, այսինքն «հուրով» են մկրտուում:

Անունները փոփոխուում են, բայց ծեսն ու խորհուրդը  
յարատեւում են:

9.Դար, Դարագլուխ, Դարաշրջան, Շար  
Ըստ մեր պրպտումների՝ «դար» բառում «դ»-ն ունի թուա-  
կան արժէք, եւ «դար»-ը առնչուում է 4-ի հետ:

Տօմարային ժամանակաշափութեան մէջ 4-ին հանդիպում  
ենք «նահանջից նահանջ»-ում: Վստահ ենք, որ «դար» ասելով  
նախկինում հասկացել են այդ 4-ամեայ շրջանը:

«Դարագլուխ» է կոչուել ոչ թէ հարիւրամեակի սկիզբը, այլ  
4-ամեայ շրջանի նահանջ տարին:

Այս նկատի ունենալով՝ «դարաշրջան»-ը այդպիսի 4-ամ-  
եայ պարբերաշրջանների մի հանրագումարն է, որը ոչ թէ կլոր  
100 տարի է անում, այլ՝ ինչպէս տօմարային հաշուարկներում  
տեսանք, 128 տարի է: «Դարաշրջան»-ն սկսուում է հենց 128 տա-  
րիների առաջին տարով:

Խորենացու մօտ կայ նաեւ «շար» հասկացութիւնը, որպէս  
ժամանակաշափութեան տերմին: Նա ասում է. «"Թագաւորեաց  
Աղովրոս շարս տասն", որ լինին ամբ երեսուն եւ վեց հազար»:

«Աղովրոս»-ը յիշատակուում է «Ադամ»-ի փոխարէն, որն ըստ  
մեր դիտարկումների, իր մահկանացուն է կնքել Նոյի ծննդից  
անմիջապէս առաջ:

Ըստ մեզ, «շար»-ը մի գուցէ 12 դարաշրջանի չափման  
միաւորը լինի, այսինքն  $128 \times 12 = 1536$  տարուան ցիկլը:

10.Տարի, Ամի եւ Ամիս

«Ամի»-ն տառացիօրէն նշանակում է.-

1.«Արեւի մոլորակի իմաստութիւն-ներուժ:

Մոլորակի իմաստութիւնը դրա արտադրողականութիւնն ու արտադրածն է: Մարդու եւ կենդանական աշխարհի կարիքներին ծառայող նրա գլխաւոր արտադրութիւնը բուսականութիւնն է, սնունդն է, որն ինքն իրեն կրկնում կամ վերանորոգում է հիմնականում տարին մի անգամ:

2.«Արական բնոյթի մոլորակի իմաստութիւն»:

Արական բնոյթի մոլորակ «ամ»-ը (*արական բնոյթի շուրջ պտտուողը*) իգական բնոյթն է:

«Ամի» հասկացողութիւնը վերաբերում է երկրին, կանանց, էգ կենդանիներին եւ ընդհանրապէս իգական էութիւններին: Նրանց համար անհրաժեշտութիւն է իմանալ ժամանակի հոլովոյթը, որպէսզի կարգաւորեն իրենց իմաստութիւն-ներուժը: Կանանց հիմնական ներուժը ծննդաբերելու կարողութիւնն է, որը մի «ամի» (*9 ամիս*) ժամանակահատուածում է հասունանում: Յետեւաբար, «ամի»-ն կանանց հերթական յղիացման ու պտղաբերութեան իննամսեակն է: Ծննդաբերութեանը յետեւում է 3-ամսեայ հանգիստը, որից յետոյ միայն կարող են կրկին յղիանալ: Այդպիսին է նաեւ մայր բնութիւնը, 3-ամսեայ հանգըստով: Տարբեր մակարդակի (*հարթութեան*) կենդանիներն ունեն այլ ժամակային չափանիշեր, բայց նոյնպիսի յարաբերակցութեամբ:

Երեքամսեայ հանգստեան պարագան հանդիպում է նաեւ «իգական բնոյթի» բոյսերի մօտ:

Սերմացուները պէտք է լինեն առնուազն 100 օրական, մինչեւ կը ցանուեն: Գիտական փորձը ցոյց է տուել, որ նոր քաղած սերմը ցանուելու դէպքում ծլում է մօտ 100 օր ուշացումով, ինչը 3-ամսեայ օրէնքին է ենթակայ:

«Ամիս» բառում «ս»-ն հենց «ամ»-իգական էութեան «ի»-իմաստութեան կամ ներուժի սերմն է, որն արտադրում է լուսնային ամսի ցիկլերով: Ուստի «ամիս» հասկացողութիւնը առաջին հերթին առնչւում է իգական էութիւնների ծուաւութեան պարբերականութեանը:

Լուսնային ամիսը արեւայինից կարճ է 3 օրով, ինչը անսրւայ մակարդակում համապատասխանում է ամիի ձմեռային 3-ամսեայ հանգստեան պարբերութեան:

Եթէ նկատել էք, բոյսերի սերմերը երբեմն փուճ են լինում: Մեր կարծիքով այդ սերմերը արտադրւում են հենց նրանց

հանգստեան ժամանակամիջոցում, դրա համար էլ չծլող են: Նոյն օրինաչափութեամբ էլ իգական բնոյթի շնչաւոր էակներն իրենց «հանգստեան» ժամանակ արտադրում են չբեղմնաւոր-ւող ձուեր: Իւրաքանչիւր իգական բնոյթի էութեան հանգստի ու արտադրողականութեան հերթագայութիւնը տարբերում է, պահպանելով ընդհանրական օրինաչափութիւնը:

Այս խնդիրները կարելորում ենք, որովհետեւ դրանցով կարելի է կարգաւորել ընտանեկան զոյգերի յարաբերութիւնները, խուսափելով տհաճ ու անտեղի խօսք ու զրոյցից:

«Տարի»:

Ինչպէս կռահեցիք, ի հակադրութիւն «ամի»-ի՝ «տարի»-ն արական բնոյթի է: Այսինքն նրանք եւս զոյգեր են: Ուստի պէտք չէ ուղղակի իմաստով «հոմանիշ» ընդունել ամին ու տարին: Քանզի «տարի»-ն 12 ամիս է, առանց 3-ամսեայ հանգստեան:

Մատենագրական.- Ազաթանգեղոսն ասում է. «Եւ դարձեալ առ աստուածապաշտսն զոչէ մարգարէն եւ ասէ. – Լցցին կալք ցորենով, եւ զեղցին հնձանք գինւոյ եւ իւղոյ. եւ հատուցից փոխանակ ամացն, յորս եկեր մարախն եւ ջորեակն եւ ժանգն եւ թրթուրն, զօր իմ մեծ, զոր առաքեցի ի վերայ ձեր»:

«Ամացն» բառը այստեղ յստակօրէն օգտագործուած է ոչ թէ տարի իմաստով, այլ որպէս երկրի բերքը, որը կերել են մարախն ու միւսները:

11. Նաւակատիք

Պահպանուել է միայն եկեղեցական բառապաշարում, որտեղ «նաւակատիք» է կոչւում Վարդաւառի, Վերափոխման, Խաչի տօների, Մեծ Պահքի շաբաթ օրը, երբ լուծում են շաբաթապասը:

Կառուցուած է «նաւ-ակ-ատ-իք» արմատներից, որտեղ «նաւ»-ը «նոր»-ն է: «Ակ»-ը մի ամբողջական միաւոր է, էութիւն է: «Ատ»-ը «ատել-կտրել» բայի արմատն է, «իք»-ի «ի»-ն ներոյժը, գործողութիւնն է, իսկ «ք»-ն յոգնակերտ մասնիկ:

Ամփոփ ունենք՝ «մի ամբողջական նոր միաւոր ատելու-առանձնացնելու գործողութիւնները», այլապէս՝ «նոր առանձին միաւորի կազմաւորումը, սկիզբը, գործընթացը»:

Այս բոլորը վերաբերում են պահքից դուրս եկող մարդու ֆիզիկական նոր մարմին եւ հոգեւոր նոր ունակութիւններ ձեռք բերելու օրուան:

Ինչպես Մալխասեանն է ասում իր բառարանում, նաև կատիքը է 1.«բացման հանդես նոր տան (կամ այլ հիմնարկութեան), շինութեան կամ նորոգութեան. ուրախութիւն, որ կատարում է տան կամ այլ հիմնարկութեան բացման առթիւ»: 2.«Յանդես եւ ուրախութիւն, որ կատարում է տան (կամ այլ հիմնարկութեան) բացման, ինչպէս նաեւ թագադրութեան, պսակադրութեան տարեդարձներին»:

Ըստ մեզ, «Նաև կատիք» կարելի է համարել նաեւ մանուկի առաջին ատամ հանելը, հատիկի հիւրասիրութեամբ:

Յետեւութիւն.- Որեւէ նոր կամ նորոգուած հիմնարկի բացման արարողութիւնը – ժապաւէն կտրելը (*ինչպէս ժողովուրդն է ասում՝ «ականջ կտրելը»*), կարելի է արտայայտել մաքրամաքուր հայկական «նաև կատիք» բառով:

#### 12. Բարեկենդան

Կառուցուած է «բար» արմատից ու «կենդան» բարդ բառից: «Բար»-ը «բարի» ձեւով հասկանում ենք «ազնիւ», «խելօք»:

Շիայ մահմետականների մօտ «Բարի»-ն հոմանիշ է Ալլահին, ինչով եթէ իմաստաւորենք հայերէնի «բարի լոյս»-ը՝ կ'ունենանք «Աստուծոյ լոյս»-ը, ինչը լիովի կ'արդարացնի բառի հնագոյն արեւապաշտական բովանդակութիւնը: «Բարեաւ»-ը կը լինի «Աստուծո՞մով»: «Բարեւ»-ի «եւ» երկբարբառն իր երկրորդ հնչիւնով ու ֆրանսերէնում պահպանուած իմաստով կը լինի «yeux=աչք» եւ «բարեւ»-ը կը տայ ողջոյնի կամ հանդիպման եւս մի հնագոյն որակաւորումը, այն է «Աստուծոյ աչքով», «բարի աչքով» լինելու հանգամանքը:

Այսպիսով «Բարեկենդան»-ը «բար-եկ-կենդան» բաժանումներով ձեռք է բերում «Աստուծոց եկած կենդանութիւն» իմաստը, ինչը դեռեւս բոլորը չէ:

Անգլերէնում «բար»-ի զուգահեռ «bar»-ը ունի «ձող» իմաստը, ինչը նոյնպէս յայտնուում է հայերէնի բարդ բառերում, ինչպէս «բար-տի» ծառը նշանակում է «մեծ ձող», այսինքն «սլացիկ ծառ»: «Բարակ»-ը՝ «ձող-ակ», այսինքն «ձողածեւ, ճառագայթածեւ միաւոր»:

«Բար»-ը «ձող»-ի շրջանակներում ունի «կանգուն», «սլացիկ», «ոչ ճարպակալած ու ծոմրուած անհատ» իմաստը, որով

առնչուում է «ուղիղ»-ին: Հետեւաբար «Բարի»-ն նաեւ «ուղիղն» է:

Այսպէս, հնագոյն հայկազնեան բառապաշարում ծուարած ու անգործութեան մատնուած բառերից է «բարիտուն», որը Աճառեանն իրաւացիօրէն թարգմանել է «ոտքը բարի, ուղուրով»:

«Բարիտուն»-ը կարելի է հասկանալ 1.«սլացիկ ոտքով» (*սրունքով*), նաեւ 2.«ուղիղ ոտքով», ինչը փոխաբերական իմաստով կ'ունենայ «բարի մտադրութեամբ եկող» բովանդակութիւնը, «Աստուծոյ կողմից ուղարկուածը» եւայլն:

«Բարեկամ»-ը «բարին կամեցողը»-ից բացի կը լինի «ուղիղ կամեցող»: Նա «Աստուծոյ կամքով» է «բարին կամեցող»:

Միայն ըստ Աստուծոյ կամքի եւ ուղիղ գործողն է «բարեգործ»:

«Բարեխրատ»-ը աստուածային խրատ է, ուղիղ մարդու ուղիղ եւ ճիշդ խրատն է:

«Բարեխորհուրդ»-ը «ուղիղ խորհուրդ» է, ճիշդ մտածողութիւն է:

«Բարեխօս»-ը ուղիղ եւ ճիշդ խօսողն է, ոչ չարախօսը:

«Բարեկեցիկ»-ը նախ եւ առաջ ուղիղ (*Աստուածային օրէնքներով*) ապրողն է, ինչի արդիւնք է հենց իր «բարեկեցութիւնը»:

«Բարետես»-ը սլացիկ տեսք ունեցողն է (*ռուս. «ստրոյնի»*), ուղիղ եւ յստակ տեսանելին է:

«Բարեբախտ»-ը նշանակում է «բարու կամ Աստուծոյ հովանավորութեամբ»:

Ամփոփենք:

«Բարեկենդան»-ը ակտուում է Աստուծուց եւ արեւից գալիք վերակենդանութիւնը, բուսական աշխարհի շիւի (*ձողի*) մօտալուտ կենդանացումը, կենդանական աշխարհի ողնաշարի (*bar*) մօտալուտ կենդանացումը, այլեւ մարդու «ուղղուելու» վերակենդանանալու հնարաւորութիւնը՝ պահքով:

Պահք մտնելով մաքրուելու որոշումը պարտադրանքով չի լինում: Պահքը արդիւնաւետ կը դառնայ լոկ գիտակցաբար, հաւատքով եւ մեծ ուրախութեամբ կատարելու դէպքում: Իսկ «բարեկենդան»-ի ծեսերը, աւանդութիւնները եւ տօնակատարութիւնները հենց գիտակցութեանն ուղղուած արարողու-



թիւներ են, որոնք բարձրացնում են տրամադրութիւնները եւ ուրախութիւն ներշնչում պահք մտնող հաւատացեալներին, վերականգնուելու, բուժուելու, ուղղուելու յոյսով:

Բարեկենդանի տօնակատարութիւնները - carnival - եղել են դիմակաւոր:

Դիմակը նախ ցոյց է տալիս, որ «բար»-ը – ծողը, շիւը, անձը - դեռեւս հին ու կաղապարուած, մեռած ծածկոյթի տակ է: Երկրորդ, դիմակը խորհրդանշում է մարդու դախացած մարմինը, կաղապարուած մտածողութիւնը, ամուլ հոգեւոր վիճակը, եւ թէ մարդն ունի դիմակագերծուելու խնդիր, որպէսզի ունենայ թարմ ու նորոգուած մարմին, Աստուածահաճոյ մտածողութիւն եւ թարմ հոգեւոր ունակութիւններ: Թարմանալու միջոցը պահքն է: Սողուններից օձը (*Գիւգամէշից հաւերժութեան ծաղիկը կամ գաղտնիքը գողացողը*) լաւագոյն օրինակ է ծառայում մարդուն, երբ 10-օրեայ ծոմից յետոյ փոխում է իր մաշկը, ժանիքները. վերանորոգում է նրա տեսողութիւնը եւայլն:

Պատահական չէ, որ արեւելեան դիմակահանդեսների հիմնական խորհրդանիշը վիշապ-օձն է:

Տէրնտես են կոչուել Բարեկենդանի տօնակատարութիւնները հին հայոց մօտ: Քանզի դրան յաջորդող մեծ պահքի կարգը (*եւ յատկապէս ծոմապահութիւնը*) մահուան գնալու (*երկնային Տէրը տեսնելու*) եւ նորոգուելով կեանքի վերադառնալու գործընթացն է:

### 13. Վարդավառ

Արտակ Արքեպիսկոպոս Մանուկեանն (*«Չայ եկեղեցու Տօները», էջ 180*) մէջբերում է արել Կ.Վ. Մելիք-Փաշայեանից, որն ասում է. «Վարդավառը տօնուում է Յուլիսի կէսերին, երբ վարդեր չեն լինում»:

Բերում է նաեւ Սուքիաս Վ. Պարոնեանի կարծիքը (*էջ 179-180*) «Վարդավառը կապ ունի կրակի պաշտամունքի հետ»:

Մենք եւս կարելորում ենք Մելիք-Փաշայեանի դիտողութիւնը, եւ գտնում ենք որ Վարդավառը՝ որպէս խորհուրդ, վարդ-ծաղիկի հետ գործ չունի:

Վարդավառը զուգահեռ է դրուել Յիսուս Քրիստոսի Այլակերպութեան - Պայծառակերպութեան հետ ուստի պէտք է գործ ունենայ երկնային լոյսի հետ եւ ոչ թէ ջրի:

«Վարդավառ» բառում երկնային լոյսը արտայայտուած է «դաւ» արմատով, ինչի մասին խօսեցինք Տօմարի բաժնում: Հետեւաբար «դաւ-առ»-ը «երկնային լոյս առնել» է նշանակում:

Հաւանական ենք գտնում, որ բառը կառուցուած է եղել «վարդ-դաւ-վառ» արմատներից, ուր «ւ»-ն սղուել է: Այս դէպքում «դաւ-վառ» հատուածը կարող ենք հասկանալ «երկնային լոյսով վառուել» կամ ճաճանչել: Սա լուսապսակ-աուրայի փայլատակումն է, նրա բարձրագոյն մաքուր վիճակի դրսեւորումն է, իսկապէս Պայծառակերպութիւնը:

Սկզբի «վարդ»-ի իմաստը պահպանուել է զուգահեռ անգլերէն «ward» բառում, որը նշանակում է «act of guarding or defending», «պահպանելու կամ պաշտպանելու գործողութիւնը», ինչպէս քաջն Վարդանի արարքը: Այսինքն «Վարդան» նշանակում է «վարդ անող», «պահպանող ու պաշտպանող»:

Սոյն բովանդակութիւնը դնելով «Վարդավառ»-ի մէջ, կը ստանանք «պաշտպանական երկնային լոյս (*աուրա*) առնել», «պաշտպանական երկնային լոյսով փառաւորուել», ինչը նոյն ինքն Պայծառակերպութեան խորհուրդն է:

Նախաքրիստոնէական հայկական սովորութեամբ Փետր. 14-ին կատարուող ամենամեայ Տէրնտեսեան հրով մկրտութեան արարողութիւնը (*հոգեւոր մկրտութիւնը*) կարելի է համարել Պայծառակերպութեան զուգահեռը:

Ինչ վերաբերում է ջրով սրսկուելուն կամ մկրտուելուն՝ դա մարմնական մեղքերից-կեղտերից ջրով մաքրուելու խորհուրդն ունի: Ներկայիս Վարդավառի օրերում կատարուող այդ ծեսը պահպանուել է Հնդկաստանում, Գանգեսի ջրերում լողանալու սովորութեամբ: Հնում յայտնի է հայոց մեծամեծների հաւաքական մկրտութիւնը Արածանիի ակունքների մօտ, նոյն օրերում:

Քրիստոնէութեան մէջ մինչդէռ անձը կեանքում մի անգամ է մկրտում, հայերս պահպանել ենք ջրով եւ հրով ամենամեայ մկրտութեան նախաքրիստոնէական հնագոյն ծեսերը:

Մեր կարծիքով, քրիստոնէութեան պաշտօնականացմամբ, մեզ մօտ տեղի են ունեցել տօների անունների հակոտնեայ տեղաշարժեր: Հակուած ենք կարծելու, որ հնագոյն ժամանակներում Փետրուարի 14-ին հրով մկրտուելու արարողութիւնն է կոչուել Վարդավառ, իսկ «Տէրնտես»-ը՝ ֆիզիկական «մահ-

լան» եւ վերակենդանացման խորհուրդն ունենալով, առնչուում է ջրով մկրտուելուն: Ներկայիս հասկացողութեամբ «կլինիկական մահը» կարելի է կոչել «Տերնտես»:

#### 14. Մաշտոց

«Մաշտոց» մակդիրի «մաշտ» արմատը անգլերէնի «mast=կայմ»-ն է, որից էլ «master=վարպետ, մեծ ուսուցիչ» բառը, որտեղ «er»-ը հայ. «ար»-ն է կամ «այր»-ը: Հետեւաբար «master»ը «մաշտ արարողն» է կամ «մաշտի այրն» է (*կայմին տիրապետողը*): Երրորդ տարբերակով «master»-ը կարելի է կառուցուած համարել «mast-ter» մասերից, որտեղ «ter»-ը հայ. «տէր» բառն է, ինչը Աստուծոյ կամ Քրիստոսի մակդիրներից մէկն է: Ուստի ունենում ենք՝ «կայմի տէրը»:

«Մաշտ»-ը որպէս. «mast=կայմ»՝ նաեւ «դրօշակակիր կայմ»-ն է: Որպէս բայ՝ նշանակում է «արագաստը բարձրացնել», որի մէջ կայ նաեւ «դրօշակը բարձրացնել»-ու գաղափարը: Իսկ կայմը ընդհանրապէս նաւը առաջ մղող ու սլացնող արագաստների հենքն է:

Սրանք նկատի ունենալու դէպքում «Մաշտոց»-ը ձեռք է բերում «առաջ գնալ ցանկացողների հենքը», «դրօշակակիրների հենքը» բովանդակութիւնը:

Այժմ փորձենք հայերէնով մեկնել բառը:

«Մաշտ»-ը բաղադրուած է «մ-աշտ» մասերից, որտեղ «մ»ն «մոլորակ» է, «մաս» է, «մարմին» է, իսկ «աշտ»-ը՝ ինչպէս տեսանք «աշտարակ», «աշտանակ», «յաշտ» եւ «հաշտ» բառերում, նշանակում է «լոյս»: Այս խորանկարի վրայ «master»-ը «Տիրոջ լոյսի մոլորակ» է, այսինքն Տիրոջ լոյսի շուրջ պտտուողն է, նրանով լուսաւորուողն ու սնուողը, ապա «լոյսի շուրջ պտտուող այր» է, «լոյս արարող մոլորակ» է, «լոյս արարող մասնիկ» է, «լուսատու մարմին» է, իսկ այդ լոյսը առաջին հերթին մտաւոր-հոգեւոր է:


Հետեւաբար կարելի է ասել թէ «Մաշտոց»-ն 1.«մտաւոր-հոգեւոր լոյսերի մասնիկ» է, 2.«մտաւոր –հոգեւոր լոյսերը մարմնաւորող ուսուցիչ»-ն է, վարդապետը, այլապէս համազօր է 3.«Լուսաւորիչ» տիտղոսին:

Հաւելուած.- Բանասիրութեան դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Ասատրեանի «Ահուրա Մազդան՝ Դերսիմում» յօդուածում

(«Իրան-Նամե» հանդես) կարդում ենք.

«Ջազայերեն mastā (masti mays'ta, mast'a, masti) նշանակում է «առավոտ, արշալույս, արեւածագ» (շեշտուած «s»-երը կարդալ «շ»):

#### 15.Խաչ Պատերազմին



Բազում են ձեւերն ու մեկնութիւնները կեռ խաչի: Դրանց աւելացնենք եւս մէկը, հնագոյն հայկականը:

Ներկայացուած պատկերները մենք չենք յօրինել: Դրանց մոտիւրէն փորագրուած կայ Անի մայրաքաղաքի պարիսպներին: Սակայն այս ուրուագծերն ու խորհուրդը կարողացել ենք վերհանել ինքնուրոյնաբար վերծանելով Եօթնագրեանքի կամ Վեցհազարեակի մի փոքրիկ պատառիկը («Դավիթ Անհաղթ ՌՇ», հողվածների ժողովածու, ԵՊՀ, Եր. 1980, էջ 179):

Սոյն պատկերներում ակնյայտօրէն գործ ունենք հայոց այբուբենի «Կ» տառի հետ, իր տարբեր դիրքերով ու բովանդակութիւններով: «Կ»-ենը՝ որպէս տառ, նշանակում է «կեանք» եւ կեանքի ընթացքն ու հոլովոյթը - ցիկլը:

Հին յունական եւ հայկական իմաստասիրութիւնից գիտենք, որ ամէն ինչ բաղադրուած է չորս տարրերից, հող, հուր, ջուր եւ օդ: Առանց այդ չորս տարրերի համադրութեանն ու փոխկապակցութեան՝ կեանք չի կարող գոյանալ:

Հայկական աւանդուած կեռ խաչի ամէն մի «Կ»-ենը կամ թելը ներկայացնում է բնութեան մէջ գործող ու հոլովուող (ցիկլանող) մի տարրը: Ի մի գալով՝ դրանք միասնաբար դառնում են կեանքի աղբիւր եւ կեանքի յարատեւութեան ու հաւերժութեան խորհրդանիշ:

Տուեալ իմաստից էլ կարելի է բխեցնել, որ հայկական աւանդավէպի «խաչ պատերազմին»-ը հաւասարագօր է կեռ խաչին, որպէս հաւերժութեան խաչ:

Հակոտնեայ պտտուող կեռ խաչերից մէկը (դէպի աջ թա-

լալուողը) կարելի է որակել դրական ուղղութիւն ունեցող, իսկ միւսը՝ բացասական:

16. Գուսան, Ասքան եւ Աշուղ

Գուսան.-

«Ուսանել»-ը երբեք էլ ուսով բեռնակրութիւն անել չի նշանակում: Այսօրուայ ըմբռնումով «ուս»-ը գրաբարում կոչուել է «ուս ընդ անութ», այսինքն անութի վրայի ուսը: Ապա ի՞նչ է «ուս»-ը:

Ուղեղն ունի հիմնական երեք բաժանմունք: Դրանցից երկուսը՝ աջ եւ ձախ ուղեղներն են, որոնցից առաջինը ծառայում է մարդու հոգեւոր-ստեղծարար մտածողութեանը, իսկ երկրորդը՝ գործնական: Իսկ այսպէս կոչուած «ուղեղիկ»-ը հենց «ուշ»-ն է, ուշադրութեան կամ ներւային համակարգի կենտրոնը: Երբ ասում ենք «ուշքը գնաց»՝ հասկանում ենք, որ անձի ներւային համակարգը չի գործում, ռեակցիա չունի: «Ուշադրութիւն»-ը ներւային համակարգի զգօնութիւնն է, երբ «Ուշու» մարգածելը մարդու հենց այդ կարողութիւնն է մարզում:

Ի՞նչ ենք հասկանում «ուշք ու միտք» ասելով: Դա նոյնն է թէ ասենք «ուշք ու ուսք», ինչը ցոյց է տալիս, որ «ուսանել»-ը «միտք անել» է, եւ «ուս»-ը ներկայացնում է ուղեղի երկու կիսագնդերը միասին: Ուստի «ուշ»-ն ու «ուս»-ը եղբայր եւ քոյր են, առաջինը միշտ դրական, իսկ երկրորդը՝ չէզոք: Քանզի ուսմիտքը կարող է դրսեւորել եւ դրական եւ բացասական գործունէութիւն:

«Ուստայ» բառը իբր թէ օտարամուտ է, մինչդեռ բացատրում է հայերէնով, եւ նշանակում է «միտք տուող», այլապէս՝ «միտք յղացող», նաեւ ուղղութիւն տուող, ուսուցիչ:

«Գուսան»-ը բաղադրուած է «գ-ուս-ան» արմատներից, որտեղ «գ»-ն «գոյ»-ն է, «գոյութիւն»-ն ինքնին, նաեւ «գոյի գլուխ»-ը: Հետեւաբար գուսանը նախ եւ առաջ գոյութեան մասին միտք անող անձն է: Նա ոչ թէ բնութեան, իգական մարմնի եւ սիրոյ գովքը հիւսող արուեստագէտն է, այլ առաջին հերթին իմաստասէր է, խոհական-փիլիսոփայական բնոյթի ստեղծագործող:

Աշուղ.-

Ըստ Խորենացու, հայերս «Հայ» անունը կրելուց բացի՝

ունեցել ենք եւ ունենք ազգային երկու կոչումնաբանութիւններ: Մէկը «Թորգոմայ տուն»-ն է, որը նոյնն է թէ ասենք «թարգոմանիչների տուն», իսկ միւսը՝ «Ասքանագեան տուն»-ն է:

«Ասքանագեան» կոչման արմատն է «ասք»-ը, որին չի անդրադառնել Աճառեանն: Այլ բառարաններում բացատրուում է որպէս «ասուած խօսք, ասացուածք»:

Ժողովրդական վաղեմի «ասք»-երի մասին ոչ մի ակնարկութիւն:

Ասք արմատը մեզանից փոխանցուել է հեռու-մօտիկ ազգերի, որոնց մօտ՝ տառադարձութեան օրէնքների համաձայն, ենթարկուել է փոփոխութեան, ապա բումերանգի նման վերադարձել է մեզ այլ երանգով, «ս > շ» անցումով, ուստի եւ «աշք» հնչիւնով: Դա արեւելեան ժողովուրդների մօտ նշանակում է «սէր» (*անգլերէնում ask-ը պահպանելով հանդերձ հնչիւնաբանութիւնը՝ կորցրել է բուն խորհուրդը: Նշանակում է «հարցրնել, ասել»*): Հետեւաբար «Ասքանագեան»-ը ինչ որ չափով կարելի է մեկնել որպէս «սէր սերմանողների ազգ»: Իրականում Ասքանագեանները սերնդից սերունդ եղել են աշխարհում Աստուծոյ սէրը սերմանող, Աստուծոյ խօսքն ու աստուածային սիրոյ գաղափարները տարածող առաքեալներ:

Բումերանգի նման արեւելքից վերադարձող «ասք»-ի նեղ իմաստից է առաջացել «աշուղ»-ը եւ միջնադարեան աշուղական արուեստը: Աշուղները հիմնականում եղել են ու կան գեղեցիկի, մայր բնութեան հրաշալիքների, իգական սեռի գեղեցկութեան եւ սիրոյ գովքը հիւսող երգիչներ:

Բարձր գնահատելով հանդերձ եւ գուսանական, եւ աշուղական արուեստը՝ մենք նախապատուութիւնը կը տայինք «ասքան»-ներին (*«ասք անող»-ներին*):

Վերջաբանի փոխարէն

Սատանան՝ խաւարի հրեշտակը լինելով, առաջին հերթին տգիտութեան տիրակալն է, բայց հանրութեան է ներկայանում որպէս իմաստնագոյն անհատ, պատկառելի անձ, ամենագէտ ուսուցիչ: Նա իր անկատար իմացութիւնը ծածկում է խորհրդաւորութեան քողով, միստիկայով, իբր թէ միայն իրեն է հասկանալի այն ինչն անընկալելի է ուրիշների համար: Այդ միստիկայով ու իր արտաքին նիւթական շքեղութեամբ էլ իշխանութիւն է ձեռք բերում միամիտ մարդկանց շրջանակներում, եւ

տգիտութիւն տարածելուց յետոյ՝ կարողանում է գործի դնել իր հզօր միջոցներից մէկը, «բաժանիր որ տիրես» քաղաքականութիւնը:

Սատանան խայտառակուած ու պարտուած կը փախչի մեզանից միայն այն դէպքում՝ երբ մենք կը լուսաւորուենք: Ուստի աշխատենք մենք մե՛ր վրայ, դիմենք գիտութեան, լուսաւորութեան եւ սրբութեան, դիմենք մեր սրբազնագոյն հօր՝ սուրբ Մեսրոպ Մաշտոցին: Նա խորհուրդ է տալիս որ չվատնենք մեր ուժերը, ուղղակիօրէն պայքարելով սատանայի դէմ, այն էլ նրա իսկ զէնքերով ու միջոցներով (*կաշառքով, փողով, խաբտութեամբ, խռովարարութեամբ, սպաննութեամբ*), (*այդպիսի պայքարի համար կոչն իսկ նրա սաղրանքն է*), այլ զինուենք իմացականութեան լոյսով, աստուածային սիրով ու հաւատքով, եւ մեր արարչական ոգիով ու գործունէութեամբ օրինակ ծառայենք ուրիշներին, ինչի արդիւնքում հակառակորդն ու իր հետեւորդները անխուսափելիօրէն կը զինաթափուեն ու կը յանձնուեն Աստուծոյ Որդիների տնօրինութեանն ու ողորմածութեանը:

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Խօսք շնորհակալության	Մ. Ն.	5
Երկու խօսք	Արմեն Նալբանդեան	6
Երկու խօսք հրապարակության յանձնողին	Թ. Թորանեան	7
Յօղուած «1» Գիր եւ Նշանագիր		10
Յօղուած «2» Ձիու Քայլ Իմաստասիրութեամբ		18
Նախաբան		18
<b>Ա.Գիրք Արարչութեան, ըստ արարական առասպելների</b>		
1.Տարոս		20
2.Տօրք Անգեղ		21
3.Նրեշտակի ծագումը		22
4.Տարոյ Բերան		23
5.Յարութ եւ Մարութ Նրեշտակներ		23
6.Տաւար, Տուար եւ Տուարածափափ		24
7.Դրախտավայրն ու «Կեպ»-ը		24
8.Կովկաս եւ Կարիճ Կենդանակերպ		25
9.Կենտարոս		27
10.Լուվիացիներ եւ Առիւծ կենդանակերպ		27
<b>Բ.Ծննդոց Գիրք</b>		
1.Աղամի Թոռը Ենովս		34
2.Եւիլայ երկիրը, Փիսոն եւ Եդեմ		34
3.Էրիդու		39
4.Նոյ նահապետ		39
5.Ջրհեղեղ		42
6.Նոյեան փապանի հանգրուանը		43
7.Ջրհեղեղից յետոյ Նոյի առաջին նստավայրն ու փրոյթը		45
8.Թման, Թորդան, Թորդում		48
9.Նոյ նահապետ, Երկիր Նաիրի եւ Նպափական լեռներ		51
10.Նոյ նահապետ եւ Նպափ լեռ		53
11.Սէմ		55
12.Օլիմպոս եւ Ջրուան		56
13. Նոյի աագ որդու՝ Ջրուանի սերունդը Նայաստանում		57



14.Նոյի կրպսեր որդու՝ Յաբեթի սերունդները Նայասփանում	58
15.Բարբառներ եւ Լեզուներ	60
16.Գողթանցիները արաբական առասպելներում	61
17.Նայկ եւ Բել	62
18.Նայք եւ Օրիոն	63
19.Նայկի թոռ Կադմոսի բնակավայրը եւ Նարք	65
20.Զօղք, Փինիկէ Կադմոս եւ Օրիոն համասփեղութիւն	66
21.Նայկի Սերունդները Կիլիկիայում, Փինիկէում, Յունասփանում եւ հին Եգիպտոսում	68
22.Զարմայր Նահապետ Նայոց	70
23.Մովսէսն ու Մայիսը, Արամայիսն ու Րամսէսը	71
<b>Գ.Ննագոյն պատմութեամբ մեզ հասած անուններից եւ փեղանուններից ոմանց մասին</b>	
1.Ասիայ եւ Փոքր Ասիայ	73
2.Արփաշէս Ա. Աշխարհակալ	74
3.Պարթեւներ	75
4.Պարսիկներ	78
5.Պեգասն ու Արիներով բնակեցուած փարաժքները	80
6.Տէր եւ Իշխան - Գահնամակ եւ Զօրանամակ	82
7.Նայ եւ Արմէն	84
8.Բագրատունիներ	84
9.Արշակ	86
10.Ուրարտու	88
11.Ռուսայ	90
12.Արգիշտի	91
13.Էրեբունի	91
14.Խալփի կամ Նալփի	93
15.Տեշուր կամ Տեյշերա - Ուրարտական S'UBA	95
16.ա. Մումեր, բ. sukka, գ. Էնսուխքեշանանա, դ. Էրեշ, Նիսաբա դիցուիի, ե.Պարիսարեան լեռներ	98
17.Զաւախք	102
18.Յորենի Երզը	104
19.Սասնայ Ծռե՛ր՝ թէ Ծրեր	105
20.Սասնայ Ծռեր եւ Արծրունիք	105
21.Յորենի Երզն ու Յրան Վերզոն	106

Յօդուած «3» Եզնիկ Կողբացու զարմանահրաշ պատումներից	107
Յօդուած «4» Նայկական Տօմար	114
Յօդուած «5» Ոչ միայն հացի	165
Յօդուած «6» Մբ. Մ. Մաշտոցի վարդապետութեան մայրուղիով «1»	176
Յօդուած «7» Մբ. Մ. Մաշտոցի վարդապետական աղով	183
Յօդուած «8» Մբ. Մ. Մաշտոցի վարդապետութեան մայրուղիով «2»	191
Յօդուած «9» Ձայնաւորները հայոց այբուբենում	200
Յօդուած «10» Ազգային արժեքների պահպանումը	223
Յօդուած «11» Զեկուցում ուսուցչի օրուան առթիւ	229
Յօդուած «12» Աստուածաբանութիւն	238
Յօդուած «13» Լեզուաբանութիւն՝ թէ իմաստասիրութիւն	248